


А. В. ГЕОРГИДИС

ПРОБЛЕМЫ  
ИСТОРИИ  
СОЦИАЛИЗМА  
И ЕГО  
РАЗВИТИЯ

Վ. Ս. ՆԵՐՍԵՍՅԱՆՑ



ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից  
ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի  
«Իրավունքի և պետության տեսություն»  
համառոտ ուսումնական դասընթացը  
հաստատվել է որպես բուհական դասագիրք

342(07 S)  
Ն-63


ՀՏԳ 342 (07)

ԳՄՆ 67.99 ց 73

Ն 633

**Թարգմանիչներ՝ Վ. Նազարյան  
Ս. Միմոնյան  
Վ. Էլոյան**

**Թարգմանության խմբագիր՝  
իրավագիտության դոկտոր Վ. Նազարյան**



**Ներսեսյանց Վ. Ս.**

**Ն 633 Իրավունքի և պետության տեսություն / Վ. Ներսեսյանց. -- Եր.:  
Նաիրի, 2001, 300 էջ:**

Իրավունքի և պետության տեսության բնագավառի ռուսական առաջավոր գիտնական, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. Ս. Ներսեսյանցի մշակած դասընթացը նվիրված է բուհական ծրագրով նախատեսված իրավունքի և պետության տեսության թեմաների ու հիմնահարցերի համակարգված շարադրանքին: Ուսումնական դասընթացն աչքի է ընկնում էական նորամուծությամբ: Դասագրքում բոլոր հիմնական հարցերը լուսաբանվում են հեղինակի կողմից մշակված իրավունքի և պետության ազատական-իրավաբանական տեսության դիրքերից, որոնցում հստակ են առնված սոցիալի և ժամանակակից բնական-իրավական ու իրավաբանական-պոզիտիվիստական ուսմունքների նվաճումները:

Դասագիրքը նախապատրաստված է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պետության և իրավունքի ինտելիտուտին առընթեր ակադեմիական իրավական համակարանում հեղինակի կարդացած դասախոսությունների հիման վրա:

Նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների ու դասախոսների, ինչպես նաև իրավունքի և պետության հարցերով բոլոր հետաքրքրվողների համար:

1202000000

Ն 705(01)2001

ISBN 5-550-01239-1

**ԵՊՀ Գրադարան**



SU0138430

ԳՄՆ 67.99 ց 73

© Վ. Ներսեսյանց

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս  
Վ. Ս. Ներսեսյանցի նախարանը «Իրավունքի և պետության  
տեսության» հայերեն հրատարակության առթիվ ..... 9

Ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի դասընթացի հայերեն  
հրատարակության խմբագրի խոսքը..... 11

Ներածություն..... 15

## Բաժին I

Իրավունքի և պետության տեսությունը՝ որպես  
ընդհանուր իրավաբանական գիտություն

Գլուխ 1. Իրավունքի և պետության տեսության առարկան ու մեթոդը .. 16

1. Իրավունքի և պետության տեսության՝ որպես ընդհանուր  
իրավաբանական գիտության առարկան ու մեթոդը ..... 16
2. Իրավագիտության օբյեկտների երկվությունը (դուալիզմը) և  
առարկայի միասնականությունը..... 17

Գլուխ 2. Իրավագիտության առարկայի և մեթոդի  
հասկացական-իրավական միասնականությունը..... 21

1. Իրավաբանական իմացության առարկայի և մեթոդի  
հարաբերակցությունը, փոխկապվածությունն ու  
միասնականությունը..... 21
2. Իրավաբանական մեթոդի հիմնական գործառույթները ..... 23
3. Հաջորդայնությունն ու նորամուծությունն իրավունքի և  
պետության տեսության զարգացման մեջ ..... 24

Գլուխ 3. Իրավունքի և պետության տեսության տեղն ու  
նշանակությունն իրավագիտության մեջ ..... 25

1. Իրավունքի և պետության տեսությունն իրավաբանական  
գիտությունների համակարգում ..... 25
2. Իրավունքի և պետության տեսությունն ու իրավագիտության  
միջնուղային կապերի զարգացումը..... 27

**Բաժին II**  
**Իրավունքի և պետության էությունը,**  
**հասկացությունն ու արժեքը**

<b>Գլուխ 1. Իրավահասկացողության և պետության հասկացողության հիմնական հայեցակարգերը .....</b>	<b>29</b>
1. Իրավահասկացողության և պետության հասկացողության տիպաբանությունը .....	29
2. Լեզիզմ .....	30
3. Յուսնատուրալիզմ .....	32
4. Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տիպը .....	34
<b>Գլուխ 2. Իրավունքի և պետության էությունը, հասկացությունն ու արժեքը .....</b>	<b>40</b>
1. Իրավունքի և պետության էությունն ու հասկացությունը .....	40
2. Իրավունքի և պետության արժեքը .....	47
3. Իրավունքի և պետության տեղն ու դերը սոցիալական կարգավորման մեջ .....	50

**Բաժին III**  
**Հասարակությունը, իրավունքը, պետությունը**

<b>Գլուխ 1. Նախնադարյան համայնական կարգը:</b>	
Իրավունքի և պետության ծագումը .....	56
1. Տոհմային կարգի հիմնական բնութագրերը .....	56
2. Իրավունքի և պետության ծագման հայեցակարգերը .....	58
<b>Գլուխ 2. Իրավունքի և պետության տիպաբանությունը:</b>	
Իրավունքի և պետության հիմնական պատմական տիպերը .....	67
1. Տիպաբանության անտիկ հայեցակարգերը .....	67
2. Հեզելի պատմական-ֆորմացիոն մոտեցումը. հոգևոր ֆորմացիաների հայեցակարգը .....	68
3. Մարքսիստական պատմական-ֆորմացիոն մոտեցումը. տնտեսական ֆորմացիաների հայեցակարգը .....	69
4. Մշակութաբանական և քաղաքակրթական մոտեցումները ...	71
5. Իրավունքի և պետության տիպաբանության ազատական-իրավաբանական հայեցակարգը .....	72

<b>Գլուխ 3. Պետության ձևը.....</b>	<b>76</b>
1. Կառավարման ձևը.....	76
2. Պետական կառուցվածքի ձևը.....	81
3. Պետական (քաղաքական) վարչակարգի ձևը .....	84
<b>Գլուխ 4. Պետության գործառույթները և մեխանիզմը.....</b>	<b>86</b>
1. Պետության գործառույթները.....	86
2. Պետության մեխանիզմը.....	89
<b>Գլուխ 5. Իրավագիտակցությունը և իրավական մշակույթը.....</b>	<b>91</b>
1. Իրավագիտակցությունը .....	91
2. Իրավական մշակույթը.....	95
<b>Գլուխ 6. Քաղաքացիական հասարակությունը և պետությունը.....</b>	<b>98</b>
1. Քաղաքացիական հասարակության և պետության տարբերակումն ու հարաբերակցությունը .....	98
2. Հասարակական միավորումները .....	100
<b>Գլուխ 7. Իրավական պետությունը, պատմությունը և ներկան .....</b>	<b>104</b>
1. Իրավական պետության գաղափարների պատմությունը ...	104
2. Իրավական պետությունը հետխորհրդային Ռուսաստանում .....	111
<b>Գլուխ 8. Հասարակության, իրավունքի և պետության պոստսոցիալիստական զարգացման հեռանկարները. ցիվիլիզմի հայեցակարգը .....</b>	<b>121</b>
1. Զարգացման պոստսոցիալիստական ուղու ընտրության հիմնահարցը .....	121
2. Քաղաքացիական սեփականությունը, ցիվիլիտար իրավունքը, ցիվիլիզմը.....	126
3. Ցիվիլիզմի տեղն ազատության և իրավունքի պատմական առաջընթացում .....	131

#### **Բաժին IV**

#### **Պոզիտիվ իրավունքի վարդապետությունը և դոգման. հիմնական հասկացություններն ու հայեցակարգերը**

<b>Գլուխ 1. Իրավունքի վարդապետությունը և դոգման.     հասկացությունն ու տիպերը.....</b>	<b>135</b>
--	------------

1. Իրավունքի վարդապետության և դոգմայի հասկացությունը.....	135
2. Իրավական վարդապետությունների տիպերը.....	137
<b>Գլուխ 2. Իրավունքի նորմը.....</b>	<b>141</b>
1. Իրավունքի նորմը որպես պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի հիմնական կատեգորիա .....	141
2. Իրավունքի նորմի հասկացությունը և կառուցվածքը.....	145
3. Իրավունքի նորմի հատկանիշները.....	149
4. Իրավունքի նորմի տեսակները .....	151
<b>Գլուխ 3. Իրավունքի աղբյուրները.....</b>	<b>155</b>
1. Իրավունքի աղբյուրների հասկացությունը և տեսակները...	155
2. Իրավունքի աղբյուրները Ռուսաստանի Դաշնությունում ...	162
<b>Գլուխ 4. Իրավասահմանում (իրավաստեղծում) .....</b>	<b>174</b>
1. Իրավասահմանման հասկացությունը և իրավասահման գործունեության տեսակները .....	174
2. Իրավասահման գործունեության սկզբունքները.....	178
3. Իրավասահման գործընթացի հիմնական փուլերը .....	182
4. Իրավաբանական տեխնիկա.....	186
<b>Գլուխ 5. Իրավունքի համակարգը և օրենսդրության համակարգումը .....</b>	<b>192</b>
1. Իրավունքի համակարգի հասկացությունը և կառուցվածքը .....	192
2. Իրավական կարգավորման օբյեկտը, առարկան և մեթոդը .....	197
3. Ռուսական իրավունքի հիմնական ճյուղերը .....	203
4. Իրավունքի համակարգը և օրենսդրությունը.....	206
5. Իրավասահման ակտերի համակարգումը .....	210
<b>Գլուխ 6. Իրավունքի համակարգերի տիպաբանությունը. մեր ժամանակի հիմնական «իրավական ընտանիքները» .....</b>	<b>212</b>
1. Իրավունքի համակարգերի դասակարգումը .....	212
2. Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքը .....	215
3. Օրենսդրության սոցիալիստական համակարգերը .....	223
4. «Ընդհանուր իրավունքի» իրավական ընտանիքը .....	225

5.	Հինդուսական իրավունքը .....	230
6.	Մուսուլմանական իրավունքը .....	232
7.	Աֆրիկայի սովորութային իրավունքը .....	236
<b>Գլուխ 7.</b>	<b>Իրավունքի գործողությունը .....</b>	<b>238</b>
1.	Իրավունքի գործողության հասկացությունը, մեխանիզմը և արդյունավետությունը .....	238
2.	Իրավունքի գործողությունը ժամանակի, տարածության մեջ՝ ըստ կարգավորման ոլորտի և ըստ անձանց շրջանակի .....	240
3.	Իրավունքի նորմերի իրագործումը .....	244
4.	Իրավունքի նորմերի կիրառումը .....	246
5.	Բացերև իրավունքում: Օրենքի համանմանություն: Իրավունքի համանմանություն .....	250
<b>Գլուխ 8.</b>	<b>Իրավունքի նորմերի մեկնաբանումը .....</b>	<b>253</b>
1.	Իրավունքի նորմերի մեկնաբանման հասկացությունը: Մեկնաբանման օբյեկտը, մեթոդը և առարկան .....	253
2.	Իրավունքի նորմերի մեկնաբանման եղանակները (հնարքները) .....	256
3.	Իրավունքի նորմերի մեկնաբանման-պարզաբանման տեսակները .....	260
4.	Իրավունքի նորմերի մեկնաբանման-բացատրման տեսակները .....	261
<b>Գլուխ 9.</b>	<b>Իրավական հարաբերությունը .....</b>	<b>265</b>
1.	Իրավահարաբերության հասկացությունը: Իրավահարաբերության օբյեկտը և առարկան .....	265
2.	Իրավաբանական փաստերը .....	266
3.	Իրավահարաբերության բովանդակությունը .....	268
4.	Իրավահարաբերության սուբյեկտները (մասնակիցները): Ֆիզիկական և իրավաբանական անձինք .....	270
5.	Իրավահարաբերության տեսակները .....	276
<b>Գլուխ 10.</b>	<b>Իրավախախտումը և իրավաբանական պատասխանատվությունը .....</b>	<b>279</b>
1.	Իրավախախտման հասկացությունը և իրավաբանական կազմը .....	279
2.	Իրավախախտումների տեսակները .....	282



3. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը.....	285
4. Իրավաբանական պատասխանատվության աեսակները .....	286
5. Իրավաբանական պատասխանատվության սկզբունքները .....	291
<b>Գլուխ 11. Իրավական կարգը և իրավական օրինականությունը.....</b>	<b>294</b>
1. Իրավական կարգի և իրավական օրինականության հասկացությունը.....	294
2. Իրավական օրինականության և իրավակարգի հատկությունները, սկզբունքներն ու երաշխիքները.....	296

**Ռուսաստանի  
գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս  
Վ. Ս. Ներսեսյանցի նախաբանը  
«Իրավունքի և պետության տեսություն»  
դասագրքի հայերեն հրատարակության առթիվ**

Իրավունքի և պետության տեսության տվյալ ուսումնական դասընթացի հայերեն թարգմանությունն իմ, որպես հեղինակի, համար բարձր պատիվ է: Այստեղ ես ցանկանում եմ, առաջին հերթին, սրտանց շնորհակալություն հայտնել այս աշխատության թարգմանիչներին և հրատարակողներին:

Այս դասագիրքն իրավաբանական բուհերի համար գրած իմ «Իրավունքի և պետության ընդհանուր տեսությունը» (Մ., 1999) դասագրքի առավել լայնածավալ նյութի համառոտ (մի շարք դեպքերում՝ ճշգրտված) շարադրանքն է:

Հայ ընթերցողների (ուսանողների, ասպիրանտների, դասախոսների) ուշադրությանն առաջարկվող այս դասագրքի սարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ ես իրավունքի ու պետության տեսության հիմնահարցերը շարադրում եմ իմ մշակած իրավունքի և պետության ազատական-իրավաբանական սիսթի հասկացողության ու մեկնաբանման հիման վրա: Միաժամանակ, ես լուսաբանում եմ իրավունքի և պետության մասին ուսմունքի երկու այլ սիսթի՝ լեգիստական (պոզիտիվիստական) ու բնաիրավական հիմնական դրույթները: Իրավունքի և պետության նկատմամբ այդ երեք տարբեր մոտեցումների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ազատական-իրավաբանական մոտեցումն իրավունքի ու պետության մասին տեսականորեն ավելի զարգացած ուսմունք է: Հենց դրա ուժով ազատական-իրավաբանական ուսմունքի շրջանակներում հաղթահարվել են մյուս մոտեցումների թերությունները և, միաժամանակ, պահպանվել են դրանց ճանաչողական արժեքավոր պահերը:

Ինչևհետ, ընթերցողը հնարավորություն ունի ինքը որոշելու համապատասխան մոտեցումների արժանիքներն ու թերությունները: Կարևոր է միայն, որպեսզի ընթերցողի դիրքորոշման ձևավորումը հիմնվի տարբեր մոտեցումների բովանդակության, իմացության և իրավունքի ու պետության մասին վեճի տեսական իմաստի հասկացողության վրա:

Քանի որ ավյալ ուսումնական ձեռնարկը հասցեագրված է եղել ռուս ընթերցողին՝ դրանում լուսարանվող նյութը (նորմատիվ-իրավական ակտերին, պետական-իրավական պրակտիկային կատարված հղումները) զվխավորապես կատված է ռուսական իրականության հետ: Այդ կապակցությամբ հայ ընթերցողը պետք է դիմի համապատասխան հայրենական աղբյուրներին: Այդ բացի վերացումը և դասագրքի բովանդակության պատշաճ համապատասխանեցումը Հայաստանում իրավաբանական կրթության պահանջներին՝ դասագրքի հետագա հրատարակումների խնդիրն է, եթե իհարկե, գործը հասնի դրան:

Լիախույս եմ, որ դասագիրքն իր ավանդը կներդնի բուհական իրավաբանական կրթության որակի բարձրացման և որակյալ հայ իրավաբանների նոր սերնդի ձևավորման գործում:

*Վ. Ս. Ներսեսյանց*  
Ռուսաստանի գիտությունների  
ակադեմիայի ակադեմիկոս,  
իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

1 ապրիլի 2001 թվական

## **Ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի դասընթացի հայերեն հրատարակության խմբագրի խոսքը**

Որպես իրավունքի և պետության տեսության իմացության աղբյուր՝ մատուցվում է մեր ժամանակի խոշորագույն իրավագետներից մեկի՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. Ս. Ներսեսյանցի հեղինակած դասընթացը:

Անգերագնահատելի է Վ. Ս. Ներսեսյանցի կատարած ներդրումն իրավագիտության, իրավունքի և պետության մասին գիտական մաքի զարգացման մեջ: Դրա վկայություններից են նրա ստեղծած խորհմասա մենագրությունները: Ահա դրանցից մի քանիսը՝ «Իրավունքի հեզելյան փիլիսոփայությունը. պատմությունը և ներկան» (1974), «Սոկրատես» (1977, 1996), «Հին Հունաստանի քաղաքական ուսմունքները» (1979), «Հեզել» (1979), «Անձր և պետությունը քաղաքական-իրավական մտքի մեջ» (1980), «Իրավունքը և օրենքը» (1983), «Պլատոն» (1984), «Իրավունքը սոցիալական կարգավորման համակարգում» (1986), «Դեպի իրավունք մեր ուղին: Սոցիալիզմից դեպի ցիվիլիզմ» (1992), «Իրավական պետականության զարգացման պատմությունը» (1993), «Քաղաքական և իրավական ուսմունքների պատմությունը» (5 հատորով, 1985-1995, համահեղինակ և պատասխանատու խմբագիր), «Իրավունքն ազատության մաթեմատիկական է» (1996), «Իրավունքի փիլիսոփայությունը» (1997), «Իրավագիտությունը» (1998), «Հեզելի իրավունքի փիլիսոփայությունը» (1998), «Իրավունքի և պետության ընդհանուր տեսության հիմնահարցերը» (1999, համահեղինակ և պատասխանատու խմբագիր), «Իրավունքի և պետության ընդհանուր տեսությունը» (1999) և այլն:

Լինելով խորհրդային խոշորագույն իրավագետ, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պրոֆեսոր Մտեփան Զեչեկյանի աշակերտներից մեկը՝ Վ. Ս. Ներսեսյանցն իր աշխատություններով ապացուցեց, որ եղել է նրա արժանավոր հետևորդը և, անկեղծ աւսած, գերազանցել իր ուսուցչին:

Դասընթացը շարադրված է հեղինակի կողմից տասնամյակների ընթացքում մշակած իրավունքի ու պետության ազատական-իրավաբանական հասկացողության և հայեցակարգի հիման վրա, որը խոշոր առաջընթաց քայլ է մեր դարաշրջանի երկու այլ խոշոր իրավական հայե-

ցակարգերի՝ լեզիզմի (պոզիտիվիզմի) ու յունաստորալիզմի (բնաիրավական իրավահասկացողության) համեմատ:

Դասագրքի առաջին գլխում Վ. Ս. Ներսեսյանցը հիմնավորապես լուծել է իրավունքի և պետության տեսության ու ամբողջապես իրավագիտության օբյեկտի երկվության (դուալիզմի) և առարկայի միասնականության հարցը: Ելնելով այն ճշմարտացի դրույթից, համաձայն որի՝ «գիտության օբյեկտն այն է, ինչը մենք գիտենք դրա մասին մինչև դրա գիտական ուսումնասիրությունը, իսկ առարկան ուսումնասիրված օբյեկտն է, այսինքն՝ այն, ինչը մենք գիտենք դրա մասին գիտական ճանաչումից հետո» և, ընդգծելով, որ «իրավաբանական գիտությունը թեկուզև ուսումնասիրում է երկու օբյեկտ (իրավունքը և պետությունը), սակայն, ինչպես ամեն մի գիտություն, կարող է ունենալ միայն մեկ առարկա», Վ. Ս. Ներսեսյանցն իրավացիորեն նշում է, որ «երկու փաստացի տարբեր օբյեկտ (իրավունքը և պետությունը) իրավաբանական գիտության շրջանակներում և դիրքերից հետագուտվում ու ճանաչվում են որպես տվյալ գիտության մեկ միասնական առարկայի երկու անհրաժեշտ բաղադրատարր (բաղկացուցիչ մաս)»: Ելնելով դրանից՝ նա եզրակացնում է, որ «իրավաբանական գիտությունը ծագել, զարգացել և զարգանում է որպես իրավագիտություն, որի առարկան իրավունքի հասկացությունն ու պետության համապատասխան իրավական հասկացությունն է»: Այլ կերպ ասած՝ «իրավաբանական գիտության առարկան իրավունքի հասկացությունն է, որը ներառում է պետության համապատասխան իրավական հասկացությունը և արտահայտում է իրավունքի ու պետության էական հատկությունները»:

Իրավունքի հասկացությունը սահմանելիս Վ. Ս. Ներսեսյանցը հարթահարում է այդ խնդրում ներկայումս ափրապետող լեզիստական մոտեցումը, որը նույնացնում է օրենքն իրավունքի հետ և, դրանով իսկ, հնարավորություն ընձեռում «օրենք» անվանումը կրող յուրաքանչյուր ակա՝ լինեն դրանք թեկուզ ստալինյան «Գուլագ արխիպելագի», թե հիտլերյան Բուհենվալդի, Մայդանեկի և Օսվենցիմի գոյությունն արդարացնող օրենքները, համարել իրավունք: Դեռևս 1946 թվականին գերմանական խոշորագույն իրավաբան Գ. Ռայբրուխն «Օրինական ոչ իրավունքը և վերօրինական իրավունքը» աշխատության մեջ ընդգծում էր, որ «իրավաբանական պոզիտիվիզմը կամ լեզիզմը պատասխանատու է նացիոնալ-սոցիալիզմի պայմաններում իրավունքի խեղաթյուրման համար, քանի որ՝ «Օրենքն օրենք է» իր կարգախոսով, իրավաբանական պոզիտիվիզմը (լեզիզմը) գերմանական իրավաբաններին զինա-

քափ արեց կամայական և հանցագործ բովանդակություն ունեցող օրենքների առջև»<sup>1</sup>:

Վ. Մ. Ներսեսյանցի համոզմամբ իրավունքն ունի իր օբյեկտիվ հատկությունները. «Իրավունքը մարդկանց ձևական (իրավական) հավասարության և ազատության, հետևաբար նաև՝ արդարության միասնական մասշտաբ և համընդհանուր չափ է»: Ինչ վերաբերում է օրենքին, ապա Վ. Մ. Ներսեսյանցն իրարից հստակ տարբերում է իրավական օրենքը և հակաիրավական օրենքը, և առաջ է քաշում ոչ թե ամեն մի օրենքի, այլ հենց իրավական օրենքի գերակայության սկզբունքը: Նա գտնում է, որ իրավունքն օրենքի վերածելու կամ իրավունքի պոզիտիվացման գործընթացում իրավունքը ձևաբ. է բերում պարասաղրականության հատկություն, այսինքն՝ բոլորի համար դառնում է պարտադիր: Սակայն պարասաղրականությունն իրավունքի նոր՝ թվով չորրորդ հատկությունն է: Այն ընդունելի է, եթե հաղորդվում է իրավական օրենքին: Հակառակ դեպքում պարասաղրականությունն օրենքի ուժ է հաղորդում բռնությանը և կամայականությանը:

Դասընթացում ազատական-իրավաբանական հայեցակարգի դիրքերից են լուծվել իրավունքի և պետության ծագման ու զարգացման բոլոր հիմնահարցերը: Վ. Մ. Ներսեսյանցի պատկերացմամբ եթե իրավունքը մարդկանց ձևական (իրավական) հավասարության, ազատության և արդարության համընդհանուր չափի նորմատիվ համակարգն է, ապա պետությունն այդ նույն հավասարության, ազատության և արդարության ինստիտուցիոնալ համակարգն է: Իրավունքի և պետության զարգացման ամբողջ պատմությունը Վ. Մ. Ներսեսյանցը մեկնաբանում է որպես մարդկանց հավասարության, ազատության և արդարության զարգացման պատմություն՝ իրարից տարբերելով այդ զարգացման այնպիսի աստիճաններ, ինչպիսիք են՝ հունական ու հռոմեական իրավունքը և պետությունը, որոնց ժամանակ ազատության ու հավասարության հիմքում ընկած էր էթնիկական հատկանիշը՝ դեմոսի անդամ լինելն Աթենքում, ու քաղաքացիությունը՝ Հռոմում: Դրան փոխարինելու եկած ֆեոդալիզմի ժամանակ մարդկանց հավասարությունն ու ազատությունը պայմանավորված էր նրանց դասային պառկանելությամբ: Բուրժուական իրականության մեջ բոլորի ազատության և հավասարության համար միասնական չափ է սահմանվում:

---

<sup>1</sup> Radbruch G. Gesetzliches Unrecht und übergesetzliches Recht (1946)  
// Radbruch G. Rechtsphilosophie. Heidelberg, 1983. S 352

Գասընթացը բաղկացած է ներածական բնույթ կրող առաջին բաժնից և խնդրո առարկային վերաբերող չորս բաժնից, որոնք նվիրված են իրավունքի և պետության էությանը, հասկացությանն ու արժեքին (II բաժին), հասարակության, իրավունքի և պետության փոխհարաբերություններին (III բաժին), պոզիտիվ իրավունքի վարդապետության ու դոգմայի հիմնական հասկացություններին և հայեցակարգերին (IV բաժին):

Գասընթացի յուրաքանչյուր բաժին, յուրաքանչյուր գլուխ, յուրաքանչյուր դրվագ, եւ կասեի՝ յուրաքանչյուր դրույթ աչքի է ընկնում արտակարգ խորաբախանցությամբ և արտացոլում է ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի, առանց չափազանցության, անսահման գիտելիքներն իրավունքի և պետության տեսության, առանց բացառության՝ բոլոր հիմնահարցերի վերաբերյալ:

Խելոք և խորաբախանց գիրքն ուսումնասիրության բարդ ու դժվարին օբյեկտ է: Այս դասագրքի յուրացմանը մեծապես կնպաստի ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի արդեն իսկ հրատարակված «Ցիվիլիզմի մանիֆեստը» աշխատությունը և նրա՝ «Իրավունքի փոխհարաբերություն» դասագրքի առաջին բաժինը, ինչպես նաև «Իրավագիտություն» մենագրությունը, որոնք պատրաստվում են հրատարակության:

Համալսարանում բազմամյա դասավանդման փորձն ինձ բերել է այն միանշանակ հետևության, որ իրավաբան դառնալու հնարավորություն ունի միայն այն ուսանողը (ինչու չէ՝ նաև ասպիրանտը, դասախոսը), որը նախքան իրավունքի ճյուղային գիտությունների ուսումնասիրումը՝ խորապես յուրացրել է իրավունքի և պետության տեսությունը: Իսկական իրավաբան դառնալու ցանկությամբ տոգորված երիտասարդի համար ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի գասընթացն անզնահատելի նվեր է, իրավագիտության դռները բացող ոսկե բանալի:

Վ. Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ  
Իրավագիտության դոկտոր

Ք. Տ. Օզովելով առիթից՝ իմ երախտիքի խոսքն եմ հղում հարգարժան Հրաչյա Թամրազյանին՝ այս դասագրքի տպագրությանը մեծապես նպաստելու համար:

Վ. Ն.

## Ներածություն

Դասագրքում շարադրված են իրավունքի և պետության տեսության բուհական ծրագրի բոլոր թեմաները: Դասագիրքը գրված է մեր մշակած՝ իրավունքի ու պետության ազատական-իրավաբանական տեսության դիրքերից, որի հիմքում ընկած է իրավունքի հասկացողությունը և հասկացությունն ու պետության համապատասխան իրավական հասկացողությունը (և հասկացությունը) որպես ձևական հավասարության սկզբունքի, այսինքն՝ որպես մարդկանց հասարակական կյանքում ազատության, հավասարության և արդարության համընդհանուր ու անհրաժեշտ ձևերի արտահայտություն:

Դասագիրքը բաղկացած է չորս բաժնից:

Առաջին բաժնում իրավունքի և պետության տեսության առարկայի ու մեթոդի ավանդական հարցերը շարադրված են իրավագիտության ազատական-իրավաբանական հայեցակարգի, իրավաբանական գիտությունների համակարգում իրավունքի ու պետության տեսության տեղի և դերի մասին համապատասխան նոր պատկերացումների համատեքստում:

Երկրորդ բաժնում շարադրված են իրավունքի և պետության տեսության էության, հասկացության ու արժեքի մասին ազատական-իրավաբանական ուսմունքի հիմնական դրույթները և այդ ուսմունքի հարաբերակցությունը բնական-իրավական ու լեզվաստական ուսմունքների հետ:

Երրորդ բաժնում շարադրված են ուսումնական դասընթացի ընդհանուր տեսական թեմաները, որոնք վերաբերում են իրավունքի և պետության ծագման ու զարգացման հիմնահարցերին, դրանց տիպաբանությանը, ձևերի և գործառույթների բնութագրերին, քաղաքացիական հասարակության ու իրավական պետության փոխհարաբերությանը:

Եզրավակիչ՝ չորրորդ բաժնում, շարադրված է պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի ազատական-իրավաբանական հայեցակարգը, ներառյալ՝ ուսումնական ծրագրի բոլոր համապատասխան թեմաների ու հարցերի լուսաբանումը:

Դասագրքում ներկայացված՝ իրավունքի և պետության տեսության հարցերի ազատական-իրավաբանական մեկնաբանությունը զուգորդվում է նույն հիմնահարցերի վերաբերյալ այլ մոտեցումների հիմնական դրույթների շարադրանքով:



## Բաժին I

### Իրավունքի և պետության տեսությունը՝ որպես ընդհանուր իրավաբանական գիտություն

#### Գլուխ I. Իրավունքի և պետության տեսության առարկան ու մեթոդը

##### 1. Իրավունքի և պետության տեսության՝ որպես ընդհանուր իրավաբանական գիտության առարկան ու մեթոդը

Իրավունքի և պետության տեսությունը հիմքային տեղ է զբաղում իրավաբանական գիտությունների համակարգում: Դա հիմնարար իրավաբանական գիտություն է, որն իր խնդիրներով, գործառույթներով, առարկայով և մեթոդով *ամբողջ իրավագիտության համար ունի ընդհանուր գիտական նշանակություն*: Դրանում կենտրոնացված են իրավունքի ու պետության մասին գիտական-տեսական մտքի առավել էական նվաճումները, իրավունքի և պետության մասին գիտելիքների հանրագումարում եղած տեսականորեն առավել կարևորն ու նշանակալիցը:

*Իրավունքի և պետության տեսության շրջանակներում հայտնաբերվում, սահմանվում ու մշակվում են ամբողջ իրավագիտության, դրա համընդհանուր գիտական հայեցակարգի և հասկացությունների հանրագումարի, դրա համակարգի ու կառուցվածքի, դրա գոյաբանական, իմացաբանական և արժեքաբանական բնութագրերի, այլ գիտությունների համակարգում դրա տեղի ու դերի մասին համընդհանուր գիտական (ընդհանուր տեսական) հիմնահարցերը:*

Իրավունքի և պետության տեսության հիմնական ընդհանուր գիտական խնդիրն ամբողջ իրավագիտության՝ որպես առանձին ինքնուրույն գիտության, առարկայի ու մեթոդի սահմանման և հիմնավորման մեջ է: Առաջին հերթին, դրանում է իրավունքի և պետության տեսության առարկայի ու մեթոդի էությունը: Սահմանել իրավունքի և պետության տեսության առարկան ու մեթոդը, նշանակում է սահմանել ամբողջ իրավագիտության առարկան ու մեթոդը, այսինքն՝ այն գիտության (և իրավաբանական գիտությունների գիտական համակարգի), որի ընդհանուր

տեսությունը և ընդհանուր գիտական հիմքն իրավունքի ու պետության տվյալ տեսությունն է:

Իրավունքի և պետության տեսության մասն ընդհանուր գիտական կարգավիճակի ու դերի հաշվառմամբ կարելի է ասել, որ իրավունքի և պետության տեսության առարկան ու մեթոդաբանությունն ամբողջ իրավագիտության առարկայի և մեթոդաբանության տեսական հիմնավորումը (հայտնաբերումը, պարզաբանումը, բացահայտումը և զարգացումը) է:

## 2. Իրավագիտության օբյեկտների երկվությունը (դուալիզմը) և առարկայի միասնականությունը

Յուրաքանչյուր գիտություն այն օբյեկտների մասին գիտելիքների արտադրության և կազմակերպման որոշակի եղանակ է, որոնց հետագումամբ այն զբաղվում է: Այս իմաստով՝ *իրավաբանական գիտությունն իրավաբանական գիտելիքների, այսինքն՝ այնպիսի օբյեկտների մասին գիտելիքների, ինչպիսին իրավունքն ու պետությունն են, արտադրության և կազմակերպման որոշակի եղանակ է:*

Գիտական ուսումնասիրման օբյեկտը տարբերվում է գիտության առարկայից: Միևնույն օբյեկտը կարող է ուսումնասիրվել տարբեր գիտությունների կողմից, ընդ որում, յուրաքանչյուր գիտություն տվյալ օբյեկտն ուսումնասիրում է իր հատուկ առարկայի և մեթոդի դիրքերից:

Օբյեկտն այն է, որ դեռևս ենթակա է ուսումնասիրման՝ համապատասխան գիտության ճանաչողական միջոցների և հնարքների օգնությամբ: Գիտական ուսումնասիրման գործընթացում օբյեկտի վերաբերյալ ելակետային էմպիրիկ գիտելիքները համալրվում են տեսական գիտելիքներով, այսինքն՝ հետազոտվող օբյեկտի, դրա ծագման, կենսագոյության և զարգացման օրինաչափությունների, դրա հիմնական էական հատկությունների, հատկանիշների ու բնութագրերի մասին հասկացությունների համակարգով: Այսպիսով, գիտական (տեսական) իմացությունը մտածողության մեջ ուսումնասիրվող օբյեկտի խոր ընկալման, այդ օբյեկտի մտավոր պատկերը (մոդելը) ստեղծելու ստեղծագործական գործընթաց է տվյալ օբյեկտի էական հատկությունների մասին հասկացությունների որոշակի համակարգի տեսքով:

Օբյեկտի այդ որոնելի էական հատկանիշները (դրանց հասկացական արտահայտմամբ) համապատասխան գիտության առարկան են:

Միանգամայն պարզեցված տեսքով կարելի է ասել, որ գիտության օբյեկտն այն է, ինչ մենք դրա մասին գիտենք *մինչև* դրա գիտական ուսումնասիրումը, իսկ առարկան՝ ուսումնասիրված օբյեկտն է, այսինքն՝

այն, ինչ մենք դրա մասին գիտենք գիտական ճանաչումից *հետ*: Ըստ էության, խոսքը ճանաչվող օբյեկտի և ճանաչված օբյեկտի գաղափարի (տեսական իմաստի, մտային պատկերի, տրամաբանական մոդելի) տարբերման մասին է:

Գիտության օբյեկտի և առարկայի մասին նշված դրույթները, ընդհանուր առմամբ, վերաբերում են նաև իրավաբանական գիտությանը: Ուստի, առավել ընդհանուր ձևով կարելի է ասել, որ *իրավաբանական գիտության օբյեկտներն իրավունքը և պետությունն են, իսկ այդ գիտության առարկան՝ իրավունքի ու պետության հիմնական էական հատկություններն են*: Այլ կերպ ասած՝ իրավաբանական գիտության առարկան իրավունքի և պետության հասկացություններն են, քանի որ գիտական (տեսական) իմացության պահանջներին համապատասխան՝ օբյեկտի էական հատկությունները կարելի է համարժեք արտահայտել միայն իմացության այնպիսի բարձրագույն ձևով, ինչպիսին հասկացությունն է:

Իրավաբանական գիտությունը թեկուզև ուսումնասիրում է երկու օբյեկտ (իրավունքը և պետությունը), սակայն, ինչպես ամեն մի գիտություն, ունի և ընդհանրապես կարող է ունենալ միայն մեկ առարկա: Դա նշանակում է, որ *երկու փաստացի տարբեր օբյեկտ (իրավունքը և պետությունը) իրավաբանական գիտության շրջանակներում և դիրքերից հետազոտվում ու ճանաչվում են որպես ավյալ գիտության մեկ միասնական առարկայի երկու անհրաժեշտ բաղադրատարր (բաղկացուցիչ մաս)*:

Այսպիսով, իրավունքի և պետության մասին միասնական գիտության առարկան կարող է լինել կա՛մ իրավունքի հասկացությունը, որն իր մեջ ներառում է պետության իրավական հասկացությունը (այսինքն՝ պետության մասին իրավական ուսմունքը, պետության իրավաբանական տեսությունը), կա՛մ պետության հասկացությունը, որն իր մեջ ներառում է իրավունքի հասկացությունը (այսինքն՝ իրավունքի մասին պետական ուսմունքը, իրավունքի պետական տեսությունը): Երկու տարբեր օբյեկտների (իրավունքի և պետության) մասին միևնույն տեսականորեն հետևողական գիտության հասկացական-առարկայական միասնության երրորդ ուղի գոյություն չունի և տրամաբանորեն չի էլ կարող լինել: Առանց այս երկու հասկացություններից մեկի տրամաբանական առաջնայնության մենք գործ կունենանք ոչ թե միասնական գիտության (միասնական տեսության), այլ տարբեր հասկացությունների և առարկաների էլկեկտիկ, ներքնապես հակասական բնութագրերի ու սահմանումների *խառնահավաքի* հետ:

*Իրավաբանական գիտությունը ծագել, զարգացել և զարգանում է որպես իրավագիտություն, որի առարկան իրավունքի հասկացությունն ու պետության համապատասխան իրավական հասկացությունն է:*

Իրավագիտության պատմությունն ու տեսությունը՝ որպես իրավունքի և պետության մասին միասնական իրավաբանական գիտություն, վկայում են, որ այդ գիտության շրջանակներում իրավունքի հասկացության և պետության հասկացության երկվությունը հաղթահարվում է, ու անհրաժեշտ հասկացական-առարկայական միասնականությունը ձեռք է բերվում հենց իրավունքի որոշակի հասկացության հիման վրա և դիրքերից, որը ներառում է պետության համապատասխան իրավական հասկացությունը, այսինքն՝ պետության ևսական (իրավունքի հասկացության դիրքերից) իրավական հասկությունները:

Այս դասագրքի հիմնահարցերի լուսաբանման ընթացքում մենք ելնում ենք *իրավունքի (համապատասխանաբար նաև պետության) ազատական-իրավաբանական հասկացությունից*, և իրավունքը մեկնաբանում ենք որպես ազատ անհատների ձևական հավասարություն, այսինքն՝ մարդկանց ազատության համընդհանուր ու անհրաժեշտ ձև: Իրավունքի այդ ընդհանուր հասկացությամբ *իրավագիտության իրավաբանական-ազատական հայեցակարգի միասնական առարկայում* ներառվում են դրա երկու օբյեկտները՝ պոզիտիվ իրավունքը՝ որպես ազատության նորմատիվ ձև, և պետությունը՝ որպես այդ նույն ազատության ինստիտուցիոնալ (կազմակերպական-իշխանական) ձև:

Այսպիսիով, մեր ազատական-իրավաբանական հայեցակարգի համաձայն՝ *իրավագիտությունը գիտություն է ազատության մասին:*

Իրավագիտության առարկայի հիմնահարցն այլ կերպ են լուծում լեզվագիտները (պոզիտիվիստները)<sup>1</sup>: Այս իմաստով հատկանշական է Հ. Քելզենի, որպես լեզվագիտի՝ նեոպոզիտիվիստական «իրավունքի մասին մաքուր ուսմունքի» ամենահետևողական հայեցակարգի հեղինակի դիրքորոշումը: Մի կողմից, ինչպես Քելզենի, այնպես էլ բոլոր լեզվագիտների (պոզիտիվիստների և նեոպոզիտիվիստների) համար իրավունքն իշխանության հրաման է (ցանկացած ազատ բովանդակությամբ), հարկադիր երանհանգ և պետության արդյունք, մի խոսքով՝ «հարկադիր կարգ»<sup>2</sup>: Մյուս կողմից, նա ձևական-նորմաբանական մեթոդի օգնությամբ իրավունքը (այսինքն՝ պետության կողմից սահմանված պոզիտիվ իրավուն-

<sup>1</sup> Իրավաբանական (ius-իրավունք) և լեզվատական (lex-օրենք) մոտեցումների հակադրությունը լուսաբանվում է II բաժնում

<sup>2</sup> Чистое учение о праве Ганса Кельзена. Вып. 1. М.: ИНИОН АН СССР. 1987. Էջ 50

քը) մեկնաբանում է որպես վերընթացող պարտադրականության նորմերի համակարգ՝ դեպի վարկածային «հիմնական նորմը» (և ոչ թե դեպի պետությունը) տանող, և այդ դիրքերից ցանկացած պետություն մեկնաբանում է որպես «իրավակարգ», որպես «իրավական պետություն»<sup>1</sup>: Ընդ որում, «իրավական պետություն» ասելով՝ Քելզենը նկատի ունի պոզիտիվ-իրավական (լեգիստատև) պետությունը, և այդ պատճառով նա մերժում է համընդհանուր իմաստով «իրավական պետությունը», որը նրա զնահատմամբ բխում է կեղծ բնական-իրավական պատկերացումներից:

Պետության այսպիսի իրավական (պոզիտիվ-իրավական) մեկնաբանությունը, ըստ Քելզենի, հնարավորություն է ընձեռում հաղթահարել «պետության և իրավունքի ավանդական երկվությունը» ու հասնել իրավագիտության (դրա նեոպոզիտիվիստական վարկածով) առարկայի միասնությանը՝ «իմացության առարկան միայն իրավունքն է»<sup>2</sup>: Ընդ որում, իրավունք ասելով՝ նկատի է առնվում պետության ցանկացած կամայական և հարկադիր հրահանգ:

*Իրավագիտության մեր իրավաբանական հայեցակարգը քելզենյան իրավագիտության լեգիստատև հայեցակարգի՝ որպես իրավունքի և պետության երկու արմատական հակադիր (և յուրովի հետևողական ու «մաքուր») ուսմունքների սիպերի հետ համադրելով, կարելի է ասել, որ երկու դեպքում էլ, թեկուզև սկզբունքորեն տարբեր ուղիներով ու տարբեր հիմքերով, ձեռք է բերվել իրավագիտության համապատասխան հայեցակարգի հասկացական-իրավական միասնություն՝ իրավունքի միասնական հասկացությունը (մեզ մոտ՝ ազատական-իրավաբանական, Քելզենի մոտ՝ համապատասխանաբար նորմատիվիստական-լեգիստատև) ներառում է գիտական ճանաչողության երկու օբյեկտն էլ (իրավունքը և պետությունը) և դրանց համար ընդհանուր ու միասնական հասկացություն է համարվում: Սկզբունքային տարբերությունն այն է, որ մեր մոտեցման մեջ խոսքն իրավունքի, պետության և իրավագիտության զուտ իրավաբանական հայեցակարգի մասին է (ձևական-իրավաբանական և ոչ թե բնական-իրավական հայեցակարգի, որը քննադատել է Քելզենը), իսկ քելզենյան մոտեցման մեջ խոսքն իրավունքի, պետության և իրավագիտության զուտ լեգիստատև (այսինքն՝ կամայական-հարկադրական) հայեցակարգի մասին է:*

<sup>1</sup> Чистое учение о праве Гаяса Кельзена. Вып.2. М.: ИНИОН АН СССР. 1988. т.2 111, 146

<sup>2</sup> Чистое учение о праве Гаяса Кельзена. Вып.2. М.: ИНИОН АН СССР. 1988. т.2 109, 146

Իրավունքի, պետության և իրավագիտության այս երկու հայեցակարգերն ավելի շուտ *խղեպական տիպեր են* (երկու սկզբունքորեն հակադիր բևեռներով և պարադիգմերով), քան այս կամ այն ժամանակում, այս կամ այն երկրում ամբողջ իրավագիտության իրական իրողություն: Մինչդեռ, իրավական մասին և ամբողջությամբ իրավագիտության իրական զարգացմանը ներհատուկ է բազմակարծությունը և սարբեր կարծիքների, դիրքորոշումների ու մտայնումների պայքարը, որոնք տեղակայված են իրավահասկացողության և պետության հասկացողության այս երկու ծայրահեղ բևեռների միջև, իսկ երբեմն էլ տիպաբանորեն սարբեր զաղափարների ու դրույթների էկլեկտիկ շփոթ և զարմանահրաշ համատեղում են:

Նախորդ շարադրանքը հնարավորություն է ընձեռում ձևակերպել իրավաբանական գիտության առարկայի մի շարք, իրենց տեսական իմաստով հավասարազոր բնորոշումներ: Այդ շարքում առավել համառոտը հետևյալ բնորոշումն է՝ *իրավաբանական գիտության առարկան իրավունքի հասկացությունն է*: Առարկայի նույն հասկացողությունը կարելի է արտահայտել փոքր-ինչ այլ կերպ՝ *իրավաբանական գիտության առարկան իրավունքի հասկացությունն ու պետության իրավական հասկացությունն է*: Նույնօրինակ իմաստը կարելի է արտահայտել նաև այլ կերպ՝ *իրավաբանական գիտության առարկան իրավունքի հասկացությունն է, որը ներառում է պետության համապատասխան իրավական հասկացությունն ու արտահայտում է իրավունքի և պետության էական հատկությունները*:

Վերը շարադրվածը կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝ *իրավաբանական գիտության առարկան իրավունքի և պետության էական առանձնահատկությունների ուսումնասիրությունն է դրանց հասկացական-իրավական ըմբռնմամբ ու արտահայտմամբ*:

## **Գլուխ 2. Իրավագիտության առարկայի և մեթոդի հասկացական-իրավական միասնականությունը**

### **1. Իրավաբանական իմացության առարկայի և մեթոդի հարաբերակցությունը, փոխկապվածությունն ու միասնականությունը**

Իրավաբանական գիտության առարկայի ազատական մեկնաբանությունն արտահայտում է իրավունքի և պետության տեսության ու, ամբողջությամբ, իրավաբանական իմացության առանձնահատկությունը, խնդիրները և նպատակները, համարժեք իրավաբանական տեսական

ձևով՝ իրավունքի ու պետության հասկացողությունը և բացատրությունը: Դա կարելի է իրականացնել իրավաբանական հասկացությունների ամբողջական համակարգի օգնությամբ, որն իրավունքի երակետային, ընդհանուր հասկացության կոնկրետացումն է (ուսումնասիրվող օբյեկտների հատկությունների նկատմամբ կիրառելով) և, որը նման կոնկրետացման գործընթացում որոշում է միասնական իրավաբանական գիտության առարկայի կառուցվածքը (կառուցվածքային բաղադրատարրերը), այսինքն՝ իրավաբանական գիտությունների համակարգը, յուրաքանչյուր իրավաբանական գիտության տեղն ու դերը տվյալ համակարգում, միասնական առարկայի կառուցվածքում:

Իրավաբանական գիտության առարկայի առանձնահատկության մեջ արտահայտված է նաև դրա մեթոդի առանձնահատկությունը:

Ընդհանրացված ասելով՝ *իրավաբանական գիտության (իրավունքի և պետության բուն տեսության) առարկայի ու մեթոդի միասնականությունը* հետևյալում է՝ առանձնահատուկ հասկացական-իրավաբանական գիտելիքը (այսինքն՝ իրավունքի և պետության մասին իրավաբանական-տեսական, հասկացական-իրավական գիտելիքը) միաժամանակ թե՛ իրավունքի ու պետության գիտական-իրավաբանական իմացության առարկան, և թե՛ դրանց իրավաբանական իմացության մեթոդն է (տիպը, ձևը, տվյալ օբյեկտների իմացության իրավաբանական մեթոդի արդյունքը):

Ինչպես յուրաքանչյուր մեթոդ, *իրավաբանական մեթոդը, որպես իրավաբանական իմացության ուղի՝ ճանապարհ է օբյեկտից դեպի առարկա*, իրավունքի և պետության մասին առաջնային (զգայական, էմպիրիկ) գիտելիքներից դեպի այդ օբյեկտների վերաբերյալ տեսական, գիտական-իրավաբանական (հասկացական-իրավական) գիտելիքները: Իրավաբանական իմացության (և իրավաբանական մտքի) այդ ուղղվածությունը դեպի իրավունքի հասկացությունն արտահայտում է իրավաբանական մեթոդի (իրավաբանական գիտության մեթոդի) էությունն ու տարբերակիչ առանձնահատկությունը:

Իրավաբանական մեթոդին ներհատուկ է աշխարհի նկատմամբ իրավական հայացքը, իրականության իրավական ընկալումը: Իրավաբանորեն ճանաչված իրականությունը (օբյեկտների աշխարհը) ի հայտ է գալիս որպես *իրավաբանական իրականություն, այսինքն՝ որպես ճանաչվող իրականության իրավական հատկությունների և կապերի համակարգ*:

## 2. Իրավաբանական մեթոդի հիմնական գործառույթները

Իրավունքի նոր հասկացության կոնկրետացման գործընթացը, դրա արտահայտությունը և ձևակերպումն ամբողջական իրավաբանական տեսության տեսքով, ներառյալ՝ նաև իրավունքի և պետության ընդհանուր տեսությունը, իրականացվում է իրավաբանական մեթոդի միջոցով: Այդ առումով, *իրավաբանական տեսությունն իրավաբանական մեթոդի արտահայտման ձևն է գործողության մեջ*, իրավաբանական գիտելիքների նոր համակարգի ստեղծումն է. իրավունքի միասնական հասկացության հիման վրա և դրա դիրքերից:

Իրավաբանական մեթոդի օգնությամբ իրավաբանական գիտության առարկան (իրավունքի հասկացությունը) կոնկրետացվում և ծավալվում է համապատասխան իրավաբանական տեսության (իրավաբանական գիտության)՝ որպես իրավունքի ու պետության մասին գիտելիքների հասկացական-միասնական համակարգ:

Այսպիսով, իրավաբանական մեթոդի, ինչպես ցանկացած այլ մեթոդի, իմացաբանական հնարավորությունները նախատեսված են իրավունքի նոր հասկացության ստեղծագործական (էվրիստիկական) ներուժով և սահմանափակված են դրա իմաստային շրջանակներով, դրա տեսական իմաստի սահմաններով, տվյալ իրավաբանական տեսության առարկայի ոլորտով:

Իրավաբանական մեթոդն իրավաբանական գիտության առանձնահատուկ ընդհանուր գիտական մեթոդն է: Որպես իրականության իրավաբանական իմացության առանձնահատուկ մեթոդ դա կատարում է *հետևյալ երկու հիմնական գործառույթը*.

1) իրավաբանական գիտելիքների ձեռքբերում.

2) իրավաբանական գիտելիքների տեսական (գիտական) համակարգի կառուցում:

Առաջին գործառույթն իրականացնելիս իրավաբանական մեթոդը հանդես է գալիս որպես իրականության առանձնահատուկ իրավաբանական հետազոտման մեթոդ, որի հետևանքով ձեռք է բերվում, բազմապատկվում, խորանում և զարգանում է իրավաբանական գիտելիքը: Այդ գիտելիքի իրավաբանական բնույթը պայմանավորված է նրանով, որ իրականության համապատասխան յուրացումը, հասկացողությունը և մեկնաբանությունն իրականացվում է *իրավունքի հասկացության դիրքերից, տեսանկյունից ու սահմաններում*, որն ընկած է տվյալ իրավաբանական մեթոդի հիմքում և ելակետային ձևով որոշում է այդ մեթոդի իրա-



վարանական-իմացաբանական կողմնորոշվածությունն ու ուղղվածությունը (ինտենցիոնալությունը):

Այդ նույն տարբերակիչ առանձնահատկությունները (եկակետային իրավաբանական-հասկացական կողմնորոշվածությունը և ուղղվածությունը) ներհասուկ են նաև իրավաբանական մեթոդին՝ որպես իրավաբանական տեսության (իրավաբանական գիտելիքների գիտական համակարգի) կառուցման և հիմնավորման եղանակ:

### 3. Հաջորդայնությունն ու նորամուծությունն իրավունքի և պետության տեսության զարգացման մեջ

Իրավունքի և պետության տեսության ու ամբողջությամբ իրավաբանական իմացության զարգացման գործընթացին ներհասուկ են ինչպես քանակական, այնպես էլ որակական փոփոխությունները:

*Իրավաբանական գիտելիքի քանակական փոփոխությունները* (դրաբազմապատկումը, ճշգրտումն ու կոնկրետացումը, դրա ծավալի մեծացումը և այլն) տեղի են ունենում ամբողջությամբ իրավունքի այս կամ այն հասկացության դիրքերից և սահմաններում, որն ընկած է իրավագիտության որոշակի հայեցակարգի, դրա մեթոդի ու առարկայի հիմքում:

*Իրավաբանական գիտելիքի որակական փոփոխությունները* կապված են իրավունքի նախկին հասկացությունից իրավունքի նոր հասկացության անցնելու, համապատասխանաբար, նոր մեթոդով և նոր առարկայով, նոր իրավաբանական տեսության ձևավորման հետ:

Իրավունքի նոր հասկացությունը նշանակում է նաև համապատասխանաբար նոր մոտեցում իրավաբանական գիտության ինչպես էմպիրիկ տրված օբյեկտների (իրավունքի և պետության), այնպես էլ նրանց մասին արդեն իսկ կուտակված տեսական գիտելիքների ուսումնասիրման, ընկալման և մեկնաբանման նկատմամբ:

Իրավաբանական գիտելիքի ու իրավունքի և պետության համապատասխան ընդհանուր տեսության զարգացման մեջ *նորության պահը սերտորեն կապված է հաջորդայնության պահի հետ*: Այստեղ, ինչպես ամենուր, նորը (իրավունքի նոր հասկացությունը, նոր տեսությունը, նոր հայեցակարգը և այլն) ծագում է սոսկ հնի (նախկին իրավաբանական գիտելիքների ամբողջ հանրագումարի) հիման վրա՝ որպես իրավունքի և պետության ըմբռնման ու ընկալման առավել խոր, առավել բովանդակալից ու առավել համարժեք ձև, և իրավունքի նոր հասկացությունը չի վերացնում իրավունքի նախկին հասկացություններն ու համապատասխան տեսությունները, այլ նախորդ իրավաբանական մտքի գիտականու-

րեն նշանակալից արդյունքները պահպանում է իրավաբանական իմացության նոր՝ ավելի բարձր մակարդակում, դրանք զարգացնում է առավել խոր տեսական դիրքերից, ավելի լայն ու համարժեք իմաստային դաշտում և համատեքստում:

### **Գլուխ 3. Իրավունքի և պետության տեսության տեղն ու նշանակությունը իրավագիտության մեջ**

#### **1. Իրավունքի և պետության տեսությունն իրավաբանական գիտությունների համակարգում**

Իրավաբանական գիտությունը բաղկացած է առանձին իրավաբանական ուսմունքների հանրագումարից (իրավաբանական գիտություններից), որոնցից յուրաքանչյուրն ուսումնասիրում է իրավունքի և պետության որոշակի կողմերը:

Գոյություն ունեն իրավաբանական գիտությունների տարբեր դասակարգումներ: *Իրավաբանական գիտության ընդհանուր համակարգում գոյություն ունեն առանձին իրավաբանական գիտությունների հետևյալ խմբերը.*

1) տեսական ու պատմական ուղղվածությամբ իրավաբանական գիտություններ (իրավունքի և պետության տեսությունը, քաղաքական ու իրավական ուսմունքների պատմությունը, իրավունքի և պետության ընդհանուր պատմությունը, հայրենական իրավունքի ու պետության պատմությունը և այլն):

2) ճյուղային իրավաբանական գիտություններ (սահմանադրական իրավունքը, վարչական իրավունքը, քաղաքացիական իրավունքը, քաղաքացիական դատավարական իրավունքը, քրեական իրավունքը, քրեական դատավարական իրավունքը, աշխատանքային իրավունքը, ընտանեկան իրավունքը, ձեռնարկատիրական իրավունքը, գյուղատնտեսական իրավունքը, բնապահպանական իրավունքը, միջազգային իրավունքը և այլն):

3) հատուկ իրավաբանական գիտություններ (իրավական վիճակագրությունը, քրեագիտությունը, քրեաբանությունը, դատական բժշկությունը, դատական հոգեբուժությունը և այլն):

Իրավաբանական-տեսական հետազոտություններով զբաղվում են ոչ միայն իրավունքի և պետության տեսությունը, այլ նաև մնացած բոլոր իրավաբանական գիտությունները (պատմական, ճյուղային, հատուկ): Ուստի, իրավունքի ու պետության տեսությունը լայն գիտական իմաս-

տով, այսինքն՝ իրավունքի և պետության մասին տեսական գիտելիքները, լիակատար, համակարգված ծավալով ու կոնկրետացված տեսքով ներկայացված են ամբողջ իրավաբանական գիտության մեջ:

*Իրավաբանական գիտությանը ներհատուկ կառուցվածքն իրավաբանական-տեսական գիտելիքների ստեղծման, կազմակերպման և կենսագոյության ձև (կարգ) է՝ ամբողջությամբ, միասնական իրավաբանական գիտության շրջանակներում առանձին գիտական ճյուղերի աեսքով:*

Բոլոր իրավաբանական գիտությունների առարկայի ու մեթոդի միասնականությունը ներառում է *երկու պահ*. Նախ՝ այդ միասնականությունը ենթադրում է, որ բոլոր իրավաբանական գիտություններն իրավունքի հասկացության կոնկրետացման տարբեր ձևեր (բեկման և արտահայտման տարբեր հարադրություններ) են: Դա նշանակում է, որ իրավաբանական գիտության ճյուղերը իմացաբանական տեսակետից ունեն հասկացական-իրավական կարգավիճակ ու բնույթ և, հետևաբար, իրավաբանական իմացության գիտական ձևեր, իրավաբանական-տեսական գիտելիքների արտահայտման ձևեր են, երկրորդը՝ դիսարկվող միասնականությունը ենթադրում է, որ իրավաբանական գիտության բոլոր ճյուղերը իրավունքի այդ նույն հասկացության կոնկրետացման և բեկման տարբեր ձևեր (հարադրություններ) են: Իսկ դա նշանակում է ամբողջությամբ համապատասխան իրավաբանական գիտության և դրա կառուցվածքային մասերի՝ առանձին իրավաբանական գիտությունների, հայեցակարգային միասնականություն (իրավունքի որոշակի հասկացության տեսանկյունից):

Տարբեր իրավաբանական գիտությունների առարկայի ու մեթոդի նշված միասնականությունը, անշուշտ, չի նշանակում դրանց նույնություն, քանի որ նման նույնության դեպքում ընդհանրապես չէր կարելի խոսել տարբեր իրավաբանական գիտությունների առկայության մասին:

Յուրաքանչյուր իրավաբանական գիտություն ամբողջ իրավաբանական գիտության կառուցվածքի առանձին բաղադրատարր է, *համեմատաբար ինքնուրույն գիտական ձևակազմավորում*, օբյեկտիվ իրականության հասկացական-իրավական ուսումնասիրման և արտահայտման ընդհանուր գործընթացում տեսական-իրավաբանական իմացության ու գիտելիքների առանձնահատուկ որոշակի բաղադրատարր է:

Եթե ամբողջությամբ իրավաբանական գիտության առարկան իրավունքի հասկացությունն է՝ դրա տեսական-իմացաբանական դրսևորման և արտահայտման բոլոր հարադրություններով, ապա յուրաքանչյուր առանձին իրավաբանական գիտության առարկան՝ որպես ամբողջությ-

յամբ իրավաբանական գիտության առարկայի բաղադրատարրը, իրավունքի տվյալ հասկացության որոշակի հարադրությունը, իրավաբանական իրողության որոշակի բաղադրատարրն է: Այսպիսով, *յուրաքանչյուր առանձին իրավաբանական գիտության առարկան սոցիալական աշխարհի հասկացական-իրավական ընկալման որոշակի հարադրությունն է:*

Իր գիտական կարգավիճակով ու նշանակությամբ իրավունքի և պետության տեսությունն ընդհանուր տեսական ու ընդհանուր գիտական բնույթի և նշանակության հիմնադիր իրավաբանական գիտություն է:

Վերը շարադրվածն ամբողջությամբ կարելի է ամփոփել հետևյալ կերպ. *իրավունքի և պետության տեսության առարկան իրավունքի ու պետության միասնական ընդհանուր հասկացության ձևակերպումը, մշակումը և կոնկրետացումն է, իրավագիտության՝ որպես իրավաբանական գիտությունների համակարգի, առարկայի ու մեթոդի տեսքով:*

## **2. Իրավունքի և պետության տեսությունն ու իրավագիտության միջնուղային կապերի զարգացումը**

Իրավաբանական գիտությունն այլ գիտությունների հետ զտնվում է բազմաթիվ կապերի և հարաբերությունների մեջ, որոնց իմաստավորումն ու զարգացումն իրավունքի և պետության տեսության կարևորագույն խնդիրներից մեկն է:

Իրավաբանական գիտությունը (ինչպես ամեն մի այլ գիտություն) այլ գիտությունների գիտելիքները կարող է օգտագործել ոչ թե ուղղակի և անմիջականորեն, այլ՝ միջնորդավորված ու անմիջականորեն՝ դրանք շեղելով իր առարկայի և մեթոդի առանձնահատուկ հասկացական-իրավական տեսանկյան ներքո՝ դրանք սոսկ վերափոխելով իրավաբանական գիտելիքի ու իմացության իրավաբանական եղանակի բաղկացուցիչ պահերի:

Իրավաբանական գիտությունում հաջողությամբ կիրառվում են այնպիսի *փիլիսոփայական և ընդհանուր գիտական մեթոդներ*, ինչպիսիք են՝ տրամաբանության, համակարգային ու կառուցվածքային-գործառնական վերլուծության, մոդելավորման, փորձարարության և այլ մեթոդներն ու հնարքները: Իրավագիտության մեջ հետազոտման այդ և այլ մեթոդների, եղանակների, հնարքների ու միջոցների օգտագործման արդյունավետությունը կախված է դրանց տեսական-իմացաբանական ներուժի պատշաճ կոնկրետացումից (իրավաբանական դարձնելուց) և իրավաբանական իմացության նպատակների ու խնդիրների, իրավա-

բանական մեթոդի իմաստի և պահանջների առանձնահատուկ տեսանկյան հնարավորություններից:

Իրավաբանական իմացության զարգացման կարևոր ուղղություններից մեկն այնպիսի *իրավաբանական գիտությունների ձևավորումն է, ինչպիսիք են՝ իրավունքի փիլիսոփայությունը, իրավունքի սոցիոլոգիան, իրավաբանական քաղաքագիտությունը, իրավական կիրենոնետիկան, իրավաբանական մարդաբանությունը, իրավաբանական տրամաբանությունը, իրավական վիճակագրությունը, իրավական ինֆորմատիկան* և մի շարք այլ գիտություններ: Իրավաբանական այդ ճյուղերը ձևավորվում են իրավագիտության և այլ սահմանակից գիտությունների հատման տեղում: Դրանց ի հայտ գալը վկայում է, որ իրավագիտության նախկին միջճյուղային կապերը հարակից գիտությունների հետ (դրանց հետազոտման մեթոդների ու հնարքների, որոշ տեսական դրույթների յուրացումն ու օգտագործումը և այլն) արդեն չեն բավարարում իրավաբանական գիտության տեսական-իմացաբանական պահանջումները, և այդ գիտությունը նոր, ինքնուրույն իրավաբանական գիտության շրջանակներում համապատասխան հիմնահարցերի համակարգային մշակման կարիք ունի:

Այսպիսով, գիտության ժամանակակից մակարդակում *իրավագիտության միջճյուղային կապերի զարգացումն այլ գիտությունների հետ* ոչ միայն հարակից գիտություններից պատրաստի գիտելիքների պարզ փոխառում է և դրանց անմիջական օգտագործում իրավաբանական հետազոտություններում, այլ *առանձնահատուկ իրավաբանական իմացության կատարելագործման ու խորացման ստեղծագործական գործընթաց՝* այլ գիտությունների իմացաբանական փորձի և նվաճումների հաշվառմամբ: Միայն այսպիսի ուղին կարող է հանգեցնել իրավաբանական գիտելիքների աճին, իրավունքի և պետության տեսության, իրավագիտության ու, ամբողջությամբ, իրավաբանական մտքի իրական խորացմանը և զարգացմանը:

## Բաժին II

### Իրավունքի և պետության էությունը, հասկացությունն ու արժեքը

#### Գլուխ 1. Իրավահասկացողության և պետության հասկացողության հիմնական հայեցակարգերը

##### 1. Իրավահասկացողության և պետության հասկացողության տիպաբանությունը

Իրավագիտության՝ որպես իրավունքի և պետության մասին գիտության համար ելակետային ու որոշիչ նշանակություն ունի դրա հիմքում ընկած իրավունքի հասկացողության (և հասկացության) այս կամ այն սիպլը: Հենց *իրավահասկացողության տիպն է որոշում իրավունքի և պետության իրավաբանական իմացության պարադիգմը, սկզբունքն ու մնուշը (իմաստային մոդելը)*, իրավագիտության համապատասխան հայեցակարգի սեփական գիտական-իրավական բովանդակությունը, առարկան և մեթոդը:

Իրավունքի և պետության էական հասկացական-իրավական միասնության ուժով՝ այստեղ և հետագայում դիտարկվող *իրավահասկացողության տիպերը միաժամանակ պետության հասկացողության ու մեկնաբանման տիպերն են: Ուստի, այն ամենը, ինչն իրավունքի և պետության տեսությունում ու ամբողջությամբ իրավագիտության մեջ, ներառյալ՝ ճյուղային գիտությունները, խոսվում է իրավունքի մասին, իր էությանմբ, վերաբերում է նաև պետությանը, և այն ամենը, ինչը խոսվում է պետության մասին՝ վերաբերում է նաև իրավունքին:* Այնպես որ, որտեղ մենք հակիրճության համար խոսում ենք իրավահասկացողության և այլնի մասին, ենթադրվում է նաև պետության համապատասխան հասկացողությունը, դրա մեկնաբանությունը և այլն:

Իրավահասկացողության տեսակի որոշիչ դերը պայմանավորված է ցանկացած հետևողական, հիմնավոր համակարգված, զարգացած և կազմակերպված իրավաբանական տեսության շրջանակներում իրավունքի հասկացության (համապատասխանաբար՝ նաև պետության հասկացության) գիտական-իմացաբանական կարգավիճակով ու նշա-

նակությամբ: Ինչպես սերմի մեջ տրված է բույսի որոշակի ապագան, այնպես էլ իրավունքի հասկացության մեջ գիտական-վերացական (խտացված և կենտրոնացված) տեսքով բովանդակվում է որոշակի իրավաբանական տեսություն, իրավագիտության որոշակի հայեցակարգի (և տիպի) տեսական-իրավական իմաստ և բովանդակություն: Այսպիսով, եթե *իրավունքի հասկացությունը խտացված իրավաբանական տեսություն է, ապա իրավաբանական տեսությունը՝ իրավունքի ծավալուն հասկացությունն է:* Չէ՞ որ, հենց իրավաբանական գիտությունն է ամբողջությամբ (որպես իրավունքի և պետության մասին հասկացական-տեսական գիտելիքի հանրագումար) իրավունքի հասկացության ու պետության համապատասխան իրավական հասկացության համակարգված և լիակատար բացահայտումը՝ որոշակի տեսության տեսքով:

Իրավահասկացողության տիպաբանությունը, այսինքն՝ իրավունքի մեկնաբանման սարքեր տեսակների դասակարգումը և դրանց բաժանումը միառիպ (միասեռ) խմբերի, կարելի է իրականացնել սարքեր հիմքերով (չավանդիչներով): Մեր կողմից ձևակերպված՝ իրավունքի և պետության առարկայի սահմանման տեսանկյունից էական նշանակություն ունի իրավահասկացողության հետևյալ երեք տիպի առանձնացումը՝ լեգիտական, բնական-իրավական և ազատական-իրավաբանական:

## 2. Լեգիզմ

Իրավահասկացողության լեգիտական տիպին բնութագրական է իրավունքի (որպես պաշտոնական իշխանության կամքից և կամայականությունից անկախ, որոշակի օբյեկտիվ էության) և օրենքի (որպես իշխանության հարկադիր-պարտադիր պատվիրանի) նույնականացումը: Համաձայն լեգիզմի՝ իրավունքը պետության կամայական արդյունքը, նրա հրամանը (հարկադիր հրահանգը, կանոնը, ակտը, նորմը) է:

Լեգիզմին և ամբողջությամբ «իրավաբանական պոզիտիվիզմին» բնութագրական են արհամարհանքը մարդու ու քաղաքացու իրավունքների նկատմամբ, իշխանության ջատագովումը և դրա օրինաստեղծ հնարավորությունների գերազնահատումը: Այդ իմաստով, լեգիզմն *ավտորիտարիզմի նորմատիվ արտահայտությունն է:* Լեգիզմի պաթոսը և ձգտումը բոլորին իշխանական-հրամայական կանոններին ու հրահանգներին ենթարկելն է: Այստեղ ամենուր տիրապետում է այն պատկերացումը, որ մարդն իշխանությանը ենթակա օբյեկտ է և ոչ թե ազատ էակ:

Նոր ժամանակներում լեզվաստական մտտեցումը հիմնավորում է *Թոմաս Հորսը*՝ Լևիաֆան-պետության բացարձակության ջատագովը: «Օրենքի իրավական ուժը, - ընդգծում էր նա, - այն է, որ դա սուվերենի հրաման է»<sup>1</sup>: Ընդ որում, «օրենք» ասելով՝ նկատի է առնվում ամբողջ գործող (պոզիտիվ) իրավունքը: Հետագայում նման իրավահասակացողությունը գերի դարձավ, այսպես կոչված, «իրավաբանական պոզիտիվիզմի» (և նեոպոզիտիվիզմի) սարքեր ուղղությունների ներկայացուցիչների համար, որը, ըստ էության, ոչ թե իրավաբանական, այլ հենց լեզվաստական պոզիտիվիզմ (և նեոպոզիտիվիզմ) է:

*«Իրավաբանական պոզիտիվիզմի» հիմնական գաղափարների ու դրույթների թվին են դասվում իրավունքի մեկնաբանությունը՝ որպես իշխանության ստեղծագործություն, իշխանական հարկադրականությունը՝ որպես, վերջին հաշվով, իրավունքի միակ սարքերիչ առանձնահատկություն, իրավունքի վերլուծության ձևական-տրամաբանական և իրավաբանական-դոգմատիկ մեթոդները, իրավունքի մասին ուսմունքի «մաքրագրումը» իրավունքի էության, բնույթի, պատճառների, արժեքների վերաբերյալ տարբեր տեսակի «մետաֆիզիկական» դրույթներից:*

Նման պատկերացումները XIX դարում զարգացրել են Դ. Օստինը, Շ. Ամոսը և ուրիշները՝ Անգլիայում, Բ. Վինդշայդը, Կ. Հերբերը, Կ. Բեռգրոմը, Պ. Լաբանդը, Ա. Ֆիտելմանը և ուրիշները՝ Գերմանիայում, Կաբանատուն և ուրիշները՝ Ֆրանսիայում, Ե. Վ. Վասկովսկին, Ա. Խ. Հովսստենը, Դ. Դ. Գրինը, Ս. Վ. Պախմանը, Գ. Ֆ. Շերշենկիչը և ուրիշները՝ Ռուսաստանում: XX դարում այս մտտեցումը ներկայացված է «իրավաբանական» նեոպոզիտիվիզմի այնպիսի ուղղությունների կողմից, ինչպիսիք են՝ Վ. Դ. Կասկովի «ընդհանուր լեզվաբանությամբ բարեփոխված իրավագիտությունը», Հ. Բելզենի «իրավունքի մասին մաքուր ուսմունքը», Գ. Հարտի «իրավունքի հայեցակարգը» և այլն:

Անգլիական վերլուծական իրավագիտության նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Դ. Օստինը՝ «Պոզիտիվ իրավունքի փիլիսոփայության մասին» իր աշխատությունում իրավունքը բնութագրել է որպես «քաղաքական ղեկավարի կամ սուվերենի կողմից սահմանված կանոնների ազդեցատ» և ընդգծել է, որ «Յուրաքանչյուր իրավունք հրաման է»<sup>2</sup>: Շ. Ամոսը նույն կերպ պնդում էր, որ «իրավունքը պետության գերագույն քաղաքական իշխանության հրամանն է՝ տվյալ հասարակության մեջ անձանց գործողությունները վերահսկելու նպատակով»<sup>3</sup>: Գ. Ֆ. Շեր-

<sup>1</sup> Гоббс Т. Левиафая. М., 1936. էջ 214

<sup>2</sup> Austin J. Lectures on Jurisprudence or the Philosophy of Positive Law. L., 1873. էջ 89, 98

<sup>3</sup> Amos Sh. A systemstic View of the Science of Jurisprudence. L., 1872 էջ 73



շենհիշը նույնատիպ հայացքների կողմնակից էր. «Իրավունքի յուրաքանչյուր նորմ,- գրում էր նա,- հրաման է»<sup>1</sup>: Նրա գնահատմամբ, իրավունքը՝ «պետության ստեղծագործությունն է», իսկ պետական իշխանությունը, նա բնութագրում է որպես «նախնական փաստ, որից սկիզբ են առնում մեկը մյուսից կառչած իրավունքի նորմերը»<sup>2</sup>:

Պետական իշխանությունն իր հրամանով ծնում է իրավունք, այսպիսին է իրավահասկացողության սովյալ տիպի *հավատամքը (կրեդոն)*: Այս տեսանկյունից այն ինչ հրամայում է իշխանությունը, իրավունք է: Դրանով իսկ իրավունքի տարբերությունը կամայականությունից սկզբունքորեն զրկվում է օբյեկտիվ և բովանդակային իմաստից ու նման մոտեցման հեռուդրների համար ունի սոսկ սուբյեկտիվ և ձևական բնույթ՝ որոշակի սուբյեկտի (պետության մարմնի) կողմից, որոշակի ձևով (այս կամ այն ակտի՝ օրենքի, հրամանագրի, որոշման, շրջաբերականի և այլն) հաստատված ակնհայտ կամայականությունը ճանաչվում է իրավունք:

Լեգիստական գրականության մեջ լայն տարածում է գտել իրավունքի հասկացության սահմանումը՝ որպես նորմերի համակարգ, որը սահմանված կամ թույլատրված է պետության կողմից և ապահովված է նրա հարկադրանքի ուժով: Այն հանգամանքը, որ պաշտոնապես գործող (պոզիտիվ) իրավունքի դրույթները (նորմերը) հաստատված են պետության կողմից և ապահովված են պետական հարկադրանքով, ճիշտ է, սակայն դա *անբավարար է* իրավունքի պատշաճ հասկացության, նման պաշտոնական-իշխանական սահմանումների (նորմերի)՝ որպես հենց իրավական երևույթների (իրավական էության երևույթների), որպես ընդհանրապես իրավունքի մեկնաբանման համար, քանի որ այդպիսի լեգիստական սահմանման համար իրավունքը կամայականությունից, իրավական նորմը՝ իշխանության կամայական սահմանումից, իրավական օրենքը՝ հակաիրավական օրենքից տարբերակելու ոչ մի չափանիշ չկա:

### 3. Յուսնատուրալիզմ

Իրավահասկացողության բնական-իրավական (յուսնատուրալիստական) տիպի տարբեր հայեցակարգերի համար որոշիչ նշանակություն ունի բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի տարբերակումը:

<sup>1</sup> Шершеневич Г.Ф. Общая теория права. М., 1910. Вып. 1 էջ 281

<sup>2</sup> Шершеневич Г.Ф. Указ. соч. էջ 314

Տարբեր բնական-իրավական հայեցակարգերի հեղինակները տարբեր ձևով են պատկերացնում բնական իրավունքի կոնկրետ բովանդակությունը: Ընդ որում, որպես բնական իրավունք մեկնաբանվում են այնպիսի տարբեր երևույթներ, ինչպիսիք են՝ բոլոր մարդկանց բնական հավասարությունը և ազատությունը, անհավասարության ու արտոնությունների նկատմամբ բնական իրավունքը, արժանապատվության, մարդու այս կամ այն անօտարելի իրավունքների և ազատությունների (սկսած նման առանձին իրավունքներից և ազատություններից՝ մինչև այդ բնագավառում ժամանակակից համաշխարհային չափանիշները) նկատմամբ բնական իրավունքը և այլն:

Պոզիտիվ իրավունքը, հակառակը, յուսնատուրայիսաների կողմից դիտարկվում է որպես շեղում (որպես անտեսում, խեղաթյուրում, բացասում և այլն) բնական իրավունքից, որպես մարդկանց (պաշտոնական իշխանությունների) արհեստական, սխալ կամ կամայական սահմանում:

Բնական-իրավական մոտեցմանը ներհատուկ են ինչպես տեսական ու գործնական բնույթի *արժանիքներ* (իրավունքի օբյեկտիվ էության որոշումները, բոլոր մարդկանց բնական ազատության և հավասարության, մարդու անօտարելի իրավունքների ու ազատությունների, իրավական պետության գաղափարների հռչակումը), այնպես էլ *թերություններ* (իրավունքը չփոթելը ոչ իրավական երևույթների՝ բարոյականության, կրոնի և այլնի հետ, ձևական-իրավականը՝ փաստացի-բովանդակայինի հետ, ամեն մի ոչ իրավականից իրավունքը սարքերելու հստակ ձևականացված չափանիշի բացակայությունը, պոզիտիվ իրավունքի նկատմամբ անուշադրությունը և բնական ու պոզիտիվ իրավունքի միջև անհրաժեշտ փոխադարձ կապի բացակայությունը և այլն):

Բնական-իրավական մոտեցման էական թերությունն իրավունքի տեսության առանցքային հիմնահարցի՝ իրավունքում էության և երևույթի տարբերության ու փոխհարաբերության ոչ ճիշտ մեկնաբանման մեջ է:

Այն, ինչ յուսնատուրայիստներն ասում են իրավունքի օբյեկտիվ էության վերաբերյալ, ոչ թե պետականորեն սահմանված պոզիտիվ իրավունքի էությունն է, այլ սոսկ բնական իրավունքի՝ նրանց վարկածները, որին, բացի այդ, կամայականորեն վերագրվում են իրական, փաստացի գործող իրավական երևույթի հատկություններ:

Այսպիսով, բնական իրավունքը ոչ միայն բնականորեն տրված, այլ նաև բնականորեն գործող իրավունքն է: Այստեղից էլ՝ բնական-իրավական հայեցակարգերին ներհատուկ *իրավական երկվությունը*՝ միաժա-

մանակ գործող իրավունքի երկու համակարգերի (բնական իրավունքի և պաշտոնական իրավունքի) մասին պատկերացումը:

Բնական-իրավական ուսմունքներում, ըստ էության, անտեսվում են իրավունքում էության ու երևույթի փոխհարաբերության յուրահատուկ իմաստը և առանձնահատկությունները, տվյալ վայրում ու տվյալ ժամանակում պաշտոնապես գործող իրավական երևույթի (օրենքի, պոզիտիվ իրավունքի) տեսքով իրավունքի էության պոզիտիվացման (պետական ճանաչման, արտահայտման և սահմանման) գործընթացի հատուկ (հանրային-իշխանական) բնույթը:

Յուսնատուրալիզմի ներկայացուցիչներին հետաքրքրում է ոչ այնքան պաշտոնապես գործող (ոչ իսկական) պոզիտիվ իրավունքի կատարելագործումը և դրա վերածումն իսկական պոզիտիվ իրավունքի՝ բնական իրավունքի իմաստի ու հատկությունների հրենց հասկացողության ոգով, այսինքն՝ այնպիսի պոզիտիվ իրավունքին հասնելը, որը կարտահայտեր բնական իրավունքի այնպիսի որոշակի էական հատկություններ, ինչքան ինքը՝ բնական իրավունքը, որը, որպես միակ իսկական իրավունք, մարմնավորում է իրավական էությունն ու դրա համար էլ անմիջականորեն (բնականորեն) գործում է որպես փաստացի իրավական երևույթ:

Այդ պատճառով էլ *յուսնատուրալիզմի մեջ բացակայում է իրավական օրենքի իր հասկացությունը, այսինքն՝ իրավունքի էությունը մարմնավորող պոզիտիվ իրավունքը:*

#### **4. Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տիպը**

Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տիպի հիմքում ընկած է ձևական հավասարության սկզբունքը:

Ազատական-իրավաբանական հասկացողությունն իր մեջ ներառում է ոչ միայն իրավունքի հասկացողությունը (ինչպես իրավունքի էությունը, այնպես էլ իրավական երևույթը՝ իրավական օրենքի ձևով), այլ նաև պետության իրավական հասկացողությունը որպես ձևական հավասարության սկզբունքի արտահայտման և գործողության ինստիտուցիոնալ-իշխանական ձևի, որպես համընդհանուր հանրային իշխանության կազմակերպման իրավական ձևի:

Տարբեր մարդկանց իրավական հավասարեցման հիմքը (և չափանիշը) հասարակական հարաբերություններում *անհատի ազատությունն է, որը ճանաչվում ու հաստատվում է նրա իրավունակության և իրավասուրյեկտության ձևով:*

Ճևական հավասարությունը, որպես իրավունքի էություն և սկզբունք, իր մեջ ներառում է երեք փոխկապակցված, փոխլրացնող և միմյանց ենթադրող (մեկը մյուսին նկատի ունեցող) բաղադրատարր, *իրավունքի երեք էական հատկություն՝*

- 1) համընդհանուր հավասար չափի (նորմ)։
- 2) այդ հավասար կարգավորիչ չափի (նորմի) բոլոր հասցեատերերի ձևական ազատություն։
- 3) բոլորի համար միատեսակ հավասար կարգավորման ձևերի համընդհանուր արդարություն։

Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տեսության մեջ իրավական էության և իրավական երևույթի, իրավունքի ու օրենքի տարբերակման ու հարաբերակցության հիմնահարցերը մեկնաբանելիս հաղթահարվել են յուսմատուրալիզմին և լեգիզմին ներհատուկ հակադիր ծայրահեղությունները և թերությունները։

Ազատական-իրավաբանական մոտեցման շրջանակներում *իրավունքի մեջ էության և երևույթի փոխադարձ կապը կրում է անհրաժեշտ ու օրինաչափ բնույթ*, օբյեկտիվ իրավական էությունը (ձևական հավասարությունը) որոշակի իրական իրավական երևույթի (պետության կողմից սահմանված համապարտադիր օրենքի, որն արտահայտում է ձևական հավասարության սկզբունքի հատկությունները և պահանջները) էությունն է, իսկ իրավական երևույթը (ձևական հավասարության սկզբունքի հատկությունները և պահանջներն արտահայտող համապարտադիր օրենքը) հենց միայն տվյալ որոշակի էության (ձևական հավասարության) երևույթն է (արտահայտությունը)։ Իրավական էությունը (ձևական հավասարությունը) դրսևորվում է համապարտադիր օրենքում (իրականության իրավական երևույթում), իսկ իրավական երևույթը (համապարտադիր օրենքը) արտաքին իրական իրողության մեջ դրսևորում, արտահայտում է իրավական էությունը (ձևական հավասարությունը)։

Միայն իրավական էության ու իրավական երևույթի միջև նման անհրաժեշտ կապի հաշվառմամբ հնարավոր է, *իրավական օրենքի տեսքով*, այսինքն՝ պետության սահմանած պաշտոնապես գործող համապարտադիր պոզիտիվ իրավունքի տեսքով, որը նորմատիվ կոնկրետացված ձևով արտահայտում է ձևական հավասարության սկզբունքի հատկությունները և պահանջները, հասնել դրանց որոնելի միասնականությանը։ Իրավական օրենքի տեսքով իրավական էության և իրավական երևույթի այսպիսի միասնությունը լեգիզմի ու յուսմատուրալիզմի դիրքերից անհասանելի է։

Տվյալ սկզբունքային հանգամանքը վկայում է, որ ազատական-իրավաբանական մոտեցումն արտահայտում է յուսնատուրալիզմից կամ լեզիզմից տեսականորեն ավելի զարգացած իրավահասկացողության և իրավունքի տեսության առարկայի մեկնաբանման հայեցակարգ:

Իրավահասկացողության տվյալ տիպը և դրան համապատասխան իրավագիտության հայեցակարգը մենք անվանում ենք *իրավաբանական-ազատական (կամ ազատական)*, քանի որ, համաձայն մեր մեկնաբանման, *իրավունքը մարդկանց ազատության համընդհանուր ու անհրաժեշտ ձևն է*, իսկ ազատությունը (դրա կեցությունը և իրացումը) սոցիալական կյանքում հնարավոր և իրական է միայն որպես իրավունք, սոսկ իրավական ձևով:

Ազատական իրավահասկացողությամբ ենթադրվող իրավունքը սոսկ այն անհրաժեշտ իրավական նվազագույնն է, առանց որի չկա և չի կարող լինել իրավունք ընդհանրապես, ներառյալ՝ նաև իրավական օրենք:

Իրավական հավասարությունն ազատների հավասարությունն է, հավասարությունն ազատության մեջ՝ անհատների ազատության ընդհանուր մասշտաբն ու հավասար չափը: Իրավունքը խոսում և գործում է նման հավասարության լեզվով ու միջոցներով և դրա շնորհիվ հանդես է գալիս որպես մարդկանց համատեղ կյանքում ազատության կեցության արտահայտման ու իրականացման համընդհանուր և անհրաժեշտ ձև: Այս իմաստով կարելի է ասել, որ *իրավունքն ազատության մաթեմատիկական է*:

*Սոցիալական ոլորտում հավասարությունը միշտ էլ իրավական հավասարություն, ձևական-իրավական հավասարություն է*: Չէ՞ որ իրավական հավասարությունը, ինչպես ամեն մի հավասարություն, վերացարկված է (սեփական հիմքով և չափանիշով) փաստացի սարքերություններից, ուստի և անհրաժեշտաբար ու ըստ բնորոշման կրում է ձևական բնույթ:

*Իրավունքի պատմությունը ձևական (իրավական) հավասարության բովանդակության, ծավալի, մասշտաբի և չափի առաջադիմող էվոլյուցիայի պատմությունն է, այդ սկզբունքի՝ որպես իրավունքի ցանկացած համակարգի սկզբունքի, ընդհանրապես իրավունքի, պահպանմամբ*: Մարդկային հարաբերություններում ազատության ու իրավունքի պատմական զարգացման տարբեր փուլերին բնորոշ են ազատության իրենց մասշտաբը և իրենց չափը, ազատության ու իրավունքի սուբյեկտների և հարաբերությունների իրենց շրջանակը, մի խոսքով, ձևական (իրավական) հավասարության սկզբունքի իրենց բովանդակությունը: Այնպես

որ, ձևական հավասարության սկզբունքն իրավունքին մշտապես ներհատուկ սկզբունք է՝ պատմականորեն փոփոխվող բովանդակությամբ:

Ամբողջությամբ ձևական հավասարության սկզբունքի բովանդակության, ծավալի, գործողության ոլորտի (և գործող իրավունքում ու պետության մեջ դրա իրականացման) պատմական էվոլյուցիան ոչ թե ժխտում, այլ, հակառակը՝ ամրապնդում է տվյալ սկզբունքի (և դա կոնկրետացնող նորմերի համակարգի) նշանակույթունն իրավունքի տարբերակիչ առանձնահատկության տեսքով՝ սոցիալական կարգավորման այլ տեսակների (բարոյական, կրոնական և այլն) հետ դրա հարաբերակցությամբ և տարբերությամբ: «Լերոզյալի հաշվառմամբ կարելի է ասել, որ *իրավունքն ազատության արտահայտման նորմաախիվ ձև է հասարակական հարաբերություններում մարդկանց ձևական հավասարության սկզբունքի միջոցով:*

*Իրավական հավասարությունը և իրավական անհավասարությունը (հավասարությունն ու անհավասարությունն իրավունքում) նույն կարգի (մեկը մյուսին ենթադրող և լրացնող) իրավական սահմանումներ, բնութագրեր ու հասկացություններ են, որոնք նույն չափով հակադիր են փաստացի տարբերություններին և աարբերվում են դրանցից: Տարբեր սուբյեկտների իրավական հավասարության սկզբունքը ենթադրում է, որ նրանց ձեռք բերվելիք իրական սուբյեկտիվ իրավունքները և իրավաբանական պարտականություններն անհավասար կլինեն: Իրավունքի շնորհիվ փաստացի տարբերությունների քառսը վերափոխվում է միասնական հիմքով և ընդհանուր նորմով համաձայնեցված հավասարության ու անհավասարության իրավական կարգի:*

Տարբեր անհատներին ձևականորեն հավասար ճանաչելը նրանց հավասար իրավունակության ճանաչումը, համապատասխան բարիքների, կոնկրետ օբյեկտների և այլնի նկատմամբ այս կամ այն իրավունքի ձեռքբերման հնարավորությունն է, սակայն դա չի նշանակում անհատական-կոնկրետ իրերի, բարիքների և այլնի նկատմամբ արդեն իսկ ձեռք բերված կոնկրետ իրավունքների հավասարություն: Տարբեր մարդկանց ձևական հավասարության ու ձևական իրավունակության դեպքում նրանց կողմից իրականում ձեռքբերված սուբյեկտիվ իրավունքները և իրավաբանական պարտականություններն անխտասափելիորեն (այդ մարդկանց միջև տարբերությունների, նրանց իրական հնարավորությունների, նրանց կյանքի պայմանների և հանգամանքների տարբերության ուժով և այլն) կլինեն անհավասար: *Տարբեր անձանց կողմից ձեռքբերված իրավունքների և պարտականությունների այսպիսի տարբերությունը, ոչ թե այդ անձանց ձևական (իրավական) հավասարութ-*

յան, դրանց հավասար իրավունակության սկզբունքի խախտման, այլ հենց պահպանման անհրաժեշտ արդյունքն է: Չեռբերված իրավունքների և ազատությունների տարբերությունը չի խախտում ու չի վերացնում ձևական (իրավական) հավասարության սկզբունքը:

Մարդկանց հասարակական կյանքում ազատության կեցության և արտահայտման որևէ այլ ձև, բացի իրավականից, մարդկությունը մինչև օրս չի հայանաբերել:

*Մարդիկ ազատ են իրենց հավասարության չափով և հավասար են իրենց ազատության չափով:* Ոչ իրավական ազատությունը, ազատությունն առանց համընդհանուր մասշտաբի և միասնական չափի, մի խոսքով, այսպես կոչված, «ազատությունը» առանց հավասարության՝ էլիտար արտոնությունների գաղափարախոսությունն է, իսկ, այսպես կոչված, «հավասարությունը» առանց ազատության՝ ստրուկների և հարստահարված զանգվածների գաղափարախոսությունը («փաստացի հավասարության» պատրանքային պահանջներով, հավասարությունը հավասարեցմամբ նենգավոխելով և այլն): *Կամ հավասարություն (իրավական ձևով), կամ կամայականություն (այս կամ այն դրսևորումներով):* Երրորդն այստեղ տրված չէ. ոչ իրավունքը (և ոչ ազատությունը) միշտ էլ կամայականություն է:

Իրավունքի հասկացողությունը որպես հավասարություն (որպես մարդկանց ազատության ընդհանուր մասշտաբ և հավասար չափ), իր մեջ ներառում է նաև արդարությունը:

Իրավունքի և օրենքի ստրբերակման համատեքստում դա նշանակում է, որ *արդարությունը ներառվում է իրավունքի հասկացության մեջ*, որ իրավունքն ըստ սահմանման արդարացի է, իսկ արդարությունն իրավունքի ներքին հատկությունն ու որակն է, իրավական և ոչ թե արտաիրավական (ոչ թե բարոյական, կրոնական) կատեգորիա և բնութագիր է:

Ավելին, միայն իրավունքն է արդարացի: Չէ՞ որ, արդարությունը հենց նրա համար է արդարացի, որ մարմնավորում ու արտահայտում է համանշանակ ճշմարտացիություն, իսկ դա ողջամիտ տեսքով նշանակում է համընդհանուր իրավաչափություն, այսինքն՝ իրավունքի էությունն ու սկիզբը, համընդհանուր հավասարության և ազատության իրավական սկզբունքի իմաստը:

*Արդարությունը (iustitia-ն) իր իմաստով և ծագումնաբանությամբ հանգում է իրավունքին (ius-ին), ցույց է տալիս սոցիալական աշխարհում իրավական սկզբի առկայությունը և արտահայտում է դրա ճշմարտացիությունը, իմպերատիվությունն ու անհրաժեշտությունը:*

*Արդարացի է այն, ինչն արտահայտում է իրավունքը, համապատասխանում է իրավունքին և հետևում է իրավունքին: Գործել արդարացի, նշանակում է գործել իրավաչափ, իրավունքի համընդհանուր ու հավասար պահանջներին համապատասխան:*

*Ընդհանրացնելով կարելի է ասել, որ արդարությունն իրավունքի ինքնագիտակցությունը, ինքնարտահայտությունը և ինքնագնահատումն է, ուստի, դրա հետ միասին՝ մնացած բոլորի, ոչ իրավականի իրավական չափանիշն ու զնահատման եղանակն է:*

Արդարությունը, բացի իրավականից, որևէ այլ սկզբունք չունի: Արդարության իրավական բնույթի և իմաստի ժխտումն անխուսափելիորեն հանգեցնում է նրան, որ արդարության փոխարեն մասուցվում է ինչ-որ ոչ իրավական սկիզբ՝ հավասարեցման կամ արտոնությունների պահանջներ, այս կամ այն բարոյական, կրոնական, աշխարհայացքային, գեղագիտական, քաղաքական, սոցիալական, ազգային, տնտեսական և այլ պատկերացումներ, շահեր, պահանջներ: Դրանով իսկ արդարության իրավական (այսինքն՝ բոլորի համար համընդհանուր և հավասար) նշանակությունը նենգափոխվում է ինչ-որ առանձին մասնավոր շահով և կամայական բովանդակությամբ, մասնավոր ակնկալիքներով:

Օրինակ՝ *այսպես կոչված, «սոցիալական արդարության» այս կամ այն պահանջներն* իրավական տեսանկյունից ունեն որչամիա իմաստ և կարող են ճանաչվել ու բավարարվել սոսկ այնքանով, որքանով դրանք համաձայնեցվում են իրավական համընդհանրության ու հավասարության հետ և, հետևաբար, դրանք սոցիալական կյանքի համապատասխան ոլորտներում կարելի է *արտահայտել հենց իրավական արդարության պահանջների տեսքով:* Եվ այն, ինչ անվանվում է «սոցիալական արդարություն», թե՛ կարող է համապատասխանել իրավունքին, և թե՛ ժխտել դա: Հենց այդ սարքերությունն է որոշում համապատասխան «սոցիալական արդարության» նկատմամբ իրավական մոտեցման դիրքորոշումը և տրամաբանությունը:

Սկզբունքորեն այդպիսին է վիճակը նաև այն դեպքերում, երբ իրավական արդարությանը հակադրում են *բարոյական, քաղաքական, կրոնական և այլ «արդարության» պահանջները:*

Իրավունքի և իրավական հավասարության սկզբունքի՝ որպես ազատ սուբյեկտների հասարակական հարաբերությունների կարգավորիչ ու անհրաժեշտ ձևի համընդհանրության և համանշանակալիության տարածքում հենց *իրավական արդարությունն է հանդես գալիս որպես այդ տարածքում արդարության դերի և տեղի նկատմամբ մնացած բոլոր հավակնությունների իրավաչափության կամ ոչ իրավաչափության չափա-*



*նիշ:* Իրավական արդարությունը, յուրաքանչյուրին տալով իրեն հասանելին, դա կատարում է միակ հնարավոր համընդհանուր ու բոլորի համար հավասար իրավական եղանակով՝ մերժելով արտոնությունները և հաստատելով ազասությունը:

## **Գլուխ 2. Իրավունքի և պետության էությունը, հասկացությունն ու արժեքը**

### **1. Իրավունքի և պետության էությունն ու հասկացությունը**

Իրավաբանական-ազատական հայեցակարգի շրջանակներում իրավահասկացողության և պետության համապատասխան իրավական հասկացողության իրավաբանական-գոյաբանական, արժեքաբանական ու իմացաբանական ներքին միասնությունը պայմանավորված է նրանով, որ դրանց հիմքում ընկած է ձևական հավասարության միևնույն սկզբունքը, որը հասկացվում և մեկնարանվում է որպես իրավաբանական գոյաբանության (ի՞նչ է իրավունքը և պետությունը), արժեքաբանության (ո՞րն է իրավունքի և պետության արժեքը) ու իմացաբանության (ինչպե՞ս են ճանաչվում իրավունքը և պետությունը) ելակետային սկիզբ:

*Գոյաբանական տեսակետից իրավունքը ձևական հավասարություն է, ընդ որում, այդ ձևական հավասարությունն իր մեջ ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են՝ վերացական-համընդհանուր հավասար չափը, ազատության և արդարության ձևականությունը:* Իրավունքը՝ որպես ձև (հասարակական հարաբերությունների իրավական ձև), գոյաբանական տեսանկյունից իրավունքի այդ ձևական հատկությունների և բնութագրերի՝ հավասարության, ազատության ու արդարության հանրագումարն է:

Թե՛ գոյաբանական, թե՛ արժեքաբանական և թե՛ իմացաբանական տեսանկյունից միանգամայն էական է այն հանգամանքը, որ *վերացական- համընդհանուր հավասար չափը, ազատությունը և արդարությունը միայն իրենց ձևական (ձևական-իրավական) արտահայտությամբ ու նշանակությամբ, այսինքն՝ միայն որպես ձևական հավասարության սկզբունքի ընդհանուր իմաստի արտահայտման ու դրսևորման հատուկ ձևեր (և չհակադրվելով դրան) կարող են ներառվել իրավունքի միասնական, ներքնապես համաձայնեցված և հակասություններից զուրկ հասկացության (և պետության իրավական հասկացության) մեջ ու լինել հասարակական հարաբերությունների համընդհանուր իրավական (և պե-*

տական-իրավական) ձևի բաղադրատարրեր, հատկություններ և բնութագրեր:

Իրավունքի հասկացության տարրեր սահմանումները, լինելով իրավական հավասարության սկզբունքի, իմաստի, կոնկրետացման տարրեր ուղղություններ, արտահայտում են իրավունքի միասնական (և միակ) էությունը: Ընդ որում, այդ սահմանումներից յուրաքանչյուրն իրավական հավասարության սկզբունքի ընդհանուր իմաստային համատեքստում ենթադրում է նաև այլ սահմանումներ: Այստեղից էլ՝ այնպիսի արտաքին տարրեր սահմանումների ներքին իմաստային համարժեքությունը, ինչպիսիք են՝ իրավունքը *ձևական հավասարություն է, իրավունքը մարդկանց հասարակական հարաբերություններում ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձև է, իրավունքը համընդհանուր արդարություն է* և այլն: Չէ՞ որ համընդհանուր ձևական-հավասար չափը ճիշտ այնպես է ենթադրում ազատությունը և արդարությունը, ինչպես վերջիններս՝ առաջինին և մեկը մյուսին:

Իրավունքի այդ սահմանումները, դրա օբյեկտիվ էական հատկությունների միջոցով, ամբողջությամբ արտահայտում են իրավունքի բնույթը, իմաստը և առանձնահատկությունը, ամբազրում են իրավունքի հասկացողությունը՝ որպես այլ էություններից տարբերվող ինքնուրույն էություն: Ինչպես իրավունքի այդ օբյեկտիվ հատկությունները, այնպես էլ դրանց կողմից բնութագրվող իրավունքի էությունը վերաբերում են *իրավունքի սահմանումներին, օրենքից դրա տարրեր լինելու հանգամանքով, այսինքն՝ կախված չեն օրենսդրի կամքից*:

Իրավունքի, այսպես կոչված, «պոզիտիվացման», օրենքի տեսքով արտահայտման գործընթացում իրավունքի էության այդ ելակետային սահմանումներին հավելվում է նոր սահմանում՝ այն բանի *իշխանական համապարտադրականությունը*, որը որոշակի ժամանակում և որոշակի սոցիալական տարածքում պաշտոնապես ճանաչվում ու սահմանվում է որպես օրենք (պոզիտիվ իրավունք):

Սակայն օրենքը (այն, ինչը սահմանվում է որպես պոզիտիվ իրավունք) կարող է թե՛ համապատասխանել և թե՛ հակասել իրավունքին, լինել (ամբողջությամբ կամ մասնակիորեն) ինչպես իրավունքի, այնպես էլ այլ (ոչ իրավական) պահանջների, թույլատյությունների և արգելքների պաշտոնական-իշխանական ճանաչման, նորմատիվ կոնկրետացման ու պաշտպանության ձև: *Միայն որպես իրավունքի արտահայտման ձև է օրենքը (պոզիտիվ իրավունքը) իրավական երևույթ*: Նման օրենքի շնորհիվ իրավական հավասարության սկզբունքը (և դրա հետ միասին ազատության հավասար ու արդարացի չափի ընդհանրությունը) ստա-

նում է պետական-իշխանական, համապարտադիր ճանաչում և պաշտպանություն, ձեռք է բերում օրինական ուժ: Լինելով միայն իրավունքի օբյեկտիվորեն պայմանավորված հատկությունների արտահայտման ձև՝ օրենքը դառնում է իրավական օրենք:

*Իրավական օրենքը հենց իրավունքն է, որն ստացել է ճանաչման, կոնկրետացման և պաշտպանության պաշտոնական ձև, մի խոսքով՝ օրինական ուժ, այսինքն՝ պոզիտիվ իրավունքը՝ օժտված իրավունքի օբյեկտիվ հատկություններով:* Իրավական օրենքն իրավունքի (իրավունքի՝ որպես էության, և իրավունքի՝ որպես երևույթի, դրանց համընկնման ու միասնության մեջ) համարժեք և լիակատար արտահայտությունն է՝ դրա պաշտոնական ճանաչմամբ, համապարտադրականությամբ, որոշակիությամբ ու կոնկրետությամբ, որոնք անհրաժեշտ են գործող պոզիտիվ իրավունքի համար:

*Իրավունքի «պոզիտիվացումը», օրենքի վերածելու իրական գործընթացը,* իրավունքի օբյեկտիվ հատկությունների և պահանջների հաշվառման անհրաժեշտության հետ միաժամանակ, կախված է բազմաթիվ այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններից (սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային, բուն օրինաստեղծ և այլն): Եվ հենց իրավունքին օրենքի անհամապատասխանությունը կարող է լինել հասարակարգի իրավաժխտող բնույթի, օրենսդիրի հակաիրավական դիրքորոշման կամ նրա տարբեր բնույթի սխալների և բացթողումների, իրավական ու օրինաստեղծ ցածր մշակույթի և այլնի հետևանք:

Ազատության, իրավունքի և պետականության պատմական զարգացման գործընթացում իրավախախտ օրենքի դեմ պայքարում ձևավորվել ու հաստատվել են ինչպես օրինաստեղծ գործունեության (և ամբողջությամբ իրավունքի «պոզիտիվացման» գործընթացի), այնպես էլ օրենքի՝ իրավունքին համապատասխանելու նկատմամբ հեղինակավոր, արդյունավետ վերահսկողության հատուկ ինստիտուտներ, ընթացակարգեր և կանոններ (իշխանությունների բաժանումը, տարբեր իշխանությունների միջև հարաբերություններում զսպումների ու հակակշիռների համակարգը, օրենքի իրավական հատկությունների նկատմամբ ընդհանուր դատական, սահմանադրական դատական, դատախազական վերահսկողությունը և այլն):

Իրավունքի և օրենքի համընկնման համատեքստում *օրենքի համապարտադիրությունը* պայմանավորված է դրա իրավական բնույթով ու *իրավունքի օբյեկտիվ հատկությունների համանշանակության հետևանք է*, համապատասխան պաշտոնական ակտերում և սահմանումներում իրավունքի սկզբունքի ու պահանջների իշխանական ճանաչման, պահ-

պանման, կոնկրետացման ու պաշտպանության սոցիալական պահանջի և անհրաժեշտության ցուցանիշ է: Հենց այն պատճառով, որ իրերի արամաբանությամբ ոչ թե իրավունքն է պաշտոնական-իշխանական համապարտադրականության հետևանք, այլ հակառակը՝ այդ պարտադրականությունն է իրավունքի հետևանք (իրավունքի համանշանակ սոցիալական իմաստի արտահայտման պետական-իշխանական ձև), այդպիսի համապարտադրականությունն իրավունքի և մեկ անհրաժեշտ սահմանում (հենց իրավունքն օրենքի տեսքով) է՝ ի լրումն իրավունքի օբյեկտիվ հատկությունների վերաբերյալ ելակետային սահմանումների: Այդ սահմանման իմաստը ոչ միայն այն է, որ իրավական օրենքը պարտադիր է, այլ նաև այն, որ համապարտադիր է միայն իրավական օրենքը:

Վերը շարադրված իրավունքի և օրենքի տարբերության ու հարաբերակցության ազատական-իրավաբանական հայեցակարգի իմաստից բխում է, որ նման պոզիտիվ իրավունքի (իրավական օրենքի) ընդհանուր հասկացության նույնիսկ ամենահամառոտ գիտական սահմանումը պետք է նվազագույնն իր մեջ ներառի երկու հանգամանք (երկու սահմանում), որոնցից առաջինը պետք է պարունակի իրավունքի՝ որպես էության, բնութագրերից մեկը (այսինքն՝ իրավունքի տարբերությունն օրենքից), իսկ երկրորդը՝ իրավունքի բնութագիրը՝ որպես երևույթի (այսինքն՝ իրավունքը՝ որպես պետական պարտադիր, պաշտոնական-իշխանական երևույթ):

Այս պարագայի հաշվառմամբ՝ կարելի է ձևակերպել մի շարք համապատասխան գիտական բնորոշումներ: Այսպես, *իրավունքի օբյեկտիվ պահանջներին համապատասխանող պոզիտիվ իրավունքը* (օրենքը՝ իրավունքի հետ դրա համընկնելու պարագայում) կարելի է սահմանել (այսինքն՝ տալ դրա ընդհանուր հասկացության համառոտ բնորոշումը) որպես *համապարտադիր (այսինքն՝ պետական պաշտպանությամբ ապահովված) ձևական հավասարություն, որպես օրինական ուժով օժտված ազատության հավասար չափ (կամ մասշտաբ, ձև, նորմ, սկզբունք), որպես օրենքի ուժ ունեցող արդարություն, որպես հավասարության, ազատության ու արդարության համապարտադիր ձև, որպես հավասարության, ազատության և արդարության նորմերի համապարտադիր համակարգ:*

Առավել ծավալուն տեսքով *իրավունքի ընդհանուր հասկացության* (իրավական օրենքի, այսինքն՝ իրավունքի օբյեկտիվ պահանջներին համապատասխանող պոզիտիվ իրավունքի) գիտական սահմանումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. *իրավունքը ձևական հավասարության*

*սկզբունքի պահանջներին համապատասխանող, պետության սահմանած կամ թույլատրած և պետական հարկադրանքի հնարավորությամբ ապահովված նորմերի համակարգ է:*

Տվյալ ազատական-իրավաբանական գիտական սահմանման էական տարբերությունն իրավունքի տարածված ու սովորական լեզուստական (պոզիտիվիստական) սահմանումներից պետականորեն սահմանված և պաշտպանված նորմերի համակարգը ձևական հավասարության սկզբունքի պահանջներին *համապատասխանեցնելու* անհրաժեշտության մեջ է: Դա նշանակում է, որ նորմերի պետականորեն սահմանված և պաշտպանված համակարգը պետք է լինի ձևական հավասարության սկզբունքի *նորմատիվ կոնկրետացումը* (այսինքն՝ կոնկրետացումը որոշակի նորմերի տեսքով): Միայն այդ դեպքում *նորմերի համակարգը* կլինի *իրավունքի նորմերի համակարգ*: Այստեղ է որոշվում *իրավունքի տարբերությունը ոչ իրավունքից*:

Արդ բերված իրավունքի բոլոր ազատական-իրավաբանական գիտական սահմանումներն իրենց իմաստով հավասարաթեք են, քանի որ սահմանում են պոզիտիվ իրավունքի միևնույն հասկացությունը, որը համապատասխանում է իրավունքի օբյեկտիվ բնույթին և պահանջներին: Այդ գիտական սահմանումների տարբերությունները (շեշտադրումն իրավունքի այս կամ այն սուբստանցիոնալ սահմանման վրա), որոնք հաճախ թելադրված են դրանց ձևակերպման հրատապ նպատակներով և կոնկրետ համատեքստով, չեն շոշափում գործի էությունը, առավել ևս, որ իրավունքի սուբստանցիոնալ որոշ սահմանումները (և համապատասխան գիտական սահմանումները) ենթադրում են մնացած բոլոր, ուղղակի չհիշատակված սահմանումները:

Չպետք է մոռանալ, որ խոսքը միայն համառոտ գիտական սահմանումների, ոչ թե իրավունքի հասկացության լիակատար ու բազմակողմանի արտահայտման մասին է, որին կարող է հավակնել միայն իրավունքի և պետության մասին ամբողջ գիտությունը:

Իրավունքի հասկացության շարադրված ազատական ձևական-իրավաբանական հայեցակարգը *գոյարանական տեսանկյունից* հնարավորություն է ընձեռում բացահայտել իրավունքի այն օբյեկտիվ էական հատկությունները, որոնց սոսկ առկայությունն օրենքում (պոզիտիվ իրավունքում) հնարավորություն է ընձեռում դա բնութագրել որպես իրավական երևույթ, այսինքն՝ իրավունքի էությանը համապատասխանող երևույթ, որպես իրավական էության արտաքին (պաշտոնական-իշխանական, համապարտադիր) դրսևորում և իրականացում:

*Արժեքաբանական տեսանկյունից* տվյալ հայեցակարգը բացահայտում է իրավունքի արժեքների օբյեկտիվ բնույթը և առանձնահատկույթ-

յունը, որը, որպես պարտադրականության հատուկ ձև, նպատակ ու արժեքային սկզբունք, որոշում է տվյալ փաստացի օրենքի (պոզիտիվ իրավունքի) և պետության արժեքային-իրավական նշանակությունը:

*Տեսական-իմացաբանական տեսանկյունից* այդ հայեցակարգը հանդես է գալիս որպես օրենքի (պոզիտիվ իրավունքի) մասին գիտելիքների և ճշմարտության տեսական ըմբռնման ու արտահայտման անհրաժեշտ իմացաբանական մոդել՝ իրավունքի որոշակի հասկացության տեսքով, որի էությունն ու սկզբունքը ձևական հավասարությունն է:

Իրավունքի մեջ էության և երևույթի հարաբերակցության ազատական-իրավաբանական մեկնաբանման համաձայն, իրավական էության արտահայտությունն իրավական օրենքի տեսքով (որպես իրավական երևույթի)՝ պետության գործնական իրավասահման (օրինաստեղծ) գործունեության ընթացքում ձևական հավասարության սկզբունքի պահանջների նորմատիվ-իրավական կոնկրետացումն է, այսինքն՝ համապարտադիր օրենքի (պոզիտիվ իրավունքի տարբեր աղբյուրների և նորմերի) տեսքով իրավունքի պետական-իշխանական պոզիտիվացման գործընթացն է: Համանշանակ իրավական էության (ձևական հավասարության) ու համապարտադիր իրավական երևույթի (օրենքի) այսպիսի անհրաժեշտ կապը ցույց է տալիս իրավունքի և պետության հասկացական-իրավական միասնականությունը, բացահայտում է պետության՝ որպես համապարտադիր օրենքի տեսքով իրավունքի սահմանման ու գործողության համար իշխանության համընդհանուր ձևի իրավական բնույթը և արտահայտում դրա իրավական անհրաժեշտությունը:

*Իրավական երևույթի տեսքով իրավական էության արտահայտման գործընթացում իրավունքի պաշտոնական-իշխանական օրինականացումը (lex-օրենք) համատեղվում է իրավաբանականացման (ius-իրավունք) և հենց այդ իրավասահման (օրենսդրական) իշխանության՝ որպես համընդհանուր (հանրային) պետական իշխանության, իրավաբանական օրինականացման հետ:* Թե՛ իրավաբանորեն-արամաբանորեն և թե՛ պատմականորեն հենց պաշտոնական իրավասահմանման գործընթացում (համընդհանուր և համանշանակ իրավական էությունը համընդհանուր ու համապարտադիր օրենքի տեսքով արտահայտելիս) է համապատասխան իրավասահման (հետևաբար, նաև՝ իրավապահպան, իրավակիրառ) իշխանությունը դրսևորում իրեն, սահմանադրվում ու գործում որպես պետություն, այսինքն՝ համապարտադիր իրավական օրենքների հիման վրա և դրա սահմաններում գործող ընդհանուր (հանրային) իրավական իշխանություն:

Այսպիսով, պետությունը հաստատվում և հանդես է գալիս որպես ընդհանուր (հանրային) իշխանության իրավական ձև, որը սահմանում և պաշտպանում է որոշակի, օրենսդրորեն ամրագրված իրավակարգ, որի շրջանակներում *ուղղակի բռնությունը* (իրավունքի բոլոր սուբյեկտների, ներառյալ՝ իշխանության կողմից) արգելված է, իսկ սոցիալական կյանքում իրավունքով թույլատրվող ուժի կիրառումը վերափոխված է իրավական (սլետական-իրավական) *հարկադրանքի՝ օրինականացված իրավունքի* (իրավական օրենքի) *սանկցիայի ձևով ու սահմաններում*:

*Ցանկացած պետություն*, որպես ընդհանուր (հանրային) իշխանության իրավական ձև, *իրավական պետություն է (համապատասխան սոցիալ-պատմական դարաշրջանում իրավունքի զարգացվածության չափով) և սկզբունքորեն սարքերվում է բռնապետության (բռնակալության, դիկտատուրայի, ամբողջատիրության և այլն) բոլոր տեսակներից, որոնք պաշտոնական իշխանության արտահայտման, կազմակերպման ու գործունեության մինչիրավական, ոչ իրավական և հակաիրավական արտահայտման (հավասարությունը, ազատությունը և արդարությունը ժխտող) ձևեր են*:

Պետության (որպես ազատ մարդկանց իշխանության իրավական ձևի) այսպիսի հակադրումը բռնապետության հետ (որպես բռնի իշխանության և ուրիշների նկատմամբ ափրապետման) քաղաքական իրավական մտքի պատմության մեջ ունի վաղեմի ավանդույթներ (Արիստոտել, Ցիցերոն, Ավգուստին, Թոմմա Աքվինացի, Լոկ, Կանտ, Հեգել և ուրիշներ) և ամրապնդված է ոչ միայն հեռավոր անցյալի պատմական փորձով, այլև XX դարի իրական ամբողջատիրությամբ՝ որպես բռնի իշխանատիրություն և իրավունքի ու պետականության սկզբունքի արմատական բացասման նորագույն բռնատիրական ձև:

*Ցանկացած պետության՝ որպես իրավական պետության, բերված մեկնաբանումը* (իրավաժխտող բռնատիրության հետ դրա սկզբունքային հակադրության մեջ), իհարկե, չպետք է շփոթել *իրավական պետության արդի հասկացողության հետ*, որի տակ նկատի է առնվում իրավունքի և պետության արդի զարգացմանը համապատասխանող հանրային իշխանության իրավական կազմակերպության հատուկ կառույց, յուրահատուկ հատկությունների և բնութագրերի համալիրով (մարդու հիմնական, ի ծնե և անօտարելի իրավունքների ու ազատությունների ժամանակակից համաշխարհային ստանդարտների, իշխանությունների բաժանման և այլնի սահմանադրական ամրագրում):

Արդի իրավական պետությունը պետության գոյության պատմականորեն առավել զարգացած ձևն է, որն իր գոյության նախորդ պատմա-

կան փուլերում քերզարգացած ձևերով իրավական պետություն էր: Ուստի, ցանկացած պետություն իր պատմական կեցության բոլոր փուլերում (ի տարբերություն իշխանության բռնապետական տիպի), որպես ընդհանուր (հանրային) իշխանության իրավական ձև՝ *ձևական հավասարության սկզբունքի, դրա իմաստի և պահանջների արտահայտման, կոնկրետացման ու իրականացման որոշակի կազմակերպական-իշխանական ձև է*: Հենց դրա համար էլ *իրավունքը և պետությունը* մարդկանց սոցիալական կյանքում *հավասարության, ազատության ու արդարության* նորմատիվ և ինստիտուցիոնալ-իշխանական *արտահայտման անհրաժեշտ համընդհանուր ձևեր են*: Անհատների այդ ազատությունն առաջին հերթին արտահայտվում է նրանում, որ նրանք ձևականորեն հավասար անձինք՝ իրավունքի սուբյեկտներ և պետության սուբյեկտներ են:

Ասվածի հաշվառմամբ կարելի է տալ պետության ընդհանուր հասկացության հետևյալ սահմանումը. *պետությունն ազատ անհատների հանրային իշխանության իրավական (այսինքն՝ ձևական հավասարության վրա հիմնված) կազմակերպություն է*:

Պետության իրավական էությունը և դրանում ներկայացված իրավական սկիզբը (ազատ մարդկանց ձևական հավասարության սկզբունքը, նրանց իրավասուբյեկտության և պետականասուբյեկտության ճանաչումը) այս կամ այն տեսքով դրսևորվում է պետության բոլոր պատմական տիպերում ու ձևերում, պետական իշխանության կազմակերպման և կենսագործունեության բոլոր հարադրություններում ու ուղղություններում: Պետության (դրա էության, կազմակերպական ձևերի, գործառական դրսևորումների և այլնի) զարգացվածության աստիճանը, վերջին հաշվով, որոշվում է դրանում մարմնավորված և իրականացված՝ մարդկանց ձևական հավասարության սկզբունքի զարգացվածության չափով:

Իրավունքի և պետության զարգացման սոցիալ-պատմական փուլերը մարդկային հարաբերություններում ձևական հավասարության, ազատության ու արդարության սկզբունքների առաջընթացի աստիճաններն են:

## 2. Իրավունքի և պետության արժեքը

Համաձայն իրավաբանական-ազատական արժեքաբանության՝ գործող (պոզիտիվ) իրավունքի և իրականում առկա պետության արժեքը որոշվում է միասնական հիմքով ու չափանիշով, այսինքն՝ *իրավական արժեքների (իրավունքը որպես արժեք) դիրքերից*: Ընդ որում, խոսքը



հենց իրավական արժեքների (դրանց ձևական իրավաբանական նշանակության և սահմանման մեջ), ոչ թե բարոյական, կրոնական և այլ ոչ իրավական արժեքների մասին է: Չէ՞ որ միայն նման ձևով սահմանված իրավական արժեքներն են իրավունքի վերացական համընդհանրության ուժով (ձևական հավասարության սկզբունքի, հարաբերությունների իրավական ձևի), ըստ սահմանման կրում համընդհանուր և համանշանակ (և այդ իմաստով՝ բացարձակ, ոչ թե հարաբերական) բնույթ:

Իրանով իսկ իրավունքն իր արժեքաբանական չափման մեջ ոչ թե բարոյական (կամ խառը՝ բարոյական-իրավական) արժեքների կրող է, ինչը բնութագրական է բնական-իրավական մոտեցմանը, այլ հենց իրավական արժեքների խիստ որոշակի ձև, որպես պարտադրականության և արժեքային բոլոր մյուս (բարոյական, կրոնական և այլն) ձևերից տարբերվող, *որպես իրավական պարտադրականության առանձնահատուկ ձև է:*

Պարտադրականության իրավական արժեքային իմաստի այսպիսի հասկացողությունն սկզբունքորեն տարբերվում է սովյալ հիմնահարցի վերաբերյալ պոզիտիվիստական մոտեցումից: Ի՞նչ հակադրություն իրավունքի պոզիտիվիստական արժեզրկման (իշխանության հրամանի տեսքով)՝ իրավունքի ազատական հայեցակարգում իրավական ձևը որպես հավասարության, ազատության և արդարության ձև, որակապես օրոշակի է ու բովանդակայից, սակայն բովանդակայից ու որոշակի է խստով ձևական-իրավական իմաստով և ոչ թե այս կամ այն փաստացի բովանդակային իմաստով, ինչը բնութագրական է բնական-իրավական մոտեցմանը: Ուստի, նման ձևական-իրավական տեսանկյունից որակապես օրոշակի *իրավունքի ձևը պարտադրականության ձև է ոչ միայն համապարտադրականության, իշխանական իմպերատիվության իմաստով և այլն, այլ նաև օբյեկտիվ արժեքավոր համանշանակության, արժեքային-իրավական պարտադրականության իմաստով:*

*Մարդկային կեցության հիմնադիր արժեքների* (հավասարության, ազատության, արդարության) իրավական (ձևական-իրավական) մեկնաբանման տվյալ հայեցակարգը պարտադրականության իրավական ձևի հիմնական պահերի տեսքով հստակ սահմանազօմում և ամրագրում է իրավունքի արժեքային կարգավիճակը (իրավունքի շրջանակը, կազմը, ներուժը՝ որպես արժեք), իրավունքի արժեքային առանձնահատկությունն արժեքների համակարգում, պարտադրականության ձևերում և այլնում: Իրավական արժեքների այդ դիրքերից կարող է և պետք է որոշվի համապատասխան ու ռելևանտ (հավասար) իրավունքի (իրավունքի) որպես պարտադրականության, որպես նպատակի, որպես պահանջնե-

րի հիմքի, իրավական իմաստների և նշանակության աղբյուրի) գոյութ-  
յան ոլորտի բոլոր երևույթների արժեքային նշանակությունը:

*Գոյություն ունեցողի այդ ոլորտը, իրավական պարտադրականու-  
թյան դիրքերից արժեքային բնորոշում ստանալով, ազատական-իրավա-  
բանական արժեքաբանության շրջանակներում (դրա առարկայի, ուղղ-  
վածության և խնդիրների առանձնահատկությունների հաշվառմամբ)  
կազմում են օրենքը (պոզիտիվ իրավունքը) և պետությունը՝ իրենց բոլոր  
փաստացի դրսևորումներով և չափումներով, իրենց ամբողջ էական գո-  
յությամբ, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների իրավաբանորեն նշա-  
նակալից փաստացի վարքագիծը:*

Հետևաբար, ազատական հայեցակարգում խոսքն իրավունքի դիրքե-  
րից օրենքի (պոզիտիվ իրավունքի) իրավական իմաստի և նշանակու-  
թյան ու առկա Լմալիրիկորեն իրական պետության, դրա իրավական որա-  
կի, իրավունքի՝ որպես արժեքային-պարտադրական նպատակներին,  
պահանջներին, իմպերատիվներին, դրանց համապատասխանության  
(կամ անհամապատասխանության) գնահատման (գնահատող դատու-  
ղության և գնահատման) մասին է: Ընդ որում, *իրավունքը հանդես է գա-  
լիս որպես օրենքի (պոզիտիվ իրավունքի) և պետության համար արժեք  
ու նպատակ:* Դա նշանակում է, որ օրենքը (պոզիտիվ իրավունքը) ու  
պետությունը պետք է կողմնորոշվեն դեպի իրավունքի պահանջների  
մարմնավորումը և իրականացումը, քանի որ հենց դրանում է նրանց  
նպատակը, իմաստն ու նշանակությունը: Օրենքը (պոզիտիվ իրավուն-  
քը) և պետությունն արժեքավոր են հենց որպես իրավական երևույթներ:  
Օրենքը (պոզիտիվ իրավունքը) և պետությունն այս արժեքային-նպա-  
տակային սահմանման ու գնահատման մեջ նշանակալից են միայն  
այնքանով և այնքան, որքանով ու որքան դրանք վերաբերում են իրա-  
վունքին, արտահայտում ու իրականացնում են իրավունքի նպատակը,  
արժեքավոր են իրավական իմաստով, իրավական են:

Հետևաբար, օրենքի (պոզիտիվ իրավունքի) և պետության արժեքը,  
համաձայն մեր կողմից զարգացվող ազատական-իրավաբանական ար-  
ժեքաբանության հայեցակարգի, դրանց իրավական նշանակության ու  
իմաստի մեջ է: Իրավունքի՝ որպես օրենքի (պոզիտիվ իրավունքի) ու պե-  
տության նկատմամբ պարտադրականության, նպատակն ու արժեքը  
կարելի է ձևակերպել հետևյալ *արժեքային-իրավական իմպերատիվով.*  
*օրենքը (պոզիտիվ իրավունքը) և պետությունը պետք է լինեն իրավա-  
կան:* Հետևաբար, իրավական օրենքն ու իրավական պետությունն իրա-  
կան օրենքի (պոզիտիվ իրավունքի) և պետության, ինչպես նաև մարդ-  
կանց իրավաբանորեն նշանակալից փաստացի վարքագծի բոլոր ձևերի  
իրական նպատակ-արժեքներն են:

Պարտադրականի ու իրականի այսպիսի հարաբերակցության արժեքաբանական իմաստն արտահայտում է պոզիտիվ իրավունքի և պետության՝ գործնականում ձևավորված ու իրականում գործող ձևերի, մշտական կատարելագործման անհրաժեշտության գաղափարը, որոնք, որպես պատմականորեն զարգացող իրականության երևույթներ, ընդունում են դրա նվաճումներն ու քերությունները և միշտ էլ հեռու են իդեալական վիճակից: Ընդ որում, պատմական զարգացման գործընթացում նորացվում, հարստացվում և կոնկրետացվում է իրավական պարտադրականության բուն իմաստը, իրավական նպատակների, արժեքների, պահանջների ամբողջ համալիրը, որին պետք է համապատասխանեն օրենքները, պետությունը, իրավունքի բոլոր սուբյեկտների վարքագիծը:

### **3. Իրավունքի և պետության տեղն ու դերը սոցիալական կարգավորման մեջ**

Իրավունքը և սոցիալական նորմերի մյուս տեսակները (բարոյական, կորպորատիվ, գեղագիտական, կրոնական և այլն) այն հիմնական ձևերն ու միջոցներն են, որոնց օգնությամբ հասարակական հարաբերություններում կարգավորվում է մարդկանց վարքագիծը:

*Սոցիալական նորմերի տարբեր տեսակների* (իրավական, էթիկական, գեղագիտական, կրոնական և այլն) *փոխներգործության և փոխազդեցության գործընթացում* դրանցից յուրաքանչյուրը, պահպանելով իր առանձնահատկությունը, համդես է գալիս որպես հատուկ տեսակի կարգավորիչ:

Այսպես, ամեն մի *կրոնի* տարբերիչ առանձնահատկությունը հավատն է Աստծո՝ որպես գերբնական էակի նկատմամբ: Կրոնի՝ որպես հասարակական գիտակցության ձևի, այդ առանձնահատկությունը բնորոշում է կրոնական նորմերի ու դրանց՝ որպես սոցիալական կարգավորիչի առանձնահատկությունը և յուրօրինակությունը: Այստեղից էլ կրոնական պատվիրանների և արգելքների այնպիսի բնութագրերը, ինչպիսիք են՝ դրանց աստվածային ծագումը (դրանց տրվելն անմիջապես Աստծո կամ մարգարեների պաշտամունքի ծառաների կողմից), դրանց պաշտպանության կրոնական ձևերը (գերբնական պարզևների ու պատիժների, կրոնական-եկեղեցական պատիժների միջոցով և այլն):

*Գեղագիտական նորմերի* տեսակային տարբերությունն այն է, որ դրանք արտահայտում են գեղեցկության և գեղեցիկի (ի տարբերություն այլամոդակի) կանոնները (չափանիշները, գնահատականները):

Տվյալ մշակույթում ձևավորված գեղեցիկի ու այլաճղակի ձևերը, աիպերը և կերպարները (զլխավորապես արվեստի բնագավառում, ինչպես նաև կենցաղի ու աշխատանքի ոլորտում, կրոնում, գաղափարախոսության, քաղաքականության, բարոյականության մեջ, իրավունքում և այլն), ձևաբանական նորմատիվ նշանակություն (որպես դրական ու վեհկամ հակառակը՝ բացասական և ստոր նմուշ ու օրինակ), էական դաստիարակչական և կարգավորիչ ներգործություն են բողոնում մարդկանց զգացմունքների, ճաշակների, պատկերացումների, արարքների և փոխհարաբերությունների, նրանց հասարակական ու հանրային կյանքի ամբողջ կառուցվածքի և կերպի վրա:

*Բարոյականի* տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ արտահայտում է անհատների ինքնուրույն դիրքորոշումը, նրանց ազատ և ինքնագիտակցված տեսակետը, թե մարդկանց արարքներում, փոխհարաբերություններում ու գործերում ի՞նչն է բարին և չարը, պարտքն ու խիղճը: Բարոյականի սկզբունքն անհատների, իրենց և ուրիշների, աշխարհի նկատմամբ իրենց հարաբերությունների, իրենց վարքագծի (ներքին ու արտաքին) ինքնուրույն ինքնակարգավորման սկզբունքն է:

*Էթիկական երևույթներում առկա է երկու պահ՝*

1) անձնական պահը (անհատի ինքնավարությունը և բարոյական վարքագծի ու բարոյական գնահատականների, կանոնների ինքնագիտակցված շարժառիթը)։

2) օբյեկտիվ, վերանհատական պահը (ձևավորված տվյալ մշակույթում, սոցիալական խմբում, բարոյական հայացքների, արժեքների, բարքերի, մարդկային հարաբերությունների ձևերի և նորմերի տվյալ հանրությամբ): Նշված պահերից առաջինը վերաբերում է *բարոյականի* բնութագրին, երկրորդը՝ *բարոյականությանը*: Երբ խոսում են ամբողջությամբ հանրույթների և հասարակության, սոցիալական խմբերի բարոյականի մասին, խոսքը, ըստ էության, բարոյականության մասին է (խմբակային և ընդհանուր սոցիալական բարքերի, արժեքների, հայացքների, հարաբերությունների, նորմերի ու պատվիրանների մասին):

Սոցիալական նորմերի հատուկ տեսակ են *կորպորատիվ* նորմերը, այսինքն՝ հասարակական միավորումների և կորպորացիաների ու խմբերի կողմից ընդունվող նորմերը:

Հասարակական միավորման (քաղաքական կուսակցության, արհմիության, հասարակական ինքնագործունեության մարմնի և այլնի) կանոնադրությունում և այլ փաստաթղթերում ամրագրված նորմերը (ղեկավար մարմինների ձևավորման կարգի ու լիազորությունների, կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգի, միա-

վորման անդամների ու մասնակիցների իրավունքների և պարտավար-  
նությունների մասին և այլն) տարածվում են միայն տվյալ հասարակա-  
կան միավորման անդամների ու մասնակիցների վրա և պարտադիր են  
միայն նրանց համար: Այդ կորպորատիվ նորմերի խախտումը հանգեց-  
նում է կազմակերպության կանոնադրությունում նախատեսված համա-  
պատասխան պատժամիջոցների կիրառման (զգուշացումից, նկատո-  
ղությունից սկսած՝ մինչև կազմակերպությունից հեռացում):

Կորպորատիվ նորմերը (իրենց կարգավորիչ նշանակությամբ, գործո-  
ղության ոլորտով, հասցեատերերի շրջանակով և այլն) *ներկազմակեր-  
պական բնույթի խմբակային նորմեր են*: Դրանք չունեն իրավունքի հա-  
մընդհանրությունը և համանշանակությունն ու օրենքի համապարտադ-  
րականությունը: Ըստ էության, կորպորատիվ նորմերը *միավորումների  
կազմելու քաղաքացիների սահմանադրական իրավունքների օգտա-  
գործման և իրացման ձև ու եղանակ են*, ընդ որում, հասարակական  
միավորումների ստեղծումը և գործունեությունը, ներառյալ նրանց նոր-  
մաստեղծությունը, պետք է կատարվի օրենքի հիման վրա ու դրա շրջա-  
նակներում, իրավունքի և հասարակական հարաբերությունների իրա-  
վական ձևի համընդհանուր պահանջներին համապատասխան, իրավա-  
կան հավասարության (կամավորության), իրավունքների ու պարտակա-  
նությունների վոխադարձ կապի սկզբունքների և այլնի պահպանմամբ:

Այս կապակցությամբ ուշագրավ է, որ «Հասարակական միավորում-  
ների մասին» Ռուսաստանի Դաշնության Դաշնային օրենքի (ընդուն-  
ված Պետական Դումայի կողմից 1995 թվականի ապրիլի 14-ին) համա-  
ձայն՝ հասարակական միավորումների անդամ և մասնակից ֆիզիկա-  
կան ու իրավաբանական անձինք ունեն հավասար իրավունքներ և  
կրում են հավասար պարտականություններ: Հասարակական միավոր-  
ման կողմից այս և օրենքի մի շարք այլ պահանջների խախտումը կա-  
րող է հանգեցնել (դատարանի վճռով) դրա գործունեության կասեցման  
ու նույնիսկ լուծարման:

Այս բոլոր *սոցիալական կարգավորիչները (իրավունքը, բարոյակա-  
նը, բարոյականությունը, կրոնը և այլն) նորմատիվ են, և բոլոր սոցիալա-  
կան նորմերն ունեն իրենց առանձնահատուկ սանկցիաները*: Ընդ որում,  
այդ սանկցիաների առանձնահատկությունը պայմանավորված է այդ,  
իրենց էությամբ տարբեր, սոցիալական նորմերի օբյեկտիվ բնույթով և  
առանձնահատկություններով, սոցիալական կարգավորման տարբեր  
տիպերով (և ձևերով):

Այսպիսով, ոչ թե սանկցիաների առանձնահատկություններն են ելա-  
կետային ձևով որոշում սոցիալական նորմերի (իրավունքի, բարոյակա-

նի, կրոնի և այլնի) տարբերությունը, ինչպես այդ հիմնահարցը մեկնաբանում են լեզուագետները, այլ հակառակը՝ սոցիալական նորմերի տարբեր տեսակների՝ իրենց բնույթով օբյեկտիվորեն գոյություն ունեցող էական տարբերությունները, դրանց յուրօրինակ հատկությունները պայմանավորում են նաև խախտման համար սանկցիաների առանձնահատկությունները:

Սոցիալական նորմի որոշակի տեսակին ներհատուկ սանկցիայի առանձնահատկության մեջ դրսևորվում է սոցիալական նորմերի ավյալ տեսակի և սոցիալական իշխանության համապատասխան տեսակի հասկացական միասնականության պահը, որը սահմանվում, սանկցիավորվում ու պաշտպանվում է նորմերի տվյալ տեսակով:

Ցանկացած սոցիալական իշխանություն (բարոյական, կրոնական, պետական և այլն) տվյալ սոցիալական հանրության (խմբի, միավորման, հասարակության և այլնի մեջ) հասարակական հարաբերությունների կառավարման համար ուժի (հոգեբանական կամ ֆիզիկական) կազմակերպման և համապատասխան հարկադրանքի կիրառման որոշակի նորմատիվ կարգ է: Նման նորմատիվ կարգի առանձնահատկությունները որոշվում են համապատասխան սոցիալական նորմերի (բարոյական, կրոնական, իրավական և այլն) առանձնահատկություններով:

Համապատասխան սոցիալական նորմերի պահպանման այդպիսի սոցիալական-իշխանական հարկադրանքի ձևեր և դրանց խախտման համար պատիժներ են այդ նորմերի սանկցիաները: Ընդ որում, նորմերի յուրաքանչյուր տեսակին ներհատուկ են իրեն առանձնահատուկ սանկցիաները. բարոյական նորմերին՝ բարոյական սանկցիաները (անբարոյական վարքագծի բարոյական դատապարտումը և այլն), կրոնական նորմերին՝ կրոնական պատիժների տարբեր տեսակները (սկսած՝ հանդիմանությունից մինչև եկեղեցուց օտարելը և այլն), իրավական նորմերին՝ պետական (պետական-իրավական) սանկցիաները և այլն:

Իրավունքի առանձնահատկությունը, օբյեկտիվ բնույթը և, դրա հետ միասին, սարբերությունը սոցիալական նորմերի մյուս տեսակներից ու սոցիալական կարգավորման տիպերից արտահայտված են ձևական հավասարության սկզբունքում: Նման իրավաբանական մոտեցման դիրքերից՝ հենց իրավունքի՝ որպես հավասարության, ազատության և արդարության համընդհանուր ու անհրաժեշտ ձևի, օբյեկտիվ առանձնահատկությունն է որոշում օրենքի սանկցիաների յուրօրինակությունը (դրա համապարտադրականությունը, պետական-իշխանական պարտադրականությունը և այլն), և ոչ թե պաշտոնական-իշխանական պարտադրականությունն է պայմանավորում ու ծնում իրավունքի այդ ա-

ռանձնահատկությունը, դրա գոյության տարբերակիչ հատկությունները և բնութագրերը: Դրա հետ միասին, հենց *պետության իրավական բնույթն է որոշում պետական իշխանության ինքնիշխան (սուվերեն) բնույթը* սոցիալական իշխանության այլ տեսակների հետ հարաբերության մեջ:

Իրավունքի և օրենքի (պոզիտիվ իրավունքի) տարբերակման ազատական-իրավաբանական տեսությունն ուղղված է ինչպես լեգիզմի (իրավաբանական պոզիտիվիզմի), այնպես էլ յուսնաստորալիզմի, իրավունքը բարոյականի, բարոյականության և ոչ իրավական սոցիալական նորմերի այլ տեսակների հետ խառնելու դեմ: Այստեղ մեկ անգամ ևս պետք է հիշեցնել, որ, *համաձայն ազատական-իրավաբանական տեսության, ձևական հավասարությունը, ազատությունը և արդարությունը հենց իրավունքի ու ոչ թե բարոյականի, բարոյականության, կրոնի և այլնի օբյեկտիվորեն գոյություն ունեցող հատկություններն են*: Դա առանձնապես կարևոր է ընդգծել, քանի որ ինչպես լեգիզմը, այնպես էլ յուսնաստորալիզմն ու իրավունքի մասին տարբեր տեսակի այլ բարոյական (կրոնական և այլ) ուսմունքներն անտեսում են իրավունքի նշված էական հատկությունների իրավական բնույթը, օրինակ՝ արդարության, ազատության, հավասարության պահանջները համարում են բարոյական, կրոնական պահանջներ:

Հենց նման մտայնման հունով են լեգիստներն իրավունքը հանգեցնում օրենքին և իշխանական հարկադրականությունը մեկնաբանում են որպես իրավունքի էություն ու դրա տարբերիչ առանձնահատկություն: Նման տրամաբանությամբ ստացվում է, որ պաշտոնական իշխանությունը կարող է հարկադրանքի (հարկադիր սանկցիաների) միջոցով ոչ իրավունքը (և ընդհանրապես բոլոր ոչ իրավական սոցիալական նորմերը) իր հայեցողությամբ ու կամայականությամբ վերածել իրավունքի:

Այնհայտ են նաև իրավունքի աստվածաբանական, բարոյական և այլ մեկնաբանությունների թերությունները, որոնք սոցիալական նորմերի (և կարգավորիչների) տարբեր տեսակներն իրար հետ խառնելու, իրավունքի առանձնահատկությունն անտեսելու, *իրավունքի և պետության մասին ուսմունքի աստվածաբանացման և էթիկանացման*, իրավունքը կրոնական ու էթիկական երևույթներով նենգավորելու, գործող իրավունքին (օրենքին) և պետությանը ոչ համարժեք (ոչ իրավական) պահանջներ առաջադրելու մեջ են:

Շարունակվում են հատկապես լայն տարածում ունենալ սխալ պատկերացումներն այն մասին, թե իրավունքը պետք է լինի բարոյական (իրավունքի նկատմամբ նման էթիկական պահանջներում բարոյա-

կանը և բարոյականությունը, որպես կանոն, նույնացվում են): Սակայն նման պահանջը, ըստ էության, նշանակում է, որ իրավունքը պետք է լինի ոչ թե իրավունք, այլ՝ բարոյականություն, որ օրենքի (պոզիտիվ իրավունքի) բովանդակությունը պետք է լինի ոչ թե իրավական, այլ՝ բարոյական:

Այսպիսի *բարոյական իրավահասկացողությունն* անխուսափելիորեն խեղաթյուրում է ոչ միայն իրավունքի, այլ նաև բարոյականության էությունը, քանի որ *իրավունքի բարոյականացումն* անխուսափելիորեն ուղեկցվում է *բարոյականի իրավաբանացմամբ*: Թե՛ այս, թե՛ այն դեպքում իրավունքին ու բարոյականին վերագրվում են կամայական բովանդակություն և նշանակություն:

Իրավունքի և պետության մասին սարքեր տեսակի բարոյական ուսմունքներում իրավունքի ու օրենքի (պոզիտիվ իրավունքի) սարքերությունը փոխարինվում է բարոյականի և օրենքի սարքերությամբ: Իրավունքի նկատմամբ բարոյական մոտեցումը դրա բարոյական մեկնաբանման և զնահաստման միջոցով լավագույն դեպքում հանգեցնում է բարոյապես «ճիշտ» իրավունքի բարոյական հիմնավորմանն ու արդարացմանը, այսինքն՝ դեպի *բարոյական օրենքին (պոզիտիվ իրավունքին) և բարոյական պետությանը*:

Մինչդեռ ակնհայտ է, որ աեսականորեն զարգացած իրավաբանական մոտեցման որոնելի ճշմարտությունը և նպատակը հենց *իրավական օրենքն ու իրավական պետությունն են*, որոնց հասնելու համար պահանջվում է պարզաբանել և հաշվի առնել իրավունքի առանձնահատկությունները սոցիալական նորմերի համակարգում ու պետական իշխանության առանձնահատկությունները սոցիալական իշխանության այլ տեսակների հետ դրա հարաբերություններում:



## Բաժին III

### Հասարակությունը, իրավունքը, պետությունը

#### Գլուխ 1. Նախնադարյան համայնական կարգը: Իրավունքի և պետության ծագումը

##### 1. Տոհմային կարգի հիմնական բնութագրերը

Նախնադարյան համայնական կարգերի ծագման և գոյության ելակետային հիմքը *տոհմն է* (տոհմային համայնքը), որը մարդկանց միավորում է *արյունակցական-ազգակցական սկզբունքով*: Տոհմային համայնքի անդամների աշխատանքի արդյունքների արտադրությունը և սպառումը, ինչպես նաև կացութաձևը կրում էին կոլեկտիվ բնույթ: Տոհմակիցների բոլոր ջանքերն ուղղված էին տոհմի պահպանմանը, դրա գոյատևմանը և շարունակությանը: Դրա հետ է կապված ինչպես համայնքի բոլոր անդամների գործողությունները տոհմի շահերին ենթարկելը, այնպես էլ ամբողջ տոհմի կողմից նրանցից յուրաքանչյուրին պաշտպանելը, ներառյալ՝ արյան վրեժը, օտարի կողմից տոհմակցին սպանելու դեպքում:

Տոհմի կյանքի և գործերի *կառավարումը* համայնքային ինքնակառավարում էր ու կրում էր *կոլեկտիվ հանրային բնույթ*: Նախնադարյան համայնական հասարակությունում հասարակական կարգը պահպանվում էր ձևավորված սովորույթների համապարտադիր նորմերով և հանրային իշխանության ինստիտուտներով:

Սոցիալական իշխանության տարբեր տեսակները (տոհմային իշխանությունը, պետական իշխանությունը և այլն) իրարից տարբերվում են այն սոցիալական նորմերի տեսակով (նորմատիվության տիպով), որոնք որոշում են հասարակական ուժի կազմակերպման և պաշտոնական հարկադրանքի իրականացման համապատասխան կարգը: Այսպես, հասարակական ուժի կազմակերպումը և կիրառումը *պետական իշխանության տեսքով որոշվում են իրավունքով* (իրավունքի սկզբունքներով և նորմերով՝ որպես պետության անդամ անհատների ազատության ձև): Նախնադարյան համայնական հասարակարգում իշխանությունն ամբողջ տոհմի, ոչ թե տոհմի մեկ անդամի, անհատների իշխանությունն է:

Այդ տոհմային իշխանությունը որոշվում է, եթե խոսենք ընդհանրացված ձևով, տոհմային նորմատիվությամբ (տոհմային նորմերի համալիրով, տոհմի սովորություններով և այլնով), որի գերագույն սկզբունքը տվյալ տոհմի գոյատևումը, պահպանումը և շարունակությունն է: Ինչպես այդ սկզբունքը, այնպես էլ տոհմային հասարակության նորմերը և համապատասխան տոհմային իշխանությունն ունեն տոհմապահպան բնույթ:

Տոհմային համայնքում իշխանության հիմնական ինստիտուտը տոհմի ժողովն էր, որում տոհմի չափահաս անդամները լուծում էին համայնքի կյանքի բոլոր հիմնական հարցերը: Տոհմի ժողովն ընտրում էր տոհմի առաջնորդին (ավագին), ինչպես նաև մի շարք այլ պաշտոնատար անձանց՝ զինվորապետ, որսի ղեկավար և այլն:

Տոհմերը միավորվում էին *ցեղում*, իսկ որոշ ցեղեր՝ *ցեղերի միությունում*: Ընդ որում, *ցեղի ավագների խորհուրդը*, որի կազմի մեջ մտնում էին միավորված տոհմերի ավագները (առաջնորդները), ընտրում էր ցեղի առաջնորդին և ցեղի այլ պաշտոնատար անձանց՝ ցեղի զինվորապետ և այլն: Նույն ձևով միավորված ցեղերի առաջնորդների խորհուրդն ընտրում էր ցեղերի միության առաջնորդին, զինվորապետին և ցեղերի այդպիսի միության այլ պաշտոնատար անձանց:

Այս բոլոր պաշտոնատար անձանց *իշխանական լիազորությունները* հիմնված էին հեղինակության և հասարակության վստահության, տոհմային համայնքների անդամների համաձայնության ու աջակցության վրա: Դրա հետ միասին, այդ պաշտոնատար անձանց նշանակումը և գործառույթները, ինչպես նաև հասարակության մյուս անդամների վարքագծի կանոնները խստիվ ենթարկվում էին *ձևավորված անյաստեղի սովորություններին*, որոնց խախտումը հանգեցնում էր դաժան պատիժների:

Պարզունակ հասարակություններում ամենուր ձևավորվող սոցիալական գիտակցությունը և սոցիալական նորմերի մասին պատկերացումները կրում էին դիցաբանական բնույթ: Սոցիալական կարգավորման դիցաբանական համակարգը հասարակության բոլոր անդամներին կողմնորոշում էր դեպի պատշաճի և արգելվածի մասին ընդհանուր պատկերացումների պահպանումն ու անվերապահ մերժում էր անհատականի առանձնացվածությունը և շեղումն ընդհանուր կոլեկտիվի պատկերացումներից: Սոցիումի, սոցիալական վարքագծի ընդունված տիպի միասնության և կայունության պահպանման մեջ էական դեր էին խաղում *բազմազան արգելանքները (տաբուներ)*, որոնք վերաբերում էին կյանքի զանազան ոլորտներին (սեռական, աշխատանքային, ամուսնական, կենցաղային և այլն): Սոցիալական կյանքի կազմավորման ամե-

նից վաղ վուլերում արգելվում էին մարդակերությունը, ինցեստը և սպանությունը (տվյալ սոցիումի անդամների):

## 2. Իրավունքի և պետության ծագման հայեցակարգերը

Անցումը մինչիրավական ու մինչպետական վիճակից դեպի իրավունք ու պետություն կատարվել է նախնադարյան համայնական կարգի քայքայման պայմաններում, և իրենով նշանավորել է մարդկանց սոցիալական կյանքի ամբողջ համակարգում կատարված էական փոփոխությունները:

Գոյություն ունեն այդ փոփոխությունների իմաստն ու բնույթը, իրավունքի և պետության ծագման պայմաններն ու պատճառները *տարբեր* ձևով բացատրող *բազմաթիվ տարբեր տեսություններ* (անցյալ և արդի): Այդ տեսությունների բազմազանությունը պայմանավորված է ինչպես տվյալ հիմնահարցի բարդությամբ ու իրավունքի և պետության ծագման այդ հեռավոր դարաշրջանում գիտելիքների անբավարարությամբ, այնպես էլ համապատասխան տեսությունների հեղինակների կլակետերի էական տարբերություններով, նրանց աշխարհայացքի, գաղափարախոսության, սոցիալ-քաղաքական հայացքների ու ձգտումների տարբերությամբ, իրավունքի և պետության բուն էության առաքելության ու ճակատագրի տարբեր հասկացողությամբ:

*Դիցարանական և կրոնական հայեցակարգերը:* Այդ հայեցակարգերի հիմքում ընկած են ինչպես մարդու, այնպես էլ մարդկանց համատեղ կյանքի պատշաճ կարգի, ներառյալ՝ վարքագծի համապատասխան պարտադիր կանոնների և ընդհանուր իշխանության վերմարդկային, գերբնական (երկնային, աստվածային) սկզբնաղբյուրի ու ծագման մասին պատկերացումները:

Դեռևս նախնադարյան մարդկային հանրույթների ձևավորման ժամանակ ի հայտ եկած այդպիսի պատկերացումներն այս կամ այն ձևով պահպանել են իրենց ճանաչողական-բացատրական նշանակությունը նաև իրավունքի և պետության ծագումից հետո:

*Ըստ հին հնդկական առասպելաբանության* Ռիտուն՝ համատիեզերական և երկրային կարգը, դրա օրենքն ու սովորույթը, սահմանել է Ինդրա աստվածը: Նա էլ պահպանում է այդ կարգը և օրենքը:

*Համաձայն հին չինական առասպելաբանության՝* Երկնքի տակ կամ երկրային (այսինքն՝ Չինաստանում) կարգը, ներառյալ՝ իշխանության կազմակերպումը, վարքագծի կանոնները և այլն, ծնունդ է առել ու պայ-

մանավորված է աստվածային Երկնքի կամքով: Ընդ որում, Կայսրը (Երկրի գլխավոր կառավարիչը) բնութագրվում է որպես «Երկնքի որդի»:

Իրենց իշխանության և իրենց օրենքների աստվածային ծագումը համառոտն ընդգծում էին *չունեթական ու բարեկոնյան կառավարիչները*:

Համաձայն Հին կուսկարանի ավանդույթների՝ *հին հրեաներն* Աստծո հետ զտնվում էին հատուկ պայմանագրային հարաբերություններում: Այսպես, հրեական նախահայր Աբրահամին, իսկ հետո նաև Իսահակին Աստված երդվել էր բազմացնել նրանց ցեղը և նրանց սերունդը դարձնել ընտրյալ ժողովուրդ, եթե նրանք խստորեն պահպանեն Աստծո պատվիրանն ու պատշաճ ձևով հարգեն Աստծուն: Սինա լեռան վրա Աստված Մովսեսին օվել է «քարե տախտակներ», որոնք պարունակում են այն պատվիրանները և օրենքները, որոնցով պետք է ապրեն հրեաները («Ելից գիրք», 20-23 էջեր):

Ամեն մի իշխանության աստվածային ծագման գաղափարները ներհատուկ են նաև *քրիստոնեական աստվածաբանությանը*: Այսպես, դեռևս *Պողոս առաքյալը* պնդում էր, որ «Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հնազանդության մեջ մնա, քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի, և եղած իշխանություններն Աստծուց են կարգված: Հետևաբար, ով հակառակում է իշխանությանը, Աստծո հրամանին է հակառակում... Պաշտոնյան Աստծու սպասավորն է, նա վրեժխնդիր է բարոյականության համար, նրա դեմ, որ չարն է գործում, դրա համար պետք է հնազանդվել ոչ միայն պատժի վախի, այլև խղճմտանքի պատճառով» (Նոր կուսկարան, 437-438 էջեր կամ Աստվածաշունչ, էջ 1290):

Նույն դիրքորոշումն ուներ նաև քրիստոնեական տեսաբանության մեծագույն հեղինակություն *Թովմա Արվինացին* (1225-1274), սակայն վերապահումով, որ յուրաքանչյուր իշխանություն հենց *իր էությանը* է աստվածային և Աստծուց, մինչդեռ իր ձեռքբերման ու օգտագործման եղանակով իշխանությունը կարող է լինել հակաաստվածային ու բռնապետական: XX դարում պետական իշխանության աստվածաբանական սկզբնաղբյուրի մասին նմանօրինակ մտքեր զարգացնում էին նաև աստվածաբանական ուսմունքների մյուս, բազմաթիվ այլ ժամանակակից հետևորդները:

Իրավունքի և պետության ծագման դիցաբանական մեկնաբանությունը լայն տարածում է գտել *Իսլամի* հողի վրա:

Ընդ որում, պետությունը (իմամաթը) դիտարկվում է որպես Իսլամի հենասյուն, դրա պաշտպանության և երկրային կյանքում իրացման ձև:

*Նահապետական և հայրապետական հայեցակարգերը*: Համաձայն գանազան նահապետական (նահապետ - ցեղի պետ բառից) ու հայրա-

պետական (պատեր - հայր բառից) հայացքների՝ հասարակությունը և պետությունը ծագում են ընտանիքից, իսկ հանրային ու պետական իշխանությունը՝ ընտանիքի հոր իշխանությունից:

Այսպես, *Կոնֆուցիոսը* (մ. թ. ա. VI - V դարեր) հին չինական ավանդույթների ոգով Կայսերը համարելով «Երկնքի որդի» և Երկնքի կամքը կատարող, միևնույն ժամանակ Կայսեր իշխանությունը նույնացնում էր ընտանիքի զվտի իշխանությանը, իսկ պետությունը՝ մեծ ընտանիքին: Այսպիսով, այստեղ «Երկնքի որդին» համարվում է Երկրի հայրը:

Պետության նահապետական տեսությունն ընդլայնված տեսքով ներկայացված է անգլիական մոլի միապետական *Ռ. Ֆիլմերի* (XVII դար) ստեղծագործություններում: Իր տեսությունը նա հիմնավորում է Ադամի աստվածային արարչության, «հարզիր քո հորը» աստվածաշնչյան պատվիրանի մասին Աստվածաշնչի դրույթներին հղումներ կատարելով: Այստեղից նա եզրահանգում է, որ առաջին մարդ Ադամը, որպես մարդկանց սոցիալական, առաջին հայրն էր և առաջին միապետը, իսկ Աստծո սահմանած ու աստվածային իրավունքի վրա հիմնված կառավարման եղանակին ձևը միապետությունն է:

Նահապետական-հայրապետական հայացքները լայնորեն տարածում էին գտնում բոլոր ժողովուրդների մոտ: Դրանք խոր արմատներ նետեցին *ռուսական քաղաքական պատմության* մեջ, որի ավանդական քաղաքատարրերից դարձավ բնակչության լայն խավերի հավատը «հայր Յարի» և ամեն մի ղեկավարի՝ որպես «հարազատ հոր» նկատմամբ:

Տեսականորեն նահապետական-հայրապետական հայացքների հիմնական թերությունը պետության և պետական իշխանության առանձնահատկության, դրանք ընտանիքից ու հայրական իշխանությունից որակապես տարբեր լինելու հանգամանքի ժխտումն էր:

*Օրգանական հայեցակարգերը:* Հասարակության և պետության՝ որպես *կենդանի օրգանիզմի* ու դրանց օրգանական ծագման մասին պատկերացումները գալիս են հնադարից:

Համաձայն նման օրգանական պատկերացումների՝ հասարակությունը և պետությունը նույնպես օրգանիզմներ են՝ փոխադարձ կապված օրգանների համաբազումարներ: Հասարակական և պետական կյանքի կազմակերպման աստիճանական համակարգում յուրաքանչյուր խավի ու ինստիտուտի տեղը, նշանակությունը և իշխանությունը որոշվում են կենդանի օրգանիզմում համապատասխան օրգանի գործառույթով ու դերով: Այս իմաստով, հասարակության և պետության օրգանական համակարգում, որն ունի աստիճանակարգված բնույթ, ավելի կարևոր օր-

զանհին համապատասխանում է առավել բարձր կարգավիճակ և առավել նշանակալից իշխանություն:

Պետության և օրգանիզմի միջև նույնաբանությունները լայնորեն օգտագործել են հին աշխարհի (Պլատոն, Յիցերոն և ուրիշներ) և նոր ժամանակների (Թ. Հոբս, Ժ. Ժ. Ռուսո, Գ. Վ. Բ. Հեգել և ուրիշներ) մտածողները:

Հասարակության, պետության և իրավունքի մասին օրգանական պատկերացումներն առավել հանգամանալից մշակվել են պոզիտիվիստական սոցիոլոգիայի հիմնադիրների (Օ. Կոնտ և Հ. Սպենսեր) ու դրանց հետևորդների աշխատություններում: Նրանց աշխարհայացքի վրա որոշակի ազդեցություն են թողել սոցիալական դարվինիզմի գաղափարները:

*Սոցիոլոգիայի մեջ օրգանական դպրոցի ներկայացուցիչները (Ա. Շեֆերեն՝ Գերմանիայում, Ռ. Վոլմսը՝ Ֆրանսիայում, Պ. Բ. Լիլիենֆելդը՝ Ռուսաստանում և ուրիշներ) սոցիալական և քաղաքական երևույթների կենսաբանացման մեջ նշանակալից չափով առաջ գնացին նախորդներից: Այսպես, համաձայն Լիլիենֆելդի՝ կառավարությունն իրականացնում է գլխուղեղի, իսկ առևտուրը՝ արյան շրջանառության գործառույթներ և այլն:*

*Հասարակական պայմանագրի բնական-իրավական հայեցակարգերը:* Պետության և օրենքի պայմանագրային ծագման տարբեր բնական-իրավական պատկերացումների կարելի է հանդիպել դեռևս հին աշխարհում (Մո-ցզի, Էպիկուր և ուրիշներ):

*Պետության և իրավունքի պայմանագրային ծագման գաղափարները* լայն տարածում գտան նոր ժամանակներում:

Այդ գաղափարները զարգացրել են վաղ բուրժուական քաղաքական-իրավական մտքի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ Հ. Հրոցիուսը, Թ. Հոբսը, Բ. Սպինոզան, Ջ. Լոկը, Ժ. Ժ. Ռուսոն, Ի. Կանտը, Ա. Ն. Ռադիչչևը և ուրիշներ:

Հասարակական պայմանագրի գաղափարների վրա էին հիմնվում XVIII դարի ամերիկյան մտածողները (Թ. Ջեֆերսոնը, Թ. Փեյնը և ուրիշներ)՝ Սեմ Բրիտանիայից անկախանալիս և ԱՄՆ-ի ժողովրդի ինքնիշխան իրավունքը հիմնավորելիս: Այդ գաղափարներն իրենց արտահայտությունը և պատմության մեջ առաջին պաշտոնական ամրագրումը գտան ԱՄՆ-ի Անկախության հռչակագրում (1776 թվական):

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ պետության և իրավունքի պայմանագրային հայեցակարգերը նշանակալից առաջադիմական դեր խաղացին պետության էության ու առաքելության, պետական կյանքի ի-

րավական կազմակերպության, մարդու անօտարելի իրավունքների և ազատությունների մասին ազատական-իրավական ու ժողովրդավարական պատկերացումների զարգացման մեջ:

*Բռնապետության հայեցակարգերը:* Այս ուղղության կողմնակիցները պետության և իրավունքի ծագումը մեկնաբանում են որպես բռնության (ներքին կամ արտաքին) արդյունք:

*Ներքին բռնության*՝ որպես պետության և իրավունքի ծագման պատճառի, մասին պատկերացումները զարգացրել է *Ե. Դյուրինգը*: Նախնադարյան համայնական հասարակության մի մասի բռնությունը մյուս մասի նկատմամբ, ըստ Դյուրինգի, այն առաջնային գործոնն է, որը ծնում է քաղաքական կարգը (պետությունը): Մի մասի կողմից մյուս մասի այդպիսի բռնի ստրկացման հետևանքով ծագում են նաև սեփականությունը և դասակարգերը:

*Արտաքին բռնության*՝ որպես պետության և իրավունքի ծագման որոշիչ գործոնի, մասին պատկերացումները զարգացրել են *Լ. Գումպլովիչը*, *Կ. Կաուցկին* և ուրիշները: «Երբեք և ոչ մի տեղ,- գրում էր Գումպլովիչը,- պետությունները չեն ծագել այլ կերպ, քան՝ մեկ կամ մի քանի ցեղերի, միությունների և միավորումների կողմից օտար ցեղերի ստրկացման միջոցով»<sup>1</sup>: Նվաճման դերի մասին նմանօրինակ հայացքներ ունի նաև *Կ. Կաուցկին*: Նա գտնում է, որ «ամենուր առաջին դասակարգերի և պետությունների ծագումը կապված է նվաճման հետ»<sup>2</sup>: Պետությունը ծագում է որպես նվաճողների (հաղթած ցեղի) հարկադրանքի ապարատ հաղթվածների նկատմամբ և դրանից հետո հաղթողների ու պարտվածների՝ բռնությամբ միավորված հանրույթ. հաղթած ցեղից ձևավորվում է տիրապետող, իսկ պարտված ցեղից՝ շահագործվող դասակարգը:

*Հոգեբանական հայեցակարգերը:* Այս մտտեցման ներկայացուցիչները հասարակության, իրավունքի և պետության աղբյուրներն ու հիմքը տեսնում են մարդկանց (անհատական կամ կոլեկտիվ) հոգեկանի մեջ:

Այսպես, համաձայն *Թ. Թարդի*՝ մարդկության ամբողջ պատմությունը, ներառյալ՝ անցումը նախնադարյան վիճակից պետականին և սոցիալական ու քաղաքական-իրավական ինստիտուտների հետագա զարգացումը, որոշվում է այնպիսի առաջնային գործոններով, ինչպիսիք են՝ հայտնագործությունը (գյուտը) և նմանակումը: Հոգեբանական մտտեցումը զարգացրել է նաև *Ֆ. Հիդինգը*, որի կարծիքով առաջնային սոցիալական գործոնը ցեղատեսակի գիտակցումն է: Այդ ասելով՝ Հիդինգը հասկանում էր գիտակցության այնպիսի վիճակը, որում ցանկացած

<sup>1</sup> Гумплович Л. Основы социологии. СПб., 1899. т. 2 184

<sup>2</sup> Каутский Т. 2. Государство и развитие человечества. М.-Л., 1931. т. 89

էակ պատրաստ է ճանաչել իր հետ նույն ցեղատեսակի ցանկացած բանական էակի: Այդ ցեղատեսակների և ուսանների ներսում ցեղատեսակի գիտակցությունն անհասներին էթնիկական ու քաղաքական միություններում խմբավորելու, դասակարգային բաժանումների, հասարակական և քաղաքական հանրությունների ծագման հիմքն է:

Ն. Մ. Կորկունովը հասարակությունը և պետությունը համարում էր մարդկանց հոգեկան միավորման արդյունք: Նրա հոգեբանական մոտեցման համաձայն՝ իշխանությունն ուժ է, որը պայմանավորված է ոչ թե իշխողի կամքով, այլ՝ հպատակի կախվածության գիտակցությամբ: Համապատասխանաբար, նաև պետական իշխանությունը, ըստ Կորկունովի, ոչ թե որևէ մեկի կամքն է, այլ մի ուժ, որը բխում է պետությունից կախված լինելու մասին քաղաքացիների հոգեկան պատկերացումներից:

Լ. Ի. Պետրաժիցկին իրավունքը և պետությունը մեկնաբանում էր որպես հոգեկան ապրում: Ընդ որում, նա պետությունը և պաշտոնական օրենսդրությունը դիտարկում էր որպես իրավական ապրումների «սարածական պատկերներ», հոգեկանի «երևակայական պատկերացումներ»:

Մարքսիստական հայեցակարգը: Պետության և իրավունքի ծագման մարքսիստական հայեցակարգը հիմնվում է հասարակության ու հասարակական զարգացման մասին պատմության մասերիալիստական ըմբռնման, պետության և իրավունքի դասակարգային մեկնաբանման վրա:

Համաձայն մարքսիզմի՝ պետությունը ծագում է նախնադարյան համայնական կարգերի զարգացման բնական պատմական գործընթացի հետևանքով (արտադրողական ուժերի աստիճանական զարգացում, աշխատանքի բաժանում, մասնավոր սեփականության ծագում, հասարակության գույքային և սոցիալական տարբերակում, դրա տրոհումը շահագործողների ու շահագործվողների և այլն), որպես տնտեսապես զերիշխող, շահագործող դասակարգի հարկադիր իշխանության գործիք՝ ունեզուրկ, շահագործվող դասակարգի նկատմամբ:

Այս մարքսիստական հայեցակարգի դրույթները շարադրված են Գ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի և մյուս մարքսիստների աշխատություններում:

Պետության ծագման հիմնահարցը հետազոտվում է Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»<sup>1</sup> աշխատությունում: Էնգելսը հետազոտում է տոհմային կարգի քայքայման գործընթացում պետության ծագման երեք ձև: Առավել մաքուր և ամենից

<sup>1</sup> Տե՛ս Մարքս Կ., Էնգելս Գ., Սոց. Կ. 21. էջ 73-178



դասական ձևը, Էնգելսի գնահատմամբ, Աթենական պետության ծագումն է: Այստեղ պետությունն անմիջականորեն և գլխավորապես ծագում է բուն տոհմական հասարակության ներսում զարգացող դասակարգային հակադրություններից: Հռոմում պետությունը ծագում է տոհմային հասարակության ազնվականության և այդ հասարակությունից դուրս գտնվող իրավագուրկ պլեբեյների միջև պայքարում: Պլեբեյների հաղթանակը պայթեցնում է տոհմային կարգը, և նրա փլաստակների վրա ծագում է պետությունը, որի մեջ արագորեն լուծվում են թե տոհմային ազնվականությունը, թե՛ պլեբեյները: Հռոմեական կայսրության գերմանական հաղթողների մոտ պետությունը ծագում է որպես ընդարձակ օտար տարածքների նվաճման անմիջական արդյունք, որոնց տիրապետելու համար այն ժամանակվա գերմանացիների տոհմային կարգը որևէ միջոց չէր արամադրում:

Պետության հիմնական հատկանիշները, որոնք դա տարբերում են տոհմային կազմակերպությունից, ըստ Էնգելսի՝

1) պետության հպատակների տարբերակումն է *տարածքային բաժանմանը համապատասխան*.

2) *հանրային իշխանության* հիմնադրումը, որն արդեն չի համընկնում անմիջականորեն ինքն իրեն որպես զինված ուժ կազմակերպող բնակչության հետ: Ընդ որում, ինչպես նշում է Էնգելսը, այդ հանրային իշխանությունը պահելու համար անհրաժեշտ են *հարկեր*, որոնք հայտնի չէին տոհմային հասարակությանը:

Վ. Ի. Լենինի մոտեցման մեջ քննարկվող թեմայի շեշտը դրվում է դասակարգերի հակադրության և պետության դասակարգային բնույթի վրա. «Պետությունը, — ընդգծում էր նա, — դասակարգային հակասությունների *անհաշտելիության* արդյունք և դրսևորում է: Պետությունն առաջ է գալիս այնտեղ, այն ժամանակ ու այն չափով, որտեղ, երբ և որքանով դասակարգային հակասություններն օբյեկտիվորեն չեն կարող հաշտվել... Եվ հակառակը՝ պետության գոյությունն ապացուցում է, որ դասակարգային հակասություններն օբյեկտիվորեն անհաշտելի են»<sup>1</sup>: Նույն ոգով նա պետությունը բնութագրում էր որպես «մեկ դասակարգի կողմից մյուսի նկատմամբ տիրապետությունը պահպանող մեքենա», որպես «... մի մեքենա, որով մի դասակարգը ճնշում է մյուսին»<sup>2</sup>:

*Ազատական-իրավաբանական հայեցակարգը*: Իրավունքի և պետության ծագման հիմնահարցի այս կամ այն մեկնաբանությունն արտահայտում է դրանց էության հասկացողության որոշակի հարադրու-

<sup>1</sup> *Ленин В.И. Полн. собр. соч. Т. 33. էջ 7*

<sup>2</sup> *Ленин В.И. Полн. собр. соч. Т. 39. էջ 73, 75*

յունը: Ինչպիսին իրավունքի և պետության էության հասկացողությունն է (և, հետևաբար՝ դրանց հասկացությունը), այնպիսին էլ դրանց ծագման ու առաքելության համապատասխան հայեցակարգը, դրանց ծագման և զարգացման գործընթացի համապատասխան մեկնաբանությունն է:

Համաձայն իրավունքի և պետության ազատական-իրավաբանական տեսության՝ իրավունքն ու պետությունը ծագում, զործում, զարգանում են, և մինչև օրս գոյություն ունեն ու զործում են որպես սոցիալական կյանքում մարդկանց ազատության կեցության ճանաչման, արտահայտման և իրականացման, իր էությամբ միասնական եղանակի, կարգի ու ձևի երկու փոխադարձորեն կապված բաղադրատարրեր:

Ազատությունը (ազատ անհատները) պատմականորեն ի հայտ է (են) գալիս նախնադարյան համայնական հասարակության քայքայման և նրա անդամների՝ ազատների ու անազատների (ստրուկների) բաժանման գործընթացում: Համայնական հասարակության իշխանության նորմերին ու ինստիտուտներին փոխարինելու եկած իրավունքը և պետությունն այդ ազատության նորմատիվ և ինստիտուցիոնալ ճանաչման, արտահայտման ու պաշտպանության համընդհանուր և անհրաժեշտ (մինչև օրս միակ հնարավոր) ձևն են՝ մասնավոր և հանրային-իշխանական գործերում ու հարաբերություններում անհատների իրավասուբյեկտության և պետականասուբյեկտության տեսքով: Ազատության հետագա համաշխարհային-պատմական առաջընթացը (ստրկությունից դեպի ֆեոդալիզմ և կապիտալիզմ, իսկ ապա նաև օբյեկտիվ հնարավորության տեսքով՝ պոստսոցիալիստական ու պոստկապիտալիստական ցիվիլիզմ), միաժամանակ, նաև այդ ազատության կեցության ամրապնդման և իրականացման համապատասխան իրավական ու պետական ձևերի առաջընթացն է:

Այսպիսով, այս աշխարհում ազատությունն ի հայտ է գալիս ու գոյություն ունի պետական-իրավական ձևով, իսկ իրավունքի և պետության ծագումն իրենով նշանավորում է մարդկանց կյանքում ազատության այդ կեցությունը, ազատ անհատների իրավունքի ձևականորեն հավասար սուբյեկտների և պետության անդամների առկայությունը: Չէ՞ որ ազատության ի հայտ գալը և մարդկանց ազատների ու անազատների (ստրուկների) որակապես նոր (նախորդ դարաշրջանի համեմատությամբ) բաժանումը կարելի է արտահայտել միայն պետական-իրավական ձևով՝ մի մասին (ազատներին) իրավունքի ու իշխանության սուբյեկտներ, իսկ մյուսներին (ստրուկներին), համապատասխանաբար՝ առաջինների իրավունքի և իշխանության օբյեկտներ ճանաչելու ձևով:

Նախնադարյան համայնական հասարակությունում չկա իրավունք և պետություն, որովհետև այնտեղ չկան ազատություն, ազատ անհատներ (և համապատասխանաբար դրանց հակադրությունը՝ անազատներ, ստրուկներ): Եվ այն նախնադարյան հասարակություններում, որտեղ զարգացումը (անկախ պատճառներից՝ հոգևոր կամ նյութական) չի ստավ մարդկանց ևրկու՝ սկզբունքորեն հակադիր, խմբերի (ազատների և ստրուկների) հանրորեն նշանակալի բաժանմանը, այսինքն՝ այնտեղ, որտեղ ազատությունը դեռևս չի հասունացել սարկության հետ անազատության իր անհամատեղելի հակադրությամբ, այդտեղ էլ տեղի չի ունեցել անցումը դեպի իրավունքի և պետության: Նման ոչ զարգացած հասարակություններում նախնադարյան համայնական կարգերին փոխարինելու եկավ բունատիրական կարգը:

*Բռնատիրությունը* (իր պատմականորեն բազմազան բոլոր ձևերով՝ սկսած հինարևելյան բռնատիրությունից մինչև ժամանակակից ամբողջատիրությունը) կարգ է առանց ազատության, առանց իրավունքի և առանց պետության, կարգ, որը հենվում է հպատակների նկատմամբ իշխողների (մի բունավետի կամ բռնատիրական խմբի) բռնության վրա: Ուստի, ճիշտ չէ նախնադարյան համայնական կարգերից անցումը բռնատիրությանը մեկնաբանել որպես պետության և իրավունքի ծագում: Բռնատիրական պետությունը, բռնատիրական իրավունքը նույնպիսի անհեթեթություն է, այնպիսի ներքին հակասությամբ բառազուգորդություն, մի խոսքով՝ այնպիսի «*փայտե երկար*», ինչպիսին է բռնատիրական իրավակարգը, ամբողջատիրական իրավունքը, ամբողջատիրական պետությունը և այլն:

Ամենուր չէր, որ նախնադարյան համայնական կարգի ավարտը զուգորդվեց իրավունքի և պետության ծագմամբ: Դա ավելի շատ բացառություն էր, քան՝ կանոն: Այդ բացառությունների շարքին կարելի է դասել իրավունքի և պետության ծագումը հին հույների, հռոմեացիների, գերմանացիների մոտ, որոնք դրեցին ապագա եվրոպական պետականության ու իրավունքի հիմքերը և, ընդհանրապես, այն ամենի հիմքերը, որոնք ժամանակակից հասկացողությամբ իրավունք և պետություն են:

Իրավունքի և պետության ծագման ազատական-իրավաբանական հայեցակարգը չի ժխտում այդ հիմնահարցի նկատմամբ այլ մոտեցումներում եղած մի շարք դրույթների ճանաչողական նշանակությունը: Տվյալ հայեցակարգը ելնում է իրավունքի և պետության ծագման համար անհրաժեշտ նվազագույն պայմանից: Իրավունքի և պետության, որպես ազատության ձևի, ծագման նման բացարձակ անհրաժեշտ պայման (և, կարելի է ասել, եզրափակիչ պատճառ) է բուն ազատության առկայութ-

յունը (ազատ անհասանքի սոցիալապես նշանակալից խմբի առկայութ-  
յունն անազատների, սուրուկների նկատմամբ դրա սկզբունքային հա-  
կադրության մեջ): Այստեղ էական է հենց այն, որ *ազատությունն ա-  
ռանց իրավունքի և պետության ու պետությունը և իրավունքն առանց ա-  
զատության՝ անհնարին են:*

Նման եզրափակիչ պատճառի համեմատ՝ մնացած պատճառները  
(դիցարանական, կրոնական, օրգանական, հոգեբանական, ուժային,  
պայմանագրային, տնտեսական, դասակարգային և այլն), որոնք շա-  
րադրված են այլ հայեցակարգերում, լավագույն դեպքում կրում են նա-  
խապատրաստական, լրացուցիչ, ուղեկցող բնույթ:

Ազատական-իրավաբանական հայեցակարգը ելնում է նրանից, որ  
իրավունքն ու պետությունը ծագում են ո՛չ որպես կազմակերպված  
բռնության մեթոդ և ո՛չ էլ բռնության համար (որից ավելի լավ գլուխ է  
հանում բռնատիրությունը), այլ ազատության ճանաչման, հաստատ-  
ման և պաշտպանության համար, այն ձևով ու այն չափով, որով դա  
ընդհանրապես հնարավոր էր այն ժամանակներում: Դա հաստատվում  
է նաև պատմականորեն զարգացող պետական-իրավական ձևերում ա-  
զատության ամբողջ հետագա առաջընթացով՝ ընդհուպ մինչև մեր օրերի  
իրավական պետականությունը:

## **Գլուխ 2. Իրավունքի և պետության տիպաբանությունը: Իրավունքի և պետության հիմնական պատմական տիպերը**

Իրավունքի և պետության պատմականորեն հայտնի տեսակների  
*տիպաբանությունը* դրանց դասակարգումն է միասնական չափանիշով,  
դրանց *բաժանումը միասեռ (միատիպ) խմբերի:*

Գրականության (անցյալ և արդի) մեջ կան նման դասակարգման  
զանազան տարբերակներ:

### **1. Տիպաբանության անտիկ հայեցակարգերը**

Անտիկ մտածողները (Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը, Ցիցե-  
րոնը և ուրիշներ) պետության տարբեր ձևերը բաժանում էին երկու խմբի՝  
ճշմարիտ և ոչ ճշմարիտ: Ընդ որում, նրանք *պետության ճշմարիտ ձևերի  
խմբում* դասում էին այն ձևերը, որոնցում իշխանությունն իրականաց-  
վում է օրենքների հիման վրա և ի շահ ընդհանուրի, իսկ *ոչ ճշմարիտ*

**ձևերի խմբում՝** նրանց, որոնցում իշխանությունը չի հենվում օրենքի վրա և ծառայում է սուկ կառավարողների շահերին:

Հենվելով նման մոտեցման վրա՝ *Պլատոնն* առանձնացնում էր երեք ճշմարիտ ձև՝ թագավորի իշխանությունը (օրինական միապետությունը, այսինքն՝ մեկ անձի կառավարումը օրենքների հիման վրա), ազնվականությունը (քչերի օրինական իշխանությունը) և օրինական ժողովրդավարությունը (ղեմոսի իշխանությունը օրենքների հիման վրա) ու, համապատասխանաբար, երեք ոչ ճշմարիտ ձև՝ բռնատիրությունը (մեկի անօրինական իշխանությունը), օլիգարխիան (քչերի անօրինական իշխանությունը) և անօրինական ժողովրդավարությունը (օրենքների վրա չհիմնված ղեմոսի իշխանությունը):

Նույն դիրքերից *Արիստոտելը* գրում էր, որ երեք ճշմարիտ ձևերն են՝ թագավորի իշխանությունը, ազնվականությունը և պոլիտիան (մեծամասնության կառավարումն օրենքների հիման վրա), իսկ երեք ոչ ճշմարիտ ձևերն են՝ բռնատիրությունը, օլիգարխիան և ժողովրդավարությունը (օրենքների վրա չհիմնված ղեմոսի՝ մեծամասնության կառավարումը):

Պետության տիպաբանության նկատմամբ այդպիսի մոտեցումը, որը հիմնվում է օրինականության և օրինական կառավարումն անօրինականությանը հակադրելու վրա, այս կամ այն ձևով լայնորեն օգտագործվել է հետագա քաղաքական-իրավական մտքում ու որոշ չափով իր նշանակությունը պահպանել է մինչև մեր օրերը:

## 2. Հեգելի պատմական-ֆորմացիոն մոտեցումը. հոգևոր ֆորմացիաների հայեցակարգը

*Հեգելը* պետությունների տիպաբանության հիմնահարցը մեկնաբանում է ոգու ազատության զարգացման և պետության տարբեր ձևերում դրա օբյեկտիվացման համաշխարհային-պատմական գործընթացի դիրքերից: «Համաշխարհային պատմությունը,- գրում էր նա,- անհրաժեշտություն է միայն ոգու ազատության *հասկացությունից*, բանականության պահերի և դրանով իսկ ինքնազիտակցության և ոգու ազատության զարգացում է՝ *որպես համընդհանուր ոգու մեկնաբանում և իրականացում*»<sup>1</sup>: Համաշխարհային ոգու այդպիսի իրականացման ձևերը, ըստ Հեգելի, «չորս համաշխարհային-պատմական թագավորություններն են՝

- 1) արևելյանը,
- 2) հունականը,

<sup>1</sup> *Гегель Г.В.Ф. Философия права. М., 1990. էջ 370*

3) հոռմեականը,

4) գերմանականը»<sup>1</sup>:

Ըստ Հեգելի, այդ թագավորությունները համաշխարհային ոգու օբյեկտիվ-պատմական ֆորմացիաներ (ձևակազմավորումներ) են, այսինքն՝ համաշխարհային պատմության մեջ բանականության և ազատության զաղափարների զարգացում:

Այդ համաշխարհային-պատմական թագավորությունների (համաշխարհային ոգու կազմավորումների) փոխարինմամբ փոխարինվում են նաև պետության համապատասխան ձևերը՝ արևելյան թագավորությանը համապատասխանում էր թեոկրատիան (մեկի, գերագույն կառավարչի ազատությունը), հունական և հռոմեական թագավորություններին՝ ժողովրդավարությունը կամ ազնվականությունը (այսինքն՝ բնաչության մի մասի ազատությունը), գերմանական թագավորությանը՝ նոր ժամանակների միապետությունը ներկայացուցչական համակարգով (բոլորի ազատությունը): «Արևելքը,- գրում էր Հեգելը,- գիտեր և գիտի միայն, որ *մեկն* է ազատ, հունական ու հռոմեական աշխարհը գիտի, որ *որոշ անհատներ* են ազատ, գերմանական աշխարհը գիտի, որ *բոլորն* են ազատ»<sup>2</sup>: Ընդ որում, «գերմանական աշխարհ» ասելով՝ Հեգելը նկատի ուներ հյուսիս-եվրոպական պետությունները, իսկ միապետություն ասելով՝ սահմանադրական միապետությունը ներկայացուցչական համակարգով և իշխանությունների բաժանմամբ:

### 3. Մարքսիստական պատմական-ֆորմացիոն մոտեցումը. տնտեսական ֆորմացիաների հայեցակարգը

Պետության և իրավունքի մարքսիստական տիպաբանության հիմքում ընկած է *Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի* կողմից մատերիալիստական, պրոլետարական-դասակարգային, կոմունիստական դիրքերից մշակված ուսմունքը հասարակական-տնտեսական ֆորմացիաների մասին: Ըստ մարքսիզմի, սոցիալ-պատմական զարգացման մեջ որոշիչ դեր են խաղում տնտեսական (արտադրական) հարաբերությունները, որոնք կազմում են հասարակության հիմնաշենքը, որով և պայմանավորված է դրան համապատասխանող վերնաշենքը, ներառյալ՝ պետությունն ու իրավունքը: Այդ մոտեցման համաձայն, մարդկության ամբողջ պատմությունը բաժանվում է հինգ հասարակական-տնտեսական ֆորմացիա-

<sup>1</sup> Նույն տեղը էջ 374

<sup>2</sup> *Гегель Г.В.Ф. Философия истории. М.-Л. 1935. էջ 98*

յի՝ նախնադարյան համայնական կարգ, ստրկատիրական կարգ, ֆեոդալական կարգ, կապիտալիստական կարգ, կոմունիստական կարգ:

Մասնավոր սեփականության և դասակարգային բաժանման վրա հիմնված երեք դասակարգային հակամարտ (անտազոնիստական) ֆորմացիաներին (ստրկատիրական, ֆեոդալական ու կապիտալիստական) համապատասխանում են պետության և իրավունքի երեք տիպ՝ ստրկատիրական պետությունը և իրավունքը, ֆեոդալական պետությունն ու իրավունքը, բուրժուական (կապիտալիստական) պետությունը և իրավունքը: Նախնադարյան կարգերի (նախնադարյան կոմունիզմի) ժամանակ դեռևս չկա պետություն և իրավունք, իսկ կոմունիզմի ժամանակ պետությունն ու իրավունքը, որպես դասակարգային երևույթներ, մահանում են: Կոմունիզմի առաջին փուլում (այսինքն՝ սոցիալիզմի ժամանակ) պետականության և իրավունքի վերաբերյալ աշխատանքի և սպառման չափի կարգավորման համար Մարքսը խոսում է պրոլետարիատի դիկտատուրայի ու բուրժուական «հավասար իրավունքի» մասին:

Հետագայում, խորհրդային մարքսիստական գրականության մեջ, մարքսիզմի հիմնադիրների կանխատեսող դրույթներին ակնհայտորեն հակադիր, սկսեցին առանձնացնել նաև պետության ու իրավունքի սոցիալիստական սիպը, որը, փաստորեն, ցույց է տվել առանց պետության և իրավունքի սոցիալիզմից լիակատար կոմունիզմին կանխատեսված անցման բացակայությունն ու հիմնագուրկ լինելը:

Տնտեսական ու դասակարգային հարաբերությունները, այլ գործոնների հետ միասին (հոգևոր, մշակութային և այլն), անկասկած, կարևոր նշանակություն ունեն պետության և իրավունքի ծագման, փոփոխման, զարգացման գործընթացում: Մակայն, դրանց դերի ուռճացումը, որը բնութագրական է ամբողջ մարքսիզմին, ներառյալ՝ նաև պետության և իրավունքի մարքսիստական տիպաբանությունը, հանգեցնում է էական արատների:

Նման արատներից է մարքսիզմի սկզբունքային բացասական վերաբերմունքը պետության և իրավունքի նկատմամբ, դրանք որպես դասակարգային ճնշման և հալածանքի գործիքներ, որպես տիրապետման ու ճնշման մեքենաներ մեկնաբանելը:

Այսպիսով, մարքսիստական մոտեցման մեջ անտեսվում է նաև այն սկզբունքային հանգամանքը և համաշխարհային պատմության ակնհայտ փաստը, որ այս աշխարհում մարդկանց ազատությունն ի հայտ է գալիս ու զարգանում է հենց պետական-իրավական ձևերում: Ի հեճուկս մարքսիստական պատկերացումների ու զնահատականների՝ պետութ-

յան և իրավունքի իրական պատմական զարգացումն ու տիպերի վտփոխումը (վաղ պետություններից մինչև ժամանակակից իրավական պետությունները) վկայում է մարդկանց ազատության, առաջադիմության (ազատության ոլորտի և չափի ընդլայնման, ազատների թվի մեծացման) և ոչ թե մեկ դասակարգի կողմից մյուսների նկատմամբ իրականացվող բռնության, ճնշման ու տիրապետման առաջընթացի մասին:

Պետության և իրավունքի մասին մարքսիստական ուսմունքը, ներառյալ՝ նաև պետության ու իրավունքի համապատասխան տիպաբանությունը, իր էությամբ ժխտում է իրավունքի և պետության, որպես որոշակի արժեքի, որպես մարդկային մշակույթի, ազատության զարգացման մեջ նվաճման նկատմամբ ցանկացած դրական վերաբերմունք: Դա կրում է հակապետական ու հակաիրավական բնույթ, և սկզբունքորեն հակված է իրավագիտության ու իրավունքի և պետության իրավաբանական մեկնաբանման հետ:

#### 4. Մշակութաբանական և քաղաքակրթական մոտեցումները

Հետխորհրդային իրավաբանական գրականության մեջ որոշակի տարածում գտան նաև հղումները պետության և իրավունքի տիպաբանության, այսպես կոչված, քաղաքակրթական մոտեցմանը: Ընդ որում, նկատի է առնվում *Օ. Շպենգլերի* և նրա «Եվրոպայի մայրամուտը» գրքի գաղափարների զգալի ազդեցության տակ գտնվող անգլիացի պատմաբան *Ա. Ջ. Թոյնրիի*<sup>1</sup> (1889-1975) ուսմունքը քաղաքակրթությունների մասին: Շպենգլերից հետո, որը ժխտում էր միասնական համամարդկային մշակույթը և խոսում էր տարբեր պարփակված մշակույթների մասին (ընդ որում, ստեղծագործական օրգանական մշակույթը, ըստ Շպենգլերի, մահանալով վերածնվում է անպառոզ մեխանիկական քաղաքակրթության), Թոյնրին խոսում է մի քանի տասնյակ մասնատված, պարփակված քաղաքակրթությունների մասին և մարդկային պատմության մեջ ժխտում է քաղաքակրթական միասնությունը: Յուրաքանչյուր քաղաքակրթություն աչքի է ընկնում իր առանձնահատկությամբ, ունի իր սոցիալական և քաղաքական արժեքները, հայացքներն ու ձգտումները, իր պետական-իրավական ձևերն ու սահմանումները, մի խոսքով, պատմական «մարտահրավերներին» սեփական «պատասխանները»:

<sup>1</sup> *Тойнби А. Дж. Постигание истории. М. 1991*



Այնուհայտ է, որ տարբեր ինքնավար քաղաքակրթությունների մասին նմանօրինակ ուսմունքի հիման վրա, լավագույն դեպքում, կարելի է խոսել համապատասխան մասնատված քաղաքակրթություններում իշխանության կազմակերպման և նորմատիվ կարգավորման՝ միմյանցից կտրված ախպերի մասին, սակայն անհնար է (անգամ համամանությանը և կրկնելիությանը հղումներ անելով) հիմնավորել *պետության և իրավունքի մի ինչ-որ ամբողջական տիպաբանություն*՝ կառուցված բոլոր քաղաքակրթությունների համար ընդհանուր միասնական չափանիշի վրա: Եթե նման միասնական ընդհանուր քաղաքակրթական չափանիշ և սկզբունք հնարավոր է ու կա, ապա պետք է ճանաչեն (իննց Թոյնբիև և նրա հետևորդները) մարդկության պատմության մեջ ինչ-որ միասնական քաղաքակրթության, համամարդկային քաղաքակրթության որոշակի հայեցակարգի առկայությունը, որի բաղադրատարրերն ու բաղադրապահերն առանձին հանրույթների և ժողովուրդների ինքնատիպ քաղաքակրթություններ (և մշակույթներ) են:

Բացի դրանից, տարբեր քաղաքակրթությունների մասին Թոյնբիի ուսմունքում, ինչպես նաև տարբեր մշակույթների մասին Շպենգլերի ուսմունքում չկա պետության և իրավունքի հիմնահարցերի որևէ հասուկ հետազոտություն, որի հիման վրա հնարավոր լիներ իրավագիտության մեջ կառուցել պետության և իրավունքի տեսական ու համապատմական նշանակություն ունեցող տիպաբանություն:

### **5. Իրավունքի և պետության տիպաբանության ազատական-իրավաբանական հայեցակարգը**

Համաձայն ազատական-իրավաբանական հայեցակարգի՝ *պետության և իրավունքի տիպերն ազատության առաջընթացի փուլերն արտացոլող՝ մարդկանց ազատության ճանաչման ու կազմակերպման հիմնական պատմական ձևերն են:*

Իրավունքի և պետության՝ որպես մարդկանց ազատության ու ազատ անհատի՝ որպես իրավունքի սուբյեկտի և պետության (պետական իշխանության) սուբյեկտի անհրաժեշտ ձևերի ազատական-իրավաբանական հասկացողության ու մեկնաբանման դիրքերից *սկզբունքային նշանակություն ունի իրավունքի և պետության տիպաբանությունն այն չափանիշներով (հիմքերով), որոնք որոշում են մարդկանց՝ որպես իրավունքի և պետության (պետական իշխանության) սուբյեկտների ճանաչման տարբեր պատմական ձևերի առանձնահատկությունը:*

Հին աշխարհի պետություններում անհատը (մարդը) ազատ է ու, դրա հետ միասին, պետության և իրավունքի սուբյեկտ է՝ *էթնիկական չափանիշով*: Այսպես, աթենական քաղաքացիներ և աթենական իրավունքի սուբյեկտներ կարող էին լինել աթենական *դեմոսի* (տոմոսների) անդամները, հռոմեական քաղաքացիական համայնքի (civitas-ի) անդամներ, հռոմեական քաղաքացիներ և հռոմեական իրավունքի (ius civile-ի) սուբյեկտներ՝ միայն քվիրիտները (բնիկ հռոմեացիները): Հին աշխարհի պետությունը և իրավունքն իր ախպով *էթնիկական էր*:

Պետության և իրավունքի այդ ելակետային տիպը հանդես է գալիս որպես մարդկանց՝ ազատների ու անազատների (էթնիկական հիմքով) բաժանման վաստի ճանաչման և ամրագրման անհրաժեշտ ձև, ընդ որում, ազատների տարբերությունն անազատներից իր արտացոլումն ու ամրագրումն է գտնում հենց նրանում, որ ազատներն իրավունքի և պետության սուբյեկտներ են, իսկ անազատները (սարուկները), համապատասխանաբար, իրավունքի ու պետության օբյեկտներ: Այդ տարբերությունը, այլ կերպ, անհնար է արտահայտել:

Ստրկության հաղթահարումը միջնադարում տանում է դեպի *դասային տիպի* պետության և իրավունքի: Այստեղ մարդկանց ազատության առաջընթացն այն է, որ ազատության էթնիկական չափանիշը (այսինքն՝ մի մասի ազատությունը և մյուս մասի անազատությունը) իր տեղը զիջում է ազատության դասային չափանիշին: Զարգացման այս աստիճանում (եվրոպական ֆեոդալիզմ) ստրուկներ արդեն չկան և, այդ իմաստով, արդեն բոլորն ազատ են, սակայն այդ ազատության չափը տարբեր է առանձին խավերի ներկայացուցիչների մոտ: Այստեղ ազատությունը կրում է դասային սահմանափակումների և արտոնությունների բնույթ:

*Իրավունքի և պետության այսպիսի դասային տիպի* դեպքում յուրաքանչյուրը հենց որպես որոշակի դասի անդամ իրավունքի սուբյեկտ ու պետության սուբյեկտ է: Մարդկանց իրավասուբյեկտության և պետականասուբյեկտության ներդասային հավասարությունը համատեղվում է միջդասային անհավասարության՝ տարբեր դասերի ու դրանց անդամների պետական-իրավական կարգավիճակների անհավասարության հետ:

Նոր ժամանակներում ֆեոդալիզմի հաղթահարմամբ դասային կարգերին փոխարինելու է գալիս *պետության և իրավունքի անհատական (անհատական-քաղաքական, անհատական-քաղաքացիական) տիպը*: Պետության ու իրավունքի այդ տիպի ժամանակ մարդն իրավունքի և պետության սուբյեկտ է՝ որպես ինքնուրույն քաղաքական անհատ (առանձին քաղաքացի), ոչ թե որպես որոշակի էթնոսի կամ դասի անդամ:

Մարդկանց՝ որպես իրավունքի և պետության սուբյեկտների, այսպիսի անհատականացումը տեղի է ունենում միջնադարյան ֆեոդալիզմի քայքայման ու դասային բաժանման հաղթահարման գործընթացում, որպես հետևանք մասնավոր և քաղաքական կյանքի ոլորտների առանձնացման, ոչ քաղաքական քաղաքացիական հասարակության կազմավորման, քաղաքական պետությունից դրա տարբերակման:

Իրավունքի արդի (ներկայումս իրականորեն-պատմականորեն վերջին) տիպը և, համապատասխանաբար, սահմանադրականորեն ձևավորված ազատական-ժողովրդավարական իրավական պետության (ժամանակակից բառօգտագործմամբ՝ իրավական պետության) տիպը խառը (կոմբինացված) տիպն է, որն իր մեջ զուգակցում է երկու տարբեր բաղադրատարր՝ բնական-իրավական և պոզիտիվ-իրավական: Իրավունքի և իրավական պետության այդ ժամանակակից տիպը պայմանականորեն կարելի է անվանել *բնական-պոզիտիվ* (կամ *մարդասիրական-քաղաքական*), քանի որ այն որոշակի պետական ամբողջության տեսքով (մեկ պետության մեջ ամրագրված և գործող իրավունքի միասնական համակարգի ձևով) երկու, ավանդաբար հակադիր, հիմունքների՝ մասնավոր (անհատական-մարդկային, մարդասիրական) ու հանրային (քաղաքական, պաշտոնական-իշխանական) սկզբունքների, իրավունքի և պետության նկատմամբ բնական-իրավական ու պոզիտիվ-իրավական մոտեցումների պրագմատիկ համաձայնեցվածության և համագոյակցության արդյունք է:

Տվյալ տիպի էական նորույթը որոշող բնական (բնական-իրավական, մարդասիրական) բաղադրատարրն այն է, որ այստեղ առաջին անգամ պետականորեն ամրապնդվում, պաշտոնական-իշխանական ձևով հաստատվում ու պոզիտիվացվում են մարդու որոշակի բնական իրավունքները և ազատությունները, դրանց արվում է իրավաբանական (պետական-հարկադիր) ուժ, ու ճանաչվում է դրանց գերապատվությունը գործող միասնական պոզիտիվ իրավունքի այլ աղբյուրների նկատմամբ: Նման տիպի շրջանակներում մարդու սահմանադրականորեն ամրագրված բնական իրավունքներն ու ազատությունները պարտադիր են պետության համար: Դրանք որոշում են և՛ ամբողջ պոզիտիվ իրավունքի, և՛ պետության իրավական բնույթը:

Դրա հետ միասին, պետության և իրավունքի տվյալ տիպի շրջանակներում բնական իրավունքի նշանակությունը սահմանափակված է գործող պոզիտիվ իրավունքի միասնական համակարգի այլ (բացի հաստատված մարդու բնական իրավունքներից և ազատություններից) աղբյուրների առկայությամբ, որոնք ամրագրում են մարդու՝ որպես մասնա-

վոր սուբյեկտի, իրավունքների տարբերությունը քաղաքացու՝ որպես հանրային-քաղաքական սուբյեկտի, պետության անդամի, առանձնահատուկ հանրային-իշխանական իրավունքների և պարտականությունների կրողի, հատուկ իրավունքներից:

Մարդու իրավունքների և քաղաքացու իրավունքների այսպիսի տարբերակումը նշանակում է, որ մարդը որպես մարդ սոսկ մասնավոր անձ է: Մարդը միայն բնական իրավունքների սուբյեկտ է, ոչ թե քաղաքացու իրավունքների սուբյեկտ: Իսկ քաղաքացին՝ որպես հանրային-քաղաքական անձ, թե՛ մարդու բնական իրավունքների սուբյեկտ է և թե՛ տվյալ պետության անդամի հատուկ հանրային-քաղաքական իրավունքների սուբյեկտ:

Մարդ - քաղաքացու իրավունքները մարդ - ոչ քաղաքացու (օտարերկրացու, քաղաքացիություն չունեցող անձի) համադրությամբ պետական-իրավական արտոնություններ են:

Նման արտոնությունները պայմանավորված են յուրաքանչյուր պետության (և դրանում գործող իրավունքի համակարգի) բնույթով և հենց ազատ մարդկանց՝ որպես կոնկրետ հանրագումարի, կյանքի որոշակի եղանակի ու ձևի անհատական բնույթով, որոնց պատկանելությունը պատմականորեն որոշակի քաղաքական իրավական հանրույթին որոշում և որակավորում է նրանց՝ որպես հատուկ հանրային իրավունքների ու պարտականությունների սուբյեկտների: Բոլոր պետությունների (և դրանց իրավական համակարգերի) նման անհատականությունն ընկած է ներքին ու արտաքին հարաբերություններում պետության ինքնիշխանության հիմքում:

Իրավունքի և պետության ժամանակակից բնական-պոզիտիվ տիպի ամբողջությամբ որոշակի փոխզիջում է բնական ու պոզիտիվ իրավունքի, յուսնատուրալիզմի և լեզիզմի միջև՝ գործնական ու տեսական բնույթի համապատասխան արժանիքներով և թերություններով: Նման տիպի հակասականությունը (այստեղից էլ՝ մարդու իրավունքների և քաղաքացու իրավունքների տարբերությունը) պայմանավորված է նրանով, որ հետևողական (պաշտոնական իշխանությամբ և պաշտոնական իրավունքով չսահմանափակված) *բնական իրավունքը ենթադրում է նաև բնական պետություն* (ստոիկների միասնական աշխարհաքաղաքական պետության տիպը, որի քաղաքացիները բոլոր մարդիկ են, յուրաքանչյուր մարդ): Յուսնատուրալիզմն իր էությանը ժխտում է ինչպես յուրաքանչյուր մարդու իրավասուբյեկտությունից տարբերվող քաղաքացու հատուկ իրավասուբյեկտությունը, այնպես էլ ամբողջությամբ մարդու՝ որպես միայն մասնավոր իրավունքի, որպես հանրային-քաղաքական

հանրույթի (պետության) անդամի իրավունքներից զուրկ մասնավոր անձի, քաղաքականորեն սահմանափակված բնական իրավունքների (և ընդհանրապես՝ բնական իրավունքի) մեկնաբանությունը: Այնպես որ, յուսմասուրալիզմի և լեզիզմի սկզբունքային հակադրությունը պահպանվում է նաև այսօրվա դրությամբ դրանց գործնական հնարավոր փոխզիջումային համագործակցության այն ձևերում, որոնք բնութագրական են իրավունքի և պետության ժամանակակից տիպի համար:

*Իրավունքի և պետության նշված տիպերը՝ էթնիկական, դասային, անհատական-քաղաքական ու բնական-պոզիտիվ, հին աշխարհից մինչև մեր ժամանակները մարդկային ազատության աճի և զարգացման պատմականորեն իրար փոխարինող ձևեր ու աստիճաններ են:*

Ազատության առաջընթացի շարունակությունն ապագայում կծնի ազատության նորմատիվ-իրավական ու ինստիտուցիոնալ-իշխանական կազմակերպման նոր ձևեր, իրավունքի և պետության նոր տիպեր:

### **Գլուխ 3. Պետության ձևը**

*Պետության ձևը պետական իշխանության կազմավորման, կազմակերպման և իրականացման եղանակն է:* Պետության ձևը՝ որպես պետական իշխանության կազմակերպման, բաշխման և գործողության իրավական կարգի համալիր բնութագիր, իր մեջ ներառում է երեք փոխկապակցված հարադրություն՝ կառավարման ձևը, պետական կառուցվածքի ձևն ու պետական (քաղաքական) վարչակարգի ձևը:

#### **1. Կառավարման ձևը**

*Կառավարման ձևը գերագույն պետական իշխանության կազմակերպման և ձևավորման եղանակն է:*

Կառավարման ձևը շոշափում է հետևյալ հարցերը. ի՞նչ կառուցվածք ունի պետությունում գերագույն (ինքնիշխան) իշխանությունը, ի՞նչ մարմիններ և պաշտոնատար անձինք են օժտված այդ իշխանությամբ, ի՞նչ ձևով է դա ձևավորվում և բաշխվում նրանց միջև:

Ըստ կառավարման ձևի՝ պետությունները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ միապետությունների և հանրապետությունների:

*Միապետությունը* (հունարեն՝ monarchia - մեկի իշխանություն բառից) կառավարման ձև է, որի դեպքում գերագույն իշխանությունը ժառանգության սկզբունքով պատկանում է մեկ անձի:

Միապետության երկու հիմնական տարատեսակներն են՝ բացարձակ միապետությունը և ներկայացուցչական միապետությունը:

*Բացարձակ միապետությունում* (թագավորի, ցարի, կայսեր) գերագույն իշխանությունը սահմանափակված չէ որևէ ներկայացուցչական (օրինախորհրդատու կամ օրենսդրական) մարմնով: Օրինակ՝ բացարձակ միապետներ էին Ֆրանսիական թագավորները (մինչև 1789 թվականի ֆրանսիական հեղափոխությունը), ռուսական կայսրերը (մինչև XX դարի սկզբին Պետական Դումայի ստեղծումը) և այլն:

*Ներկայացուցչական միապետությունում* միապետի իշխանությունը սահմանափակված է որոշակի օրինախորհրդատու կամ օրենսդրական լիազորություններ ունեցող ներկայացուցչական մարմնի կողմից:

Ներկայացուցչական միապետության երկու հիմնական պատմական ձևերն են՝ դասային-ներկայացուցչական միապետությունը և սահմանադրական միապետությունը:

*Դասային-ներկայացուցչական միապետության* դեպքում միապետի իշխանությունը սահմանափակված է դասային-ներկայացուցչական մարմնի, այսինքն՝ տարբեր դասերի՝ հոգևորականության, ազնվականության և ծնունդ առնող երրորդ դասի՝ վերնախավի (վաճառականների, արհեստավորների և այլնի) օրինախորհրդատու լիազորություններով: Նման դասային-ներկայացուցչական ժողովները, որոնց գումարումը և լիազորությունների ծավալը կախված էր միապետի կամքից, բնութագրական են ֆեոդալական մասնատվածությունից բացարձակ միապետություններին անցման դարաշրջանին:

*Սահմանադրական միապետությունը՝* որպես կառավարման ձև, պատմականորեն փոխարինելու է գալիս բացարձակ միապետությանը:

Սահմանադրական միապետության դեպքում միապետի իշխանությունը Սահմանադրության (կամ սահմանադրական նշանակություն ունեցող որոշակի իրավական ակտերի) հիման վրա սահմանափակվում է խորհրդարանի՝ որպես ժողովրդավարական ներկայացուցչական մարմնի, օրենսդրական իշխանությամբ: Ընդ որում, խորհրդարանի ստորին պալատի (պատգամավորների պալատի) անդամներն ընտրվում են բնակչության կողմից, իսկ վերին պալատը, որպես կանոն, ձևավորվում է ժառանգության կարգով, միապետի նշանակմամբ և այլն:

Չզարգացած սահմանադրական միապետության փուլում, որին անվանում են *դուալիստական միապետություն*, ամբողջ գործադիր իշխանությունը, ներառյալ՝ կառավարություն ձևավորելու, նախարարներ և այլ պաշտոնատար անձինք նշանակելու իրավունքը, պատկանում է միապետին: Նա օժտված է նաև բացարձակ վետոյի և իր հայեցողությ-

յամբ խորհրդարանն արձակելու իրավունքներով: Դուալիստական միապետությունում խորհրդարանի լիազորությունները սահմանափակված են օրենսդրության և բյուջեի հաստատման հարցերով: Կառավարման այսպիսի ձևը XIX դարի վերջից XX դարի սկզբին, տեղ է գտել մի շարք երկրներում (Գերմանիա, Ավստրիա, Իտալիա և այլն):

Ժամանակակից զարգացած սահմանադրական միապետություններում (Անգլիայում, Բելգիայում, Իսպանիայում, Նիդեռլանդներում, Նորվեգիայում, Շվեդիայում, Ճապոնիայում և այլն) պետության գլուխ համարվող միապետի լիազորությունները շատ կողմերով ունեն անվանական (ձևական) բնույթ: Կառավարությունը (խորհրդարանում մեծամասնություն ստացած կուսակցությունների ներկայացուցիչներից) ձևավորվում է խորհրդարանի կողմից և պատասխանատու է նրա առջև: Օրենսդրական իշխանությունը պատկանում է խորհրդարանին, գործադիր իշխանությունը՝ կառավարությանը, որը բացի այդ (խորհրդարանի կողմից) պատվիրակված օրենսդրության ուժով ընդունում է նորմատիվ-իրավական ակտեր և օրենսդրական նախաձեռնության իրավունքի շրջանակներում ակտիվորեն մասնակցում է օրենսդրական գործունեությանը:

*Հանրապետությունը* (լատիներեն՝ *res publica* - հանրային, համաժողովրդական գործ) կառավարման ձև է՝ հիմնված որոշակի ժամկետով, պետական իշխանության բարձրագույն մարմինների ընտրովիության սկզբունքի վրա: Հայտնի է Ցիցերոնի քննադատ արտահայտությունը՝ «*Respublica est res populi*» («Հանրապետությունը՝ ժողովրդի գործն է»):

*Ժամանակակից հանրապետության* երկու հիմնական ձևերն են՝ խորհրդարանական հանրապետությունը և նախագահական հանրապետությունը: Դրանք իրավական պետություններում իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացման զանազան տարբերակներ են:

*Խորհրդարանական հանրապետությունը* կառավարման ձև է, որի դեպքում խորհրդարանը (որպես բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր իշխանություն) ձևավորում է բարձրագույն գործադիր իշխանությունը (կառավարությունը) ու վերահսկում է դրա գործունեությունը:

Պետության ղեկավարը (խորհրդարանական հանրապետությունում՝ նախագահը) նույնպես ընտրվում է խորհրդարանի կողմից: Նա ունի խորհրդարանն արձակելու իրավունք, օժտված է կառավարության ձևավորման (մասնակցությունը կառավարության ղեկավարի նշանակման գործընթացում) և օրենսդրական գործունեության (ստորագրում է օրենքներ, ընդունում է դեկրետներ և այլն) հարցերում լիազորություններով, երկրի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է:

Կառավարությունը ձևավորվում է խորհրդարանական մեծամասնություն ունեցող կուսակցությունների ներկայացուցիչներից և պատասխանատու է խորհրդարանի առջև: Խորհրդարանական մեծամասնությունը կարող է պաշտոնանկ անել կառավարությանը: Կառավարությունը, իր հերթին, նախագահի աջակցությամբ, կարող է հասնել նրան, որ արձակվի խորհրդարանը և կարող է անցկացնել նոր խորհրդարանական ընտրություններ:

ժամանակակից խորհրդարանական պետություններ են՝ Հունաստանը, Իտալիան, ԳՂՀ-ն և բազմաթիվ այլ պետություններ:

*Նախագահական հանրապետությունը* կառավարման այնպիսի ձև է, որի դեպքում ոչ միայն խորհրդարանը (որպես բարձրագույն օրենսդիր և ներկայացուցչական մարմին), այլ նաև նախագահը (որպես պետության ղեկավար և գործադիր իշխանության ղեկավար) ընտրվում է բնակչության կողմից: Ընդ որում, նախագահն ընտրվում է կա՛մ անմիջականորեն բնակչության կողմից՝ համընդհանուր, ուղղակի ընտրություններով (օրինակ՝ Ռուսաստանում, Ֆրանսիայում), կա՛մ ինչպես ԱՄՆ-ում՝ անուղղակի ընտրություններով (ժողովուրդն ընտրում է ընտրիչներին, իսկ նրանք՝ նախագահին):

Գոյություն ունի նախագահական հանրապետության մի քանի տարատեսակ:

Այսպես, ԱՄՆ-ում նախագահական հանրապետությունն աչքի է ընկնում իշխանությունների դասական բաժանմամբ՝ բարձրագույն օրենսդիր իշխանությունը խորհրդարանի ձեռքում է (Ներկայացուցիչների պալատից և Սենատից կազմված Կոնգրեսի), բարձրագույն գործադիր իշխանությունը պատկանում է նախագահին, բարձրագույն դատական իշխանությունը՝ գերագույն դատարանին: Որպես գործադիր իշխանության ղեկավար (վարչապետի պաշտոնի բացակայության պայմաններում) նախագահը կառավարության՝ կաբինետի ղեկավարն է, որը նրան առընթեր ունի խորհրդակցական մարմնի կարգավիճակ: Կաբինետը բաղկացած է նախարարներից, որոնց նշանակում է նախագահը՝ Սենատի խորհրդով և համաձայնությամբ: Նախագահը ներքին և արտաքին քաղաքականության ոլորտում օժտված է ծավալուն լիազորություններով, զինված ուժերի գերագույն զլխավոր հրամանատարն է, ընդունում է ենթաօրենսդրական ակտեր, օժտված է հաղթահարվող վետոյի իրավունքով և այլն: Նախագահը և նրա կաբինետի անդամները հաշվետու չեն Կոնգրեսի առջև: Նախագահը կարող է պաշտոնանկ արվել միայն իմփինչմենթի կարգով:



Նախագահական հանրապետության ֆրանսիական մոդելում առկա են խորհրդարանական հանրապետության որոշակի բաղադրատարրեր: Այստեղ բացի նախագահից կա նաև կառավարություն՝ նախարարների խորհուրդ՝ վարչապետի գլխավորությամբ: Նախագահը, բացի օրենսդրության և կառավարման ոլորտում ունեցած լայն լիազորություններից, նշանակում է վարչապետին ու նրա առաջարկով՝ կառավարության մյուս անդամներին, նախագահում է կառավարության նիստերում, ընդունում է վարչապետի և նախարարների հրաժարականները: Նախագահն իրավունք ունի (վարչապետի և խորհրդարանի երկու պալատների նախագահների հետ խորհրդակցելուց հետո) արձակել խորհրդարանի սառորին պալատը (Ազգային ժողովը): Իր հերթին, երկու պալատից կազմված (Մենատ և Ազգային ժողով) խորհրդարանն օժտված է կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողության իրավունքով: Կառավարությունը պատասխանատու է Ազգային ժողովի առջև, որը կարող է ձայների մեծամասնությամբ ընդունել կառավարությանը հրաժարական տալուն պարտավորեցնող պարսավանք արտահայտող քանակ:

Նախագահական հանրապետություն է նաև Ռուսաստանի Դաշնության գործող Սահմանադրությամբ նախատեսված կառավարման ձևը: Նախագահական հանրապետության ամերիկյան և ֆրանսիական մոդելներից դա տարբերվում է մի շարք առանձնահատկություններով: Ինչպես ֆրանսիական մոդելում, ռուսական մոդելում մույնպես, բացի նախագահից, կա կառավարություն, որը ղեկավարում է կառավարության նախագահը: Սակայն, ըստ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության, կառավարությունը (ԱՄՆ-ի Նախագահին առընթեր նախարարների կաբինետի նման) պատասխանատու չէ խորհրդարանի առջև, և խորհրդարանն օժտված չէ կառավարության նկատմամբ վերահսկողության իրավունքով (բացի բյուջետային վերահսկողությունից): Պետական Դումայի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելը կամ կառավարությանը վստահություն հայտնելու մասին առաջարկը մերժելը չի պարտավորեցնում ռուսական կառավարությանը հրաժարական տալ (ինչպես դա առկա է ֆրանսիական մոդելում), քանի որ, համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (117 հոդվածի 3-4-րդ մասեր), Ռուսաստանի Դաշնության նախագահը համապատասխան ղեպքերում թե՛ իրավունք ունի հայտարարել կառավարության պաշտոնանկությունը և թե՛ արձակել Պետական Դուման:

Այսպիսով, նախագահական հանրապետության ռուսաստանյան մոդելում (գործադիր և օրենսդիր իշխանությունների ռուսաստանյան կա-

նույցում) նշանակալից չափով առկա են ինչպես ամերիկյան մոդելի գործադիր իշխանության առավելությունները, այնպես էլ ֆրանսիական մոդելի օրենսդիր իշխանության թերությունները: Դրա հետ միասին, ուսաստանյան մոդելում բացակայում են ամերիկյան և ֆրանսիական մոդելների խորհրդարանների որոշ առավելություններ, որոնք օրենսդիր իշխանությանը տրամադրում են անհրաժեշտ զսպումներ և հակակշիռներ՝ ընդդեմ հզոր գործադիր իշխանության (նախագահի և կառավարության լիազորությունների): Գործադիր և օրենսդիր իշխանությունների փոխհարաբերություններում պատշաճ հաշվեկշռի (և փոխադարձ զսպումների ու հակակշիռների հավասարակշռված համակարգի) բացակայությունը նախագահական հանրապետության ուսաստանյան մոդելի առավել նշանակալից թերություններից մեկն է:

## 2. Պետական կառուցվածքի ձևը

*Պետական կառուցվածքի ձևը պետական իշխանության բաշխման և պետական իշխանության համապատասխան սուբյեկտների միջև փոխհարաբերությունների կազմակերպման տարածքային (և ազգային-տարածքային) եղանակ է:*

Պետության ձևի այդ հարադրությունը ներառում է պետության տարածքային կառուցվածքի, որոշակի տարածքում պետական իշխանության կազմակերպման հարցերը:

Ըստ պետական կառուցվածքի ձևի՝ պետությունները լինում են ունիտար (միակազմ) և դաշնային: Կոնֆեդերացիան (համադաշնությունը) ինքնիշխան պետությունների միության ձև է:

*Ունիտար (միակազմ) պետությունը* միասնական ինքնիշխան պետություն է, որի ամբողջ տարածքում գործում են մեկ սահմանադրություն, իշխանության (ներկայացուցչական, գործադիր և դատական) միասնական մարմիններ և միասնական օրենսդրություն: Ունիտար (միակազմ) պետությունն ունի միասնական զինված ուժեր, միասնական հարկային և ֆինանսական համակարգ: Ժամանակակից ունիտար (միակազմ) պետություններ են, օրինակ՝ Պորտուգալիան, Ֆինլանդիան և Ֆրանսիան:

*Դաշնային պետությունը* միասնական ինքնիշխան միութենական պետություն է, որի սուբյեկտներն իրենց տարածքային և ազգային-տարածքային կազմավորումների սահմաններում ու միասնական դաշնային պետության ինքնիշխանության շրջանակներում օժտված են ինքնուրույն պետական-իրավական կարգավիճակով, ունեն պետական իշխա-

նության մարմինների իրենց համակարգերը և իրենց օրենսդրությունները:

Գոյություն ունեն նախկին և ժամանակակից դաշնությունների բազմաթիվ տարատեսակներ: Արդի դաշնություններից են, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ն, Ավստրիան, Ավստրալիան, Կանադան, ԳԴՀ-ն, Շվեյցարիան, Բրազիլիան, Հնդկաստանը:

Դաշնության սարբեր տեսակներն իրարից տարբերվում են իրենց ծագման եղանակներով (դաշնություն ստեղծելու մասին պայմանագրի, արդեն իսկ կազմավորված պետական միասնության սահմանադրական ձևավորման միջոցով և այլն), իրենց կառուցվածքի սկզբունքով (տարածքային կամ ազգային-տարածքային հասկանիչներով), իշխանության համադաշնային մարմինների և դաշնային առանձին սուբյեկտների մարմինների միջև պետական իշխանական լիազորությունների սահմանազատման բնույթով և այլն:

Տարբեր դաշնությունների ընդհանրությունները հետևյալն են: Միասնական դաշնային պետության ինքնիշխանությունը տարածվում է նրա ամբողջ տարածքի վրա, որը, որպես բաղադրատարրեր, ներառում է դաշնության առանձին սուբյեկտների (հանրապետությունների, նահանգների, հողերի, կանտոնների և այլն) տարածքները: Դաշնության սուբյեկտներն ինքնիշխան պետություններ չեն: Դաշնության առանձին սուբյեկտների սահմանադրությունները, կանոնադրությունները, օրենսդրությունները չպետք է հակասեն համադաշնային սահմանադրությանը և օրենսդրությանը: Պետության արտաքին քաղաքականության բնագավառում և ներքին քաղաքականության հիմնական հարցերով լիազորությունները պատկանում են պետական իշխանության համադաշնային մարմնին: Համադաշնային խորհրդարանում վերին պալատը (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնային Խորհուրդը, ԱՄՆ-ի Սենատը, ԳԴՀ-ի Բունդեսրաթը և այլն) ձևավորվում է դաշնային սուբյեկտների ներկայացուցիչներից և արտահայտում նրանց շահերը:

*Ռուսաստանի Դաշնությունը* տարածքային և ազգային-տարածքային սկզբունքով ձևավորված, սահմանադրականորեն-կազմակերպված դաշնություն է: Սահմանադրության (1, 4-6, 65-79 հոդվածներ) համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունը կազմված է դաշնության 89 իրավահավասար սուբյեկտներից՝ հանրապետություններից, երկրամասերից, մարզերից, դաշնային նշանակության քաղաքներից, ինքնավար մարզերից, ինքնավար օկրուգներից: Հանրապետություններն ունեն իրենց սահմանադրությունները և օրենսդրությունը, իսկ երկրամասերը, մարզերը, դաշնային նշանակության քաղաքները, ինքնավար մարզերը, ինքնավար օկրուգները՝ իրենց կանոնադրությունը և օրենսդրությունը:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը և դաշնային օրենքները գերակայում են Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում:

Ռուսաստանի Դաշնության դաշնային կառուցվածքը հիմնված է նրա պետական ամբողջականության, պետական իշխանության համակարգի միասնականության, Ռուսաստանի Դաշնության պետական իշխանության մարմինների և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների միջև տնօրինության առարկաների ու լիազորությունների սահմանազատման, Ռուսաստանի Դաշնության ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման վրա: Պետական իշխանության դաշնային մարմինների հետ բոլոր հարաբերություններում Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներն իրավահավասար են:

Ռուսաստանի Դաշնությունում քաղաքացիությունը ձեռք է բերվում և դադարում է դաշնային օրենքին համապատասխան ու միասնական ու հավասար է անկախ ձեռքբերման հիմքերից: Ռուսաստանի Դաշնության յուրաքանչյուր քաղաքացի նրա տարածքում օժտված է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ նախատեսված բոլոր իրավունքներով ու ազատություններով և ունի Սահմանադրությամբ նախատեսված հավասար պարտականություններ:

Սահմանադրությամբ (8 հոդված 1-ին մաս) Ռուսաստանի Դաշնությունում երաշխավորվում է տնտեսական սարածքի միասնությունը, ապրանքների, ծառայությունների և ֆինանսական միջոցների ազատ տեղաշարժը, մրցակցության աջակցությունը, տնտեսական գործունեության ազատությունը:

*Կոնֆեդերացիան (համադաշնությունը)* ոչ թե միասնական ինքնիշխան պետություն է, այլ՝ քաղաքական, տնտեսական կամ պաշտպանական բնույթի որոշակի ընդհանուր շահերի և նպատակների բավարարման համար կամովին միավորված ինքնիշխան պետությունների միություն (հանրույթ) է: Կոնֆեդերացիան (համադաշնությունը), որպես կանոն, ունի ժամանակավոր բնույթ: Օրինակ՝ համադաշնային (կոնֆեդերատիվ) բնույթ ունեւ չլուսիսամերիկյան նահանգների միությունը (1781-1787 թվականներ), որը հետագայում վերակազմավորվեց դաշնության, Եվեյցարական միությունը և Գերմանական միությունը XIX դարում և այլն:

Համատեղ գործերի իրականացման համար համադաշնությունում ձևավորվում են սուբյեկտների ներկայացուցիչներից կազմված համադաշնության որոշ ընդհանուր մարմիններ, որոնք իրականացնում են

նրանց կողմից համաձայնեցված որոշումները: Ընդ որում, համադաշնության անդամները պահպանում են իրենց ինքնիշխանությունը, պետական մարմինների իրենց համակարգը, իրենց օրենսդրությունը և իրենց քաղաքացիությունը:

### 3. Պետական (քաղաքական) վարչակարգի ձևը

*Պետական (քաղաքական) վարչակարգի ձևը* պետական իշխանության իրականացման իրավական կարգի բնույթն է, հատկությունը և որակը: Այստեղ հիմնականն այն հարցերն են, թե ինչպե՞ս, ի՞նչ եղանակով և ի՞նչ ձևով է իրականացվում պետական իշխանությունը:

Պետության՝ որպես հանրային իշխանության կազմակերպման և իրականացման ձևի ազատական-իրավաբանական մեկնաբանության համաձայն, ցանկացած պետություն, ի տարբերություն բռնատիրության (դրա նախկին ու ներկա տարատեսակներին՝ բռնակալության, բռնապետության, ամբողջատիրության և այլն) իր իշխանությունն իրականացնում է որոշակի իրավակարգի շրջանակներում: Առանց դրա չկա պետություն, այլ առկա է բռնապետություն՝ համապատասխան բռնատիրական, բռնակալական, բռնապետական, ռազմառստիկանական, ֆաշիստական, ռասայական-նացիստական, կուսակցական-դասակարգային, ամբողջատիրական և այլ հակաիրավական վարչակարգով: Դրանք բոլորը միայն բռնակալական վարչակարգի տարատեսակներ են:

Պետական (քաղաքական) վարչակարգն իր էությանը միշտ էլ *պետական-իրավական վարչակարգն է*, պետության գործունեության որոշակի իրավական կարգը, պետության իշխանության իրականացման այս կամ այն իրավական ձևերը, ընթացակարգերը, հնարքները, եղանակները և մեթոդներն է:

Պետական (քաղաքական) վարչակարգի տարբեր ձևերը, իրենց էությանը լինելով իրավական, միաժամանակ իրարից տարբերվում են իրենց իրավական զարգացվածության մակարդակով և աստիճանով, համապատասխան իրավական կարգի (պետական, քաղաքական, հանրային) իշխանության իրականացման իրավական հնարքների ու ընթացակարգերի բնույթով և որակով:

Նման իրավական չափանիշներին համապատասխան՝ պետական (քաղաքական) վարչակարգերը բաժանվում են *երկու խմբի*՝ ազատականների և ավտորիտարների: Այդ վարչակարգերն իրավական տարածքում պետության կեցության և գործունեության պետական իշխանության իրականացման եղանակների ու հնարքների երկու հակադիր

բևեռներ (երկու տիպաբանացված ծայրահեղություններ) են: Պետական վարչակարգի իրավական հասկությունների և որակների զարգացած ու չզարգացած լինելու այս երկու ծայրահեղ բևեռների միջև, իհարկե, կան պետական իշխանության իրականացման բազմաթիվ տարբեր (իրենց իրավական զարգացվածության տեսանկյունից) միջանկյալ աստիճաններ, ձևեր, եղանակներ, սակայն ելակետային նշանակություն ունեն հենց իրավական տարածքի «սահմանային իրավիճակները», որոնք արտահայտում են պետական-իրավական վարչակարգերի հակադիր տիպերը:

*Ազատական պետական-իրավական վարչակարգը* ժամանակակից իրավական պետության ու քաղաքացիական հասարակության պայմաններում պետական իշխանության իրականացման ձևն է, եղանակը և կարգը: Նման վարչակարգը ենթադրում է մարդու հիմնական, ի ծնե և անօտարելի իրավունքների ու ազատությունների և քաղաքացու իրավունքների լայն շրջանակի, իրավական օրենքի տիրապետության, իշխանությունների բաժանման (օրենսդիրի, գործադիրի և դատականի) պաշտոնական ճանաչում ու գործնական իրականացում, սահմանադրականության, պառլամենտարիզմի, գաղափարական ու քաղաքական բազմաձևության, բազմակուսակցության հաստատում, ժողովրդի ինքնիշխան իշխանության իրականացում հանրաքվեի և ազատ ընտրությունների իրավական ձևերով, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, պետական իշխանության գործունեության նկատմամբ հասարակական հսկողության ձևերի ու մեխանիզմների ինքնուրույն և արդյունավետ գործունեություն:

Ազատական պետական-իրավական վարչակարգը քաղաքական հասարակության ու իրավական պետության տեսանկյունից՝ իր մեջ ներառում է ժողովրդավարության և, առաջին հերթին, ժողովրդի ինքնիշխանության՝ դրա իրավական (և պետական-իրավական) հասկացողությամբ ու կիրառմամբ, ամբողջ արժեքավորը: Ուստի, նկատի ունենալով հենց *իրավական ժողովրդավարությունը* (ժողովրդավարությունն իրավական ձևով), ազատական վարչակարգը կարելի է բնութագրել որպես *ազատական-ժողովրդավարական վարչակարգ*:

*Ավտորիտար պետական-իրավական վարչակարգը* ներհատուկ է պետության մնացած բոլոր տիպերին (բացի ժամանակակից զարգացած իրավական պետությունից):

Ավտորիտար վարչակարգը, այս կան այն տեսքով, ձևավորվում է այնտեղ, որտեղ չկան բավարար չափով զարգացած քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն՝ դրանց ներհատուկ՝ ձևե-

րով, սկզբունքներով, նորմերով, ընթացակարգերով ու մեխանիզմներով, իրավունքի և իրավական օրինականության տիրապետման, մարդու ու քաղաքացու իրավունքների պաշտպանության և իրականացման երաշխիքներ, պետական իշխանության կամայականության կանխման ու սանձահարման, պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ մշտական ու արդյունավետ վերահսկողություն:

Քաղաքացիական հասարակության և ժամանակակից իրավական պետության ձևավորման գործընթացի նախնական փուլերի պետական (քաղաքական) վարչակարգերի համար բնութագրական է ավտորիտարիզմի և ազատականության բաղադրատարրերի զուգորդումը:

Ավտորիտար և ազատական-ժողովրդավարական հիմունքների մեծ զուգորդումը ներհատուկ է նաև ժամանակակից Ռուսաստանի պետական-իրավական վարչակարգին: Մեր իրավիճակում դեպի ազատական-ժողովրդավարական պետական-իրավական վարչակարգին անցնելու ուղին շատ կողմերով որոշվում է տնտեսական բարեփոխումների իրական հաջողություններով, ձևավորվող քաղաքական հասարակության ակտիվ, նպատակամղված դիրքորոշմամբ:

## **Գլուխ 4. Պետության գործառույթները և մեխանիզմը**

### **1. Պետության գործառույթները**

*Պետության գործառույթները նրա էությունն արտահայտող պետության գործունեության հիմնական ձևերն են:*

Պետության էությունը, որը դրսևորվում է նրա գործառույթներում (նրա գործառութային գործունեության մեջ) այն է, որ պետությունն ազատ մարդկանց հանրային իշխանության իրավական, ինքնիշխան կազմակերպություն է: Այս իմաստով կարելի է ասել, որ իրավաչափ է միայն պետության գործառութային գործունեությունը, այսինքն՝ պետության այնպիսի գործունեությունը, որը ծնունդ է առնում նրա բնույթից և համապատասխանում է նրա էությանը: Պետության, նրա առանձին մարմինների և պաշտոնատար անձանց, պետության էությամբ պայմանավորված գործառույթների շրջանակից դուրս եկող գործողությունները, այսինքն՝ պետական իշխանության բոլոր ոչ գործառութային գործողություններն են կրում ոչ իրավաչափ ու ոչ պետական բնույթ:

Պետության ամբողջ գործառութային, գործունեության նրա բոլոր գործառույթների առանձնահատկությունը, էությունը և իմաստն *ազատ*

*մարդկանց կյանքի որոշակի (սոցիալ-պատմականորեն պայմանավորված) պետական-իրավական կարգի կազմակերպման, իրականացման և պահպանության մեջ է:*

Պետության առանձին գործառույթները համապատասխան պետական-իրավական կարգի ստեղծմանը, պահպանմանը և գործնական իրականացմանն ուղղված պետության ամբողջական և իր էությանը միասնական գործունեության միայն հարաբերականորեն ինքնուրույն հարադրություններն են:

Պետության այսպիսի առանձին *հիմնական գործառույթներից են՝* իրավասահման գործառույթը, իրավաիրացման գործառույթը, իրավապաշտպան գործառույթը, արտաքին պետական գործառույթը:

Նշված գործառույթներից առաջին երեքը *ներքին գործառույթներ են* և կապված են պետության ներքին ինքնիշխանության իրականացման հետ: Չորրորդ գործառույթը պետության *արտաքին գործառույթն է* և բնութագրում է պետության արտաքին ինքնիշխանության իրականացումը:

Պետության արտաքին և ներքին գործառույթները սերտորեն փոխկապակցված են և ամրապնդում ու լրացնում են մեկը մյուսին:

*Իրավասահման գործառույթը* գործող իրավունքի բոլոր աղբյուրների և նորմերի սահմանմանն ուղղված՝ պետության գործունեությունն է (օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի ընդունում, նախադեպերի սահմանում, սովորույթների թույլատրում, մարդու բնական իրավունքների և ազատությունների գերապատիվ պոզիտիվ-իրավական նշանակության պաշտոնական ճանաչում ու ամրագրում և այլն):

Պետությունն անհնար է առանց իրավունքի, ինչպես իրավունքը՝ առանց պետության: Ուստի, իր ներքին իմաստով, *իրավասահման գործառույթը միաժամանակ նաև պետությունասահման գործառույթ է:* Պետության սահմանադրումը, ստեղծումը նախ՝ նշանակում է դրա իրավական ձևակերպում, այսինքն՝ պետականորեն կազմակերպված կյանքի պայմաններում մարդկանց և իշխանության իրավական դրության սահմանում:

*Իրավաիրացնող գործառույթը* պետության գործունեությունն է սահմանված իրավունքը կենսագործելու ուղղությամբ: Այս գործառույթի էությունն այն է, որ պետության մեջ սահմանված իրավունքը մշտապես և անշեղորեն գործի, որ իրավունքը լինի իսկական *գործող իրավունք:*

Պետության (նրա բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց) ամբողջ գործունեությունը կրում է իրավաիրացնող գործողությունների բնույթ: Արդեն իսկ իրավասահման գործունեությունը (օրենսդրությունը և այլն) սահմանված կարգով որոշակի նորմատիվ-իրավական ակտեր ըն-



դունելու համապատասխան պետական մարմինների և պաշտոնատար անձանց իրավագործության իրացման ձև է: Իրավունքի իրացման ձևով է ընթանում նաև պետության գործադիր կարգադրիչ և իրավապաշտպան գործունեությունը:

*Իրավապաշտպան գործառույթը* մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, հասարակական ու քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում օրինակաւնության և իրավակարգի հաստատմանն ուղղված պետության գործունեությունն է:

Իրավապաշտպան գործունեության կարևոր հարադրությունը պայքարն է իրավախախտումների և հանցագործությունների դեմ, համապատասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացումն է:

Իրավապաշտպան գործառույթի իրականացումը պետության գլխավոր պարտավորություններից մեկն է: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության համաձայն (2 հոդված)՝ «մարդու իրավունքների և ազատությունների ճանաչումը, պահպանումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է»:

*Պետության արտաքին գործառույթը* պետության՝ որպես միջազգային հարաբերությունների ինքնիշխան սուբյեկտի, գործունեությունն է:

Տվյալ գործառույթն իր մեջ ներառում է պետության բազմազան գործունեությունը երկրի պաշտպանունակության ապահովման, բնակչությանն արտաքին վտանգից պաշտպանելու, այլ պետությունների հետ համագործակցության (քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային և այլն) կազմակերպման ու իրականացման, երկրի սահմաններից դուրս իր քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության, պետությունների միջազգային հանրության ամրապնդման ու զարգացման, պատերազմների հարթահարման և ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման ուղղությամբ:

Ակնառու նորույթով (պետական գործառույթների իրականացման բովանդակության և իրավական ձևերի ու ընթացակարգերի զարգացած լինելու առումով) աչքի է ընկնում ժամանակակից *իրավական պետության* գործառութային գործունեությունը: Իրավական պետության մեջ իշխանությունների բաժանման սկզբունքը հիմք է տալիս որպես պետության հիմնական ներքին գործառույթներ մեկնաբանել *օրենսդիր, գործադիր և դատական գործառույթները*:

Գրականության մեջ ընդունված է *սոցիալական պետության* գործառույթների շարքում առանձնացնել նաև *սոցիալական գործառույթը*, որն ասելով՝ նկատի է առնվում պետության գործունեությունը՝ մարդկանց *սոցիալական պաշտպանության* և *հասարակության* բոլոր անդամների

համար կյանքի արժանապատիվ պայմաններ ապահովելու ուղղությամբ: Դրա համար որոշակի հիմքեր կան նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ (7 հոդված), որտեղ ասված է. «Ռուսաստանի Դաշնությունը սոցիալական պետություն է, որի քաղաքականությունն ուղղված է մարդու արժանապատիվ կյանքը և ազատ զարգացումն ապահովող պայմանների ստեղծմանը»:

## 2. Պետության մեխանիզմը

*Պետության մեխանիզմը (ապարատը) մարմինների, հիմնարկների և պաշտոնատար անձանց համակարգ է, որոնք սահմանված իրավական կարգով օժտված են պետական իշխանության լիազորություններով և իրականացնում են պետության գործառույթները:*

Պետության մեխանիզմ (ապարատ) ասելով՝ ընդունված է հասկանալ պետական իշխանության կազմակերպական կառուցվածքը, պետության գոյության և պետական իշխանության իրականացման ինստիտուցիոնալ ձևը:

Պետությունն իր մարդկային հարադրությամբ և ողջամիտ հասկացողությամբ կազմված է ազատ անհատներից՝ պետության քաղաքացիներից: Այդ իմաստով, ամբողջ պետական մեխանիզմը (ապարատը), բոլոր պետական մարմինները և հիմնարկները (օրենսդիր, գործադիր, դատական և այլն) քաղաքացիների ինստիտուցիոնալացված (կազմակերպված) խմբեր (միավորումներ, հանրագումարներ) են, որոնք որոշակի իրավական կարգով օժտված են այս կամ այն պետական-իշխանական լիազորություններով և իրականացնում են դրանք:

*Պետական մարմինը, հիմնարկը, պաշտոնը (պաշտոնատար անձը)* ինստիտուցիոնալ իշխանական առումով պետական-իշխանական իրավազորությունների որոշակի ծավալով (իրավասությամբ) օժտված պետական իշխանության մեխանիզմի (ապարատի) կառուցվածքային մաս է:

Պետության մեխանիզմը (ապարատը) կազմող բոլոր պետական մարմինները, հիմնարկները, պաշտոնները և այլն կազմավորվում ու գործում են սահմանված իրավական կարգով: Դրանց պետական-իշխանական իրավազորությունները, այդ իրավազորությունների իրացման կարգը, ձևերը և ընթացակարգերը սահմանվում ու կարգավորվում են օրենքներով և այլ նորմատիվ-իրավական ակտերով:

Պետական մարմինների համակարգը կառուցվում է ստորադաս մարմինների՝ վերադասներին ենթակայության աստիճանական սկզբունքով:

Դա պայմանավորված է պետության ինքնիշխան իշխանությունը տարբեր պետական մարմինների համաստորադաս իրավագործությունների տեսքով արտահայտելու անհրաժեշտությամբ, որոնք գլխավորվում են ինքնիշխան պետական իրավագործություններով օժտված բարձրագույն մարմինների կողմից:

Պետական մարմինների, հիմնարկների և պաշտոնատար անձանց աստիճանականացված համակարգում յուրաքանչյուր մարմին (հիմնարկ, պաշտոնատար անձ) օժտված է սովյալ համակարգում իր տեղին համապատասխան և մյուս մարմինների իրավասության հետ համաձայնեցված սեփական իրավասությամբ:

*Պետական մարմնի (հիմնարկի, պաշտոնատար անձի) իրավասությունը* նրա պետական-իշխանական իրավագործությունների հանրագումարն է, այսինքն՝ նրա իրավունքները և պարտականությունները, ընդ որում, պետական մարմնի (հիմնարկի, պաշտոնատար անձի) իրավունքները միաժամանակ սովյալ իրավունքներին համապատասխան գործելու, համապատասխան պետական-իշխանական գործողություններ կատարելու նրա պարտականությունն է: Մահմանված կարգով պետական մարմնի (հիմնարկի, պաշտոնատար անձի) վրա դրված պարտականությունները, իրենց հերթին, նշանակում են նաև պետական-իշխանական բնույթի համապատասխան գործողություններ կատարելու (սահմանված կարգով) նրա իրավունքը:

Պետական մարմինների համակարգը, դրանց իրավասությունը և այլն էականորեն կախված են պետության տիպից և ձևից:

Ժամանակակից իրավական պետության մեխանիզմը (սպարատը) կառուցվում և գործում է պետական իշխանության երեք ինքնուրույն թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման սկզբունքով:

Ընդ որում, *օրենսդիր իշխանությունն* իրականացնում է ներկայացուցչական մարմինը՝ խորհրդարանը (միապալատ կամ երկպալատ):

*Գործադիր իշխանությունն* իրականացնում են պետության ղեկավարը՝ (նախագահը, սահմանադրական միապետը և այլն), կառավարությունը, տարբեր նախարարությունները և այլ կենտրոնական հիմնարկները (կոմիտեները, հանձնաժողովները, գերատեսչությունները, տեսչությունները, ծառայությունները, բյուրոները և այլն), գործադիր իշխանության տեղական պետական մարմինները:

*Դատական իշխանության* մարմինների համակարգում ընդգրկվում են ընդհանուր իրավասության, սահմանադրական և արբիտրաժային դատարանները: Արդարադատությունն իրականացնում է միայն դատա-

րանը: Դատավորներն անկախ են ու ենթարկվում են միայն սահմանադրությանը և օրենքին: Իրավական պետությունում օրենսդրությունը, որպես կանոն, նախատեսում է դատավորների անփոփոխելիություն և անձեռնմխելիություն:

Անենուր պետական ապարատին *ներհատուկ է հասարակ մարդկանցից, ժողովրդից ու հասարակությունից օտարվելու, դեպի բյուրոկրատիզմը և կորպորատիզմը հակվելու, իր դիրքը չարաչափելու, գործող օրենսդրությունն անտեսելու, համապետական գործերն իրենց սեփական ապարատային գործերով և շահերով փոխարինելու միտումը:*

Նշված թերությունները ներհատուկ են նաև Ռուսաստանում ձևավորվող *հեախորհրդային պետական ապարատին:*

Պետական ապարատի ավանդական և նոր արատների դեմ պայքարի հիմնական ձևերը և ուղղություններն են՝ *պետական մեխանիզմի բոլոր օղակների կազմակերպման ու գործունեության մեջ իրավական հիմունքների, ձևերի և ընթացակարգերի զարգացումը, պետական ապարատի համար որակյալ կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, պետական ծառայողների մասնագիտական ու բարոյական որակների և իրավական մշակույթի նկատմամբ պահանջների մակարդակի բարձրացումը, իրենց կատարած իրավախախտումների համար պետական ապարատի աշխատողների իրավաբանական պատասխանատվության միջոցների ուժեղացումը, իրենց իրավունքների ու օրինական շահերի համար մղվող պայքարում քաղաքացիների և նրանց հասարակական միավորումների իրավական ակտիվության բարձրացումը, բոլոր պետական մարմինների, հիմնարկների ու պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ հասարակական և պետական վերահսկողության ձևերի ու մեթոդների մշտական կատարելագործումը:*

## **Գլուխ 5. Իրավագիտակցությունը և իրավական մշակույթը**

### **1. Իրավագիտակցությունը**

*Իրավագիտակցությունն իրավունքի՝ որպես սոցիալական իրականության առանձնահատուկ երևույթի, գիտակցման ձև է:*

Իրավագիտակցության մեջ սերտորեն համասեղվում և փոխներգործվում են երեք բաղադրատարր՝ ճանաչողական, գնահատող և կարգավորող: Դրան համապատասխան կարելի է առանձնացնել իրավագի-

տակցության երեք հիմնական գործառույթ՝ ճանաչողական, գնահատող և կարգավորող:

*Իրավագիտակցության ճանաչողական գործառույթն* այն բանի գիտակցության մեջ է, թե ի՞նչ է իրավունքը և իրականացվու՞մ է առանձին իրավական երևույթների ու ամբողջությամբ իրավունքի հայտնաբերման, արտահայտման և իմաստավորման տարբեր ձևերով (զգայական, կերպարային, տրամաբանական-հասկացական):

*Իրավագիտակցության գնահատող գործառույթն* իրավունքի մասին որոշակի արժեքային պատկերացումների և գաղափարների ձևավորման մեջ է, որոնցից էլնելով՝ իրավագիտակցության սուբյեկտը գնահատում է (դրական կամ բացասական) գործող իրավունքը և իրական իրավական իրողությունը:

*Իրավագիտակցության կարգավորիչ գործառույթը* սուբյեկտի կողմից կոնկրետ գործողություններում (իրավաչափ կամ ոչ իրավաչափ բնույթի) գործող իրավունքի պահանջների վերաբերյալ իր վարքագծային դիրքորոշման (վարքագծի մոդելի) գիտակցման, որոշման և իրականացման մեջ է:

*Իրավագիտակցության առանձնահատկությունը*, գիտակցության այլ ձևերի (բարոյական, կրոնական և այլն) հետ դրա հարաբերակցության մեջ, պայմանավորված է հենց իրավունքի առանձնահատկությամբ, որն արտահայտելու համար իրավագիտակցությունն օգտագործում է համապատասխան զգացմունքներ, կերպարներ, պատկերացումներ, խորհրդանիշներ ու կատեգորիաներ:

Այսպես, արդեն զգայական մակարդակում սուբյեկտի իրավագիտակցության մեջ ձևավորվում են որոշակի *իրավական զգացմունքներ*՝ արդարության, մեղքի, վախի, պատժի և այլն:

Առավել իմաստավորված և ընդհանրացված բնույթ են կրում *իրավական կերպարները* և *պատկերացումները*, որոնք արտահայտում են այս կամ այն իրական կամ երևակայական իրավական իրավիճակների, տեսարանների, հարաբերությունների սուբյեկտիվ տեսունակության, ընկալման ու գիտակցման արդյունքները (իրավական կոնֆլիկտների, հանցագործությունների կատարման ու դրանց համար պատասխանատվության, հանցագործի ձերբակալման, դատի և այլնի մասին կերպարային պատկերացումները):

Այսպես, *հավասարության իրավական սկզբունքն* իր արտահայտությունն է գտել տալիսնի կանոնով՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, մահն ընդդեմ մահի, պատժի և հանցագործության միջև հավասարության մասին զգայական-նյութական (մարմնական-ֆիզիկական)

պատկերացումներում: Հատկանշական է, որ ժամանակակից մարդկանց մեծամասնության իրավագիտակցության մեջ տիրում է դիտավորյալ սպանության համար մահապատժի՝ որպես պատասխանատվության հավասար չափի (էկվիվալենտի), անհրաժեշտության և արդարության մասին պատկերացումը:

Իրականության իրավական գիտակցման մեջ նշանակալի դեր են խաղում *իրավական խորհրդանիշները*՝ իրավունքի մասին բազմաթիվ այլ կերպարային պատկերացումների իմաստային բովանդակությունն ընդհանրացված ձևով արտահայտող իրավական կերպարները: Այսպես, արդարության (արդարադատության) և դրա հետ միասին արդարացի իրավունքի և պետության հիանալի խորհրդանիշ է արդարության (արդարադատության) աստվածուհի Ֆեմիդայի անմահ կերպարը՝ բոլորի համար հավասար Արդարության Կշեռքով և արդարացի իրավական (պետական-իրավական) կարգը պաշտպանող Սրով (արդարացի բարձրագույն իշխանության և արդարացի պատժի խորհրդանշական արտահայտությամբ):

Տեսականորեն զարգացած իրավագիտակցությունը, բացի թվարկված իրավունքի գիտակցման և արտահայտման զգայական կերպարային ձևերից ու միջոցներից, օգտագործում է նաև վերացական-տրամաբանական ճանաչողության այնպիսի միջոցներ ու ձևեր, ինչպիսիք են՝ *իրավական հասկացությունները, կատեգորիաները, գաղափարները, սկզբունքները, կառուցվածքները և այլն*:

Իրավագիտակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ միայն վերացական-տրամաբանական իրավական հասկացությունները, կատեգորիաները և այլն, այլ նաև իրավագիտակցության մինչտեսական ճանաչողական միջոցները (իրավական զգացմունքները, կերպարները, խորհրդանիշները և այլն) ինչպես իրավունքի, այնպես էլ պետության (բոլորի համար պարտադիր իշխանությունների իրավական կազմակերպման) գիտակցման (գնահատման և այլնի) ձևեր են:

Ուստի, ամբողջությամբ կարելի է ասել, որ իրավագիտակցությունն իր զարգացման բոլոր աստիճաններում և իր արտահայտման բոլոր ձևերով, իրավական գիտակցությունից մինչև իրավական հասկացությունները, ոչ միայն *իրավունքի և իրավական երևույթների* (դրանց իմաստի, հատկությունների, բնութագրերի, գործառության-կարգավորիչ նշանակության և այլն), այլ, *միաժամանակ, նաև պետության պետական-իշխանական երևույթների* արտահայտման, գիտակցման, գնահատման ձև և միջոց է:

**Գոյություն ունեն իրավագիտակցության տարրեր դասակարգումներ:**

Իրավագիտակցության կառուցվածքում, առաջին հերթին, պետք է առանձնացնել երկու տարբեր ճանաչողական մակարդակ՝ էմպիրիկ իրավագիտակցության մակարդակ և տեսական (գիտական) իրավագիտակցության մակարդակ: *Էմպիրիկ իրավագիտակցությունն* իրավունքն իմաստավորում է զգայական-կերպարային, իսկ *տեսական իրավագիտակցությունը*՝ տրամաբանական-հասկացական ձևով: Տեսական իրավագիտակցությունը ներկայացված է իրավաբանական գիտության մեջ:

Ըստ սուբյեկտների, իրավագիտակցությունը լինում է *անհատական, խմբային և հասարակական*: Ընդ որում, ենթադրվում է, որ իրավական գիտակցությունը, ինչպես և գիտակցությունն ընդհանրապես, ներհատուկ է միայն անհատին, իսկ խմբային և հասարակական իրավագիտակցությունը՝ համապատասխան խմբերի ու ամբողջ հասարակությունը կազմող առանձին անհատների իրավագիտակցության բովանդակության և բնույթի ընդհանրացված (առանձին խմբերի կամ ամբողջ հասարակության մակարդակում) արտահայտությունն է:

Իրավագիտակցության սուբյեկտների (կրողների) իրավական կրթվածության հատկանիշով՝ իրավագիտակցությունը բաժանվում է երկու այլ սեսակի՝ *առօրյա (զանգվածային) և մասնագիտական (իրավաբանական) իրավագիտակցության*:

Իր շարժառիթային-կարգավորիչ բնույթով և կամային ուղղվածությամբ իրավագիտակցությունը լինում է՝ օրենքին հավանություն տվող, օրինապահ և օրինախախտ:

*Օրենքին հավանություն տվող* իրավագիտակցության մեջ օրենքի (գործող իրավունքի) պահանջները, նպատակներն ու արժեքները սուբյեկտը գիտակցում և ընդունում է որպես անվերապահորեն անհրաժեշտ ու օգտակար (իր և ուրիշների, հասարակության համար ամբողջությամբ) և կատարման ենթակա: Սուբյեկտի այսպիսի դիրքորոշումը պայմանավորված է, առաջին հերթին, գործող իրավունքի որակական-բովանդակային արժեքներով (դրա արդարությամբ, արժեքով, օգտակարությամբ և այլն), այլ ոչ թե օրենքի հեղինակությամբ (դրա համապարտադիր ուժով, հարկադիր բնույթով և այլն):

*Օրինապահ իրավագիտակցության* համար հիմնական շարժառիթի գործոնն օրենքի (գործող իրավունքի) հեղինակությունն է: Նման իրավագիտակցության սուբյեկտների դիրքորոշումն օրենքի պահպանման առավելությունների (իր, ուրիշների և ամբողջ հասարակության համար) և դրա խախտման, թրույթյունների, անշահավետության, բացասական հետևանքների գնահատման վրա հիմնված նպատակահարմար ընտրության արդյունք է: Այդ իմաստով օրինապահ իրավագիտակցությունը *պրազմատիկ իրավագիտակցություն է*:

*Օրինախանիստ իրավագիտակցությունը* նույնպես *պրագմատիկ է*, որը պայմանավորված է իրավունքը չպահպանելու և հանցագործություններ կատարելու առավելության ու շահավետության մասին սուբյեկտի պատկերացումներով:

Հանցավոր կենսաոճն ուղեկցվում է անճի դեգրադացիայով (հետընթացով) և իրավագիտակցության էական ձևախեղմամբ, որում սկսում են աիրապետող դիրքեր գրավել, այսպես կոչված, «գողական օրենքի» հանցավոր աշխարհի յուրահատուկ, չգրված օրենսգրքի հակահասարակական «արժեքները» և հանցավոր պատվիրանները:

Իրավագիտակցության բերված դասակարգումներից երևում է, որ միևնույն անհասի իրավագիտակցության մեջ կարող են առկա լինել իրավագիտակցության սարբեր տեսակների որոշակի բաղադրատարրեր (բնութագրեր, հատկանիշներ):

*Մասնագիտական իրավագիտակցությունը*՝ որպես հատուկ իրավաբանական կրթություն ստացած մարդկանց խմբային իրավագիտակցություն, այս կամ այն ձևով իր մեջ ներառում է տեսական (գիտական) իրավագիտակցության որոշ հիմնական բաղադրատարրեր: Սակայն, իրավագիտակցության այդ տարրեր տեսակները, իհարկե, չպետք է նույնացնել:

Մասնագիտական (իրավաբանական) իրավագիտակցությունը, ներմասնագիտական տարբերությունների հաշվառմամբ, կարելի է բաժանել *ներմասնագիտական խմբերի* (իրավաբան-գիտնականների իրավագիտակցության և իրավաբան-պրակտիկների իրավագիտակցության) և *ենթախմբերի* (դատավորների իրավագիտակցության, դատախազության աշխատակիցների իրավագիտակցության, ոստիկանության աշխատակիցների իրավագիտակցության, փաստաբանների իրավագիտակցության և այլն):

Մասնագիտական (իրավաբանական) իրավագիտակցության զարգացման մակարդակից, դրան ներհատուկ իրավաբանական՝ արժեքային մոտեցումների և կողմնորոշումների բովանդակությունից և բնույթից, մեծապես կախված է պետական ապարատի գործունեության որակը և, ամբողջությամբ, պետական գործառույթների պատշաճ իրականացումը:

## 2. Իրավական մշակույթը

*Իրավական մշակույթը մարդկանց կյանքի իրավական (և պետական-իրավական) կազմակերպման մեջ ձեռքբերված զարգացման մակարդակն է:*



Իրավական մշակույթն ընդհանուր մշակույթի կարևոր բաղադրատարրն է:

Համամարդկային իրավական մշակույթի պատմությունն իրավունքի և պետության առաջադիմող զարգացումն է սկզբնական պարզունակ ձևերից մինչև իրավունքի, իրավական պետականության, մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների հաստատման ու տիրապետման ժամանակակից ձևերը:

*Իրավական մշակույթի կառուցվածքի հիմնական բաղադրատարրերն են՝ իրավական (պետական-իրավական) հայացքները, նորմերը, ինստիտուտները (հաստատությունները) և վարքագծային հարաբերությունները:*

Հասարակության անդամների իրավագիտակցության մեջ արտահայտված իրավական (և պետական-իրավական) հայացքների (պատկերացումների, գաղափարների, արժեքների, գիտելիքների և այլնի) բովանդակությունը, բնույթը և որակն ինչպես հասարակության անդամների մշակութային հասունության, այնպես էլ այդ հայացքները գործող իրավունքի համապատասխան իրական (օբյեկտիվացված) ձևերի, պետական իշխանությունների ինստիտուտների (հաստատությունների), մարդկանց վարքագծային հարաբերությունների (իրավական վարքագծի, իրավական գործունեության ձևերի) և այլնի տեսքով մարմնավորելու, նրանց հոգևոր պատրաստականության աստիճանի էական ցուցանիշներն են:

*Ժամանակակից իրավական մշակույթին ներհատուկ են այնպիսի օրակական բնութագրեր, ինչպիսիք են՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների որոշիչ նշանակությունը հասարակական և պետական կյանքի կազմակերպման մեջ, զանգվածային իրավագիտակցության մեջ օրենքի և իրավակարգի, իրավունքի տիրապետման գաղափարների ու արժեքների նկատմամբ հարգանքի զգացմունքի հաստատումը, սահմանադրականության և իրավական օրենքի գերակայության սկզբունքի իրականացումը, պոզիտիվ իրավունքի բոլոր աղբյուրների և պետական իշխանության բոլոր ճյուղերի համաձայնեցված ու արդյունավետ գործունեությունը, իրենց իրավունքներն իրականացնելու ու իրենց իրավաբանական պարտականությունները պատշաճ կատարելու՝ քաղաքացիների և նրանց հասարակական միավորումների իրավական ակտիվությունը, պետական մեխանիզմի բոլոր օղակների (իրենց իրավասությունների շրջանակում) ակտիվ օրինաստեղծ, իրավապաշտպան և իրավակիրառող գործունեությունը, պետության վրա քաղաքացիական*

հասարակության ներգործության և դրա գործունեության նկատմամբ վերահսկողության օրինական ձևերի, միջոցների ու ընթացակարգերի ճյուղավորված համակարգը:

Իրավական մշակույթին հակընդդեմ (անտիպոդ) է *իրավական նիհիլիզմը*՝ իր բազմաթիվ դրսևորումներով ու ձևերով, իրավունքը թերագնահատելուց և դրա նկատմամբ անհարգալից վերաբերմունքից մինչև իրավունքի լիակատար անտեսումն ու բացառումը: Իրավական նիհիլիզմը միշտ էլ *պետական նիհիլիզմ է, քանի որ իրավունքի բացառումն իր մեջ, ըստ էության, ներառում է նաև պետության՝ որպես հանրային իշխանության իրավական կազմակերպության, բացառումը:*

Իրավական նիհիլիզմը լայն տարածում է գտել շատ երկրներում: Դա խոր արմատներ է նետել նաև ռուսական իրականության պայմաններում: Ընդ որում, էական դեր են կատարել բռնակալ կառավարիչների (ցարերից մինչև բոլշևիկները) անսահմանափակ իշխանության և ժողովրդի իրավագրկության բազմադարյան ավանդույթները:

Հետխորհրդային ժամանակներում Ռուսաստանը մուտք է գործել իր մշակութային-իրավական զարգացման նոր ժամանակաշրջան, որի հիմնական նպատակներն ու կողմնորոշիչները մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, քաղաքացիական հասարակության և իրավական պետության սկզբունքների, նորմերի ու ինստիտուտների սահմանադրականորեն ամրագրված զաղափարները և արժեքներն են:

Սակայն արդի անցումային պայմաններում իրական իրողության մեջ դեռևս շատ ուժեղ են մի ամբողջ շարք բացասական գործոններով խորացվող և պահպանվող իրավական նիհիլիզմի ավանդույթները: Այդ գործոններից են՝ իրականացվող սոցիալ-տնտեսական վերափոխումների թերությունները, իրավական բարեփոխումների անավարտվածությունը, պետական իշխանության ամբողջ ապարատի աշխատանքի անարդյունավետությունը, օրենսդրության զանգվածային և ամենուր կատարվող խախտումները, իրավապաշտպան մեխանիզմի անգործությունը՝ հատկապես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ոլորտում, բուռն աճող հանցագործությունների դեմ պետության պայքարի անընդունակությունը և այլն:

Իրավական նիհիլիզմի հաղթահարումն ամբողջությամբ հնարավոր է միայն երկրում պոստսոցիալիստական վերափոխումների գործընթացի հաջող զարգացման և ժամանակակից իրավական մշակույթի զաղափարների ու արժեքների գործնական իրացման ընդհանուր հունում:

## Գլուխ 6. Բաղաքացիական հասարակությունը և պետությունը

### 1. Բաղաքացիական հասարակության և պետության տարբերակումն ու հարաբերակցությունը

Հասարակությունը և պետությունը տարբերակելիս՝ *հասարակություն* ասելով նկատի են ունենում մարդկանց՝ որպես մասնավոր անձանց կյանքի, ոչ քաղաքական ոլորտը, իսկ *պետություն* ասելով՝ նրանց, որպես հանրային անձանց (հանրային-քաղաքական հանրույթի և իշխանության սուբյեկտների՝ քաղաքացիների), կյանքի քաղաքական ոլորտը: Այս երկու ոլորտների դիֆերենցիացիան (տարբերակումը), մասնավոր ու հանրային, ոչ քաղաքական և քաղաքական երևույթների ու հարաբերությունների բաժանումը և հարաբերականորեն ինքնուրույն կեցությունը մարդկանց տևական սոցիալ-պատմական զարգացման, ազատ անհատների կյանքի կազմակերպման ձևերի ու եղանակների արդյունք են:

Հին աշխարհի և միջնադարի պայմաններում (իրավունքի ու պետության էթնիկական և դասային սիւպերի դարաշրջանում) հանրային-քաղաքական (պետական) նախահիմքն անվերապահ տիրապետում էր մարդկանց ամբողջ սոցիալական կյանքում, իսկ այն երևույթներն ու հարաբերությունները, որոնց հանրագումարն ընդունված է անվանել անտիկ կամ միջնադարյան «հասարակություն», ունեին քաղաքական բնույթ և դեռևս չէին հասումացել որպես պետությունից անկախ, մասնավոր (ոչ քաղաքական) շահերի, գործերի և հարաբերությունների ինքնուրույն ոլորտ առանձնանալու համար:

Նոր ժամանակներում մասնավոր անձի, մասնավոր շահերի ու ինքնուրույնության շրջանակը գնալով ավելի է ընդլայնվում և սկսում է աստիճանաբար իր մեջ ներառել սեփականության, արտադրության ու բաշխման հարաբերությունները, ապրանքային-դրամական շրջանառությունը, կրոնի, խղճի, մտքի ազատության և այլնի նկատմամբ վերաբերմունքի հարցերը և այլն: Դրա հետ միասին մասնավոր գործերի ու շահերի այդ ընդլայնվող շրջանակը գնալով ավելի է ազատագրվում ֆեոդալիզմի ժամանակ ձևավորված քաղաքական իշխանության ուղղակի ազդեցությունից և ձևավորվում է որպես քաղաքացիական հասարակության հարաբերականորեն ինքնուրույն ոլորտ:

Այսպիսի հակաֆեոդալական քաղաքացիական հասարակության ու դրան համապատասխանող պետության և իրավունքի գաղափարախոսությունն ու ձգտումներն իրենց արտահայտությունը և պաշտպանությունը գտան վաղ բուրժուական մտածողների ստեղծագործություննե-

րում (Ն.Մաքիավելի, Ժ.Բոդեն, Հ.Հրոցիոս, Բ.Սպինոզա, Ջ.Լոկ, Շ.Լ.Մոնտեսքյո, Ժ.Ժ.Ռուսո, Դ.Ռիկարդո, Ա.Սմիթ, Թ.Փեյն, Թ.Ջեֆերսոն, Ի.Կանտ, Գ.Վ.Ֆ.Հեգել և ուրիշներ):

Քաղաքացիական հասարակության և պետության տարբերակման ու փոխհարաբերությունների հիմնահարցերի հետևողական տեսական մշակման մեջ մեծ ավանդ ներդրեց Հեգելը: Նա ուղղակիորեն նշում է քաղաքացիական հասարակության՝ որպես սոցիալ-պատմական երևույթի ու հասկացության որակական նորույթը, և քաղաքացիական հասարակությունը, ըստ էության, մեկնաբանում է որպես բուրժուական հասարակություն: «Քաղաքացիական հասարակությունը,- գրում էր Հեգելը,- ի դեպ, ստեղծվել է սոսկ ժամանակակից աշխարհում, որը գաղափարի բոլոր սահմանումներով դրանց իրավունք է տրամադրում: Եթե պետությունը ներկայացնում են որպես տարբեր անձանց միասնություն, որպես միասնություն, որը սոսկ ընդհանրություն է, ապա նկատի է առնվում միայն քաղաքացիական հասարակության բնորոշումը: Պետական իրավունքի մի շարք նորագույն մասնագետներ չկարողացան հանգել պետության նկատմամբ այլ հայացքի»<sup>1</sup>:

Քաղաքացիական հասարակության և պետության տարբերակման ու փոխհարաբերության հիմնախնդիրների հեգելյան հետազոտությունների մի շարք դրույթներ ընկալվեցին մարքսիզմի կողմից և վերամեկնաբանվեցին մատերիալիստական ու դասակարգային-կոմունիստական դիրքերից: Մարքսիզմի համաձայն՝ հենց հասարակությունն է պետության հիմքը, հասարակությունն առաջնային է, իսկ պետությունը, իրավունքը և այլն՝ երկրորդական: Ընդ որում, «հասարակություն» ասելով՝ նկատի են առնվում նյութական, հիմնաշենքային հարաբերությունները, իսկ «պետություն» ասելով՝ վերնաշենքային (պայմանավորված) բնույթի երևույթները:

*Ժամանակակից քաղաքացիական հասարակությունն* իրավական, ազատական-ժողովրդավարական, բազմակարծային բաց հասարակություն է, որի հիմնական սուբյեկտն ազատ անհատն է, որն իր շահերն իրականացնում է բոլորի համար միասնական օրենքի և ընդհանուր իրավակարգի շրջանակներում: Մարդը՝ որպես քաղաքացիական հասարակության անդամ, տարբեր հասարակական հարաբերությունների՝ տնտեսական, հոգևոր, տեղեկատվական և այլնի, լիիրավ ու, դրա հետ միասին, պատասխանատու (իր պարտականությունները պահպանող և ուրիշների իրավունքները հարգող) մասնակից է:

<sup>1</sup> Гегель Г.В.Ф. Философия права. М., 1990. էջ 228

Արդի քաղաքացիական հասարակության համակարգն աչքի է ընկնում զարգացած կառուցվածքով: Այդ համակարգի մեջ են մտնում հետևյալ *հիմնական բաղադրատարրերը* (կառուցվածքային մասերը).

1) մարդասիրական (հասարակության մարդկային կազմը՝ ազատ անհատները).

2) սոցիալական (հասարակության սոցիալական բաժանումը սոցիալական խմբերի, շերտերի, դասակարգերի).

3) տնտեսական (հասարակության տնտեսական կարգը՝ սեփականության, արտադրության, փոխանակման, սպառման և այլնի ձևերն ու հարաբերությունները).

4) հոգևոր (գիտությունը, կրթությունը, մշակույթը, կրոնը և այլն).

5) տեղեկատվական (տեղեկատվության միջոցներն ու ձևերը, հասարակական կարծիքը և այլն).

6) տարածքային-կառավարչական (տեղական ինքնակառավարումը).

7) կազմակերպական (հասարակական և խմբակային միավորումների բազմազան ձևերը):

## 2. Հասարակական միավորումները

Քաղաքացիական հասարակության կարևոր բաղադրատարր են գանձան *հասարակական միավորումները*՝ քաղաքական կուսակցությունները, արհմիությունները, բարեգործական կազմակերպությունները և այլն:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը (30 հոդված) ամրապնդում է յուրաքանչյուրի միավորման իրավունքը և երաշխավորում է հասարակական միավորումների գործունեության ազատությունը: Ոչ ոքի չեն կարող հարկադրել ընդունվելու որևէ միավորման մեջ կամ գտնվելու դրանում:

Հասարակական միավորումների ձևավորման ու գործունեության համար էական նշանակություն ունեն Սահմանադրության դրույթները (13 հոդված) Ռուսաստանի Դաշնությունում զաղափարական և քաղաքական բազմաձևության ու բազմակուսակցության, օրենքի հանդեպ հասարակական միավորումների հավասարության ճանաչման մասին: Արգելվում է միայն այնպիսի հասարակական միավորումների ստեղծումը և գործունեությունը, որոնց նպատակները կամ գործողություններն ուղղված են Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի բռնի փոփոխմանը և ամբողջականության խախտմանը, պետության ան-

վտանգության խարխումանը, զինված կազմավորումների ստեղծմանը, սոցիալական, ռասայական, ազգային և կրոնական բշնամանքի հրահրմանը:

Ներկայումս ակտիվորեն գործում են զանազան հասարակական կազմավորումներ (քաղաքական, մասնագիտական, գիտական, իրավապաշտպան, լուսավորչական, բնապահպանական, սպառողական, կրոնական և այլն): «Հասարակական միավորումների մասին» (1995 թվականի ապրիլի 14-ի) Դաշնային օրենքի 5 հոդվածում հասարակական միավորման հասկացությունը բնորոշվում է հետևյալ կերպ. «Հասարակական միավորումը շահերի ընդհանրության հիման վրա միավորված, հասարակական միավորման կանոնադրությունում նշված ընդհանուր նպատակների իրագործման համար քաղաքացիների նախաձեռնությամբ ստեղծված կամավոր ինքնակառավարվող, ոչ առևտրային կազմավորումն է»:

Նշված օրենքը (7 հոդված) նախատեսում է հասարակական միավորումների հետևյալ կազմակերպարական ձևերը՝ հասարակական կազմակերպություն, հասարակական շարժում, հասարակական հիմնադրամ, հասարակական հիմնարկ, հասարակական ինքնագործունեության մարմին:

*Հասարակական կազմակերպությունն* անդամակցության վրա հիմնված հասարակական միավորումն է, որն ստեղծվել է համատեղ գործունեության հիման վրա, միավորման անդամների ընդհանուր շահերի պաշտպանության և կանոնադրական նպատակներին հասնելու համար:

*Հասարակական շարժումը* մասնակիցներից բաղկացած և անդամություն չունեցող սոցիալական, քաղաքական կամ այլ հանրօգուտ նպատակներ հետապնդող ու հասարակական շարժման մասնակիցների կողմից աջակցություն ստացող, զանգվածային հասարակական միավորումն է:

*Հասարակական հիմնադրամը* ոչ առևտրային հիմնադրամի տեսակ ու անդամություն չունեցող հասարակական միավորում է, որի նպատակը կամավոր վճարումների կամ օրենքով չարգելված այլ մուտքերի հիման վրա գույքի կազմավորումը և այդ գույքի հանրօգուտ նպատակներով օգտագործումն է: Հասարակական հիմնադրամի հիմնադիրներն ու կառավարիչներն իրավունք չունեն նշված գույքն օգտագործել սեփական շահերի համար:

*Հասարակական հիմնարկն* անդամակցություն չունեցող հասարակական միավորումն է, որը նպատակ ունի մատուցել տվյալ միավորման

մասնակիցների շահերին և միավորման կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխանող կոնկրետ տեսակի ծառայություններ:

*Հասարակական ինքնագործունեության մարմինն* անդամակցություն չունեցող հասարակական միավորումն է, որի նպատակը մարդկանց մոտ ըստ բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի ծագող տարբեր սոցիալական հիմնախնդիրների համատեղ լուծումն է՝ ուղղված անձանց անսահմանափակ շրջանակի պահանջմունքների բավարարմանը, որոնց շահերը կապված են հասարակական ինքնակառավարման՝ ըստ դրա ստեղծման վայրի ու մարմնի, ծրագրերի իրականացման և կանոնադրական նպատակներին հասնելու հետ:

Ըստ իրենց գործունեության ստրաժեգային ոլորտի, հասարակական միավորումները լինում են՝ *համառոտաստանյան, միջտարածաշրջանային, տարածաշրջանային և տեղական:*

Բոլոր հասարակական միավորումների գործունեությունը պետք է լինի հրապարակային և հիմնվի կամավորության, իրավահավասարության, ինքնակառավարման ու օրինականության սկզբունքների վրա:

*Հասարակական միավորումներն օգտվում են իրավունքների լայն շրջանակից*, որոնք ապահովում են հասարակական և քաղաքական կյանքում դրանց ակտիվ մասնակցությունը: Համաձայն «Հասարակական միավորումների մասին» Դաշնային օրենքի 27 հոդվածի՝ իրենց կանոնադրական նպատակներն իրականացնելու համար հասարակական միավորումն իրավունք ունի ազատորեն տարածել տեղեկատվություն իր գործունեության մասին, մասնակցել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների մշակմանը, անցկացնել ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր ու պիկետներ, հիմնադրել զանգվածային տեղեկատվության միջոցներ և իրականացնել հրատարակչական գործունեություն, պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմիններում և հասարակական միավորումներում ներկայացնել ու պաշտպանել իր իրավունքները, իր անդամների և մասնակիցների, ինչպես նաև այլ անձանց օրինական շահերը, հանդես գալ հասարակական կյանքի տարբեր հարցերին վերաբերող նախաձեռնություններով, առաջարկներ ներկայացնել պետական իշխանության մարմիններին:

*Քաղաքական հասարակական միավորումները* (քաղաքական կուսակցությունները, քաղաքական կազմակերպությունները, քաղաքական շարժումները), որպես ընտրական միավորումներ, ունեն ընտրարշավներին մասնակցելու իրավունք:

*Քաղաքական հասարակական միավորման սահմանումը* ներկայացված է Ռուսաստանի Դաշնության «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների ընտրական իրավունքների և հանրաքվեին մասնակցելու իրավունքի հիմնական երաշխիքների մասին» (1997 թվականի սեպտեմբերի 5-ի) Դաշնային օրենքի 2 հոդվածում՝ «Ընտրական միավորումը քաղաքական հասարակական միավորում է (քաղաքական կուսակցություն, քաղաքական կազմակերպություն, քաղաքական շարժում), որի կանոնադրությամբ ամրագրված հիմնական նպատակներն են՝ քաղաքացիների քաղաքական կամքի ձևավորման վրա ներազդելու, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում թեկնածուներ առաջադրելու ու նրանց նախընտրական քարոզչությունը կազմակերպելու, նշված մարմինների կազմավորմանը և գործունեությանը մասնակցելու միջոցով հասարակության քաղաքական կյանքին մասնակցելը»<sup>1</sup>:

*Քաղաքական կուսակցությունները* կոչված են էական կապող ու միավորող դեր խաղալու քաղաքացիական հասարակության (որպես ոչ քաղաքական ոլորտի) և պետության (որպես քաղաքական ոլորտի) միջև:

Քաղաքական ձևով (որոշակի քաղաքական նպատակների, գաղափարների, ծրագրերի, պահանջների, դրույթների, որոշումների, նախագծերի, միջոցառումների և այլնի տեսքով) արտահայտելով քաղաքացիական հասարակության (անհատների, սոցիալական խմբերի, շերտերի, դասակարգերի և այլնի) բազմազան պահանջմունքները և շահերը, կուսակցությունները, որպես հասարակության կազմակերպված ներկայացուցիչներ, դրանով իսկ արտահայտում են նաև պետական իշխանություն ձևավորելու ու դրա իրականացմանը մասնակցելու քաղաքացիական հասարակության իրավունքը:

Քաղաքական ոլորտում քաղաքացիական հասարակության անդամների մասնավոր շահերը և կամքն արտահայտելը նշանակում է գտնել դրանց պատշաճ տեղն ու նշանակությունը բնակչության, ամբողջ ժողովրդի հանրնդիանուր շահերի և ընդհանուր կամքի սահմաններում ու համատեքստում, այսինքն՝ վերջին հաշվով դրանք արտահայտել այն *համընդհանուր իրավական (և պետական-իրավական) ձևով*, որով ընդհանրապես կարող են հաշվի առնվել և բավարարվել այս կամ այն մասնավոր (անհատական, խմբային, դասակարգային և այլ) շահերը: Ուստի, տարբեր կուսակցությունների պայքարն ամբողջությամբ իշխանու-

<sup>1</sup> Федеральный закон "Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации". М., 1997 էջ 6



յան համար, ինչպես նաև նրանց քաղաքական գործունեությունը պետք է ընթանա օրինական ձևով, Մահմանադրության և գործող օրենսդրության շրջանակներում, մի խոսքով՝ իրավական ձևով:

Հասարակության, իրավունքի և պետության ազատական-իրավաբանական մեկնաբանության համաձայն՝ քաղաքականությունն օրինական սուբյեկտների կողմից իրավական ձևով իրականացվող հասարակական հարաբերություններն են պետական իշխանությունը ձևաբ բերելիս ու իրականացնելիս: Այսպիսի օրինական սուբյեկտներ են, ըստ ուսաստանյան օրենսդրության, ժողովուրդն ամբողջությամբ՝ որպես ինքնիշխան, պետական իշխանության ներկայացուցիչները (պետական մարմինները, պաշտոնատար անձինք), առանձին քաղաքացիները, պաշտոնապես գրանցված քաղաքական հասարակական միավորումները (քաղաքական կուսակցությունները, քաղաքական շարժումները, քաղաքական կազմակերպությունները):

## Գլուխ 7. Իրավական պետությունը. պատմությունը և ներկան

### 1. Իրավական պետության գաղափարների պատմությունը

Արդի իրավական պետությունը՝ որպես որոշակի տեսական հայեցակարգ և համապատասխան պրակտիկա, ունի երկար ու ուսանելի պատմություն:

«Իրավական պետություն» (*Rechtsstaat*) բուն տերմինը ծագել և ամրապնդվել է XIX դարի առաջին կեսի գերմանական իրավաբանական գրականության մեջ (Կ.Տ.Վելկերի, Ռ. ֆոն Մոլի և ուրիշների աշխատություններում)<sup>1</sup> ու հետագայում ստացել է լայն տարածում:

Իր ամբողջ նորությով հանդերձ՝ Նոր դարաշրջանի իրավական պետականության տեսական հայեցակարգերը (որոնք մշակվել են Ջ.Լոկի, Ը.Լ.Մոնտեսքյոյի, Ջ.Ադամսի, Ջ.Մեդիսոնի, Թ.Ջեֆերսոնի, Ի.Կանտի, Գ.Վ.Ֆ.Հեգելի և ուրիշների աշխատություններում) հիմնվում էին անցյալի փորձի, նախորդ սոցիալական, քաղաքական և իրավական տեսությունների ու պրակտիկայի նվաճումների վրա:

Անտիկ մտածողների (սոփեստների, Պլատոնի, Արիստոտելի, Պլուինյուսի, Ցիցերոնի և ուրիշների) գաղափարների իրավական պետության

<sup>1</sup> Stü Welcker K.T. Die letzten Gründe von Recht, Staat und Strafe. Giesen, 1813.S 25,71 u.a.; Mohl R. Die Polizeiwissenschaft nach den Grundsätzen des Rechtsstaates. Bd. 1-2. Tübingen, 1832-1833. Անգլիական գրականության մեջ այս տերմինը չի կիրառվում. ճանաչվածության չափով դրա համարժեքը «իրավունքի կառավարում» է (*rule of law*)

հետագա առնություն վրա ազդեցության տարբեր հարադրությունները խմբավորվում են քաղաքական հարաբերությունների իրավական անձանցման և ձևակերպման թեմատիկայի շուրջը: Այդ թեմատիկան ներառում է, առաջին հերթին, այնպիսի հարադրություններ, ինչպիսիք են՝ պոլիսի (անտիկ աշխարհի քաղաք-պետության) կարգերի, դրա իշխանության և օրենքների արդարությունը, պետության տարրեր մարմինների միջև լիազորությունների խելամիտ բաշխումը, կառավարման ճիշտ ու ոչ ճիշտ ձևերի տարբերակումը, պոլիսի կյանքում պետության և քաղաքացու փոխհարաբերություններում օրենքի որոշիչ դերը, օրինակաչության՝ որպես կառավարման տարբեր ձևերի դասակարգման ու բնութագրման չափանիշների նշանակությունը և այլն:

Դեռևս վաղ անցյալում ծագել է *իշխանության գործողություններն արդարության պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության գաղափարը*: Իրավունքի և պետության մասին պատկերացումների խորացման հետագա գործընթացում միանգամայն վաղ ձևակերպվեց մարդկանց հասարակական կյանքում այնպիսի քաղաքական ձևի խելամտության ու արդարության մասին գաղափարը, որի դեպքում իրավունքը, հանրային իշխանության կողմից ճանաչման և աջակցության շնորհիվ, վերածվում է համապարտադիր օրենքի, իսկ հանրային-իշխանական ուժը (դրա բռնության հնարավորություններով և այլն), որը ճանաչում է իրավունքը, կարգավորված և, հետևաբար, սահմանափակված ու միաժամանակ իր կողմից արդարացված՝ արդարացի (այսինքն՝ իրավունքին համապատասխանող) պետական իշխանության:

Անտիկ հեղինակների գաղափարները և դրույթներն իրենց հետագա զարգացումն ստացան եվրոպական միջնադարի մտածողների (Թովմա Աքվինացու, Մարսիլ Պաղուանցու, միջնադարյան իրավաբանների) ստեղծագործություններում:

Միջնադարյան քաղաքական-իրավական միտքը կարևոր դեր խաղաց անտիկ աշխարհի և Նոր դարաշրջանի գաղափարների միջև, ներառյալ՝ մարդու անօտարելի բնական իրավունքների, իշխանությունների բաժանման, ներկայացուցչական համակարգի և, ընդհանրապես, իրավական պետականության մասին հետագա ուսմունքների համար տեսական հիմքեր նախապատրաստելու առումով:

Նոր դարաշրջանում իրավական պետականության գաղափարները զարգացան նախորդ քաղաքական-իրավական մտքի նվաճումների և, առաջին հերթին, մարդու ազատությունների ու իրավունքների, պոզիտիվ իրավունքի և պետության նկատմամբ բնական իրավունքի գերապատվության, պետական իշխանության իրականացման իրավական ձևերի

ու սահմանների, տարբեր պետական մարմինների իշխանական իրավագործությունների սահմանազատման մասին բնական-իրավական պատկերացումների հունով:

Իրավական պետականության տեսության և պրակտիկայի համար մի շարք էական դրույթներ հիմնավորեց անգլիացի մտածող Ջ.Լոկը (1632-1704): Նրա մեկնաբանմամբ՝ իրավունքի տիրապետման գաղափարը հանդես է գալիս այնպիսի պետության տեսքով, որում գերակայում է բնության հավերժ և համապարփակ օրենքին համապատասխանող քաղաքացիական օրենքը: Այդպիսի պետությունում հռչակված են մշտական (սահմանադրական) օրենքներ, ճանաչվում են անհատի անօտարելի բնական իրավունքները և ազատությունները, իրականացվել է իշխանությունների բաժանում օրենսդիրի, գործադիրի ու դաշնայինի (արտաքին գործադիր իշխանություն): Մարդկանց կյանքը, ազատությունը և սեփականությունն ապահովող այդպիսի պետությունը նա հակադրում է բռնատիրական իշխանությանը: Պետական իշխանությունը սահմանափակված է հանրային բարօրությամբ:

Իշխանությունների բաժանման հայեցակարգը հետևողական և համակարգված մշակվեց ֆրանսիացի իրավաբան Շ.Լ.Մոնտեսքյոյի (1688-1755) աշխատություններում: Յուրաքանչյուր պետությունում տարբերելով երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանություն, նա նշում է, որ իշխանության չարաշահումների կանխման համար հարկավոր է իրերի այնպիսի կարգ, որի դեպքում տարբեր իշխանությունները կկարողանային փոխադարձաբար զսպել մեկը մյուսին: «Եթե, - նշում է նա իր «Օրենքների ոգու մասին» աշխատությունում, - օրենսդիր և գործադիր իշխանությունը միավորվի մեկ անձի կամ հաստատության մեջ, ապա ազատություն չի կարող լինել, քանի որ կարելի է երկյուղել, որ այդ միապետը կամ Սենատը կստեղծի բռնապետական օրենքներ, որպեսզի դրանք բռնատիրաբար կիրառի: Ազատություն չի լինի նաև այն դեպքում, եթե դատական իշխանությունն առանձնացված չէ օրենսդիր և գործադիր իշխանություններից: Եթե դա միացված է օրենսդիր իշխանությանը, ապա քաղաքացիների կյանքը և ազատությունը կհայտնվեն կամայականության իշխանության ներքո, քանի որ դատավորը կլինի օրենսդիր: Եթե դատական իշխանությունը միավորված է գործադիրին, ապա դատավորը հնարավորություն է ստանում դառնալ ճնշող: Ամեն ինչ կկործանվեր, եթե մեկ անձի, մեծատոնիմիկներից, ազնվականներից կամ հասարակ մարդկանցից կազմված հաստատության մեջ միավորվեին այս երեք իշխանությունը՝ օրենքներ ստեղծելու իշխանությունը, համապատասխան բնույթի որոշումներ գործադրելու իշխանությունը և

հանցագործությունները կամ մասնավոր անձանց բողոքները դատելու իշխանությունը»<sup>1</sup>:

Իրավական պետականության տեսության և պրակտիկայի զարգացման մեջ (Ջ.Լոկի և Շ.Լ. Մոնտեսքյոյի գաղափարների տեսանկյան ազդեցությամբ) էական ավանդ ներդրեցին նաև ամերիկյան հեղափոխության այնպիսի գործիչներ, ինչպիսիք են՝ *Թ.Ջեֆերսոնը*, *Թ.Փեյնը*, *Ա.Համիլտոնը*, *Ջ.Ադամսը*, *Ջ.Մեդիսոնը* և ուրիշներ:

Դեռևս XVIII դարի վերջին իրավական պետության գաղափարներն ամրագրվեցին այնպիսի պաշտոնական փաստաթղթերում, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ի Անկախության հռչակագիրը (1776 թվական), ԱՄՆ-ի Սահմանադրությունը (1787 թվական), Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիրը (1789 թվական):

XVIII դարի վերջին իրավական պետության ազատական տեսության խոր փիլիսոփայական հիմնավորմամբ հանդես եկավ *Ի. Կանտը*:

Ըստ Կանտի, *պետության բարորդությունը* մեծագույն չափով պետական կարգն իրավական սկզբունքի հետ համաձայնեցված լինելու մեջ է, և այսպիսի համաձայնության ձգտելը մեզ պարտավորեցնում է բանականությունը՝ կատեգորիկ իմպերատիվի միջոցով: *Իրավունքի ոլորտում բանականության այդ կատեգորիկ իմպերատիվը* հանդես է գալիս համընդհանուր օրենքի պահանջի տեսքով, որն ասում է՝ «Արտաքննապես վարվիր այնպես, որ քո կամայականության ազատ դրսևորումը համատեղելի լինի համընդհանուր օրենքին համապատասխանող յուրաքանչյուրի ազատության հետ»<sup>2</sup>: Պետականության ոլորտում կատեգորիկ իմպերատիվի պահանջի իմաստը Կանտի մոտ հանդես է գալիս որպես իշխանությունների (օրենսդիր, գործադիր և դատական) բաժանմամբ պետության իրավական կազմակերպման անհրաժեշտություն: Իշխանությունների բաժանման սկզբունքի առկայությանը կամ բացակայությանը համապատասխան՝ Կանտը տարբերակում և հակադրում է կառավարման երկու ձև՝ հանրապետությունը (սա, ըստ էության, իրավական պետությունն է) ու բռնատիրությունը:

Կանտի մեկնաբանմամբ իրավական պետությունը (հանրապետությունը) հանդես է գալիս ոչ թե որպես էմպիրիկ իրողություն, այլ որպես այնպիսի իդեալական տեսական կառույց (մոդել), որով պետք է ղեկավարվել որպես բանականության պահանջ և հասարակական ու պետա-

<sup>1</sup> *Монтескье Ш.А. Избранные произведения. М., 1955. т. 290-291*

<sup>2</sup> *Кант И. Соч. Т. 4. Ч. II. т. 240*

կան-իրավական կյանքի պրակտիկ կազմակերպմանն ուղղված մեր ջանքերի նպատակ:

Եթե Կանտի մոտ իրավական պետությունը պարտադրականություն է, ապա *Հեգելի* մոտ դա իրականություն է, այսինքն՝ մարդկանց առօրյա գոյության որոշակի ձևերում բանականության գործնական իրականացում: Իրականությունը (ներառյալ՝ նաև պետական-իրավական իրականությունը), ըստ Հեգելի, բանական է, իսկ բանականը՝ իրական է: Նման բանական (իրավական, ազատ) իրականությանը նա անվանում է իրավունքի գաղափար, որը չի կարելի խառնել իդեալի հետ:

Կոնկրետ պատմական տեսակետից Հեգելը, որպես XIX դարի սկզբի մտածող, գտնում էր, որ ազատության գաղափարն առավել մեծ գործնական իրականացման է հասել հենց իշխանությունների բաժանման (պետության ղեկավարի, կառավարության և օրենսդիր իշխանության) սկզբունքի վրա հիմնված սահմանադրական միապետությունում: Պետության մեջ իշխանությունների պատշաճ բաժանումը Հեգելը համարում էր «հանրային ազատության երաշխիք»<sup>1</sup>: Այդ դիրքերից նա խիստ քննադատում էր բոնատիրությունը՝ որպես «ապօրինության վիճակ, որում հատուկ կամքը, որպես այդպիսին, լինի միապետի կամ ժողովրդի (օխլոկրատիա) կամքը, ունի օրենքի ուժ կամ, ավելի ճիշտ, գործում է օրենքի փոխարեն»<sup>2</sup>:

Պետության հեգելյան հայեցակարգի իմաստավորումը՝ ամբողջատիրության մասին XX դարի փորձի ու գիտելիքների համատեքստում, հնարավորություն է ընձեռում հասկանալ պետականության և ամբողջատիրության միջև առկա թշնամական ու փոխադարձորեն բացառող հակադրությունը: Այդ իմաստով, կարելի է վստահաբար ասել՝ *Էթատիզմն ընդդեմ ամբողջատիրության*:

Իրավական պետության XIX դարի լեգիտակական (պոզիտիվիստական) հայեցակարգերը (Կ. Հերբեր, Ա. Դայսի, Գ. Ելինեկ, Ռ. Իերինգ, Ն. Ի. Կորկունով, Պ. Լաբանդ, Ա. Էսմեն և ուրիշներ) հիմնավորել են *պետության, իր իսկ ստեղծած, պոզիտիվ իրավունքով սահմանափակվելու այս կամ այն սահմանումը*:

XX դարում հին պոզիտիվիզմի արատները փորձեց հաղթահարել նեոպոզիտիվիստ Հ. Բեյզենը: Համաձայն նրա նորմատիվիստական «իրավունքի մասին մարուր ուսմունքի»՝ «յուրաքանչյուր պետություն իրավական պետություն է»<sup>3</sup>: Ընդ որում, «իրավունք» ասելով նկատի է առն-

<sup>1</sup> Гегель Г.В.Ф. Философия права. М., 1990. т.2 309

<sup>2</sup> Նույն տեղը՝ էջ 318

<sup>3</sup> Чистое учение о праве Гакса Кельзена. Вып.2. т.2 146

վում հենց նյոզիտիվ իրավունքը (օրենքը): «Հետևողական իրավական պոզիտիվիզմի տեսանկյունից,- ընդգծում էր Քելզենը, - իրավունքը, ինչպես նաև պետությունը չի կարող հասկացվել այլ կերպ, քան որպես մարդկանց վարքագծի հարկադիր կարգ, որն ինքնին ոչ մի կերպ դա չի բնութագրում բարոյականության կամ արդարության տեսանկյունից: Այդ դեպքում պետությունը կարող է հասկացվել «իրավաբանական իմաստով»՝ ոչ ավելի և ոչ պակաս չափով, քան ինքը՝ իրավունքը»<sup>1</sup>:

Ինչպես հին, այնպես էլ նորացված պոզիտիվիզմի ներկայացուցիչների հայեցակարգերում, ըստ էության, խոսքը ոչ թե իրավական պետության, այլ ավելի շուտ, «օրենքների պետության» կամ «օրինականության պետության» մասին է (դրոնց հաճախ այդպես էլ անվանում են համապատասխան սահմանումների հեղինակները): Ընդ որում, այդ օրենքներն ու օրինականությունը, ինչպես նաև համապատասխան պետությունը չունեն հենց զլխավորը՝ իրենց իրավաչափության և իրավական բնույթի, կամայականության ու անազատության ձևերից իրենց տարբերության օբյեկտիվ չափանիշները:

Իրավական պետականության մասին ուսմունքների պատմությունը գաղափարների ու հայեցակարգերի հարուստ զինանոց է, որոնց չիմանալը, դրանց ուժեղ և թույլ կողմերը, արժանիքներն ու թերությունները հաշվի չառնելն անհնարին է դարձնում ժամանակակից իրավական պետության հիմնահարցերի որևէ լուրջ տեսական մշակումը:

Պետության՝ որպես իրավական երևույթի և ինստիտուտի, իրավական-ազատական հասկացողության համաձայն, *ամեն մի պետություն իրավական պետություն է* այն իմաստով, որ յուրաքանչյուր պետություն (ի տարբերություն բռնատիրության, կառավարման բռնապետական տիպի և ձևի) ազատ (այսինքն՝ միաժամանակ իրավասուրյեկտ և պետականասուրյեկտ) անհատների հանրային-քաղաքական իշխանության իրավական կազմակերպություն է: Հենց դրա համար էլ յուրաքանչյուր պետություն (անկախ դրա տիպից և սոցիալ-պատմական զարգացման աստիճանից) մարդկանց ազատության արտահայտման, կեցության և իրականացման անհրաժեշտ ձև է:

Դրանով իսկ ցանկացած պետության՝ որպես իրավական պետության, այս ազատական-իրավաբանական մեկնաբանությունն սկզբունքորեն տարբերվում է բառային միևնույն հնչողությունն ունեցող քելզենյան բնութագրից, քանի որ մեր մեկնաբանման մեջ «իրավունք» ասելով նկատի է առնվում ոչ թե պաշտոնական իշխանության ցանկացած կամայա-

<sup>1</sup> Чистое учение о праве Гаяса Кельзена. Вып. 2. т. 153-154

կան սահմանում (հրաման) (ինչպես դա առկա է Քելզենի և մյուս լեզիստների մոտ), այլ իրավունք՝ օրենքի (պոզիտիվ իրավունքի) հետ դրա տարբերությամբ և փոխհարաբերությամբ, որպես կամայականության բացասում, որպես ձևական հավասարության սկզբունք՝ դրա նորմատիվ (իրավական օրենք) և ինստիտուցիոնալ-իշխանական (իրավական պետություն) կոնկրետացմամբ ու արտահայտմամբ:

*Իսկ իրավական պետությունը՝ դրա արդի համընդհանուր տարածված իմաստով, ինչպես մենք բազմիցս նշել ենք, նորագույն ժամանակի հատուկ պետական-իրավական կառույց է, հանրային քաղաքական ոլորտում իրավունքի տիրապետման գաղափարի իրականացման հատուկ (քաղաքացիական հասարակության պայմաններին և պահանջմունքներին համապատասխանող) մոդել, ազատ անհատների՝ որպես պաշտոնապես ճանաչված սուբյեկտների, ի ծնե և անօտարելի (բնական) իրավունքների և, միաժամանակ, քաղաքացու իրավունքների ու ազատությունների սուբյեկտների, հանրային-քաղաքական իշխանության զարգացած իրավական կազմակերպության հատուկ նոր ձև (և նոր տիպ):*

Այսպիսի իրավական պետության՝ որպես հատուկ պետական-իրավական կառույցի և պետության նոր տիպի, *տարբերակիչ հատկություններն են* հետևյալ քաղադրատարրերը. մարդասիրական-իրավական (պաշտոնապես ամրագրված՝ մարդու ի ծնե և անօտարելի իրավունքներն ու ազատությունները), նորմատիվ-իրավական (իրավական օրենքի գերակայությունը) և ինստիտուցիոնալ-իրավական (կամ կազմակերպական-իրավական՝ իշխանությունների բաժանումն օրենսդիրի, գործադիրի և դատականի):

Նման հատուկ պետական-իրավական կառույցը (այսինքն՝ ժամանակակից իրավական պետությունը) ենթադրում է մարդկանց ազատության, առաջադիմության արդի մակարդակ ու քաղաքացիական հասարակության, իրավունքի և պետության զարգացվածության համապատասխան աստիճան:

## **2. Իրավական պետությունը հետխորհրդային Ռուսաստանում**

Իրավական պետականության գաղափարները և արժեքները դարձան պոստսոցիալիստական վերափոխումների ամբողջ գործընթացի գլխավոր կողմնորոշիչներից մեկը:

1993 թվականի Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ ճանաչում և նորմատիվ ամրագրում ստացան *ժամանակակից իրավական պետականության բոլոր երեք հիմնական բաղադրատարրերը (հարադրությունները, բնութագրերը և հասկությունները)*՝ մարդասիրական-իրավականը (մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները), նորմատիվ-իրավականը (իրավական օրենքի տիրապետությունը) և ինստիտուցիոնալ-իրավականը (իշխանությունների բաժանման և փոխգործակցության համակարգը):

Սահմանադրության (1 հոդվածի 1-ին մասի) համաձայն, Ռուսաստանի Դաշնությունը՝ Ռուսաստանը, կառավարման հանրապետական ձևով ժողովրդավարական, դաշնային, իրավական պետություն է: Բացի այդ, Սահմանադրությամբ Ռուսաստանի Դաշնությունը սահմանվում է որպես «սոցիալական պետություն» (7 հոդվածի 1-ին մաս) և որպես «աշխարհիկ պետություն» (14 հոդվածի 1-ին մաս):

Ըստ Սահմանադրության՝ Ռուսաստանի Դաշնությունում ինքնիշխանության կրողը և իշխանության միակ աղբյուրը նրա բազմազգ ժողովուրդն է (3 հոդվածի 1-ին մաս): Ռուսաստանի Դաշնության ինքնիշխանությունը տարածվում է նրա ամբողջ տարածքի վրա, իսկ Ռուսաստանի Սահմանադրությունը և դաշնային օրենքները գերակայություն ունեն Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում (4 հոդված):

Սահմանադրությունը (1-ին գլուխ) որպես սահմանադրական կարգի հիմքեր ամրագրում է հետխորհրդային Ռուսաստանի հասարակական և պետական-իրավական կառուցվածքի նորույթը սահմանող մի շարք սկզբունքային դրույթներ:

Իրավական պետականության հիմքերի ամրապնդման համար այստեղ վճռորոշ նշանակություն ունեն, առաջին հերթին, Սահմանադրության դրույթները մարդու, նրա իրավունքների ու ազատությունների՝ որպես բարձրագույն արժեք (2 հոդված), իշխանությունների բաժանման (10 հոդված), Սահմանադրության ուղղակի գործողության և գործող իրավունքի աղբյուրների սահմանադրական-իրավական բնութագրերի մասին (15 հոդված):

Երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման հիմքերն ամրապնդված են Ռուսաստանի Դաշնությունում հավասար կերպով ճանաչվող ու պաշտպանվող մասնավոր, պետական, համայնքային և սեփականության այլ ձևերի (ներառյալ՝ հողի և բնական այլ պաշարների նկատմամբ), միասնական տնտեսական տարածքի, մրցակցության աջակցության, տնտեսական գործունեության ազատության և այլնի մասին սահմանադրական դրույթներում (8, 9 հոդվածներ):



Ռուսական իրավական պետականության հիմնական դաշնային գծերը և հատկություններն արտահայտված են Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների իրավահավասարության, Ռուսաստանի Դաշնությունում ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման, Ռուսաստանի Դաշնության միասնական քաղաքացիության, նրա պետական ամբողջականության և պետական իշխանության համակարգի միասնության, Դաշնության ու նրա սուբյեկտների պետական իշխանության մարմինների միջև տնօրինության առարկաների և լիազորությունների սահմանազատման մասին սահմանադրական դրույթներում (5, 6, 11 հոդվածներ):

Սահմանադրական կարգի գաղափարական և քաղաքական բնութագրերն իրենց մեջ ներառում են գաղափարական ու քաղաքական բազմակարծության, բազմակուսակցության, օրենքի առաջ հասարակական միավորումների հավասարության ճանաչումը (13 հոդված):

Ռուսաստանի Դաշնության նոր Սահմանադրությունը հետխորհրդային կարգի հիմնական դրույթների իր կարգավորման մեջ հիմնվում է *մարդու ի ծնե և անօտարելի իրավունքների ու ազատությունների մասին բնական-իրավական գաղափարների վրա:*

Սահմանադրությունը, որպես նոր սահմանադրական կարգի հիմքերից մեկը, (2 հոդված) հռչակում է. «Մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք են»: Ընդ որում, Սահմանադրությունը ելնում է մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների ի ծնե և անօտարելի (բնական) բնույթից: Այդ բնական-իրավական գաղափարների ոգով Սահմանադրությունը (17 հոդվածի 2-րդ մաս) հաստատում է, որ «Մարդու հիմնական իրավունքներն ու ազատություններն անօտարելի են և ի ծնե պատկանում են յուրաքանչյուրին»:

Սահմանադրությունը (2-րդ գլուխ) նախատեսում է արդի միջազգային չափանիշներին և այդ ոլորտում զարգացած ազատական-ժողովրդավարական երկրներում սահմանադրական պահանջների բարձր մակարդակին համապատասխանող մարդու ու քաղաքացու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների լայն շրջանակ:

Սահմանադրությունում ամրագրված *մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականություններն իրենց հանրագումարում կազմում են անհատի սահմանադրական-իրավական կարգավիճակը:*

*Մարդու իրավունքներ ու ազատություններ* ասելով Սահմանադրությունը, ըստ էության, նկատի ունի յուրաքանչյուր անհատի՝ ինչպես Ռուսաստանի Դաշնության քաղաքացու, այնպես էլ ուրիշ պետության քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի ի ծնն ու անօտարելի իրավունքները և ազատությունները, այսինքն՝ օգտվելով ավանդական տերմինաբանությունից, մարդու բնական իրավունքները:

Մարդու իրավունքների ու ազատությունների մասին սահմանադրական դրույթներում «մարդ» բառի հետ միասին, որպես դրա հոմանիշ, օգտագործվում են նաև «յուրաքանչյուրը», «բոլորը», «ամձը», «ոչ ոք» (ընդհանուր ժխտողական իմաստով) բառերը: Օրինակ՝ «Յուրաքանչյուրն իրավունք ունի որոշել և նշել իր ազգային պատկանելությունը: Ոչ ոքի չի կարելի հարկադրել որոշելու և նշելու իր ազգային պատկանելությունը» (26 հոդվածի 1-ին մաս): «Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև» (19 հոդվածի 1-ին մաս): «Ոչ ոք իրավունք չունի մուտք գործել բնակարան՝ դրանում բնակվող անձանց կամքին հակառակ...» (25 հոդված):

Սահմանադրության մեջ *քաղաքացու իրավունքներ* ասելով՝ նկատի են առնվում Ռուսաստանի Դաշնության քաղաքացու համապատասխան իրավունքները: Օրինակ՝ «Քաղաքացիները և նրանց միավորումներն իրավունք ունեն մասնավոր սեփականության իրավունքով հող ունենալ» (36 հոդված 1-ին մաս):

Անհատի իրավունքները մարդու իրավունքների և քաղաքացու իրավունքների տարանջատման հիմքում, որն առաջին անգամ պաշտոնապես ամրագրվել է Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրում (1789 թվական), ընկած է քաղաքացիական հասարակության ու պետության տարբերակումն ու, համապատասխանաբար, անհատի՝ որպես քաղաքացիական հասարակության անդամի (մարդու իրավասուբյեկտության՝ որպես մասնավոր անձի), և որպես հանրային-քաղաքական հանրույթի, պետության անդամի (անհատի՝ որպես հանրային-քաղաքական իշխանության, որպես քաղաքացու իրավասուբյեկտության) իրավունքների տարբերակումը:

Անհատի *սահմանադրական-իրավական կարգավիճակը* որոշակի համակարգ է, որն իր մեջ, որպես կառուցվածքային մասեր, ներառում է անհատի միասեռ (ըստ կարգավորման ոլորտի և առարկայի) իրավունքների հետևյալ խմբերը. անձնական (անհատական-մարդկային) իրավունքներ, քաղաքական իրավունքներ, տնտեսական իրավունքներ, սոցիալական իրավունքներ, մշակութային իրավունքներ:

*Անձնական (անհատական-մարդկային) իրավունքներն ու ազատությունները՝* մարդուն որպես առանձին բնական և հոգևոր էակ, որպես ազատ անձնավորություն, ճանաչող ու պաշտպանող իրավունքները և ազատություններն են: Սահմանադրությունը նման անձնական իրավունքների և ազատությունների շարքին է դասում մարդու այնպիսի ի ծնե և անօտարելի իրավունքները, ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը (20 հոդվածի 1-ին մաս), պետության կողմից պաշտպանվող արժանապատվությունը (21 հոդվածի 1-ին մաս) և այլն:

*Քաղաքացիական քաղաքական իրավունքներն ու ազատություններն* անհատի՝ որպես քաղաքացու, քաղաքական կյանքին մասնակցելու և պետական իշխանությունն իրականացնելու իրավունքներն ու ազատություններն են: Սահմանադրությունն այդ իրավունքների շարքին է դասում իր քաղաքացիությունը պահպանելու կամ դա փոփոխելու իրավունքը (6 հոդվածի 3-րդ մաս), սիավորվելու իրավունքը (30 հոդվածի 1-ին մաս), որն իր մեջ ներառում է (իր իմաստով Սահմանադրության 13 հոդվածի 3-րդ մասի դրույթները բազմակուսակցության մասին) նաև քաղաքական միավորման իրավունքի և այլնի մասին իրավունքը:

*Տնտեսական իրավունքներն* անհատի (մարդու և քաղաքացու)՝ որպես տնտեսական (ապրանքային-դրամական, արտադրական, շուկայական) հարաբերությունների անկախ սուբյեկտի իրավունքներն են: Սահմանադրությամբ տնտեսական իրավունքների շարքին են դասվում յուրաքանչյուրի իրավունքը՝ իր ունակություններն ու գույքն ազատորեն օգտագործելու ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ տնտեսական գործունեությանը զբաղվելու (34 հոդվածի 1-ին մաս), մասնավոր սեփականատիրության իրավունքը և այլն:

*Սոցիալական իրավունքները* մարդու իրավունքներն են մարդկանց սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում իր պահանջմունքների և շահերի ապահովման ու պաշտպանության համար: Սահմանադրության մեջ ամրագրվել են հետևյալ սոցիալական իրավունքները՝ յուրաքանչյուրի աշխատանքի իրավունքը՝ անվտանգության և հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում, աշխատանքի վարձատրության իրավունքն առանց որևէ խտրականության ու դաշնային օրենքով սահմանված աշխատանքի վարձատրության նվազագույն չափից ոչ ցածր, ինչպես նաև գործազրկությունից պաշտպանության իրավունքը (37 հոդվածի 3-րդ մաս), յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը (39 հոդված), յուրաքանչյուրի բնակարանի իրավունքը (40 հոդված), յուրաքանչյուրի առողջության պահպանման և բժշկական

օգնությամբ իրավունքը (41 հոդված), յուրաքանչյուրի բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքը (42 հոդված) և այլն:

Սահմանադրությունը Ռուսաստանի Դաշնությունը բնութագրում է որպես սոցիալական պետություն (7 հոդված), որի քաղաքականությունն ուղղված է մարդու արժանապատիվ կյանքը և ազատ զարգացումն ապահովող պայմանների ստեղծմանը:

*Մշակութային իրավունքներն ու ազատություններն* ստեղծագործական գործունեության ոլորտում մշակութային կյանքին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու մարդու իրավունքներն ու ազատություններն են: Սահմանադրությունն այդ իրավունքների և ազատությունների շարքին է դասում գրական, գեղարվեստական, գիտական, տեխնիկական ու ստեղծագործության այլ տեսակների, ինչպես նաև դասավանդման ազատությունը (44 հոդվածի 1-ին մաս), մշակութային կյանքին մասնակցելու և մշակութային հաստատություններից օգտվելու, մշակութային արժեքների հետ առնչվելու յուրաքանչյուրի իրավունքը (44 հոդվածի 2-րդ մաս):

Անհատի սահմանադրական-իրավական կարգավիճակի կարևոր քաղաքատարրերը նրա *սահմանադրական պարտականություններն են*: Նման պարտականությունների շարքին Սահմանադրությունը դասում է՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը և օրենքները պահպանելու պարտականությունը (15 հոդվածի 2-րդ մաս), օրենքով սահմանված հարկերը և տուրքերը վճարելու պարտականությունը (57 հոդված), բնությունն ու շրջակա միջավայրը պահպանելու, բնական հարստություններին խնայողաբար վերաբերվելու պարտականությունը (58 հոդված), հայրենիքը պաշտպանելու քաղաքացու պարտականությունը (59 հոդվածի 1-ին մաս) և այլն:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունում նախատեսված են մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ:

*Ըստ Սահմանադրության (19 հոդված), պետությունը երաշխավորում է* մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հավասարությունն անկախ սեռից, ռասայից, ազգությունից, գույքային ու պաշտոնական դրությունից, բնակության վայրից, կրոնի նկատմամբ վերաբերմունքից, համոզմունքներից, հասարակական միավորումներին պատկանելությունից, ինչպես նաև այլ հանգամանքներից:

*Սահմանադրությունն արգելում է քաղաքացիների իրավունքների սահմանափակման ցանկացած ձևերը՝ սոցիալական, ուսսայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության հասկանիչով:*

Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավունքներ ու ազատություններ և դրանց իրականացման հավասար հնարավորություններ:

Սահմանադրությունը (46 հոդված) յուրաքանչյուրին երաշխավորում է նրա իրավունքների և ազատությունների դատական պաշտպանություն:

Սահմանադրության մի շարք հոդվածներ (47-54 հոդվածներ) նվիրված են մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների քրեական-իրավական և դատավարական երաշխիքներին: Ընդ որում, Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքը նրա գործը քննելու այն դատարանում և այն դասավորի կողմից, որին ընդդատյա է այդ գործը: Յուրաքանչյուրին երաշխավորում է որակավորված իրավաբանական օգնություն: Հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ձերբակալված, կալանավորված անձ իրավունք ունի, համապատասխանաբար, ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից օգտվելու փաստաբանի (պաշտպանի) օգնությունից: Էական նշանակություն ունի Սահմանադրության մեջ (49 հոդվածի 1-ին մաս) անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրումը:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորը, ըստ Սահմանադրության (80 հոդվածի 2-րդ մաս), *Ռուսաստանի Դաշնության նախագահն է:*

Ըստ Սահմանադրության (114 հոդվածի 1-ին մաս), քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման միջոցների իրականացմամբ պետք է զբաղվի *Ռուսաստանի Դաշնության կառավարությունը:*

Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության և գործնականում դրանց պահպանման մեջ կոչված է կարևոր դեր խաղալ Պետական Դումայի կողմից նշանակվող (103 հոդվածի 1-ին մաս) *Մարդու իրավունքների լիազորը:*

Սահմանադրությունը (125 հոդվածի 4-րդ մաս) նախատեսում է, որ քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ բողոքներով ու դատարանների հարցումներով *Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանն* ստուգում է այն օրենքի սահմանադրականությունը, որը կիրառված է կոնկրետ գործերով:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում էական դեր են խաղում *ընդհանուր իրավասության դատարանները*:

Կարևոր նշանակություն ունեն մաս *մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային իրավական ձևերը*:

Մարդու իրավունքների և ազատությունների մասին Սահմանադրության դրույթները բնական-իրավական տիպի իրավահասկացողության տրամաբանությամբ և իմաստով ունեն *երկակի նշանակություն*։ այդ դրույթները նշանակալից են ոչ միայն անհատական իրավունակության և իրավասութչկտության հիմնահարցերի առումով, այլ նաև որպես ելակետային իրավական հիմունքներ, միաժամանակ ունեն համընդհանուր կարգավորիչ նշանակություն ու հանդես են գալիս որպես պաշտոնական նորմատիվ ակտերի իրավական որակին, պետական իշխանության բոլոր ճյուղերի և պաշտոնատար անձանց կազմակերպմանն ու գործունեությանն առաջադրվող համապարտադիր իրավական չափանիշ և սահմանադրական պահանջ։ Դրա վերաբերյալ էական դրույթ է պարունակվում 18 հոդվածում, որի համաձայն մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները «սահմանում են օրենքների իմաստը, բովանդակությունն ու կիրառումը, օրենսդիր և գործադիր իշխանությունների, տեղական ինքնակառավարման գործունեությունը և ապահովվում են արդարադատությամբ»։ Եթե այս հոդվածը պոզիտիվ ձևով պարունակում է *իրավական օրենքի*, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր ճյուղերի գործունեության իրավական բնույթի (իրավունքին համապատասխանելու) *պահանջներ*, ապա Սահմանադրության մեկ այլ հոդված (55 հոդվածի 2-րդ մաս) պարունակվում է *հակաիրավական (իրավախախտ) օրենքի ուղղակի արգելք*՝ «Ռուսաստանի Դաշնությունում չպետք է ընդունվեն մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները վերացնող կամ նվազեցնող օրենքներ»։ Այս առումով կարևոր նորմ է պարունակվում նաև Սահմանադրության 15 հոդվածի 3-րդ մասում՝ «Մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները շոշափող ցանկացած նորմատիվ-իրավական ակտ չի կարող կիրառվել, եթե դա պաշտոնապես չի հրապարակվել ի գիտություն բոլորի»:

Ռուսաստանի նոր Սահմանադրությանը ներհատուկ իրավահասկացողության հայեցակարգն իր մեջ ամբողջությամբ ներառում է նաև պետության իրավական հասկացողությունը և, համապատասխանաբար, պետական իշխանության իրավական կազմակերպումը։ Ինստիտուցիոնալ-իրավական առումով դա արտահայտվում է ռուսական իրավական

պետականության ընդհանուր հայեցակարգի շրջանակներում *իշխանությունների բաժանման որոշակի հայեցակարգի սահմանադրական ամրապնդման մեջ*:

Իշխանությունների բաժանման բուն սկզբունքը Սահմանադրությունում (10 հոդված) ձևակերպվել է հետևյալ կերպ. «Ռուսաստանի Դաշնությունում պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման հիման վրա: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններն ինքնուրույն են»:

Իշխանությունների բաժանման այս ընդհանուր դրույթները հետագայում կոնկրետացվել են Սահմանադրության համապատասխան գլուխներում, որոնք սահմանում են Ռուսաստանի Դաշնության նախագահի (4-րդ գլուխ), Դաշնային ժողովի (5-րդ գլուխ), Ռուսաստանի Դաշնության կառավարության (6-րդ գլուխ), դատական իշխանության (7-րդ գլուխ) կարգավիճակը և լիազորությունները:

Սահմանադրությունը Նախագահին օժտում է իրավունքների միանգամայն լայն շրջանակով, որն, ըստ էության, ներառում է երկրում պետական իշխանության կազմակերպման և իրականացման բոլոր ոլորտներն ու ուղղությունները:

*Ռուսաստանի Դաշնության նախագահը* պետության ղեկավարը և Սահմանադրության երաշխավորն է: Սահմանադրությանը և Դաշնային օրենքներին համապատասխան՝ նա «սահմանում է պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները» (80 հոդվածի 3-րդ մաս), «ասպիտակում է պետական իշխանության մարմինների համաձայնեցված գործունեությունը և փոխգործակցությունը» (80 հոդվածի 2-րդ մաս): «Ռուսաստանի Դաշնությունում գործադիր իշխանությունն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության կառավարությունը» (110 հոդվածի 1-ին մաս):

Նախագահի և կառավարության լիազորությունների սահմանադրական կարգավորման բովանդակությունից ու բնույթից կարելի է եզրակացնել, որ նախագահական իշխանությունը, բացի նախագահի բացառիկ իրավունքներից, ըստ էության, իր մեջ ներառում է նաև գործադիր իշխանության վճռորոշ իրավազորությունների ամբողջ համալիրը:

Ըստ Սահմանադրության (94 հոդված), Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչական և օրենսդիր մարմինը երկու պալատներից բաղկացած Դաշնության խորհրդից և Պետական Դումայից կազմված Դաշնային ժողովն է:

Սահմանադրությունում (118 հոդված) ամրագրված է դրույթ այն մասին, որ «Ռուսաստանի Դաշնությունում արդարադատությունն իրականացնում է միայն դատարանը»: Սահմանադրությանը համաձայն (120 հոդվածի 1-ին մաս)՝ «դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանը և դաշնային օրենքին»: Դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների միջոցով: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելված է: Սահմանադրությունը (120-122 հոդվածներ) ամրագրում է դատավորների անկախության, անփոփոխելիության և անձեռնմխելիության սկզբունքները:

Սահմանադրության (123 հոդված) համաձայն՝ դատավարությունն իրականացվում է մրցակցության և կողմերի իրավահավասարության հիման վրա: Դաշնային օրենքով նախատեսված դեպքերում դատավարությունն իրականացվում է երդվյալ ասենակալների մասնակցությամբ:

Սահմանադրությունը (125-128 հոդվածներ) սահմանում է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի, զերագույն դատարանի, բարձրագույն արբիտրաժային դատարանի հիմնական լիազորությունները և ձևավորման նոր կարգը:

Դատական բարեփոխումների զարգացման մեջ կարևոր քայլ էր «Ռուսաստանի Դաշնության դատական համակարգի մասին» (26-րդ դեկտեմբերի 1996 թվական) դաշնային սահմանադրական օրենքի ընդունումը:

Սակայն, դատական բարեփոխումներն ամբողջությամբ, իրականացվում են դանդաղ և անհետևողական, տարբեր տեսակի պահպանողական ու բյուրոկրատական կառույցների հզոր դիմադրության պայմաններում:

Ստեղծված պայմաններում հույժ կարևոր է, որ նախկին կուսակցական-վարչական թելադրանքից և վերահսկողությունից դատարանների և դատավորների՝ դժվարությամբ ձեռք բերվող, անկախությունը չվերածվի ամեն ինչից և բոլորից հիմար «անկախության», իր համար դասային «ազատության», դատական իշխանության կաստայական ավտարկիայով, դրա վերածմամբ անթափանց և անվերահսկելի «պետության մեջ պետության»: Հակառակ դեպքում այդքան երկար ժամանակ դատարանի անկախությանն սպասող մեր հասարակությունը ֆեոդալական կախվածության մեջ կընկնի դատարանից:

Արդի պայմաններում դատական իշխանությունը կարող է և պետք է հաստատվի ու զարգանա միայն նոր սահմանադրական իրավահասկացողության հունով, իշխանությունների բաժանման սկզբունքի ու Սահ-



մանադրության իրավական օրինական պահանջների հիման վրա, և դրանց խստիվ ու հետևողական պահպանման սահմաններում: Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ *դատական պրակտիկան «իրավունքի աղբյուր»* չէ (դատական իրավաստեղծության իմաստով), այլ իրավունքի գործողության կիրառման և պաշտպանության իրողություն<sup>1</sup>: Դա կարևոր է ինչպես ինքնին, այնպես էլ իրավունքի կատարելագործման և զարգացման համար: Դատական պրակտիկան, իրավաստեղծություն չլինելով, իրավաստեղծության կարևոր աղբյուրներից մեկն է: Սակայն վերջինս վերաբերում է մյուս իշխանությունների իրավագործություններին:

*Դատարանն օրենսդիր գործունեությամբ չի զբաղվում և չի կատարում, այլ կիրառում է իրավունքը: Դատարանի իրավաստեղծությունը մեկ անձի մեջ՝ դատավորի և օրենսդիրի, վտանգավոր խառնուրդ (սիմբիոզ) է: Հենց նման վտանգի դեմ է ուղղված իրավական պետության մեջ իշխանությունների բաժանման սկզբունքը:*

Ռուսական իրավական պետության սահմանադրական մոդելը գործնականում դեռևս լրիվ ծավալով չի իրականացվել: Ուստի, առաջնահերթ խնդիր է (թե՛ օրինաստեղծ պրակտիկայի, թե՛ իրավաբանական տեսության համար) բոլոր սահմանադրական իմաստիտուտների, կառույցների և ընթացակարգերի ձևավորման գործընթացն ավարտին հասցնելը, Սահմանադրությամբ նախատեսված բոլոր դաշնային սահմանադրական օրենքների ու դաշնային օրենքների ընդունումը, մի խոսքով, Ռուսաստանի պետական իրավական համակարգի սահմանադրական մոդելը մինչև վերջ ավարտին հասցնելը (դրա ստատիկայում և դինամիկայում) բոլոր մակարդակներում (համադաշնային, Դաշնության սուբյեկտների մակարդակում և տեղական մակարդակում):

*Ռուսական իրավական պետության սահմանադրական մոդելի կենսագործմանը զուգընթաց պետք է պարբերաբար աշխատանք տարվի (գործնական և գիտական-իրավաբանական) այդ մոդելի ներքին հակասությունների հաղթահարման ուղղությամբ:*

Խոսքը, առաջին հերթին, այնպիսի թերությունների մասին է, ինչպիսիք են՝ իշխանությունների չհաշվեկշռված բաժանումը, տարբեր իշխանությունների փոխհարաբերություններում զսպումների և հակակշիռների պատշաճ արդյունավետությամբ գործող համակարգի բացակայությունը, իշխանության գործադիր ճյուղի կառուցվածքում ու ներկայացուցչական իշխանության հետ դրա փոխհարաբերություններում տեղ գտած

<sup>1</sup> St'u *Нерсесјавц В.С.* Суд не законодательствует и не управляет, а применяет право // Судебная практика как источник права. М., 1997. էջ 41-43

հակասությունները և անորոշությունները (գործադիր իշխանության երկփեղկվածությունը՝ նախագահականի և կառավարականի, որը խորացվել է՝ խորհրդարանից կառավարության անկախությամբ), միասնական ռուսական պետականության դաշնային կառուցվածքում տեղ գտած չափից ավելի անհամապատասխանությունը, ամբողջությամբ Դաշնության ու նրա սուբյեկտների միջև լիազորությունների բաշխման անհրաժեշտ հստակության բացակայությունը, երկրում գործող իրավունքի աղբյուրների հստակ աստիճանակարգության բացակայությունը, դատախազության կարգավիճակի անորոշությունը (այն հիշատակված է դատական իշխանության մասին գլխում, չնայած որ պետք է դասվեր գործադիր իշխանությանը), տեղական ինքնակառավարման ոչ պետական հայեցակարգի ներքին հակասությունը, դրան, փաստորեն, պետական իրավական լիազորություններով օժտելով, սահմանադրական փոփոխությունների ընդունման կարգի չափից ավելի կոշտությունը (և գործնականում անիրականանալի լինելն անգամ, թեկուզ, ի շահ Սահմանադրության պահպանման) և այլն:

Ամբողջությամբ Ռուսաստանի իրավական պետականության սահմանադրական մոդելի կատարելագործման ու իրականացման առումով՝ ռուսական փորձի և դեպի սահմանադրականությանն ու իրավական ժողովրդավարությանը տանող արդի դժվարին ուղու հաշվառմամբ, առավել սուր և բարդ է մնում գործադիր (այսինքն՝ ըստ էության, նախագահական) իշխանությունն այն պատշաճ ներկայացուցչական իշխանության հետ խելամիտ համատեղելու հիմնահարցը, որի լիազորությունները համապատասխանեին իշխանությունների բաժանման և իրավական պետականության իմաստին, գաղափարներին ու պահանջներին:

## **Գլուխ 8. Հասարակության, իրավունքի և պետության պոստսոցիալիստական զարգացման հեռանկարները. ցիվիլիզմի հայեցակարգը**

### **1. Զարգացման պոստսոցիալիստական ուղու ընտրության հիմնահարցը**

Այսօր բոլորս Արևելքում և Արևմուտքում համաշխարհային պատմության մեծ փոփոխությունների ժամանակակիցներն ենք: Նախկին աշխարհակարգը և համաշխարհային պատմության զարգացման բուն ուղղությունը XX դարում որոշվել են կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև հակամարտությամբ, կոմունիստական և բուրժուական գաղափարախոսությունների միջև պայքարով: Այդ բեռներից մեկի արմատական փո-

փոխությունների հետևանքով անխուսափելի են դառնում էական կերպարանավորությունները նաև մյուս բևեռում և ամբողջ աշխարհում: Այդ կապակցությամբ գլոբալ նշանակություն է ձեռք բերում *պոստսոցիալիզմի հիմնահարցը*: Այստեղ մենք գործ ունենք համաշխարհային պատմության դիալեկտիկայի հետ: Եվ *սոցիալիզմից դեպի պոստսոցիալիզմին շարժման արամաքանությունը կարելի է համարժեք բացահայտել սոսկ ազատության ու իրավունքի համաշխարհային պատմական առաջընթացի համասերքատում*:

Հեզելն ասում էր, որ Միներվայի Բուն իր թոհչքն սկսում է լուսադեմին, երբ հին կարգերին փոխարինելու է գալիս նորը: Կոնկրետ-պատմական տեսանկյունից Հեզելի համար խոսքը «հին վարչակարգի» հաղթահարման և մասնավոր սեփականության ու բոլորի ձևական հավասարության ճանաչման վրա հիմնված նոր կարգի հաղթանակի, այսինքն՝ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման մասին է: Նրա համար համաշխարհային պատմությունը՝ որպես ազատության առաջընթաց, ըստ էության, ավարտվում է այդ (կապիտալիստական) կարգով, քանի որ համաձայն նրա հայեցակարգի՝ սկզբունքորեն որևէ նոր բան արդեն անհնար է ազատության զարգացման և ձևակազմավորումների մեջ (ավելի բարձր, քան ազատ մասնավոր սեփականությունն է, համընդհանուր ձևական իրավական հավասարությունը և դրանց համապատասխանող քաղաքացիական հասարակությունն ու պետության իրավական կազմակերպությունը):

Սոցիալիզմի կործանման ժամանակակից պայմաններում պատմության ավարտի գաղափարը (դրա հեզելյան մեկնաբանման հունով) ստացել է, ասես թե, գործնական հաստատում և դրա հետ միասին նոր շունչ<sup>1</sup>:

Հատկանշական է, որ մարքսիզմի համաձայն էլ՝ կապիտալիզմին ներհատուկ ազատության ձևերը (անհատների ձևական հավասարությունը և ազատությունը, մասնավոր սեփականությունը, քաղաքացիական հասարակությունն ու իրավական պետությունը) իրավունքի պատմական առաջընթացի (հենց բուրժուական իրավունքի, մարքսիզմի համաձայն, իրավունքի առավել զարգացած և պատմականորեն վերջին

---

<sup>1</sup> Դրանով է պայմանավորված Ֆ.Ֆուկույամայի հոդվածի լայն տարածումը, որը (վկայակոչելով Հեզելին և նեոհեզելական Ա.Կոմիին) հեզելյան «խավանությունն է» հաղորդում սոցիալիզմի կապիտալիզացման ներկայիս գործընթացին և համաշխարհային պատմության ու մարդկության քաղաքակրթության, կապիտալիստական (ինչպես ասում են ժամանակակից արևմտյան ազատական շուկայական և այլ կարգի ոգով) ավարտին ամբողջությամբ: Տես *Фукуяма Ф. Кодекс истории // Вопросы философии. 1990. N 3 էջ 134-148*

տիպի) վեճիցն աստիճանն է, կապիտալիզմից հետո (այսինքն՝ կոմունիզմի ժամանակ) իրավունքը և պետությունը «մահանում են» արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր (ցանկացած անհատականացված) սեփականությունը, «բուրժուական անհատականությունը» և այլն բացասվում են:

*Թե՛ Հեգելը, թե՛ Մարքսն իրենց դիրքորոշումների արմատական տարբերությամբ միատեսակ ժխտում էին իրավունքի հետագա առաջընթացը, իրավունքի հետբուրժուական տիպի բուն հնարավորությունը, այսինքն՝ ազատության իրավական ձևի զարգացման, իրավունքի առավել բովանդակալից ձևի, անհատների ազատության ավելի մեծ չափ, ավելի բարձր աստիճան արտահայտող իրավունքի նոր ձևի հնարավորությունը:* Զանի որ Հեգելի համար սոցիալական պատմության մեջ ազատության առաջընթացը հնարավոր է միայն իրավական ձևով որպես իրավունքի (և պետության որպես իրավական ինստիտուտի) առաջընթաց, նա պատմության ավարտը կապում էր արդեն իսկ ձևով բերված իրավունքի բուրժուական տիպի հետ: Ըստ Մարքսի, հակառակը, ազատության առաջընթացը շարունակվում է ոչ իրավական (և ոչ պետական) ձևով, և իսկական ազատությունն սկսվում է կապիտալիզմից հետո, բուրժուական իրավունքի ու պետության հաղթահարմամբ: Մարքսը (ապա՝ նաև Էնգելսը և Լենինը) միանգամայն հետևողականորեն որևէ հետբուրժուական իրավունքի («պրոլետարական իրավունքի») կամ «սոցիալիստական իրավունքի») չի (չեն) խոսել՝ սուսկ կոմունիզմի առաջին փուլում (այսինքն՝ սոցիալիզմի ժամանակ) թույլատրելով, այսպես կոչված, «բուրժուական իրավունքը» (բուրժուական հավասար իրավունքը) հավասար աշխատանքի դիմաց հավասար սպառողական վճարում կատարելու համար<sup>1</sup>:

*Պոստսոցիալիզմի գլխավոր հիմնահարցը կապված է այն հարցի այս կամ այն պատասխանի հետ, թե դեպի ո՞ր և ինչպե՞ս կարևի է գնալ «տնտեսական անհավասարության» բացակայության սոցիալիստական սկզբունքից՝ հետ, դեպի «տնտեսական անհավասարության» (այսինքն՝ մասնավոր սեփականության, բուրժուական իրավունքի և այլ-*

<sup>1</sup> Տե՛ս *Մարքս Կ., Էնգելս Բ.*, соч. Т.19. էջ 18-19: *Ленин В.И.* Полн. собр. соч. Т. 33. էջ 94-99

«Պրոլետարական իրավունք» տերմինը լայն տարածում գտավ հեղափոխությունից հետո (Պ.Ի.Ստուկալի, Դ.Ի.Կուրսկու, Ն.Վ.Կրիլենկոյի և ուրիշների աշխատություններում): «Սոցիալիստական իրավունք» տերմինը գրականության մեջ ի հայտ եկավ (Ե. Բ. Պաշուկանիսի հոդվածում) 30-ական թվականների կեսերին: Տե՛ս *Пашуканис Е.* Государство и право при социализме // Советское государство. 1936. N 3. էջ 4

նի) վերականգնումը, թե՞ առաջ՝ դեպի տնտեսության, իրավունքի և այլնի մեջ նոր, ավելի մեծ հավասարություն:

Դեպի իսկական սեփականության (և դրա հետ միասին դեպի իրավունքը, ազատությունը և այլն) մեր ուղու դժվարությունն այն է, որ անհրաժեշտ է «բոլորին միասին» պատկանող դիմազրկված սոցիալիստական սեփականությունից անցնել դեպի անհատականացված սեփականության, բայց, միաժամանակ դա չպետք է լինի վերադարձ դեպի մասնավոր սեփականություն:

Մինչև օրս հայտնի ամեն մի իրավունքի բուրժուական և մասնավոր սեփականատիրական հիմքի ուժով թվում է, թե առկա է միանգամայն փակուղային ու անլուծելի իրավիճակ՝ մի կողմից կենսականորեն անհրաժեշտ է ոչ իրավական, ամբողջատիրական սոցիալիզմից անցնել իրավական կարգի, սակայն, մյուս կողմից՝ իրավունքի ուղղությամբ կատարված ցանկացած շարժում կարող է տանել միայն դեպի բուրժուական իրավունք և, հետևաբար, դեպի մասնավոր սեփականատիրական հարաբերություններ, մի խոսքով՝ դեպի կապիտալիզմ: Դեպի իրավունքը (և այն բոլորը, ինչը կապված է իրավունքի հետ ու անհնար է անհրավական պայմաններում) տանող այդ փակուղային ճանապարհին հայտնվեցին նաև սոցիալիզմը կապիտալիզմի վերափոխելու միջոցառումները: Ի դեպ, այստեղ են արմատավորված դրանք իրականացնելու բազմամյա փորձերի անհաջողությունների խորը պատճառները:

Վերափոխումների ընտրված ուղին (նախկին սոցիալիստական սեփականության, ապապետականացման և մասնավորեցման ուղիներով) տանում է առայժմ ոչ թե դեպի կապիտալիզմ, այլ դեպի միանգամայն չզարգացած, նախակապիտալիստական (նախաբուրժուական) սոցիալական, տնտեսական, քաղաքական և իրավական ձևեր ու հարաբերություններ:

Այն պատճառները, որոնց ուժով մենք իրականացվող կապիտալիստամեա բարեփոխումների արդյունքում անխոսափելիորեն հայտնվում ենք *նախակապիտալիստական (կարելի է ասել նեոֆեոդալական) իրավիճակում*, թաքնված են մեզանում ձևավորվող հասարակական և քաղաքական հարաբերությունների բնույթի, սեփականության ու իրավունքի տիպի մեջ: Այդ տիպաբանությունը կանխորոշված է *սեփականության պոստսոցիալիստական ապապետականացմամբ*, այսինքն՝ այնպիսի սեփականության ստեղծմամբ, որը դեռևս ազատ չէ պետական իշխանությունից, և այնպիսի պետական իշխանություն, որը դեռևս ազատ չէ սեփականությունից: Սոցիալ-պատմական չափման մեջ այսպիսի իրավիճակը բնութագրական է ֆեոդալական փուլին, երբ տնտեսական և

քաղաքական երևույթներն ու հարաբերություններն իրենց թերզարգացվածության մի մասն էր հանդիսանում, ինչպես նաև քաղաքական կյանքի անկախ երկու տարրերը՝ ինքնուրույն կեցության հարաբերականորեն անկախ երկու տարրերը՝ Իշխանության և սեփականության, քաղաքականության ու տնտեսության մասն խառնուրդը (սիմբիոզը) նշանակում է, որ հասարակական-քաղաքական ամբողջությունը դեռևս չի հասունացել մինչև քաղաքացիական հասարակության և իրավական պետության տարրերակ:

«Իշխանություն-սեփականություն» ելակետային հիմքի ֆեոդալական բնույթը ֆեոդալականորեն խեղաթյուրում է թե՛ իշխանությունը, թե՛ սեփականությունը, թե՛ դրանց միջև եղած հարաբերությունները:

Ձևավորվող պետականության այսպիսի ծանրաբեռնվածությունը սեփականությամբ (բոլոր մակարդակներում՝ համադաշնային, տարածքային, տեղական) սանձազերծում է դեպի անկախացում և երկրի ֆեոդալական մասնատվածություն տանող հզոր ու երկարաժամկետ կենտրոնախույս միտումը: *Ռուսաստանում միասնական պետական ինքնիշխանության հաստատմանը խոչընդոտում է հենց ամբողջությամբ Դաշնության և նրա սուբյեկտների ձեռքին գտնվող պետական սեփականությունը: Պետություն-սեփականատերը խանգարում է պետություն-իշխանությանը հաստատվելու որպես ինքնիշխան կազմակերպություն, քանի որ ինքնիշխանությունն իր բնույթով իշխանության կազմակերպություն է, ոչ թե՛ սեփականատեր: Եվ հենց դրանում կարելի է տեսնել մի յուրահատուկ հատուցում հանրային հարստության (մախկին սոցիալիստական սեփականության) անիրավաչափ ապապետականացման և դրա սեփականաշնորհման համար հոգուտ հասարակության նեղ շերտի՝ մնացած բոլոր քաղաքացիների հաշվին, որոնք հավասար իրավունք ունեն սոցիալիստական ժառանգության միասնական բաժնի նկատմամբ, այսինքն՝ քաղաքացիական սեփականության նկատմամբ հավասար իրավունք: Հետամբողջատիրական պետությունը, փոխանակ դառնալու ժողովրդի ընդհանուր գործը, իրեն խեղաթյուրող սեփականության շնորհիվ դարձել է դաշնային և տարածքային բյուրոկրատիայի, կենտրոնում ու տեղերում նոր քաղաքական-տնտեսական ընտրանու մասնավոր գործը:*

Սակայն, եթե անհնար է պարզապես վերադառնալ բուրժուական իրավունքին և մասնավոր սեփականությանը, ապա սոցիալիզմից ընդհանրապես դեպի ինչպիսի՞ իրավունքի կամ ի՞նչ սեփականության է հնարավոր գնալ:

Այս հարցը կարելի է ձևակերպել մահ այլ կերպ: *Հնարավո՞ր է արդյոք այնպիսի իրավունք, որը ճանաչի համընդհանուր ձևական հավասար*

*րության սկզբունքը (այսինքն՝ ամեն մի իրավունքի, ընդհանրապես իրավունքի անհրաժեշտ սկզբունքը), որը, միաժամանակ, չլինի բուրժուական իրավունք: Այդ հարցի հետ անխազելիորեն կապված է մեկ այլ հարց՝ հնարավո՞ր է արդյոք արատադրության միջոցների նկատմամբ այնպիսի անհատականացված սեփականություն, որը, միաժամանակ, չլինի մասնավոր սեփականություն:*

Այդ հարցերի դրական պատասխանները կնշանակեն *կապիտալիզմի՝ որպես «պատմության ավարտի»*, մասին պատկերացումների հաղթահարում, *ազատության, իրավունքի, պետության, սեփականության և այլնի հետբուրժուական առաջընթացի* սկզբունքային հնարավորություն (համապատասխան օրյեկտիվ պայմանների առկայությամբ) ու, միաժամանակ, *պոստսոցիալիստական կարգի համար ոչ բուրժուական կողմնորոշիչներ և հեռանկարներ:*

## **2. Զաղաքացիական սեփականությունը, ցիվիլիտար իրավունքը, ցիվիլիզմը**

Կոմունիզմի (և կապիտալիզմի կոմունիստական բացասման)՝ որպես գաղափարի և պրակտիկայի (XX դարի իրական սոցիալիզմի տեսքով), բնույթն այնպիսին է, որ դա իրականում (սոցիալ-պատմականորեն) կարելի է հաղթահարել ու թողնել անցյալում միայն *կոմունիստական պահանջների, դրանց բանական տեսքով, համարժեք, տնտեսական-իրավական բավարարմամբ*, որոնք համաձայնեցված են քաղաքակրթության հիմնադիր արժեքների, ինստիտուտների, ձևերի և նորմերի հետ: Հետևաբար, խոսքը *պահանջների բավարարման ու, միաժամանակ, կոմունիզմի հաղթահարման իրավական ձևի*, ոչ իրավական սոցիալիզմից պոստսոցիալիստական իրավական կարգին անցնելու իրավական եղանակի մասին է: Իրավական մոտեցման էությունը և նորույթն այստեղ նրանում է, որ *իրավական հավասարության համընդհանուր սկզբունքը պետք է առաջին հերթին հետևողականորեն կիրառվի սոցիալիստական սեփականության նկատմամբ՝ սոցիալիզմի այդ հիմնական արդյունքն արտադրության միջոցների նկատմամբ իսկական անհատականացված սեփականության վերափոխելու գործընթացում:* Բացասումը, պատմության արդյունքների հաշվառմամբ, անհրաժեշտ է վերափոխել ավելի բարձր մակարդակի հաստատման:

*Իրավունքի դիրքերից բոլոր քաղաքացիները հավասար չափով և հավասար իրավունքով սոցիալիստական սեփականության ժառանգներ են:* Եվ յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ պետք է ճանաչվի ամ-

բողջ ապացոցիալիզացված սեփականության մեջ բոլոր քաղաքացիների համար հավասար բաժնի իրավունքը: Դրանով իսկ սոցիալիստական սեփականությունը պետք է վերափոխվի անհատականացված քաղաքացիական սեփականության, և յուրաքանչյուր քաղաքացի կդառնա բոլորի համար հավասար սեփականության նվազագույնի նկատմամբ իրական սուբյեկտիվ իրավունքի տեր: Այդ նոր իրավունքից բացի և, դրանից ավելի, յուրաքանչյուրն իրավունք կունենա՝ առանց առավելագույնի սահմանափակման, ցանկացած այլ սեփականության նկատմամբ:

Նման քաղաքացիական (ցիվիլ, ցիվիլիտար) սեփականությամբ նոր պոստսոցիալիստական հասարակարգը, ի տարբերություն կապիտալիզմի և սոցիալիզմի, մենք անվանում ենք *ցիվիլիզմ, ցիվիլիտար հասարակարգ* (լատիներեն *civis* - քաղաքացի բառից)<sup>1</sup>:

Անցումը սոցիալիստական սեփականությունից քաղաքացիական սեփականության, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառելով, կարելի է արտահայտել *հեռեկալ իրավաբանական-նորմատիվ (կամ, ավելի ճիշտ, իրավաբանական-նորմազրաֆիկ) ձևով*:

Ռուսաստանի Դաշնությունում ամբողջ նախկին սոցիալիստական սեփականությունն անվճար անհատականացվում է հոգուա բոլոր քաղաքացիների, քաղաքացիական սեփականության նկատմամբ յուրաքանչյուր քաղաքացու հավասար իրավունքի՝ վերափոխված սոցիալիստական ամբողջ սեփականությունից հավասար բաժնի, սկզբունքով: Նախկին սոցիալիստական սեփականության բոլոր օբյեկտները վերածվում են բոլոր քաղաքացիների՝ որպես տվյալ ընդհանուր սեփականության շրջանակներում սեփականության հավասար անհատականացված բաժինների տերերի, ընդհանուր սեփականության իրավունքի օբյեկտներ: Բոլոր քաղաքացիների քաղաքացիական սեփականությունը, առանց բացառության, միատեսակ է: Բոլոր քաղաքացիների ընդհանուր սեփականությունում յուրաքանչյուր քաղաքացի-սեփականատիրոջ ունեցած բաժնի քվաքանական չափը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների թվի, բնակչության աճի միտումների և քաղաքացիական սեփականության

---

<sup>1</sup>Մանրանան տես՝ *Нерсесянц В.С. Закономерности становления и развития социалистической собственности // Вестник АН СССР. 1989. N 9. Ов же Концепция гражданской собственности // Советское государство и право. 1989. N 10. Ов же. Прогресс равенства и будущее социализма // Вопросы философии. 1990. N 3. Ов же. Наш путь к праву. От социализма к цивилизму. М., 1992. Ов же. Продолжение истории: от социализма - к цивилизму // Вопросы философии. 1993. N 4. Ов же. Право - математика свободы. М., 1996. Ов же. Философия права. М., 1997. Ов же. Национальная идея России во всемирно-историческом прогрессе равенства, свободы и справедливости. Манифест о цивилизме. М., 2000*



փականության պահուստային ֆոնդի անհրաժեշտության հաշվառմամբ սահմանվում է (օրինակ՝ հնգամյա ժամկետի սահմաններում) բոլոր քաղաքացիների սեփականության 1/160 000 000 բաժնի տեսքով: Յուրաքանչյուր քաղաքացու՝ որպես քաղաքացիական սեփականության սուբյեկտի, իրավաբանական կարգավիճակը և տիտղոսը պաշտոնապես հաստատվում է սեփականության իրավունքի մասին պատշաճ իրավական վաստաբոլով: *Քաղաքացիական սեփականության նկատմամբ իրավունքը կրում է անձնական, ցմահ և անօտարելի բնույթ*: Որևէ քաղաքացի չի կարող զրկվել քաղաքացիական սեփականության նկատմամբ իրավունքից: Առանձին քաղաքացիների քաղաքացիական սեփականությունը չի կարող առգրավվել բոլոր քաղաքացիների ընդհանուր սեփականությունից: Քաղաքացիական սեփականության նկատմամբ իրավունքը չի կարող լիովին կամ մասնակիորեն փոխանցվել այլ անձի: Յուրաքանչյուր քաղաքացու համար բացվում է քաղաքացիական սեփականության անձնական հաշիվ, որի վրա կենտրոնացված կարգով մուտք է արվում ընդհանուր սեփականության օբյեկտների շուկայական-տնտեսական օգտագործման բոլոր ձևերի արդյունքում ստացված եկամուտների՝ բոլորի համար հավասար բաժինը:

*Պետությունն իրավունք ունի ապաստցիալիզացված սեփականության օբյեկտներից ստանալ միայն հարկեր, ոչ թե եկամուտներ*: Պետության լիակատար սահմանազատումը նախկին սոցիալիստական սեփականությունից բնակչության վերջնական ապաճորտացման, ազատ սեփականատերերի և ազատ շուկայի, իսկական տնտեսական ու իրավական հարաբերությունների, քաղաքական իշխանություններից անկախ քաղաքացիական հասարակության և դրա հիման վրա իրավական պետության ձևավորման անհրաժեշտ պայմանն է: *Քաղաքացիական սեփականությամբ հասարակությունը պետք է ունենա նաև իր էությանը, նպատակներին և շահերին համապատասխանող պետություն*: Ոչ թե հասարակությունը պետք է հարմարվի պետությանը, այլ պետությունը՝ հասարակությանը և նրա անդամների պահանջմունքներին:

Քանի որ ընդհանուր սեփականությունում յուրաքանչյուր քաղաքացու բաժնի թվաբանական չափը կախված է բոլոր քաղաքացիների ընդհանուր թվից, ուստի, Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառելիս, այսօր այդ չափը հավասար է մոտավորապես ընդհանուր սեփականության 1/150 000 000 բաժնի: Քաղաքացիների թվի ավելացումը 10 միլիոնով թելադրված է այդ բաժնի կայունության ապահովման (ասենք՝ հինգ տարվա ընթացքում) և անհրաժեշտ պահուստային ֆոնդի ձևավորման խնդիրներով: Ինչ խոսք, բաժնի չափը կարելի է սահմանել նաև ա-

վելի կարճ ժամկետով (ասենք՝ մեկ տարի), սակայն այդ դեպքում բաժնի չափը կլինի, իհարկե, մեծ, իսկ պահուստային ֆոնդինը՝ փոքր:

Իրավաբանորեն ասած՝ քաղաքացիական սեփականությունը բոլոր քաղաքացիների ընդհանուր սեփականությունում յուրաքանչյուր սեփականատիրոջ *իդեալական բաժինն է*: Թե ինչպիսի՞ն է նման իդեալական բաժնի իրական բովանդակությունը, ցույց կտա միայն շուկան՝ այդ ընդհանուր սեփականության օբյեկտներն ապրանքային-դրամական հարաբերությունների մեջ ներառելով: Փաստորեն քաղաքացիական սեփականության տերը կստանա միայն իր իդեալական բաժնին համապատասխանող ընդհանուր սեփականության օբյեկտներից ստացվող դրամական եկամուտների մասը: Յուրաքանչյուր քաղաքացու հատուկ հաշվի վրա մուտք արվող այդ դրամական միջոցներն իրավաբանորեն կարելի է անվանել քաղաքացիական սեփականության տիրոջ *իրական բաժին*, որը նա կարող է սնօրինել իր հայեցողությամբ: Իսկ հենց քաղաքացիական սեփականությունը՝ իդեալական բաժնի սևաքով, իր բնույթով չի կարող առգրավվել ընդհանուր սեփականությունից կամ դառնալ որևէ գործարքի առարկա: Դա ունի անձնական, որոշակի, անօտարելի բնույթ և յուրաքանչյուր քաղաքացու պատկանում է ծննդից մինչև մահը: Ապագա նոր քաղաքացիները (որոնք ծնվում կամ քաղաքացիություն են ձեռք բերում այլ հիմքերով), ինչպես և բոլոր նախկին քաղաքացիները, հավասար իրավունք կունենան հավասար քաղաքացիական սեփականության նկատմամբ:

Սեփականության նկատմամբ հավասարությունը սահմանափակված է միայն նախկինում սոցիալականացված արտադրության միջոցների շրջանակներում և հնարավոր է միայն որպես հավասար քաղաքացիական սեփականության նկատմամբ իրավունք: Հետևաբար, հավասար քաղաքացիական սեփականության հայեցակարգում խոսքը հենց *ապասոցիալականացված սեփականության մեջ հավասար բաժնի նկատմամբ յուրաքանչյուրի իրավունքի ճանաչման ու ամրապնդման, ոչ թե սոցիալիստական սեփականության բուն օբյեկտները քաղաքացիների մեջ հավասար չափով գտեհիկ ֆիզիկական բաժանման մասին է*, որը բացի այլ պատճառներից սկզբունքորեն անհնար է, քանի որ հավասարությունն ընդհանրապես (ներառյալ նաև սեփականության հարաբերություններում) հնարավոր է միայն իրավական ձևով:

Քաղաքացիական սեփականության ճանաչումից հետո սկզբունքորեն կարող են վճարովի մասնավորեցման թույլատրվել քաղաքացիների ընդհանուր սեփականության բոլոր օբյեկտները (ներառյալ՝ նաև հողը), քաղաքացիների համագրային նշանակություն ունեցող օբյեկտների: Ընդ

որում, շրջանառության մեջ թույլատրված օբյեկտների որոշակի մասը (օրինակ՝ հողի, օգտակար հանածոների և այլնի մի մասը) պետք է մնա քաղաքացիների ընդհանուր սեփականությունում, այսինքն՝ չվաճառվի, այլ, ասենք, հանձնվի վարձակալության և այլն: Այլ կերպ՝ բոլոր քաղաքացիների ընդհանուր սեփականության ներքո պետք է մնա առավել արժեքավոր օբյեկտների որոշակի մասը, որն անհրաժեշտ և բավարար է քաղաքացիական սեփականության երակետային կառույցի տնտեսապես արդյունավետ կենսագոյության համար:

Քաղաքացիական սեփականության նվազագույնից վեր թույլատրվում են սեփականության բոլոր մյուս տեսակները, այնպես որ ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են իրենց հնարավորությունների չափով ու առանց որևէ սահմանափակման, շուկայի կանոններով, որպես սեփականություն ձեռք բերել ապրանքային-դրամական շրջանառությունում զանվող ցանկացած օբյեկտ:

Քաղաքացիական սեփականությունից վեր թույլատրվող սեփականության այդ բոլոր տեսակները պարզության համար կարելի էր անվանել մասնավոր սեփականություն (անհատական, խմբային և այլն), սակայն, խստիվ սոցիալ-տնտեսական իմաստով դա մասնավոր սեփականություն չէ, ճիշտ այնպես, ինչպես նաև քաղաքացիական սեփականության ճանաչումից հետո «մասնավորեցումը» սկզբունքորեն տարբերվում է ներկայիս մասնավորեցումից (այսինքն՝ մասնավոր սեփականության ստեղծումից), որն իրականացվել է մինչև քաղաքացիական սեփականության ճանաչումը՝ առանց դրա ճանաչման: Բանն այն է, որ մասնավոր սեփականությունը (սկսած անտիկից մինչև առավել զարգացածը՝ բուրժուականը) ենթադրում է ոչ սեփականատերերի առկայություն, հասարակության բաժանում սեփականատերերի և ոչ սեփականատերերի: Բոլորին քաղաքացիական սեփականությամբ օժտելն արմատապես փոխում է սեփականության բոլոր հարաբերությունները և հասարակարգի բուն տիպը. մի բան է հակադրությունը սեփականատերերի և ոչ սեփականատերերի միջև, և միանգամայն այլ բան են՝ սեփականության նվազագույնի նկատմամբ յուրաքանչյուրի անօտարելի իրավունքի պայմաններում ավելի մեծ և ավելի փոքր սեփականության տերերի միջև հարաբերությունները:

Քաղաքացիական սեփականության նկատմամբ իրավունքը ոչ թե սովորական ձևական իրավունք է անհատի վերացական իրավունակություն (բուրժուական իրավունքի ոգով) ունենալու (կամ չունենալու) արտադրության միջոցների նկատմամբ սեփականություն, այլ իրական սե-

*փակակնության նկատմամբ արդեն իսկ ձեռքբերված, առկա և անօտարելի սուրբեկտիվ իրավունք:*

Այսպիսով, *ցիվիլիսար իրավունքը նոր հնարորժուական և պոստսոցիալիստական իրավակազմավորում է: Դա պահպանում է ցանկացած (ներառյալ՝ բուրժուական) իրավունքի սկզբունքը, այսինքն՝ ձևական հավասարության սկզբունքը և, միաժամանակ, բովանդակալից լրացնում ու հարստացնում է որակապես նոր պահով՝ յուրաքանչյուրի հավասար իրավունքով բոլորի համար միատեսակ սեփականության նվազագույնի նկատմամբ:*

Ինչպես քաղաքացիական սեփականությունը, դա իսկական, իրավաբանորեն անհատականացված սեփականություն է արտադրության միջոցների նկատմամբ, որն արդեն բուրժուական մասնավոր սեփականություն չէ՝ քաղաքացիական սեփականության նկատմամբ իրավունքն իսկական իրավունք է, սակայն՝ ոչ բուրժուական իրավունք: *Այսպիսով, ցիվիլիսար իրավունքն իր բովանդակությամբ և զարգացվածության մակարդակով վեր է կանգնած իրավունքի նախորդ տիպերից ու, հետևաբար, իրավական ձևով մարմնավորում է մարդկանց ազատության ավելի մեծ չափ և արտահայտում է մարդկանց հարաբերություններում ազատության պատմական առաջընթացի ավելի բարձր աստիճան:*

Կարելի է կարծել, որ ազատության տեսանելի հետագա առաջընթացը պետք է իրականացվի ձևական-իրավական հավասարության հիմնադիր սկզբունքը նոր անօտարելի սուրբեկտիվ իրավունքներով հարստացնելու և լրացնելու *ցիվիլիսար մոդելով:*

### **3. Ցիվիլիզմի տեղն ազատության և իրավունքի պատմական առաջընթացում**

Սոցիալիզմից ցիվիլիզմին անցման օբյեկտիվ-պատմական հնարավորության համատեքստում իրականում կազմավորված սոցիալիզմի վերափոխման բոլոր մնացած տարբերակներն անխուսափելիորեն հանդես են գալիս որպես պատմական առաջընթացի վեկտորից կատարված շեղումներ և, այդ իմաստով, պատմականորեն հետադիմական են, որպես անցյալի պատմական ջանքերի իմաստազրկում ու դրա արդյունքներից օգտվելու անկարողություն, դրանք փորձ են, մնալով պատմության սրի ծայրին, շարունակել դա, մի խոսքով, դուրս գալ պատմությունից, անցնել կենսաբոլշակի և հանգստի:

*Ցիվիլիզմի հայեցակարգը ցույց է տալիս, որ սոցիալիզմը պատմական սխալ չէ, և ոչ էլ զուր տեղը վատնած ժամանակ, որ մեր նախորդնե-*

րի ու հայրենակիցների մի քանի սերնդի աննախադեպ զոհերն իզուր չեն անցել, որ *սոցիալիզմի ժամանակ առաջին անգամ (սոցիալիստական սեփականության տեսքով) նախադրյալներ են ստեղծվել համամարդկային քաղաքակրթության զարգացման ավելի բարձր, ավելի արդարացի, ավելի մարդասիրական աստիճանի անցնելու համար:*

Քաղաքացիական սեփականության գաղափարը նախորդ ամբողջ սոցիալիզմից արված գլխավոր եզրահանգումն է: «Փաստացի հավասարության» կոմունիստական պահանջը մերժում է ընդհանուր քաղաքակրթական գործընթացի արժեքները և նվաճումները: Քաղաքացիական սեփականությունը բուն քաղաքակրթական կատեգորիաներում այդ ավերիչ պահանջների բավարարման պատմականորեն նախատեսված ձևն է, միաժամանակ, դրանց հաղթահարումը՝ սեփականության իրավունքի ձևով: Ընդ որում, քաղաքակրթությունը զարգանում է այն բանի շնորհիվ, որ հարստանում է *ազատության նոր ձևակազմավորմամբ՝ քաղաքացիական սեփականության նկատմամբ յուրաքանչյուրի անօտարելի իրավունքով:*

*Ցիվիլիզմի հայեցակարգը կարգավորիչ ներուժ ունի նաև կապիտալիզմի համար:* Ցիվիլիզմի գաղափարի (*նոր կատեգորիկ իմպերատիվ*<sup>1</sup> տեսքով) այդ կարգավորիչ-կողմնորոշիչ նշանակությունը կարելի է ընդհանուր տեսքով ձևակերպել այսպես. կապիտալիզմից դեպի ցիվիլիզմ՝ շրջանցելով սոցիալիզմը: Ավելի կոնկրետ դա նշանակում է *յուրաքանչյուրին սալ անօտարելի իրավունք քաղաքացիական (ցիվիլիտար) սեփականության նկատմամբ:*

Պոստսոցիալիստական ցիվիլիզմի հայեցակարգն արդեն իսկ պարունակում է *ժողովրդական զանգվածների կոմունիստական պահանջների համարժեք իրավական պատասխանը:* Այդ պատասխանից կարող է և ստիպված է օգուվել նաև կապիտալիստական հասարակությունը, որպեսզի խուսափի իրական սոցիալիզմի տառապանքներից: Մակայն դրա համար աղքատներին մատուցվող սոցիալական ծառայությունները և հօգուտ ոչ սեփականատերերի, այսպես կոչված, «շվեդական սոցիալիզմը» բավարար չեն, անհրաժեշտ է յուրաքանչյուրին օժտել արտադրության միջոցների նկատմամբ սեփականության բավարար նվազագույնի՝ բոլորի ընդհանուր սեփականության շրջանակներում անհա-

---

<sup>1</sup> *Կանոնի մոտ*, որի հասկացությունը մենք օգտագործում ենք, անշուշտ բացակայում է հավասար քաղաքացիական սեփականության գաղափարը, որի ի հայտ գալը պատմականորեն և տրամաբանորեն հնարավոր է միայն սոցիալիզմից հետո: Դա շատ լավ ցուցադրում է նրա *կատեգորիկ իմպերատիվի, առավելագույնի իրական բովանդակությունը, սպորտսեփորիզմը*, որը սահմանափակված է բուրժուական իրավունքի և մասնավոր սեփականության սոցիալ-պատմական շրջանակներով:

տակաճորեն որոշված հավասար բաժնի նկատմամբ անօտարելի իրավունքով: Հասկանալի է, որ այդ նվազագույնի և բոլոր քաղաքացիների ընդհանուր սեփականության չափը կախված կլինի համապատասխան հասարակության մեջ ուժերի, հավակնությունների ու շահերի հարաբերակցությունից, դրա հարստության աստիճանից, բնակչության կենսամակարդակից ու մի շարք այլ գործոններից, որոնք իրենց հանրագումարում կորոշեն *քաղաքացիական սեփականության մասին* համապատասխան *«հասարակական պայմանագրի»* կոնկրետ բովանդակությունը:

*Պոստսոցիալիստական ցիվիլիզմը և պոստկապիտալիստական ցիվիլիզմը*, դրանց միջև եղած բոլոր տարբերություններով հանդերձ, *շնորհիվ իրենց միասնական հիմքի՝ քաղաքացիական սեփականության նկատմամբ յուրաքանչյուրի անօտարելի իրավունքի, օժտված են սկզբունքային միասնությամբ և տիպաբանական ընդհանրությամբ*: Միայն այսպիսի սկզբունքորեն նոր հիմքի վրա կարող է հաղթահարվել և հանվել կոմունիզմի ու կապիտալիզմի միջև հակադրությունը: Կոմունիզմը և կապիտալիզմը կարող են հանդիպել ու հաշտվել միայն ցիվիլիզմի, այսինքն՝ ապագայի սկզբունքորեն նոր հասարակարգի հիման վրա ու պայմաններում: Դրանով իսկ ցիվիլիզմի հայեցակարգը ցուցադրում է *կապիտալիզմի և սոցիալիզմի միջև կոնվերգենցիայի մասին պատկերացումների սխալականությունն ու պատրանքայնությունը*: Իրականում խոսքը ոչ թե կապիտալիզմի և սոցիալիզմի կոնվերգենցիայի, այլ թե *սոցիալիզմի, թե՛ կապիտալիզմի հաղթահարման, թե՛ սոցիալիզմից, թե՛ կապիտալիզմից ցիվիլիզմին անցնելու մասին* է:

*Սոցիալիզմը որպես կապիտալիզմի և ցիվիլիզմի միջև անցումային հասարակարգ՝ ահա այդպիսին է համաշխարհային պատմության դիալեկտիկան* ու այն համաշխարհային-պատմական համատեքստը, որի շրջանակներում միայն կարելի է համարժեք պարզել XX դարի ռուսական պատմության կողմնորոշիչները, հասկանալ, թե որտեղի՞ց և ու՞ր ենք մենք գնում, ի՞նչ ապագա է մեզ սպասում, որո՞նք են իրավունքին, տնտեսապես, իրավաբանորեն ու բարոյապես ազատ անհատին, քաղաքացիական հասարակությանը, ապրանքա-շուկայական հարաբերություններին, իրավական պետությանը մեր անցման ճախաղդյալներն ու պայմանները և, վերջապես, ինչպիսի՞ն է մեր իրական շարժման շեղումը դեպի ցիվիլիզմ գնալու մեր օբյեկտիվ հնարավորություններից:

Ցիվիլիզմը որպես XX դարի ռուսական փորձի գաղափարական-տեսական հանրագումար (Ռուսաստանի և ռուսական պատմության ճակատագրին իր անմիջական մասնակցությամբ) այն բանի ժամանակա-

կից արտահայտություն է (քաղաքակրթության համար համանշանակ ազատության և իրավունքի համաշխարհային-պատմական առաջընթացի կատեգորիաներով), որն ավանդաբար անվանվում է *ռուսական ազգային գաղափար*։

Ռուսուսոցիալիստական ցիվիլիզմի հայեցակարգում Ռուսաստանի անցյալը և ապագան, որպես միասնական առաջադիմորեն զարգացող պատմական գործընթացի աստիճաններ, ձեռք են բերում փոխկապակցված ու իմաստավորված բնույթ։ Միայն դրա շնորհիվ կարելի է հայեցակարգորեն և ոչ թե մերկասյարանոց պնդել, որ Ռուսաստանն ունի ոչ միայն անցյալ, այլ նաև՝ ապագա, որն ունի սեփական շարունակությունն ունեցող *իր պատմությունը*։ *Հենց Ռուսաստանում է կատարվել համամարդկային կոմունիստական գաղափարների և գործնական ստուգման հետ կապված համաշխարհային պատմության ամբողջ սևագործ աշխատանքը*։ Պատասխանը գտնվել է, ցիվիլիզմ՝ քաղաքացիական սեփականության նկատմամբ յուրաքանչյուրի անօտարելի իրավունքով։ Դա է հենց Ռուսաստանի ազգային գաղափարն այսօր և ապագայում, ռուսական ներդրումը մարդկանց ազատության ու հավասարության համաշխարհային պատմական առաջընթացում։

Համաշխարհային պատմության և ազատության, իրավունքի ու արդարության համաշխարհային պատմական առաջընթացի դիալեկտիկական շարունակվում է։ Այսպիսով, ցիվիլիզմի հայեցակարգը ցուցադրում է դեպի հետ՝ սոցիալիզմին կամ կապիտալիզմին վերադառնալու սխալականությունը։

## Բաժին IV

### Պոզիտիվ իրավունքի վարդապետությունը և դոգման հիմնական հասկացություններն ու հայեցակարգերը

#### Գլուխ 1. Իրավունքի վարդապետությունը և դոգման հասկացությունն ու տիպերը

##### 1. Իրավունքի վարդապետության և դոգմայի հասկացությունը

*Իրավունքի դոգմա* ասելով՝ ավանդաբար հասկանում են իրավագիտության մեջ (այս կամ այն իրավաբանական դպրոցի իրավական վարդապետությունում, ուղղությունում) բոլորի կողմից ընդունված պոզիտիվ իրավունքի, դրա սահմանումների և գործողությունների մասին ելակետային հիմնադրույթները:

Իրավունքի դոգմայի մասին ուսմունքը (դրա ընդհանուր հայեցակարգի ամբողջ համակարգի և առանձին դրույթների մշակումն ու հիմնավորումը) ընդունված է անվանել *իրավունքի վարդապետություն* (պոզիտիվ իրավունքի վարդապետություն): «Իրավունքի վարդապետությունը» հավաքական հասկացություն է՝ իրավունքի դոգմայի հիմքը կազմող պոզիտիվ իրավունքի մասին իրավաբանական-գիտական մեկնաբանությունների և դատողությունների ամբողջ հանրագումարը ցույց տալու համար:

Իրավունքի վարդապետությունը մշակում և հիմնավորում է պոզիտիվ իրավունքի (դրա աղբյուրների, համակարգի ու կառուցվածքի, դրա գործողության և կիրառման, խախտման ու վերականգնման և այլն) մեկնաբանման որոշակի իրավաբանական-ինացաբանական ձևեր (սկզբունքներ, հասկացություններ, սերմիններ, եղանակներ, միջոցներ, հնարքներ և այլն): Պոզիտիվ իրավունքի մեկնաբանման այսպիսի իրավաբանական-ինացաբանական ձևերի ամբողջությունն է, որը կազմում է իրավունքի դոգմայի բովանդակությունը:

Այդ իրավաբանական-ինացաբանական ձևերի օգնությամբ իրավունքի վարդապետությունը տրամաբանորեն կարգավորում է գործող իրավունքի հակասական և քառային էմպիրիկ նյութը պոզիտիվ իրավունքի ամբողջական ու ներքնապես համաձայնեցված համակարգի



ձևով (համապատասխան կառուցվածքային բաղադրատարրերով, դրանց փոխադարձ կապերով և այլն): Այսպիսով, վարդապետությունն ստեղծում է պոզիտիվ իրավունքի *իրավաբանական-տրամաբանական (մտավոր) մոդելը* (տրամաբանական-ստեսական կառուցվածքը, գծապատկերը, եղանակը և մեթոդը) ինչպես պոզիտիվ իրավունքի պատշաճ վարդապետական հասկացողության ու մեկնաբանման, այնպես էլ իրավական իրականության մեջ դրա փաստացի սահմանումների և գործողությունների համար:

Պոզիտիվ իրավունքի այսպիսի մոդելը ձևակերպվում է առանձնահատուկ *վարդապետական-իրավաբանական* բառարանի, այսինքն՝ տրամաբանորեն փոխկապակցված հատուկ հասկացությունների, կատեգորիաների, տերմինների, բառային կառույցների, սահմանումների և այլնի որոշակի համակարգի օգնությամբ:

Երկար ժամանակ իրավունքի վարդապետությունը (այսպես կոչված՝ «իրավաբանների իրավունքը») իրավունքի սարքեր համակարգերում (օրինակ՝ հոմեոտական իրավունքի, ռոմանո-գերմանական իրավունքի, մուսուլմանական իրավունքի համակարգերում) գործող (պոզիտիվ) իրավունքի հիմնական, իսկ մի շարք դեպքերում նաև գլխավոր աղբյուրներից մեկն էր: Եվ այսօր էլ իրավաբանական վարդապետությունը շարունակում է էական դեր խաղալ պոզիտիվ իրավունքի սահմանման և կիրառման ամբողջ գործընթացում, իսկ իրավունքի որոշ համակարգերում դա նաև պաշտոնապես ճանաչվում է որպես գործող իրավունքի աղբյուր:

Իրավունքի վարդապետությունը պոզիտիվ իրավունքի իր իրավաբանական-տրամաբանական մեկնաբանմամբ ամբողջությամբ ոչ միայն արտացոլում է, այլ նաև արտահայտում և սահմանում է այդ իրավունքը, այսինքն՝ ակտիվորեն համամասնակցում է դրա ստեղծման ու իրականացման գործընթացին: Առանց իրավական վարդապետության չկա նաև պոզիտիվ իրավունքի որոշակի համակարգ և, անգամ այնտեղ, որտեղ իրավական վարդապետությունը պաշտոնապես չի համարվում գործող իրավունքի աղբյուր, դրա դրույթները փաստորեն առկա են պոզիտիվ իրավունքի բովանդակության մեջ, դրա գործողության ու կիրառման բոլոր ձևերում:

Այստեղից բխում է նաև իրավունքի դոգմայի՝ որպես պոզիտիվ իրավունքի մասին բոլորի համար ընդունված վարդապետական դրույթների հանրագումարի էական նշանակությունը: Այսպիսի «համընդհանրություն» ասելով նկատի է առնվում ավանդական բանաձևը՝ «communis opinio doctorum» («վարդապետների ընդհանուր կարծիքը», այսինքն՝ ու-

սուցիչների, պրոֆեսորների, գիտնական- իրավաբանների ընդհանուր կարծիքը): Ընդ որում, նկատի է առնվում «ընդհանուր կարծիքը» (համաձայնությունը) վարդապետության էության և դրա հիմնական դրույթների վերաբերյալ՝ բոլոր այլ տարակարծությունների, մոտեցումների տարբերությունների առկայությամբ:

Այս կամ այն իրավական վարդապետությունը (և իրավունքի համապատասխան դոգման) մշակվում է գործող իրավունքի կոնկրետ համակարգի, կիրառմամբ ու արսուացում է դրան հատուկ առանձնահատկությունները: Այստեղից էլ զանազան իրավական վարդապետությունների (և իրավունքի դոգմաների) տարբերությունները, որոնցից յուրաքանչյուրը նկատի ունի առաջին հերթին իրենով մեկնաբանվող իրավունքի որոշակի համակարգ:

Իրավունքի որոշ ժամանակակից ազգային համակարգերի իրավական վարդապետությունները (և իրավունքի համապատասխան դոգմաները) շատ կողմնորոշ մույնական են (իրավունքի այդ համակարգերի ընդհանուր պատմական արմատների, դրանց էվոլյուցիայի համամասն պայմանների ուժով և այլն): Այսպիսի վարդապետական միասնությունն իրավունքի մի քանի միասեռ համակարգերը որոշակի խմբում (այսպես կոչված՝ «իրավական ընտանիքում»), օրինակ՝ ռոմանո-գերմանական (մայրցամաքային-եվրոպական) իրավական ընտանիքում, ընդհանուր իրավունքի իրավական ընտանիքում համախմբելու կարևոր չափանիշներից մեկն է:

## 2. Իրավական վարդապետությունների տիպերը

Պոզիտիվ իրավունքի ցանկացած վարդապետություն և պոզիտիվ իրավունքի համապատասխան դոգմա արտահայտում են իրավահասկացողության որոշակի հայեցակարգ, իրավունքի այս կամ այն ընդհանուր հասկացություն:

Պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի հետ կապված հիմնահարցերը հիմնականում մշակել ու շարունակում են մշակել *լեգիստական (պոզիտիվիստական) իրավահասկացողության տարբեր դպրոցների ու ուղղությունների ներկայացուցիչները*: Նրանց ուշադրության կենտրոնում եղել են գործող իրավունքի իրավաբանական դոգմատիկ մեկնաբանման և վերլուծության, դրա աղբյուրների հետազոտման, դրանց պարզաբանման, մեկնաբանման, համակարգման հարցերը:

Իրավական վարդապետության և դոգմայի հիմունքները մշակել են հոռմեական իրավաբանները: Իրավունքի վարդապետության և դոգմայի

հետագա զարգացումը կապված է միջմադարյան իրավաբանների (զրո-սատորնների, ապա նաև իրավունքի մարդասիրական դպրոցի ներկայա-ցուցիչների) գործունեության հետ: Իրավաբանական դոգմատիկայի պատմության մեջ նշանակալի հետք են թողել իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչները: Այսպես, Հ.Հուգոն «իրավաբանական դոգ-մատիկան» դիտարկում էր որպես իրավագիտության երեք բաղադրա-տարրերից մեկը (պոզիտիվ իրավունքի փիլիսոփայության և իրավունքի պատմության հետ միասին): Ընդ որում, «իրավաբանական դոգմատի-կա» ասելով, նա նկատի ուներ պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի համատեղումը: Եվ պոզիտիվիստական դիրքերից «իրավա-բանական դոգմատիկան» նա մեկնաբանում էր որպես «իրավաբանա-կան արհեստ», որի համար բավարար էին գործող իրավունքի աղբյուր-ների մասին էմպիրիկ գիտելիքները: Հետագայում (հասկապես XIX դա-րի 2-րդ կեսին) իրավաբանական դոգմատիկայի հիմնահարցերը կենտ-րոնական տեղ գրավեցին իրավագիտության մեջ՝ ինչպես տեսական, այնպես էլ ճյուղային իրավաբանական գիտություններում:

Իրավունքի իրավաբանական դոգմատիկ մեկնաբանման հունում ձևավորվեց նաև վերլուծական իրավագիտությունը (Դ.Օստին, Շ.Ամոս և ուրիշներ): Այս ուղղության գաղափարներն իրենց հետագա զարգա-ցումն ստացան XX դարի նեոպոզիտիվիստների աշխատություններում (Հ.Բեյզեն, Հ.Հարտ և ուրիշներ): Իրավական վարդապետության և դոգ-մայի առավել հետևողական նեոպոզիտիվիստական հայեցակարգը ներ-կայացված է Հ.Բեյզենի «իրավունքի մասին մարտի ուսմունքում»:

Իրավական վարդապետության և դոգմայի պոզիտիվիստական մշա-կումներն ամբողջությամբ նշանակալի ավանդ ներդրեցին իրավագի-տության զարգացման, դրա հասկացությունների բառարանի ու մեթոդա-բանական զինանոցի հարստացման գործում: Պոզիտիվիստական իրա-վունքի վարդապետության և դոգմայի բնագավառում կատարած իրենց հետազոտություններով նրանք մեծ ազդեցություն թողեցին պոզիտիվ ի-րավունքի աղբյուրների, համակարգի ու կառուցվածքի, դրա մեկնաբան-ման, միասնականության և համակարգման, իրավաստեղծ ու իրավակի-րառ գործունեության պատշաճ ձևերի մասին համապատասխան վար-դապետական դրույթների ոգով գործող իրավունքը ռացիոնալացնելու և կատարելագործելու գործընթացում: Նրանց մշակած գործող իրավունքի իրավաբանական-տեխնիկական կառույցները, վերլուծության եղանակ-ները և հնարքները պահպանում են իրենց իմացաբանական նշանա-կությունն իրավունքի վարդապետական մեկնաբանման բոլոր ուղղու-թյունների ներկայացուցիչների համար:

*Բնական-իրավական մտքի ներկայացուցիչները* շատ աննշան չափով են զբաղվել պոզիտիվ իրավունքի վարդապետական հիմնահարցերով և սակավ հանդիպող բացառություններով (ի դեմս, օրինակ՝ Պավիանյան դպրոցի միջնադարյան իրավաբանների, պոստպոստտորների, Հ.Հրոցիուսի, XX դարի «վերածնված բնական իրավունքի» որոշ ներկայացուցիչների), իրենց դիրքերից չեն մշակել պոզիտիվ իրավունքի մասին որևէ հասուկ ուսմունք: Նրանց հիմնական ուշադրությունը կենտրոնացած է եղել բնական իրավունքի մեկնաբանման և պոզիտիվ իրավունքի բնական-իրավական դիրքերից քննադատության ու ոչ թե պոզիտիվ իրավունքի տեսության հարցերի վրա:

*Լրդի պայմաններում*, իրավաբանական իրավահասկացողության դիրքերից, պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի հիմնահարցերի մշակման անհրաժեշտությունը թելադրվում է արդեն ոչ թե ընդհանուր սեսական նկատառումներով, այլ բուն պոզիտիվ իրավունքում կատարված էական փոփոխություններով, որոնք կապված են շատ երկրների սահմանադրություններում մարդու հիմնական բնական (ի ծնե և անօտարելի) իրավունքների ու ազատությունների ամրագրման հետ: Ընդ որում, խոսքը ոչ միայն այդ բնական իրավունքների և ազատությունների՝ որպես պոզիտիվ իրավունքի ճանաչման, այլ նաև ամբողջ պոզիտիվ իրավունքն այդ բնական իրավունքներին ու ազատություններին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին է: Բացի դրանից այդ սահմանադրությունները ճանաչեցին նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և նորմերը՝ որպես պոզիտիվ իրավունքի իրենց ազգային համակարգի գերապատիվ բաղադրատարրեր:

Սակայն արդի պոզիտիվ իրավունքի իմաստի և բովանդակության այդպիսի արմատական մոդեռնացումը դեռևս իր համարժեք արտացոլումը չի գտել ո՛չ պոզիտիվ իրավունքի ավանդական պոզիտիվիստական վարդապետություններում և դոգմաներում (պաշտոնական սահմանումների նկատմամբ պոզիտիվիստների ակնածանքի առկայությամբ), ո՛չ էլ պոզիտիվ իրավունքի վարդապետական հիմնահարցերի համապատասխան բնական-իրավական մշակումներում (յուսնասուրալիստների կողմից բնական իրավունքի գաղափարների փառաբանմամբ):

*Մեր իրավաբանական գրականության մեջ* (գիտական և ուսումնական) պոզիտիվ իրավունքի վարդապետական հիմնահարցը (ինչպես հիմնականում նաև իրավունքի ամբողջ տեսությունը) ամբողջությամբ լուսաբանվում է ավանդական լեզուական (պոզիտիվիստական) դիրքերից: Գործող պոզիտիվ իրավունքի գերապատիվ մասերի (մարդու ի ծնե և անօտարելի իրավունքների ու ազատությունների, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի) նոր սահմանադրա-

կան ճանաչումն ու ամրագրումը, ըստ էության, դուրս են մնացել պոզիտիվ իրավունքի, դրա աղբյուրների, համակարգի և այլնի մասին լեգիտական վարդապետական պատկերացումներից:

Մինչդեռ ակնհայտ է, որ ժամանակակից ուսական պոզիտիվ իրավունքի ցանկացած վարդապետական մեկնաբանության մեջ պետք է պատշաճ ձևով հաշվի առնվեն նշված սահմանադրական դրույթները, ուրոնց իմաստը *պոզիտիվ իրավունքի երկու նոր գերապատիվ աղբյուրների* ճանաչման մեջ է: Դրանք են՝

1) մարդու ի ծնն և անօտարելի իրավունքներն ու ազատությունները (այսինքն՝ ըստ էության, մարդու բնական իրավունքները):

2) միջազգային իրավունքի և Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը:

Ընդ որում, սահմանադրական դրույթների իմաստով՝ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները ոչ միայն իրավական, յուրաքանչյուր անհատի կողմից արդեն իսկ ձեռք բերված սուբյեկտիվ իրավունքներն են, այլ նաև ելակետային, ընդհանուր-իրավական (չափանիշային-իրավական) նշանակություն ունեն, այնպես որ պոզիտիվ իրավունքի մնացած բոլոր նորմերը պետք է համապատասխանեն (և չպետք է հակասեն, խախտեն) մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին:

*Պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի ազատական-իրավաբանական հայեցակարգի ելակետային հիմքն ու սկզբունքը ձևական հավասարության սկզբունքն է* (որպես համընդհանուր հավասարության, ազատության և արդարության սինթեզի ու եռամիտության չափ), որի նորմատիվ կոնկրետացումը ներկայացված է պոզիտիվ իրավունքի համակարգում, դրա սահմանման, գործողության ու իրականացման բոլոր ձևերում և ընթացակարգերում: Ազատական-իրավաբանական մոտեցման շրջանակներում պոզիտիվ իրավունքի վարդապետությունն ու դոգմա ասելով՝ մենք նկատի ունենք ձևական հավասարության սկզբունքին համապատասխանող պոզիտիվ իրավունքի վարդապետությունն ու դոգման, իրավական օրենքի վարդապետությունը և դոգման:

Ուստի, պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի հիմնահարցերի մեր հետազոտ ամբողջ շարադրանքում ենթադրվում է օրենքի իրավական իմաստի, իրավական բնութագրի (ամբողջությամբ պոզիտիվ իրավունքի, ներառյալ՝ դրա համակարգային-կառուցվածքային բոլոր բաղադրատարրերը և այլն), սահմանման, փոփոխման, գործողության, մեկնաբանման կիրառման բոլոր եղանակները, ձևերը, ընթացակարգերն ու հնարքները:

## Գլուխ 2. Իրավունքի նորմը

### 1. Իրավունքի նորմը որպես պոզիտիվ իրավունքի վարդապետության և դոգմայի հիմնական կատեգորիա

Իրավունքի նորմն իրավունքի բոլոր այն վարդապետությունների (անկախ իրավահասկացողության տիպերի տարբերություններից) հիմնադիր հասկացություններից մեկն է, որոնք իրավունքը մեկնաբանում են նորմատիվորեն, այսինքն՝ իրավունքն ամբողջությամբ հասկանում և սահմանում են նորմի միջոցով, գտնում են, որ իրավունքը, որպես այդպիսին, բաղկացած է նորմներից:

Այն, ինչ ընդունված է անվանել պոզիտիվ իրավունք, փաստորեն, (որպես իրավական էմպիրիկ երևույթ) տարբեր պաշտոնական փաստաթղթերի (օրենքների, որոշումների, հրամանների, դատական նախադեպերի և այլնի) անորոշ բազմությունն է, որոնցում պարունակվում են տարբեր տեսակի համապարտադիր դրույթներ (սահմանումներ, պահանջներ, արգելքներ, տրամադրումներ, ցուցումներ, ամրագրումներ, բնութագրեր, զնախտականներ, պատիժներ, խրախուսանքներ և այլն): Այդ դրույթները տեքստային ձևով արտահայտված են այս կամ այն ընդհանուր բնույթի պաշտոնական փաստաթղթի (օրենքի, որոշման, հրամանի և այլնի) հոդվածների, դրվագների, կետերի, մասերի, բաժինների կամ կոնկրետ դատական վճռի (նախադեպային իրավունքի համակարգերում) տեսքով և այլն:

Այդ ամբողջ փաստացի նյութն ինքն իրեն՝ առանց դրա գիտական իրավաբանական իմաստավորման և վարդապետական մեկնաբանման, ինչպես ամեն մի փաստացի բան, կրում է միանգամայն քառսային, անորոշ ու մասնատված բնույթ:

*Ամբողջությամբ իրավագիտության և, մասնավորապես, իրավական վարդապետության հիմնական խնդիրներից մեկն այդ փաստացի պաշտոնական նյութի գիտական մշակումն է, կարգավորումն ու համակարգումը՝ որպես տարբեր երևույթների որոշակի ձևով համաձայնեցված միասնություն և ամբողջականություն, որոնք իրենց հանրագումարում անվանվում են «պոզիտիվ իրավունք» («գործող իրավունք»):*

Այդ պաշտոնական նյութին ռացիոնալ կարգավորում և դրան համակարգային միասնություն հաղորդելու համար տրամաբանորեն անհրաժեշտ է, որ թե՛ ամբողջությամբ որոնվող համակարգը, թե՛ դրա բաղադրատարրերը կառուցվեն միևնույն կարգավորիչ մոդելով, ունենան միևնույն կարգավորիչ նշանակալի կառուցվածք: Համաձայն իրավուն-

քի վարդապետության և դոգմայի՝ նման միասնական կարգավորիչ մոդելն իրավունքի նորմն է: Ընդ որում, իրավունքի նորմը, որպես վարդապետական իրավաբանական-տրամաբանական կառուցվածք (կարգավորիչ-իրավական մոդել), այնպիսի համակարգ է, որի ներքին կառուցվածքը կազմված է երեք վոլյակապակցված, կարգավորիչ նշանակալի բաղադրատարրերից՝ դիսպոզիցիայից, հիպոթեզից, սանկցիայից:

Իրավունքի նորմի այսպիսի իրավաբանական-տրամաբանական հասկացողության հիման վրա իրավունքի վարդապետությունը համապարտադիր բնույթ կրող պաշտոնական ամբողջ նյութը մեկնաբանում է որպես որոշակի համակարգային-կարգավորիչ ամբողջություն, որպես իրավունքի նորմերի համակարգ ներկայացնող իրավունք:

Իրավունքի՝ որպես իրավունքի նորմերի համակարգի, մեկնաբանումը, ըստ Լուսյան, նշանակում և ընդհանրապես, տրամաբանորեն թույլատրելի է միայն այն պայմանով, որ, առաջին հերթին, բուն իրավունքն ամբողջությամբ (իրավունքը որպես համակարգային նորմատիվ-կարգավորիչ ամբողջություն) ընկալվում է որպես իրավունքի միասնական նորմ և հենց պոզիտիվ-իրավական նորմ (համապատասխան կառուցվածքային բաղադրատարրերով՝ դիսպոզիցիայով, հիպոթեզով և սանկցիայով): Ամբողջությամբ իրավունքի՝ որպես միասնական, (հիմնադիր-եզակետային և, դրա հետ միասին, սահմանային, համընդհանուր, բարձրագույն, գլխավոր, հիմնական) պոզիտիվ-իրավական նորմի հասկացողությունը (և հասկացությունը) տրամաբանորեն նախորդում է իրավունքի առանձին նորմի՝ որպես իրավունքի համակարգային բաղադրատարրերի հասկացողությանը (և հասկացությանը): Ամբողջությամբ իրավունքի՝ որպես իրավունքի միասնական նորմի հասկացությունը կազմում է իրավունքի՝ որպես իրավունքի նորմերի հասկացողության, իրավաբանական-տրամաբանական հիմքը և իր մեջ ներառում է իրավունքի առանձին նորմի՝ որպես այդ համակարգի բաղադրատարրի հասկացությունը:

Ամբողջությամբ իրավունքի այսպիսի առաջնայնության և իրավունքի առանձին կանոնների (նորմերի) հետ դրա հարաբերակցության իմաստով պետք է հասկանալ նաև հռոմեացի իրավաբան Պողոսի դատադրությունը, ըստ որի՝ «Ոչ թե կանոնից (ռեգուլա) է արտաբերվում իրավունքը, այլ գոյություն ունեցող իրավունքից պետք է ստեղծվի կանոնը» (D.50.17.1)<sup>1</sup>:

Սակայն իրավունքի նորմատիվության հետևողական իրավաբանական-տրամաբանական մեկնաբանությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեցող իրավունքից կանոն (նորմ) կարելի է ստեղծել միայն այն դեպ-

<sup>1</sup> См. Перетерский И.С. Дигесты Юстиняна М., 1956. т.2 69

բում, երբ այդ գոյություն ունեցող իրավունքն ինքն էլ հայեցակարգորեն ըմբռնվում է որպես միասնական, ելակետային, հիմնադիր կանոն (նորմ):

*Իրավունքի նորմատիվության այսպիսի հետևողական հայեցակարգային հասկացողությունը, որն իր մեջ ներառում է այդ նորմատիվության ելակետային իրավաբանական-տրամաբանական հիմքի հասկացողությունը, իրավունքի՝ որպես ամբողջությամբ միասնական նորմի հասկացությունը, գոյություն չունի ոչ միայն հռոմեական իրավաբանների, այլև՝ ժամանակակից նորմատիվիստների մոտ: Այս առումով, հատկանշական է Հ.Քելզենի նորմատիվիզմը<sup>1</sup>: Նա, իրավունքը մեկնաբանելով որպես նորմերի համակարգ, պոզիտիվ իրավունքի նորմատիվության հիմքը և «բոլոր նորմերի իրականությունը» սեսնում է ոչ թե բուն պոզիտիվ իրավունքում (ոչ թե նրանում, որ ինքը՝ իրավունքն ամբողջությամբ, իրավունքի միասնական նորմ է), այլ պոզիտիվ իրավունքից դուրս, այսինքն՝ ինչ-որ այնլոզմնային (սրբանսցունդենալ)՝ սրամաբանորեն ենթադրվող «հիմնական նորմում», որը պոզիտիվ իրավունքի նորմ չի համարվում:*

Սակայն պոզիտիվ իրավունքի առանձին նորմերն օժտված են իրավական ուժով և իրավաբանորեն (ոչ թե տրամաբանորեն) պարտադիր են ոչ թե այնլոզմնային-տրամաբանական, այլ հենց պոզիտիվ-իրավական հիմքերով ու բնութագրերով, որոնք արդեն իսկ արտահայտված են իրավական նորմի՝ որպես դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի համակարգային միասնության, առանձնահատուկ իրավաբանական-տրամաբանական կառուցվածքում: Եթե ամբողջությամբ իրավունքն օժտված չլիներ առանձնահատուկ նորմատիվ-իրավական հատկություններով և բնութագրերով (այսինքն՝ եթե իրավունքն ամբողջությամբ օժտված չլիներ պոզիտիվ իրավունքի համապարտադիր նորմի առանձնահատուկ հատկություններով ու բնութագրերով), ապա ընդհանրապես չէր կարելի խոսել նաև իրավունքի իրավաբանորեն պարտադիր (պաշտոնապես պարտադիր) առանձին նորմերի՝ որպես ամբողջությամբ իրավունքի համակարգի բաղադրատարրերի, մասին: Չէ՞ որ ոչ թե իրավունքն է ամբողջությամբ՝ որպես իրավունքի նորմերի համակարգ, իր առանձնահատուկ նորմատիվ-իրավական նշանակությունը և ուժը ձեռք բերում իրավունքի առանձին նորմից, այլ՝ հակառակը:

*Ուստի, իրավունքի նորմատիվությունը, առաջին հերթին, նշանակում է ամբողջությամբ իրավունքի առանձնահատուկ իրավաբանական նորմատիվություն, և միայն այդ ելակետային հիմքի վրա է (ամբողջությամբ*

<sup>1</sup> Стн Чистое учение о праве Ганса Кельзена. Вып. 2. М., 1988. т. 69



պոզիտիվ իրավունքի՝ որպես պոզիտիվ-իրավական նորմի միասնական հիմքի) դրա համակարգային բաղադրատարրերի (պոզիտիվ իրավունքի առանձին նորմերի) իրավաբանական նորմատիվությունը: Եվ հենց իր բնույթի ու իմաստի այսպիսի ընդհանուր իրավական լինելու ուժով իրավունքի նորմը հանդես է գալիս որպես իրավաբանական նշանակություն ունեցող բոլոր երևույթների՝ ինչպես բուն պոզիտիվ իրավունքի առանձին դրույթների, այնպես էլ դրա կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատուկ իրավաբանական-տրամաբանական մեկնաբանման (իմաստավորման, բնութագրման, գնահատման, կարգավորման, համակարգային կազմակերպման և այլնի) ընդհանուր հիմք և միասնական չափանիշ:

Իրավունքի նորմը (որպես հիմնական վարդապետական կատեգորիա և կառույց) հանդես է գալիս որպես ելակետային *իրավաբանական-իմաստային մոդել նաև մնացած բոլոր վարդապետական հասկացությունների և կառույցների համար* (իրավունակություն, իրավահարաբերություն, իրավասություն, իրավախախտում, իրավական ակտ և այլն), որոնք ածանցված են իրավունքի նորմից: Դրանց պոզիտիվ-իրավական բովանդակությունը և նորմատիվ կարգավորիչ նշանակությունը որոշվում է իրավունքի նորմի օգնությամբ՝ դրանց նորմատիվ-իրավական մեկնաբանման ու գնահատման, իրավունքի նորմի հետ դրանց կապի բնույթի բացահայտման, դրանցում նորմատիվ հիմքի ներկայության եղանակի և ձևի որոշման միջոցով, մի խոսքով, դրանց *նորմատիվ-իրավական մոդալությամբ (եղանակավորությամբ):*

Տարբեր հասարակական հարաբերությունների և դրանց պոզիտիվ-իրավական կարգավորման համապատասխան ձևերի նորմատիվ-իրավական մեկնաբանման հիման վրա է իրականացվում ամբողջ իրավասահման, իրավապաշտպան, իրավամեկնաբանական և իրավակիրառ գործունեությունը:

Իրավունքի նորմը ոչ միայն բուն իրավունքի կանոնի (իրավական կարգավորման կանոնի) վարդապետական մեկնաբանությունն է, այլ դրա հետ միասին *պոզիտիվ իրավունքի* (դրա տեքստի, դրույթների և այլն) *նյութի հետ աշխատանքի վարդապետական մեթոդաբանական կանոնը*, «իրավաբանական արհեստի» համապարփակ միջոցը, իրավաբանական վարդապետական ստեղծագործության իմաստային հիմքը և կառուցողական սկզբունքն է:

Սակայն *նորմատիվ-իրավական մեկնաբանությունը*, ինչպես նաև վարդապետությունն ամբողջությամբ, իհարկե, չի փոխում պոզիտիվ իրավունքի բուն նյութը (դրա պաշտոնապես սահմանված ձևը և բովան-

դակությունը), որը մնում է այնպիսին, ինչպիսին էր մինչև դրա վարդապետական մեկնաբանությունը: Փոխվում է այդ փաստացի նյութի (դրա տեքստի) հասկացողությունը, համաձայն վարդապետության, այդ պաշտոնական նյութի (տեքստի) կարգավորիչ իրավաբանական իմաստը և նշանակությունն այն է, որ դրանում կան իրավունքի նորմեր՝ իրավական կարգավորման կանոններ: Համաձայն այսպիսի վարդապետական հասկացողության (մեկնաբանման, բացատրման) այդ փաստացի նյութի (տեքստի) դրույթներն իրավական իմաստ և նշանակություն ունեն միայն որպես իրավունքի նորմի կառուցվածքային բաղադրատարրերի բովանդակություն՝ թե՛ իրավունքի (ամբողջությամբ իրավունքի) միասնական հիմնական բարձրագույն նորմի, թե՛ իրավունքի (ամբողջությամբ իրավունքի համակարգային բաղադրատարրերի) առանձին նորմերի տեսքով:

## 2. Իրավունքի նորմի հասկացությունը և կառուցվածքը

Իրավունքի նորմը՝ որպես վարդապետական կառույց, ամբողջությամբ *պոզիտիվ իրավունքի՝* որպես մարդկանց արտաքին վարքագծի հատուկ նորմատիվ կարգավորիչի, *իրավաբանական-տրամաբանական որոշակի մոդելն է:*

Իրավական կարգավորման և իրավունքի՝ որպես կարգավորիչի, այդ տրամաբանությունը (տրամաբանական մոդելը) արտահայտված է իրավունքի նորմի՝ որպես երեք կառուցվածքային բաղադրատարրերի՝ դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի համակարգի վարդապետական մեկնաբանությամբ:

*Իրավունքի նորմը հասարակական հարաբերությունների կարգավորման ընդհանուր կանոն է, որի համաձայն դրա հասցեատերերը պետք է որոշակի պայմանների առկայությամբ (հիպոթեզ) գործեն, որպես որոշակի իրավունքների և պարտականությունների սուբյեկտներ (դիսպոզիցիա), հակառակ դեպքում վրա կհասնեն նրանց համար ոչ ձեռնտու (անցանկալի) որոշակի հետևանքներ (սանկցիա):*

*Իրավունքի նորմի դիսպոզիցիան* իրավունքի նորմի կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների (կողմերի) փոխադարձ իրավունքները և պարտականություններն են: Յուրաքանչյուր կողմ ունի թե՛ իրավունքներ և թե՛ պարտականություններ: Ընդ որում, մի կողմի իրավունքը մյուս կողմի պարտականությունն է, և՛ հակառակը: Իրավունքների և պարտականությունների այսպիսի փոխադարձ կապի (փոխադարձության) շնորհիվ՝ իրավունքի նորմն ու իրավունքն ամբողջությամբ

յամբ ունի երկկողմ տրամադրող-պարտավորեցնող (ատրիբուտային-իմպերատիվ) բնույթ։ Առանց համապատասխան պարտավորեցման իրավունք սրամադրելը գրկուծ է դրան իր կարգավորիչ իմաստից։

Իրավահարաբերության կողմերի իրավունքները և պարտականությունները (իրենց կարգավորիչ նշանակությամբ, ծավալով և այլն) պետք է համաձայնեցված լինեն միմյանց այնպես, որ մեկ կողմի իրավունքներին ու պարտականություններին ճշգրիտ համապատասխանեն, թղթակցեն մյուս կողմի պարտականությունները և իրավունքները։ Իրավունքների և պարտականությունների այսպիսի փոխադարձ թղթակցումը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման պարտադիր պայմանն է։ Նորմի դիսպոզիցիան (լատիներեն՝ dispositio-տեղաբաշխում բառից) արտահայտում է կողմերի իրավունքների և պարտականությունների այսպիսի փոխադարձ համաձայնեցված տեղաբաշխումը (սահմանումը)։

*Իրավունքի նորմի հիպոթեզը* նորմի դիսպոզիցիայով նախատեսված իրավունքների և պարտականությունների գործողության պայմանն է։

*Իրավունքի նորմի սանկցիան* դիսպոզիցիայի և հիպոթեզի պահանջների, այսինքն՝ դիսպոզիցիայով նախատեսված իրավունքների ու պարտականությունների և հիպոթեզով նախատեսված դրանց գործողության պայմանների խախտման բացասական (խախտող կողմի համար ոչ ձեռնտու) հետևանքներն են։

Իրավունքի նորմի կառուցվածքային բաղադրատարրերի իրավաբանական-տրամաբանական իմաստը և նշանակությունը հասկանալու համար՝ գործող իրավունքի փաստացի դրույթների հետ դրանց հարաբերակցությամբ, էական նշանակություն ունի իրավական նորմի ձևի ու բովանդակության տարբերակումը։

*Իրավական նորմի ձևը* տեսական-վարդապետական, իրավաբանական-տրամաբանական կառուցվածք է (մտավոր կերպար, մոդել)՝ երեք բաղադրատարրի (դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի) համակարգի տեսքով։

*Իրավական նորմի բովանդակությունը* (այսինքն՝ նորմի այդ երեք բաղադրատարրի բովանդակային կազմը) բաղկացած է պոզիտիվ իրավունքի համապատասխան դրույթներից (պոզիտիվ իրավունքի այս կամ այն աղբյուրների տարբեր հոդվածներում, դրվագներում, կետերում, մասերում ամրագրված իրավական դրույթներից)։

Պոզիտիվ իրավունքը (դրա աղբյուրների տեքստային բովանդակությունը) կազմված և արտահայտված է ոչ թե իրավունքի նորմի, այլ՝ այս կամ այն աղբյուրի (օրենքի, հրամանագրի, որոշման և այլն) հոդվածի,

դրվագի, կեռի ձևով: Դա պայմանավորված է պոզիտիվ իրավունքի բովանդակության հստակ և հակիրճ շարադրանքի պահանջներով՝ առանց դրա տեքստի տարբեր մասերում միևնույն դրույթների ավելորդ կրկնությունների:

Իրավական նորմի ձևի և պոզիտիվ իրավունքի դրույթների տեքստային արտահայտման ձևի այսպիսի տարբերության հետևանքով իրավունքի նորմի տարբեր բաղադրատարրերի պոզիտիվ-իրավական բովանդակությունն ամրագրված (արտահայտված) է ոչ թե պոզիտիվ իրավունքի այս կամ այն աղբյուրի մեկ հոդվածում, կետում և այլն, այլ որպես կանոն, մեկ աղբյուրի տարբեր հոդվածներում, կետերում, մասերում, իսկ հաճախ էլ պոզիտիվ իրավունքի տարբեր աղբյուրներում: Ուստի, *իրավունքի նորմը չի կարելի չփոթել կամ նույնացնել պոզիտիվ իրավունքի տեքստի այս կամ այն առանձին դրույթի կամ հոդվածի, դրա հատվածի, դրվագների կամ այլ բաղադրատարրերի հետ:*

Պոզիտիվ իրավունքում իրավունքի նորմի երեք կառուցվածքային բաղադրատարրի արտահայտման հնարքները, եղանակները և բնույթը կախված են ինչպես կարգավորվող հարաբերությունների յուրօրինակությունից, այնպես էլ բուն կարգավորչի առանձնահատկություններից (պոզիտիվ-իրավական կարգավորման մեթոդներից, միջոցներից, խնդիրներից և նպատակներից):

Ուստի, պոզիտիվ իրավունքի տեքստում մի դեպքում ուղղակի ձևակերպված են իրավունքի նորմի բոլոր բաղադրատարրերի իրավադրույթները, իսկ այլ դեպքերում՝ իրավունքի նորմի այս կամ այն բաղադրատարրի այսպիսի պոզիտիվ-իրավական ձևակերպումը բացակայում է բոլորի համար ակնհայտ լինելու պատճառով: Բոլոր դեպքերում իրավունքի նորմի բացակայող (պոզիտիվ իրավունքի տեքստում ուղղակի չձևակերպված) մասի իմաստը պետք է ամբողջ որոշակությամբ ենթադրվի, միանշանակ և անվիճելիորեն բխի պոզիտիվ իրավունքի առկա տեքստից:

Իրավունքի նորմի բաղադրատարրերի և պոզիտիվ իրավունքի դրույթների հարաբերակցության մեջ եղած մի շարք առանձնահատկություններ պայմանավորված են իրավական կարգավորման ոլորտի առանձնահատկությամբ:

Այսպես, քրեական օրենքի (պոզիտիվ քրեական իրավունքի) դրույթների հիմնական զանգվածը վերաբերում է հիպոթեզին (կոնկրետ հանցակազմերին) և սանկցիային (համապատասխան հանցագործությունների կատարման համար պատժաչափերին): Դա թելադրված է տվյալ ոլորտում հարաբերությունների օրենսդրական կարգավորման տրամա-

բանությանը և համապատասխանում է հայտնի առաջադիմական սկզբունքին. «Առանց օրենք չկա հանցանք և չկա պատիժ» (այսինքն՝ առանց նախապես դրանք օրենքում սահմանելու):

Քրեական-իրավական նորմի դիսպոզիցիային վերաբերող դրույթները (այսինքն՝ մի կողմից պետության իրավունքներն ու պարտականությունները, մյուս կողմից՝ հանցագործություն կատարած անձի համապատասխան պարտականությունները և իրավունքները) ձևակերպվում են քրեական օրենքի ընդհանուր մասի հոդվածներում:

Գրեթե նույնն է վիճակը վարչական օրենսդրության մեջ:

Օրենսդրության բազմաթիվ այլ ճյուղերում (օրինակ՝ սահմանադրական, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային և այլ օրենսդրություններում) օրենսդրական դրույթների հիմնական մասը վերաբերում է նորմի դիսպոզիցիային (հարաբերությունների համապատասխան ոլորտում կողմերի իրավունքներին և պարտականություններին) ու դրանց միայն փոքր մասն է պարունակում նորմի հիպոթեզին և սանկցիային վերաբերող դրույթների ուղղակի ձևակերպումներ:

Դատավարական օրենսդրությունը (քրեական-դատավարական, վարչական-դատավարական, քաղաքացիական-դատավարական և այլ օրենսդրությունները) նույնպես հիմնականում բաղկացած է դատավարական իրավական նորմի հիպոթեզին (դատավարական գործողությունների հիմքեր) և դիսպոզիցիային (դատավարության մասնակիցների դատավարական իրավունքներ և պարտականություններ) վերաբերող դրույթներից: Դատավարական օրենսդրության մեջ դատավարական նորմի սանկցիային վերաբերող դրույթներն աննշան տեղ են զրավում:

Պոզիտիվ իրավունքի (գործող օրենսդրության) այս կամ այն դրույթի իսկական նորմատիվ-կարգավորիչ նշանակությունը կարելի է հասուկ բացահայտել և պարզել միայն այդ պոզիտիվ-իրավական դրույթի մեկնարանման (պարզելով դրա հարաբերակցությունն իրավունքի նորմի կառուցվածքային բաղադրատարրերի հետ) ու կոնկրետ իրավական գործի նկատմամբ կիրառման միջոցով, երբ *իրավունքի մասին իրական վեճն արդիականացնում է փաստացի հարաբերությունների իրավաբանական նշանակություն ունեցող բոլոր հարադրությունները և գործող իրավունքի կարգավորիչ պահերը:*

Դրանով են որոշվում ինչպես նախադեպային (դատական) իրավունքի արժանիքները, այնպես էլ՝ ամբողջությամբ իրավական (հատկապես դատական պրակտիկայի) նշանակությունը՝ իրավասահման և իրավակիրառ գործունեության համար:

### 3. Իրավունքի նորմի հատկանիշները

Իրավունքի նորմի հատկությունները և հատկանիշները դիտարկելիս ու զննահասանելիս պետք է հաշվի առնել թե՛ դրա վարդապետական (իրավաբանական-ստրամաբանական) ձևերի, թե՛ դրա պոզիտիվ-իրավական բովանդակության բնագծերն ու բնութագրերը:

Իրավունքի նորմը՝ որպես պոզիտիվ իրավունքի առաջնային բաղադրատարրի վարդապետական ձև (կառույց), *իրավունքի չափ*, ընդհանուր իրավական մասշտաբ է:

*Իրավունքի նորմի՝ որպես ձևի (չափի, մասշտաբի) հիմնական հատկանիշներ են՝* ընդհանուր բնույթը, համակարգայնությունը, ձևական ուղղակիությունը:

*Իրավական նորմի ընդհանուր բնույթը* նշանակում է, որ դա հասարակական հարաբերությունների որոշակի սեսակի իրավական կարգավորման մշտապես գործող կանոն է: Իրավական նորմի գործողությունը չի սպառվում դրա միանվագ կիրառմամբ:

Իրավունքի նորմի ընդհանուր բնույթը տարբեր ձևով է արտահայտվում և ի հայտ գալիս իրավունքի տարբեր համակարգերում: Այսպես, իրավունքի լոմանո-գերմանական իրավական ընտանիքի համակարգերում, որի շրջանակում զարգանում է նաև ռուսական իրավունքը, իրավունքի նորմ ասելով՝ նկատի է առնվում վերացական բնույթի ընդհանուր կանոն, որի պոզիտիվ-իրավական բովանդակությունը վերացական-համընդհանուր սեսքով (առանց նորմով կարգավորվող այս կամ այն կոնկրետ դեպքի հետ կապի) արտահայտված է գործող օրենսդրության մեջ (պոզիտիվ իրավունքում):

«Ընդհանուր իրավունքի» (նախադեպային իրավունքի) համակարգերում իրավունքի նորմ ասելով՝ նկատի է առնվում նախադեպային (կազուսային) բնույթի ընդհանուր կանոնը, որի պոզիտիվ-իրավական բովանդակությունն արտահայտված է կոնկրետ գործով՝ բարձրագույն դատական ատյաններից մեկի որոշման մեջ: Այսպիսի նախադեպային նորմը նույնպես ունի ընդհանուր բնույթ, քանի որ ենթակա է կիրառման մյուս բոլոր նմանօրինակ գործերը լուծելիս:

*Իրավունքի նորմի համակարգայնությունն* առավել հստակ և հետևողականորեն արտահայտված է վերացական բնույթի նորմերում, որոնք երեք կառուցվածքային բաղադրատարրերի (դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի) համակարգ են: Ընդ որում, իրավունքի վերացական նորմի այսպիսի համակարգային կառուցվածքն ամբողջ պոզիտիվ իրավունքի, որպես նորմերի համակարգի, ընդհանուր մոդել և համակարգաստեղծ հիմք է:

Նախադեպային իրավունքի նորմերի համակարգային նշանակությունը դրսևորվում է նրանում, որ հենց այսպիսի նորմերը, ընդհանուր (դասական իրավունքի) համակարգերի վարդապետության համաձայն, այդ համակարգերում դիտվում են որպես «բուն իրավունք», կազմում են դրանց հիմնական մասը և նմուշ են ծառայում դրանց շրջանակներում գործող վերացական նորմերի համար:

Վերացական բնույթի *իրավունքի նորմի ձևական որոշակիությունը* ներկայացված է դրա համակարգային կառուցվածքում (կազմված՝ դիսպոզիցիայից, հիպոթեզից և սանկցիայից), որն արտահայտում է իրավական կարգավորման տրամաբանությունը և, հետևաբար, իրավաբանական-տրամաբանական որոշակի ձև է:

Իրավական նորմի ձևը (դրա բաղադրատարրերի համակարգային միասնությունը) կախված չէ դրա կառուցվածքային բաղադրասարրերի բովանդակությունը կազմող պոզիտիվ իրավունքի փաստացի նյութից (դրա կոնկրետ դրույթներից): Հակառակը, այդ նորմատիվ ձևը (որպես մշտական և անփոփոխ իրավաբանական-տրամաբանական կառույց) պոզիտիվ իրավունքի տարասեռ նյութերին, որպես իր բաղադրատարրերի բովանդակություն, հաղորդում է ձևական որոշակիություն: Դա նշանակում է, որ պոզիտիվ իրավունքի դրույթներն իրենց կարգավորիչ դերն իրականացնում են նորմատիվ որոշակի ձևով՝ դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի համակարգային փոխկապակցվածությամբ: Նման նորմատիվ ձևը պահանջում է պոզիտիվ իրավունքում նախատեսված որոշակի իրավունքների և պարտականությունների կապակցվածությունը դրանց իրականացման որոշակի պայմանների ու խախտման որոշակի անշահավետ հետևանքների հետ:

Նախադեպային իրավունքում գործում են որոշակի դատական վճիռների և դրանց կիրառման նախադեպային նշանակության մասին այլ ընդհանուր կանոններ: Դրանք նախադեպային բնույթ ունեցող նորմերին հաղորդում են ձևական որոշակիություն:

*Իրավունքի նորմի* որպես կարգավորման պարտադիր կանոնի, *պաշտոնական-պարտադիր բնույթը* պայմանավորված է դրա բաղկացուցիչ մասերի (դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի) պոզիտիվ-իրավական բովանդակությամբ: Իրավունքի կոնկրետ նորմի բովանդակությունը կառուցվում (կազմվում) է իրավունքի նորմի ընդհանուր համակարգային մոդելով՝ կոնկրետ պոզիտիվ-իրավական դրույթներով, որոնք իրենց կարգավորիչ նշանակությամբ համապատասխանում են դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի (դրանց համակարգային փոխկապակցության և միասնության մեջ) իրավաբանական-տրամաբանական իմաստին:

Իրապական նորմի ձևի և բովանդակության տարբերակումից երևում է, որ իրավունքի նորմը կարող է լինել ցանկացած (իր իրավական բնույթով) պոզիտիվ իրավունքի դրույթների, այսինքն՝ ինչպես իրավական, այնպես էլ հակաիրավական օրենքի (գործող պոզիտիվ իրավունքի) դրույթների, արտահայտման ձև: Ուստի, իրավունքի նորմը կարող է ծառայել որպես տարբեր բովանդակության արտահայտման ձև, կարող է լինել ինչպես հավասարության, ազատության և արդարության, այնպես էլ կամայականության, բռնության ու արտոնությունների չափ:

*Լեզիզսի* ներկայացուցիչներն օգուագործում են իրավական նորմի տրամաբանորեն «մաքուր» (և ամենակեր) ձևը պոզիտիվ իրավունքի ցանկացած կամայական բովանդակության արդարացման համար:

*Ազատական-իրավաբանական մեկնաբանման* շրջանակներում իրավունքի նորմ ասելով՝ նկատի է առնվում *իրավական օրենքի նորմը*, այսինքն՝ պոզիտիվ իրավունքի նորմը, որի դրույթները համապատասխանում են ձևական հավասարության սկզբունքի պահանջներին: Իրավունքի նորմն այսպիսի ազատական-իրավաբանական իմաստով կարելի է սահմանել որպես ձևական հավասարության սկզբունքի պահանջի կենտրոնացման իրավաբանական-տրամաբանական ձև՝ իրավական օրենքի (ձևական հավասարության սկզբունքին համապատասխանող պոզիտիվ իրավունքի) դրույթների տեսքով: Եվ միայն իրավունքի այսպիսի նորմը (և այսպիսի իրավունքի նորմը) կարելի է բնութագրել որպես *ազատության, հավասարության և արդարության չափ*: Իրավունքի նորմի եռանդամ արամաբանական կառուցվածքն ինքնին չի կարող փոփոխել գործող (պոզիտիվ) իրավունքի դրույթների իրավական որակը, ոչ էլ կարող է դրանց հաղորդել ազատության, հավասարության ու արդարության բուն իրավական հատկություններ:

#### 4. Իրավունքի նորմերի տեսակները

Իրավունքի նորմերն իրենց բնույթով, բովանդակությամբ, խնդիրներով և նպատակներով իրականացնում են տարբեր կարգավորիչ գործառույթներ: Դրանով է պայմանավորված իրավական նորմերի տարբեր տեսակների առկայությունը:

Իրավունքի նորմերի այս կամ այն տեսակների առանձնացումը կախված է *դրանց խմբավորման հիմքից (չափանիշից)*, դասակարգումից: Գրականության մեջ գոյություն ունեն բազմաթիվ նման դասակարգումներ, որոնցից յուրաքանչյուրը հիմնվում է իրավունքի նորմերի այս



կան այն խմբին ներհատուկ որոշակի *նորմատիվ կարգավորիչ առանձնահատկության վրա*:

Ճյուղային չափանիշով իրավունքի նորմերը, ըստ *իրավունքի* համապատասխան *ճյուղին* իրենց պատկանելության, բաժանվում են տարբեր տեսակների՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական, ընտանեկան, աշխատանքային և այլ իրավունքի իրավական նորմերի:

Որպես հետևանք՝ իրավունքի ճյուղերն իրավունքի նյութական ճյուղերի (օրինակ՝ քրեական իրավունքի, քաղաքացիական իրավունքի ճյուղերի) և դատավարական իրավունքի ճյուղերի (օրինակ՝ քրեական-դատավարական իրավունքի, քաղաքացիական-դատավարական իրավունքի) բաժանման, առանձնացվում են նորմերի այնպիսի տարատեսակների, ինչպիսիք են՝ *նյութական-իրավական նորմերը* (նյութական իրավունքի նորմերը) և *դատավարական-իրավական նորմերը* (դատավարական իրավունքի նորմերը): Նյութական իրավունքի նորմերը հասարակական հարաբերությունների առաջնային իրավական կարգավորման նորմեր են, իսկ դատավարական իրավունքի նորմերը կարգավորում են նյութական իրավունքի արդեն իսկ սահմանված նորմերի գործնական իրականացման և կատարման դատավարական կարգն ու ընթացակարգը, և այդ իմաստով (և ոչ երբեք երկրորդականի իմաստով) դրանք երկրորդական իրավական կարգավորման նորմեր են: Դատավարական իրավունքի նորմերի էական նշանակությունն այն է, որ դրանք սահմանում են բուն իրավունքի գործողության որոշակի իրավական կարգը: Որքան զարգացած է իրավունքը, այնքան դրանում կան ավելի շատ դատավարական նորմեր և ճյուղեր:

Նորմերը բաժանվում են տարբեր տեսակների նաև կախված *դրանց կարգավորիչ ազդեցության արտահայտման ձևերից և դրանց կարգավորիչ ուժի մոդալությունից (եղանակավորությունից)*: Այսպես, դեռևս հռոմեացի իրավաբան Մոդեստինոսը նշել է, որ «Իրավունքի գործողությունը (ուժը) կարգադրելը, արգելելը, թույլատրելը և պատժելն է»<sup>1</sup>: Ցիցերոնը համապատասխանաբար խոսել է իրավունքի գործողության այնպիսի ձևերի մասին, ինչպիսիք են՝ կարգադրելը և արգելելը, իսկ իրավաբան Կվինտիլիանոսը՝ հատուցելու, սահմանավակելու, պատժելու, արգելելու և թույլատրելու մասին:

Հ.Քելզենի նորմատիվիստական ուսմունքի համաձայն՝ իրավունքի նորմը, որպես պարտադրանք, հրամայում, թույլատրում կամ լիազորում է<sup>2</sup>:

<sup>1</sup> Sbu *Перетерский И.С. Дигесты Юстиняна*. М., 1956. էջ 106

<sup>2</sup> Sbu *Чистое учение о праве Гаяса Кельзена*. Вып 1 М., 1987. էջ 12

Քննարկված չափանիշի հիման վրա լայնորեն տարածված է իրավունքի նորմերի բաժանումն արգելող, պարտավորեցնող, իրավագործ կամ լիազորող և խրախուսող նորմերի:

*Արգելող նորմեր* ասելով՝ նկատի ունեն այս կամ այն հակաիրավական գործողություն (զանցանքներ կամ հանցագործություններ) կատարելու արգելք պարունակող նորմերը: Այսպիսի նորմերն առաջին հերթին բնութագրական են քրեական իրավունքի և վարչական իրավունքի համար, որոնց դրույթների զգալի մասը սահմանում է արգելված արարքներ (համապատասխանաբար՝ հանցագործություններ և վարչական զանցանքներ): Մակայն, արգելող նորմեր կան նաև իրավունքի այլ ճյուղերում: Այսպես, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 19 հոդվածի 4-րդ կետն արգելում է (թույլ չի տալիս) իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել այլ անձի անունով:

*Պարտավորեցնող նորմերն* այն նորմերն են, որոնք իրավունքի սուբյեկտին պարտավորեցնում են կատարել որոշակի իրավաչափ գործողություններ: Այսպես, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 922 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ բանկը պարտավոր է վերահսկողություն իրականացնել այն տարածքի մուտքի նկատմամբ, որտեղ գտնվում է հաճախորդին տրամադրված չիրկիզվող պահարանը:

*Իրավագործող (կամ լիազորող) նորմերն* իրավունքի սուբյեկտին որոշակի իրավագործություն կամ լիազորություն (որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող գործողություն կատարելու հնարավորություն) տրամադրող դրույթներ են պարունակում: Այսպես, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 502 հոդվածի 1-ին կետը պարունակում է իրավագործող (կամ լիազորող) դրույթ, որի համաձայն՝ գնորդը ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից հետո՝ տասնչորս օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի սահմանել, իրավունք ունի գնված ապրանքը փոխարինել նմանօրինակ այլ ապրանքով՝ զնի տարբերության դեպքում վաճառողի հետ կատարելով անհրաժեշտ վերահաշվարկ:

*Խրախուսող նորմերը* պարունակում են իրավաչափ, եսնորեն օգտակար վարքագծի տարբեր տեսակներ խթանող դրույթներ: Այսպես, Ռուսաստանի Դաշնության աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածը նախատեսում է խրախուսման մի շարք միջոցներ (շնորհակալության հայտարարում, պարգևի հանձնում և այլն) աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքում նորարարություն կատարելու և աշխատանքային այլ նվաճումների դեպքում:

Կախված իրավունքի նորմի բաղադրատարրերի պոզիտիվ-իրավական բովանդակությունը կազմող իրավադրույթների որոշակիության աստիճանից՝ իրավունքի նորմերը բաժանվում են *բացարձակ որոշակի, հարաբերական որոշակի և բյանկետային նորմերի*:

Բացարձակ որոշակի նորմերի բովանդակությունը կրում է միանշանակ բնույթ և թույլատրում է վարքագծի միայն մեկ տարբերակ: Հարաբերական որոշակի նորմերի բովանդակությունը թույլատրում է վարքագծի զանազան սարբերակներ, վարքագծի այլընտրանքային տարբերակների ուղղակի ցանկի կամ կողմերին՝ իրենց վարքագծի տարբերակն ինքնուրույն ընտրելու թույլտվության տեսքով:

Բյանկետային նորմերի պոզիտիվ-իրավական բովանդակության առանձնահատկությունն այն է, որ դրանցում կա ընդհանուր հղում այս կամ այն հատուկ կանոնին՝ առանց վերջինիս կոնկրետ բովանդակությունը բացահայտելու: Այսպես, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 249 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում անասնապահական կանոնների և բույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի համար սահմանված կանոնների խախտման համար, սակայն բուն հոդվածում չի բերվում այլ ակտերում սահմանված այդ կանոնների բովանդակությունը:

Կախված իրենց պոզիտիվ-իրավական բովանդակության պայմանականությունից կամ անվերապահությունից՝ իրավունքի նորմերը բաժանվում են դիսպոզիտիվ և իմպերատիվ նորմերի:

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 491 հոդվածի 4 կետի համաձայն՝ *դիսպոզիտիվ է* այն նորմը, որը կիրառվում է, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Կողմերն իրենց համաձայնությամբ կարող են բացառել այսպիսի նորմի կիրառումը կամ սահմանել դրանում նախատեսվածից տարբեր պայման: *Իմպերատիվ նորմի* դրույթների կիրառումը կատեգորիկ պարտադիր է կողմերի համար, և վերջիններս իրավունք չունեն փոխել դրանք (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 422 հոդվածը):

Առանձնացվում են նորմերի նաև այլ տեսակներ: Այսպես, *որոշիչ (դեֆինիտիվ) նորմերն* այն նորմերն են, որոնք պարունակում են այս կամ այն իրավաբանական հասկացության կամ երևույթի օրինական (պոզիտիվ-իրավական) բնորոշումը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 14 հոդվածը պարունակում է հանցագործության հասկացության օրինական բնորոշումը:

*Կոլիզիոն նորմեր* են համարվում այն նորմերը, որոնք պարունակում են տարբեր պոզիտիվ-իրավական դրույթների միջև հակասությունների

լուծման կանոններ: Այսպես, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 15 հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են Ռուսաստանի Դաշնության օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

### **Գլուխ 3. Իրավունքի աղբյուրները**

#### **1. Իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները**

Իրավաբանական գրականության մեջ «իրավունքի աղբյուր» արտահայտությունն օգտագործվում է երկու տարբեր նշանակությամբ՝ «իրավունքի նյութական աղբյուր» (իրավունքի աղբյուր նյութական իմաստով) և «իրավունքի ձևական աղբյուր» (իրավունքի աղբյուր ձևական իմաստով):

Ընդ որում, «իրավունքի նյութական աղբյուր» ասելով՝ նկատի է առնվում իրավունքի կազմավորման պատճառները, այսինքն՝ այն ամենը, որը համապատասխան մոտեցման համաձայն ծնում (ձևավորում) է պոզիտիվ իրավունքը՝ այս կամ այն նյութական կամ հոգևոր գործոնները, հասարակական հարաբերությունները, մարդու բնությունը, իրերի բնությունը, աստվածային կամ մարդկային բանականությունը, Աստծո կամ օրենսդրի կամքը և այլն:

«Իրավունքի ձևական աղբյուր» ասելով՝ նկատի է առնվում գործող իրավունքի դրույթների (բովանդակության) արտաքին դրսևորման ձևը:

Այս գլխում խոսքը «իրավունքի ձևական աղբյուրների» մասին է, որը գրականության մեջ նշվում է նաև «իրավունքի ձև» տերմինով:

*Իրավունքի աղբյուրները (ձևերը) իրավունքի բովանդակության արտաքին դրսևորման պաշտոնապես որոշակի ձևերն են:*

Այն ձևերի պաշտոնական-իշխանական (պետական) որոշակիությունը, որոնցում գործող իրավունքի բովանդակությունն ստանում է արտաքին դրսևորման օբյեկտիվացում և գոյություն, իրավունքի աղբյուրներին ու ամբողջությամբ իրավունքին հաղորդում է *ինստիտուցիոնալ* որոշակիություն և կարգավորվածություն: Դա նշանակում է, որ գործող իրավունքի նորմերը (դրանց նորմատիվ բովանդակությունը) պարունակվում են իրավունքի միայն որոշակի պաշտոնապես ճանաչված աղբյուրներում, որոնք իրավունքի նորմերի պաշտոնապես որոշակի (ինստիտուցիոնալիզացված) ամրագրման և գոյության ձևեր են:

Իրավունքի յուրաքանչյուր համակարգ ունի իրավունքի իր կոնկրետ որոշակի աղբյուրները:

Ամբողջությամբ (իրավունքի տարբեր համակարգերի կիրառմամբ) հայտնի են *պոզիտիվ իրավունքի աղբյուրների (ձևերի) հետևյալ հիմնական տեսակները.*

- 1) իրավական սովորույթը (սովորութային իրավունք).
- 2) դատական նախադեպը.
- 3) իրավաբանական վարդապետությունը (այսպես կոչված՝ «իրավաբանների իրավունքը»).
- 4) կրոնական հուշարձանը (տարբեր կրոնների «Սուրբ գրքերը»).
- 5) նորմատիվ-իրավական պայմանագիրը.
- 6) նորմատիվ-իրավական ակտը.
- 7) բնական իրավունքը:

*Իրավական սովորույթը (սովորութային իրավունքը)* տևական ժամանակահատվածում փաստացի ձևավորված մարդկանց վարքագծի (հասարակական հարաբերությունների) կարգավորման կանոններն են, որոնք պաշտոնապես ճանաչվել (հաստատվել) են պետության կողմից՝ որպես իրավունքի համապարտադիր նորմեր:

Սովորույթի պետական քույլատրումը և դրա վերածումն *իրավական սովորույթի*, այսինքն՝ պոզիտիվ իրավունքի աղբյուրի, կարող է իրականացվել տարբեր եղանակներով: Հնարավոր է, օրինակ՝ այս կամ այն սովորույթի փաստացի (բանավոր, լռելյայն) քույլաարում, երբ պետական տարբեր մարմինները (դատարանը, վարչակազմը, ներկայացուցչական մարմինը) իրենց պրակտիկ գործունեության մեջ տևական ժամանակահատվածում համապատասխան սովորույթները համարում և կիրառում են որպես գործող իրավունքի նորմեր: Սովորույթների պետականորեն քույլատրումը հաճախ կատարվում է պաշտոնական, գրավոր-փաստաթղթային ձևով՝ նորմատիվ-իրավական ակտերում համապատասխան սովորույթների պոզիտիվ-իրավական նշանակությունը ճանաչելու միջոցով:

Սակայն հնարավոր է նաև գործող իրավունքի և սովորույթների միջև այլ հարաբերակցության առկայություն, երբ նորմատիվ-իրավական ակտերում ուղղակի ձևակերպվում են այնպիսի կոնկրետ իրավական դրույթներ, որոնք անմիջականորեն վերարտադրում են այս կամ այն ձևավորված սովորույթի բովանդակությունը: Այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե սովորույթի՝ որպես իրավունքի ինքնուրույն աղբյուրի (սովորութային իրավունքի տեսքով) քույլատրելու հետ, այլ՝ նորմատիվ-իրավական ակտի՝ որպես այլ տեսակի իրավունքի աղբյուրի, նորմի հետ:

Նույնպե՛սն ան վիճակ է երևան գալիս, երբ նախադեպային իրավունքի համակարգում սովորույթը դրվում է դասական վճռի հիմքում ու դրանով իսկ ձեռք է բերում դատական նախադեպի՝ որպես նախադեպային իրավունքի աղբյուրի, պաշտոնական նշանակություն:

*Դատական նախադեպը* կոնկրետ գործով դատական վճիռն է, որն ունի համապարտադիր կանոնի նշանակություն բոլոր նմանօրինակ գործերի նույնպիսի վճիռների համար: Նախադեպի նշանակություն ունեցող վճիռներ ընդունելու իրավունք ունեն միայն բարձրագույն դատական ասպանները (նախադեպի սահմանված կանոնների համաձայն): Դատական նախադեպն ընդհանուր (նախադեպային) իրավունքի իրավական ընտանիքի մեջ մտնող երկրների ազգային իրավական համակարգերի հիմնական աղբյուրն է:

*Իրավաբանական վարդապետությունը՝* որպես իրավունքի աղբյուր, իրավունքի մասին իրավաբան-գիտնականների մշակած և հիմնավորած դրույթներ, կառույցներ, գաղափարներ, սկզբունքներ ու դատողություններ է իրավունքի մասին, որոնք իրավունքի այս կամ այն համակարգում ունեն համապարտադիր իրավաբանական ուժ: Պարտադիր վարդապետական իրավադրույթներն ընդունված է անվանել «իրավաբանների իրավունք»: Իրավաբանական վարդապետությունը, սկսած հռոմեական իրավունքից մինչև XIX դարը, երբ իրավունքի հիմնական աղբյուրի տեղը զրավեց օրենքը (պետական նորմաստեղծությունը), եղել է մայրցամաքային-եվրոպական (ռոմանո-գերմանական) իրավունքի հիմնական աղբյուրը: Սակայն դրանից հետո էլ իրավաբանական վարդապետությունը ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի համակարգերում մնում է իրավունքի աղբյուրներից մեկը: Իրավաբանական վարդապետությունը՝ որպես իրավունքի աղբյուր, նշանակալից դեր է խաղում մուսուլմանական իրավունքում: Այն որոշակի իրավական նշանակություն ունի նաև ընդհանուր իրավունքի համակարգերում:

*Կրոնական հուշարձանը՝* որպես իրավունքի աղբյուր, տարբեր կրոնների Սուրբ գրքերն են, որոնց դրույթները կրոնական իրավունքի համապատասխան համակարգերում (քրիստոնեական կանոնական իրավունք, հինդուսական իրավունք, հրեական իրավունք, մուսուլմանական իրավունք) ունեն համապարտադիր նշանակություն: Այսպես, Ղուրանը և Սուրնան (Մուհամադ մարգարեի ասույթները) մուսուլմանական իրավունքի սկզբնաղբյուրներն են:

Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համապատասխան կրոնական իրավունքը (մուսուլմանական, հինդուսական և այլն) համապատասխան կրոնական համայնքի իրավունքն է (հավատացյալների

համայնքի վարքագիծը կարգավորող իրավունքը) և ոչ թե իրավունքի ազգային պետական համակարգը: Ուստի, չի կարելի շփոթել, օրինակ՝ հինդուսական իրավունքը Հնդկաստանի իրավունքի ազգային պետական իրավական համակարգի հետ կամ մուսուլմանական իրավունքը՝ իսլամ դավանող բնակչություն ունեցող այս կամ այն պետության իրավունքի համակարգի հետ:

*Նորմատիվ-իրավական պայմանագիրը՝* որպես իրավունքի աղբյուր, այն պայմանագիրն է, որը պարունակում է գործող իրավունքի նոր նորմեր: Այսպիսի պայմանագրեր կան ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավունքի ոլորտում:

*Նորմատիվ-իրավական ակտը* պետության գրավոր իրավասահմանակետն է, որը պարունակում է գործող իրավունքի նոր նորմեր: Իր իրավասահման բնույթով (իրավունքի նոր նորմերի սահմանմամբ) նորմատիվ-իրավական ակտը տարբերվում է մնացած բոլոր իրավական ակտերից (իրավունքի նորմերի կիրառման անհատական ակտերից և իրավունքի նորմերի մեկնաբանման ակտերից), ինչպես նաև տարբեր տեսակի ոչ իրավական բնույթի պաշտոնական պետական ակտերից (դիմումներ, ուղերձներ և այլն):

Նորմատիվ-իրավական ակտերը ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի իրավունքի համակարգերում, որոնց մեջ դասվում են նաև Ռուսաստանի Դաշնության իրավական համակարգը և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, իրավունքի հիմնական աղբյուրներն են:

Գոյություն ունեն նորմատիվ-իրավական ակտերի տարբեր տեսակներ: Սակայն իրենց ամբողջության մեջ՝ որպես իրավունքի առանձին աղբյուր, նորմատիվ-իրավական ակտերն իրավունքի այս կամ այն ազգային համակարգի շրջանակներում կազմում են տարբեր իրավաբանական ուժ ունեցող ակտերի որոշակի իրավաբանական աստիճանական համակարգ:

Իրենց իրավաբանական ուժով նորմատիվ-իրավական ակտերը բաժանվում են օրենքների և ենթօրենսդրական ակտերի:

Նորմատիվ-իրավական ակտերի աստիճանական համակարգը գլխավորում է *օրենքը* և, առաջին հերթին, Սահմանադրությունը՝ որպես հիմնական, բարձրագույն օրենք, իսկ Սահմանադրությունից հետո (նրան ստորադաս) գտնվում են մյուս օրենքները:

Նորմատիվ-իրավական ակտերի համակարգում բարձրագույն իրավաբանական ուժով օժտված է *Սահմանադրությունը*: Այն ընդունվում է հատուկ եղանակով՝ հանրաքվեի (համաժողովրդական քվեարկության)

միջոցով, Հիմնադիր (կամ Սահմանադրական) ժողովի կամ բարձրագույն ներկայացուցչական մարմնի (խորհրդարանի) կողմից հատուկ (բարդեցված) կարգով:

*Օրենքները*, որպես կանոն, ընդունվում են խորհրդարանի (երկրի բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմնի) կողմից: Ռոշ օրենքներ ընդունվում են հանրաքվեով:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի երկրներում օրենքը հասարակական հարաբերությունների հիմնական և գլխավոր նորմատիվ-իրավական կարգավորիչ է: Այստեղ օրենսդրական կարգավորման օբյեկտներ են հասարակության կյանքի և դրանում սահմանված իրավակարգի համար հիմնադիր նշանակություն ունեցող առավել կարևոր ու եական հասարակական հարաբերությունները:

*Ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերը* (դեկրետները, հրամանագրերը, օրդոնանսները, որոշումները, հրամանները, հրահանգները և այլն) ընդունվում են գործադիր իշխանության տարբեր մարմինների և պաշտոնատար անձանց կողմից նրանց՝ օրենքով սահմանված նորմատեղծ իրավասության շրջանակներում: Նորմատիվ-իրավական ակտերի ենթաօրենսդրական բնույթը, ըստ ընդհանուր կանոնի, նշանակում է, որ դրանք պետք է ընդունվեն գործող օրենքների և, առաջին հերթին, երկրի Սահմանադրության հիման վրա ու ի կատարումն դրանց:

Տարբեր ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերի հարաբերակցությունը նույնպես կառուցված է աստիճանականության սկզբունքով՝ ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերի գանազան տեսակների տարբեր իրավաբանական ուժի հաշվառմամբ: Ընդ որում, ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերի իրավաբանական ուժը և գործողության ոլորտը որոշվում է իշխանության գործադիր ճյուղի ընդհանուր համակարգում՝ համապատասխան պետական մարմնի (կամ պաշտոնատար անձի) օրենսդրորեն սահմանված տեղով և իշխանական-գործառնությանից նշանակությամբ: Ուստի, ստորադաս պետական մարմինների ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերը պետք է համապատասխանեն պետական իշխանության վերադաս մարմինների նորմատիվ-իրավական ակտերին:

*Բնական իրավունքը՝ որպես պոզիտիվ իրավունքի աղբյուր*, պետության կողմից պաշտոնապես ճանաչված և նրա Սահմանադրությունում ու օրենքներում ամրագրված՝ մարդու բնական, ի ծնե և անօտարելի իրավունքներն ու ժողովրդի իրավունքներն են:

Դեռևս հռոմեական իրավաբանները բնական իրավունքը (ինչպես նաև ժողովուրդների և ցիվիլ իրավունքը) համարում էին գործող իրա-



վունքի բաղադրատարր ու այդ իրավունքի արդարացիության արտացոլում: Խոսելով «իրավունք» բառի տարբեր իմաստների մասին՝ հռոմեական իրավաբան Պոդոսը (D.1.1.11) գրում էր. «Նախ՝ «իրավունք» նշանակում է այն, որը միշտ էլ արդարացի է և բարի, ինչպիսին բնական իրավունքն է»<sup>1</sup>: Բնական իրավունքի իրավական իմաստի և նշանակության այսպիսի մեկնաբանությունը հռոմեական իրավաբանական վարդապետության («իրավաբանների իրավունքի») էական բաղադրատարրն էր, որը, իր հերթին, հռոմեական պոզիտիվ իրավունքի հիմնական աղբյուրներից մեկն էր:

Շատ կողմերով նույնն էր վիճակը նաև արևմտավրոպական պոզիտիվ իրավունքի հետագա պատմության ընթացքում (միջնադարում և Նոր դարաշրջանում), որի հիմնական աղբյուրներից մեկը եղել է իր մեջ այս կամ այն ձևով բնական իրավունքի գաղափարները և սկզբունքները ներառող (բացի զուտ լեզուստական հայեցակարգերից) իրավաբանական վարդապետությունը:

Այս ոլորտում էական փոփոխություններ կատարվեցին բուրժուական վերափոխումների և իրավունքի նոր ազգային-պետական համակարգերի ձևավորման ժամանակաշրջանում: Այդ նոր սոցիալ-պատմական պայմաններում մարդու բնական իրավունքները և ժողովրդի իրավունքներն ուղղակիորեն ամրագրվում են օրենքներում (հռչակագրերում, այլ հիմնադիր ակտերում, Սահմանադրություններում և այլն), ձեռք են բերում պաշտոնապես համապարտադիր իրավաբանական ուժ ու դառնում են գործող պոզիտիվ իրավունքի ազգային պետական համակարգի ինքնուրույն աղբյուրներ:

Մարդու բնական իրավունքները և ժողովրդի իրավունքներն առաջին անգամ այսպիսի ուղղակի պաշտոնական ճանաչում ու օրենսդրական ամրագրում գտան «ԱՄՆ-ի անկախության հռչակագրում» (4-ը հուլիսի 1776 թվական), որում, մասնավորապես, պարունակվում են հետևյալ դրույթները. «Մենք ակնհայտ ենք համարում հետևյալ ճշմարտությունները. բոլոր մարդիկ արարվել են հավասար, և նրանց բոլորին էլ Արարչի կողմից շնորհվել են որոշ անօտարելի իրավունքներ, որոնց թվին են դասվում կյանքը, ազատությունը, երջանկության ձգտումը: Այդ իրավունքների ապահովման համար մարդկանց միջև ստեղծվել են կառավարություններ, որոնք իրենց արդարացի իշխանությունն ստացել են կառավարվողների համաձայնությամբ: Եթե կառավարության տվյալ ձևն այդ նպատակի համար դառնում է կործանարար, ապա ժողովուրդը

<sup>1</sup> Стів Аджесты Юстиниана. М., 1984. т. 25

*իրավունք ունի փոխել կամ ոչնչացնել դա և հիմադրել նոր կառավարություն...»<sup>1</sup> :*

Բնական իրավունքների օրենսդրական պոզիտիվացման (պաշտոնական ճանաչման և ամրագրման) գործընթացն իր հետագա զարգացումը գտավ Ֆրանսիայի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» (20-ը օգոստոս 1789 թվական), որում ամրագրվել են մարդու հետևյալ հիմնական բնական իրավունքները. «Մարդիկ ծնվում և մնում են ազատ ու իրավահավասար... Յուրաքանչյուր պետական միության նպատակը մարդու բնական և անօտարելի իրավունքների ապահովումն է: Այդպիսիք են՝ ազատությունը, սեփականությունը, անվտանգությունն ու ճնշմանը դիմադրելը»<sup>2</sup>:

Այդ նույն հունով, մամանավանդ XX դարում, զարգացավ նաև մարդու բնական իրավունքների և ժողովուրդների իրավունքների, որպես գործող ազգային իրավունքի հիմնադիր աղբյուրի, սահմանադրական ճանաչումը և ամրագրումը:

Այսպես, «ԳՂՀ-ի հիմնական օրենքի» (1949 թվականի մայիսի 23-ի) 1 հոդվածը հռչակում է. «Մարդկային արժանապատվությունն անխախտելի է: Դա հարգելը և պաշտպանելը ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Դրա ուժով գերմանական ժողովուրդը ճանաչում է մարդու անխախտելի և անօտարելի իրավունքները որպես յուրաքանչյուր մարդկային հասարակության, աշխարհում խաղաղության և արդարության հիմք: Ստորև շարադրվող հիմնական իրավունքները պարտավորեցնում են օրենսդրությանը, գործադիր իշխանությանը և արդարադատությանը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»<sup>3</sup>:

Մարդու բնական (ի ծնե և անօտարելի) իրավունքները և ազատությունները՝ որպես անմիջականորեն գործող, ամբողջ պոզիտիվ իրավունքի համակարգում գերապատիվ նշանակություն ունեցող ու ամբողջությամբ պետության (իշխանության բոլոր ճյուղերի և մարմինների) համար պարտադիր իրենց պաշտոնական ճանաչումն ու ամրագրումն ստացան Ռուսաստանի Դաշնության 1993 թվականի Սահմանադրության մեջ (տե՛ս 2, 17, 18 և այլ հոդվածներ):

Սահմանադրություններում և այլ իրավասահման պետական ակտերում պաշտոնապես ճանաչված ու ամրապնդված մարդու բնական (ի

<sup>1</sup> St'u Христоматия по истории государство и право зарубежных стран М., 1984. էջ 182

<sup>2</sup> St'u Христоматия по истории государство и право зарубежных стран М., 1984. էջ 208

<sup>3</sup> St'u Христоматия по истории государство и право зарубежных стран М., 1984. էջ 170-171

ծնե և անօտարեի) իրավունքները և ազատությունները բարձրագույն տեղ են զրավում տվյալ պետության գործող պոզիտիվ իրավունքի աղբյուրների աստիճանակարգության մեջ ու օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով: Հակասության դեպքում դրանք գերապատվություն ունեն պոզիտիվ իրավունքի մյուս բոլոր աղբյուրների մնացած նորմերի նկատմամբ, որոնք պետք է համապատասխանեն (նվազագույնը՝ չհակասեն, չխախտեն) պաշտոնապես ճանաչված՝ մարդու բնական իրավունքներին և ազատություններին: Պետության Սահմանադրության նորմերը նույնպես չպետք է հակասեն դրանում ճանաչված և ամրագրված մարդու բնական (ի ծնե և անօտարեի) իրավունքներին և ազատություններին:

Բնական իրավունքը (մարդու բնական իրավունքը և ազատությունը) սահմանադրական ճանաչման միջոցով, ձեռք բերելով պոզիտիվ-իրավաբանական ուժ, միաժամանակ շարունակում է մնալ բնական իրավունք, որը պոզիտիվ իրավունքի հետ իր հարաբերակցության տրամաբանությամբ ու համապատասխան սահմանադրական դրույթների իրավաբանական իմաստով ունի ելակետային և գերապատիվ իրավական նշանակություն:

## 2. Իրավունքի աղբյուրները Ռուսաստանի Դաշնությունում

Իրավունքի յուրաքանչյուր ազգային (ազգային-պետական) համակարգ այլ առանձնահատկությունների հետ միասին, աչքի է ընկնում նաև գործող (պոզիտիվ) իրավունքի աղբյուրների յուրօրինակությամբ: Դրա հետ միասին այս կամ այն իրավական ընտանիքի մեջ մանող իրավունքի տարբեր ազգային համակարգերն ունեն որոշ ընդհանուր գծեր, որոնք ներհատուկ են իրավունքի համապատասխան աղբյուրներին: Իրավունքի ռուսական համակարգում, ինչպես նաև ռոմանո-գերմանական իրավունքի ընտանիքին պատկանող այլ իրավական համակարգերում, ժամանակակից պայմաններում իրավունքի աղբյուրները նորմատիվ-իրավական ակտերն են (օրենքներ և ենթօրեննսդրական ակտեր):

Որպես ռուսական իրավունքի աղբյուրներ՝ որոշակի դեր ունեն նորմատիվ-իրավական պայմանագրերը և սովորութային իրավունքը (պետության կողմից հաստատված սովորույթը):

Ժամանակակից ռուսական իրավունքի համակարգում գերապատիվ նշանակություն ունեն պաշտոնապես ճանաչված և Ռուսաստանի Դաշ-

նության Սահմանադրության մեջ ամրագրված մարդու *բնական (ի ծնե և անօտարելի) իրավունքները և ազատությունները*:

Չնայած որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ չի օգտագործվում «բնական իրավունք» հասկացությունը, սակայն դրանում ամրագրված մարդու հիմնական իրավունքները և ազատությունները *եննց բնական իրավունքներ են ու սահմանադրական իրավահասկացողությանը հաղորդում են բնական-իրավական բնույթ*: Այդ մասին են, մասնավորապես, վկայում Սահմանադրության 2 հոդվածի դրույքները՝ մարդու, նրա իրավունքների և ազատությունների՝ որպես «Բարձրագույն արժեքի» մասին, 17 հոդվածի 2-րդ մասի դրույքն այն մասին, որ «մարդու հիմնական իրավունքները և ազատություններն անօտարելի են ու ի ծնե պատկանում են յուրաքանչյուրին»:

Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պոզիտիվ-իրավական նշանակությունն ու գերապատիվ բնույթն ամրագրված են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մի շարք հոդվածներում (հոդված 2, գույխ 2-րդ): Այսպես, Սահմանադրության 18 հոդվածը հռչակում է. «Մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները գործում են անմիջականորեն: Դրանք որոշում են օրենքների իմաստը, բովանդակությունը և կիրառումը, օրենսդիր ու գործադիր իշխանությունների, սեղական ինքնակառավարման գործունեությունը և ապահովվում են արդարադատությամբ»:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունն ամրագրում է մարդու իրավունքների մասին ժամանակակից համաշխարհային չափանիշներին և միջազգային պակտերի (դաշնագրերի) դրույքներին համապատասխանող՝ մարդու իրավունքների և ազատությունների լայն շրջանակ: Մարդու այսպիսի իրավունքների և ազատությունների թվին են դասվում, մասնավորապես, յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքը, անձնական արժանապատվության իրավունքը, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, անձնական և ընտանեկան գաղտնիքի անձեռնմխելիության իրավունքը, իր պատվի ու բարի համբավի պաշտպանության իրավունքը, խղճի ազատությունը, դավանանքի ազատությունը, մտքի և խոսքի ազատությունը, մասնավոր սեփականության իրավունքը, իր աշխատանքային ունակություններն ազատ տնօրինելու իրավունքը, առողջության պահպանման ու բժշկական օգնության իրավունքը, կրթության իրավունքը, զրականության, գեղարվեստական, գիտական, տեխնիկական և այլ տեսակների ստեղծագործության ազատությունը, դասավանդման ազատությունը, մշակութային կյանքին մասնակցելու և մշակութային հաստատություններից օգտվելու իրավունքը և այլն:

Համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 55 հոդվածի 1-ին մասի՝ «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ քվարկված հիմնական իրավունքները և ազատությունները չպետք է մեկնաբանվեն որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների ու ազատությունների ժխտում կամ նվազեցում»: Դա նշանակում է ժամանակակից միջազգային իրավունքում և մարդու բնական իրավունքների ու ազատությունների մասին միջազգային պակտերում (դաշնագրերում), մարդու բոլոր հանրաճանաչ բնական իրավունքների և ազատությունների պոզիտիվ-իրավական նշանակության ճանաչումը:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը ներհատուկ նոր (բնական-իրավական) իրավահասկացողությունը ենթադրում ու նշանակում է, որ դրանում ճանաչված և երաշխավորված մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները ելակետային, որոշիչ և գերապատիվ նշանակություն ունեն Ռուսաստանի Դաշնությունում գործող պոզիտիվ իրավունքի բոլոր մնացած աղբյուրների (և նորմերի) նկատմամբ, ներառյալ՝ բուն Սահմանադրության իրավադրույթները: Համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (2, 17, 18, 55 հոդվածներ) Ռուսաստանի Դաշնությունում գործող ամբողջ պոզիտիվ իրավունքը, պետության ամբողջ իրավասահման, իրավապաշտպան և իրավակիրառ գործունեությունը պետք է պայմանավորվի մարդու իրավունքների և ազատությունների ճանաչման ու պահպանման պահանջներով, համապատասխանի այդ պահանջներին, չհակասի դրանց:

Դրանում է հենց կայանում Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ ամրագրված *իրավական պետության պայմաններում իրավական օրենքի յուրահատուկ բնական-իրավական հայեցակարգի հիմնական իրավական իմաստը*:

Մարդու բնական իրավունքների՝ որպես գործող իրավունքների աղբյուրի և Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության՝ որպես Ռուսաստանի Դաշնության հիմնական ու գլխավոր նորմատիվ-իրավական ակտի, հարաբերակցությունը որոշվում է հետևյալ կերպ: Մի կողմից՝ մարդու բնական իրավունքների և ազատությունների սահմանադրական ճանաչումն ու երաշխավորումը, Ռուսաստանի Դաշնությունում գործող պոզիտիվ իրավունքի շրջանակներում, դրանց տալիս է պոզիտիվ-իրավական նշանակություն, ընդ որում, հենց ելակետային, գերապատիվ և որոշիչ իրավական նշանակություն (մարդու իրավունքների, պոզիտիվ իրավունքի այլ աղբյուրների և նորմերի հարաբերակցությամբ): Մյուս կողմից՝ մարդու բնական իրավունքների ու ազատությունների այդ սահմանադրական ճանաչումը և երաշխավորումը (դրանց ելակետային, գե-

րապատիվ և որոշիչ իրավական նշանակության սահմանադրական ճանաչման ուժով) բարձրագույն իրավաբանական ուժ են ձեռք բերում Ռուսաստանի Դաշնությունում գործող պոզիտիվ իրավունքի բոլոր աղբյուրների ու նորմերի համակարգում, որը ներառում է նաև բուն Սահմանադրության դրույթները: Համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության՝ մարդու հանրաճանաչ բնական իրավունքները և ազատությունները, դրանց ու Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության այլ դրույթների և Ռուսաստանի Դաշնությունում գործող պոզիտիվ իրավունքի մնացած այլ աղբյուրների նորմերի հետ հակասություն առաջանալու դեպքում պոզիտիվ-իրավական տեսակետից օժտված են գերապատվությամբ (այսինքն՝ ավելի բարձր իրավաբանական ուժով):

*Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը՝ որպես նորմատիվ-իրավական ակտ, օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և երկրի բոլոր նորմատիվ-իրավական ակտերի համակարգում ու դրա հետ սխախտ գլխավոր իրավասահման նորմատիվ ակտ է, որը սահմանում է երկրում գործող պոզիտիվ իրավունքի աղբյուրների համակարգի հիմունքները:*

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ սահմանված են երկրի սահմանադրական կարգի և դաշնային կառուցվածքի հիմունքները, ձևակերպված են հասարակական ու պետական կյանքի հիմնարար սկզբունքները, ամրագրված են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, սահմանված են պետական մարմինների համակարգը և իրավագործությունները, կարգավորված են տեղական ինքնակառավարման հիմնական հարցերը, նախատեսված է գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու և նոր Սահմանադրություն ընդունելու կարգը: Սահմանադրության «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերնագիրը կրող II բաժնում կարգավորված են նաև 1993 թվականի Սահմանադրության ուժի մեջ մտնելու և նախորդ Սահմանադրության գործողությունը դադարելու հետ կապված այլ կարևոր հարցեր:

Բոլոր նորմատիվ-իրավական ակտերը (օրենքները և ենթօրենսդրական ակտերը) պետք է համապատասխանեն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը: Այդ պահանջի ապահովման գործում կարևոր դեր է խաղում Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը: Համաձայն Սահմանադրության (125 հոդվածի 6-րդ մաս) հակասահմանադրական ճանաչված իրավական ակտերը կամ դրանց առանձին դրույթները կորցնում են իրենց ուժը: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը չհամապատասխանող՝ Ռուսաստանի Դաշ-

նության միջազգային պայմանագրերը գործողության մեջ դրվելու և կիրառվելու ենթակա չեն:

Նորմատիվ-իրավական ակտերի համակարգում Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունից հետո առավել բարձր իրավաբանական ուժ ունեն համադաշնային օրենքները:

Ռուսաստանի Դաշնության օրենսդիր իշխանությունը (համադաշնային օրենքներ ընդունելու իրավունքը) պատկանում է Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովին՝ Ռուսաստանի Դաշնության բարձրագույն և ներկայացուցչական մարմնին (խորհրդարանին): Դաշնային ժողովը բաղկացած է երկու պալատից՝ Դաշնային խորհրդից և Պետական Դումայից:

Համադաշնային օրենքները բաժանվում են երկու տեսակի՝ դաշնային օրենքներ և դաշնային սահմանադրական օրենքներ:

*Դաշնային օրենքները* ընդունվում են Պետական Դումայի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, և հինգ օրվա ընթացքում վախճանցվում են Դաշնային խորհրդի քննարկմանը: Ընդ որում, օրենքը համարվում է Դաշնային խորհրդի կողմից հավանության արժանացած, եթե դրա օգտին քվեարկել է դրա անդամների ընդհանուր թվի կեսից ավելին կամ, եթե առանչորս օրվա ընթացքում դա չի քննարկվել Դաշնային խորհրդի կողմից: Դաշնային խորհրդի կողմից մերժվելու և Դաշնային խորհրդի որոշման հետ Պետական Դումայի անհամաձայնության դեպքում օրենքը ենթակա է Պետական Դումայում կրկնակի քննարկման: Այդ դեպքում դաշնային օրենքը համարվում է ընդունված, եթե կրկնակի քվեարկության ժամանակ կողմ է քվեարկել Պետական Դումայի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Ընդունված դաշնային օրենքը հինգ օրվա ընթացքում ուղարկվում է Ռուսաստանի Դաշնության նախագահին՝ ստորագրման և հրապարակման: Ռուսաստանի Դաշնության նախագահը առանչորս օրվա ընթացքում ստորագրում է դաշնային օրենքը և հրապարակում դա: Ռուսաստանի Դաշնության նախագահն ունի հաղթահարվող վետոյի իրավունք և կարող է մերժել ընդունված դաշնային օրենքը: Այդ դեպքում Պետական Դուման և Դաշնային խորհուրդը սահմանված կարգով կրկին քննարկում են մերժված օրենքը: Եթե կրկնակի քննարկման ժամանակ Պետական Դումայի պատգամավորների և Դաշնային խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով դաշնային օրենքը հավանության արժանանա նախկինում ընդունված խմբագրությամբ, ապա Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից յոթ օրվա ընթացքում ենթակա է ստորագրման և հրապարակման:

Դաշնային օրենքները բաժանվում են կողիֆիկացված օրենքների (օրենսդրքերի) և սովորական (չկողիֆիկացված) օրենքների: *Օրենսգիրքը* ինտեգրատիվ բնույթի օրենքն է, որը պարունակում է հասարակական կյանքի որոշակի բնագավառի բոլոր հիմնական հարաբերությունների ամբողջական և միատեսակ իրավական կարգավորման համար անհրաժեշտ ընդհանուր սկզբունքների և կոնկրետ նորմերի ներքնապես համաձայնեցված համալիրը:

Օրենսգրքերը, որպես կանոն, ունեն ճյուղային բնույթ և ներառում են իրավունքի մեկ ճյուղի սկզբունքների ու նորմերի հանրագումարը: Որպես օրինակ՝ կարելի է նշել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրքը (I մասն ընդունվել է 1994 թվականի նոյեմբերի 30-ին, II մասը՝ 1996 թվականի հունվարի 26-ին), Ռուսաստանի Դաշնության ընտանեկան օրենսգիրքը (ընդունվել է 1995 թվականի դեկտեմբերի 29-ին), Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրքը (ընդունվել է 1996 թվականի հունիսի 13-ին, ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 1-ին), Ռուսաստանի Դաշնության օդային օրենսգիրքը (ընդունվել է 1997 թվականի մարտի 19-ին):

Դաշնային օրենքների հիմնական զանգվածը կազմում են սովորական (չկողիֆիկացված) օրենքները, որոնք կարգավորում են առանձին, առավել կարևոր հասարակական հարաբերությունների կամ այդ հարաբերությունների որոշակի վոխկապակցված հանրագումարը: Դրանցից են, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության օրենքը «Հասարակական միավորումների մասին» (1995 թվականի ապրիլի 14-ին), Ռուսաստանի Դաշնության օրենքը «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին» (1997 թվականի սեպտեմբերի 5-ին) և այլն:

*Դաշնային սահմանադրական օրենքներն* ընդունվում են միայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ մախատեսված հարցերով: Դրանց մի մասն արդեն ընդունվել է (օրինակ՝ դաշնային սահմանադրական օրենքները «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական Դատարանի մասին», «Ռուսաստանի Դաշնության կառավարության մասին»), իսկ մնացածները (օրինակ՝ դաշնային սահմանադրական օրենքները «Սահմանադրական Ժողովի մասին», «Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների կարգավիճակը փոփոխելու մասին») դեռևս պետք է ընդունվեն:

Դաշնային սահմանադրական օրենքներն օժտված են ավելի բարձր իրավաբանական ուժով, քան դաշնային օրենքները: Համաձայն Ռու-



սաստանի Դաշնության Սահմանադրության (76 հոդվածի 4-րդ մաս)՝ դաշնային օրենքները չեն կարող հակասել դաշնային սահմանադրական օրենքներին: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը (108 հոդվածի 2-րդ մաս) սահմանում է դաշնային սահմանադրական օրենքների ընդունման ավելի բարդ կարգ, քան նախատեսված է դաշնային օրենքների համար: Դաշնային սահմանադրական օրենքը համարվում է ընդունված, եթե հավանության է արժանացել Դաշնային Խորհրդի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երեք չորրորդով և Պետական Դումայի պատգամավորների ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով: Ռուսաստանի Դաշնության նախագահը դաշնային սահմանադրական օրենքների նկատմամբ չունի հաղթահարվող վետոյի իրավունք: Ուստի, ընդունված դաշնային սահմանադրական օրենքը աասնչորս օրվա ընթացքում Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից ենթակա է ստորագրման և հրապարակման:

*Ռուսաստանի Դաշնության ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտեր են* Ռուսաստանի Դաշնության նախագահի նորմատիվ հրամանագրերը, Ռուսաստանի Դաշնության կառավարության դաշնային որոշումները, Ռուսաստանի Դաշնության նախարարությունների և գերատեսչությունների հրամանները, հրահանգները և այլ նորմատիվ-իրավական ակտերը:

Ռուսաստանի Դաշնության ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերի շարքում ավելի բարձր իրավաբանական ուժով օժտված են *Ռուսաստանի Դաշնության նախագահի նորմատիվ հրամանագրերը*: Ռուսաստանի Դաշնության նախագահի այսպիսի նորմատիվ հրամանագրերը, ինչպես նաև նրա ոչ նորմատիվ հրամանագրերը և կարգադրությունները, համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (90 հոդվածի 3-րդ մաս) «չպետք է հակասեն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը և դաշնային օրենքներին»: Ռուսաստանի Դաշնության նախագահի նորմատիվ հրամանագրերն ընդունվում են հասարակական և պետական կյանքի հարցերի լայն շրջանակի վերաբերյալ: Դրանք, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության նախագահի ոչ նորմատիվ հրամանագրերը և կարգադրությունները պարտադիր են կատարման Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում:

Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, իրականացնելով գործադիր իշխանություն, արձակում է որոշումներ և կարգադրություններ, որոնք պարտադիր են կատարման Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում: Ընդ որում, Ռուսաստանի Դաշնության կառավարության կարգադրություններն արձակվում են օպերատիվ հարցերով և,

որպես կանոն, անհասական բնույթի ակտեր են (չեն սահմանում իրավունքի նորմ): *Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշումներն* ընդունվում են դաշնային գործադիր իշխանության իրականացման հիմնական ուղղություններով և ունեն նորմատիվ բնույթ: Որպես օրինակ՝ կարելի է բերել Ռուսաստանի Դաշնության կառավարության 1999 թվականի հունվարի 4-ի որոշումը «Ռուսաստանի Դաշնության տնտեսության պետական սեկտորի զարգացման կանխատեսման մասին»: Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշումները, ինչպես նաև ոչ նորմատիվ կարգադրությունները, համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (115 հոդվածի 1-ին մաս), ընդունվում են «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության, դաշնային օրենքների, Ռուսաստանի Դաշնության նախագահի նորմատիվ հրամանագրերի հիման վրա և ի կատարում դրանց»: Նշված ակտերի հետ հակասության դեպքում Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշումները և կարգադրությունները կարող են վերացվել Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից:

Ռուսաստանի Դաշնությունում գործադիր իշխանության կենտրոնական մարմինները (դաշնային նախարարությունները, պետական կոմիտեները և գերատեսչությունները) վերադաս մարմինների նորմատիվ ակտերի հիման վրա իրավասու են արձակել տարբեր նորմատիվ-իրավական ակտեր՝ *հրամաններ, հրահանգներ, կանոնադրություններ* և այլն: Այդպիսի ակտերի թվին է դասվում, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարի հրամանը «Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի քննչական մեկուսարանի կանոնադրությունը հաստատելու մասին (1998 թվականի հունվարի 25-ի թիվ 20, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունում գրանցված է 1999 թվականի փետրվարի 19-ին, գրանցման համարը 1712): Այդ նորմատիվ-իրավական ակտերը ենթակա են Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունում պետական գրանցման և սահմանված կարգով հրապարակման, եթե դրանք շոշափում են քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը կամ ունեն միջգերատեսչական բնույթ: Ռուսաստանի Դաշնության կառավարությունը կարող է վերացնել գործադիր իշխանության կենտրոնական մարմինների ակտերը (նորմատիվ և ոչ նորմատիվ) դրանք Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը, Ռուսաստանի Դաշնության օրենքներին, Ռուսաստանի Դաշնության նախագահի հրամանագրերին և կարգադրություններին, Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշումներին ու կարգադրություններին հակասելու դեպքում:

*Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների նորմատիվ-իրավական ակտերը* կազմում են գործող նորմատիվ-իրավական ակտերի նշանակալից մասը: Համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (76 հոդված)՝ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներն իրենց նորմատիվ-իրավական ակտերը (օրենքներն ու ենթօրենսդրական ակտերը) ընդունվում են ինչպես Ռուսաստանի Դաշնության և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների համատեղ տնօրինության հարցերով, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության տնօրինությունից և Ռուսաստանի Դաշնության ու Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների համատեղ տնօրինությունից դուրս գտնվող հարցերով (տե՛ս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 72 հոդվածը):

Ընդ որում, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենքները և այլ նորմատիվ-իրավական ակտերը չեն կարող հակասել Ռուսաստանի Դաշնության տնօրինության հարցերով ընդունված դաշնային օրենքներին (տե՛ս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 71 հոդվածը) ու Ռուսաստանի Դաշնության և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների համատեղ տնօրինության հարցերով ընդունված դաշնային օրենքներին (տե՛ս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 72 հոդվածը): Դաշնային օրենքի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի նորմատիվ-իրավական ակտերի միջև հակասության դեպքում գործում է դաշնային օրենքը:

Ռուսաստանի Դաշնության տնօրինության հարցերից և Ռուսաստանի Դաշնության ու Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների համատեղ տնօրինության սահմաններից դուրս, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտները (հանրապետությունները, երկրամասերը, մարզը, դաշնային նշանակության քաղաքները, ինքնավար մարզերը և ինքնավար օկրուգները) իրականացնում են սեփական իրավական կարգավորում, ներառյալ՝ օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի ընդունումը: Դաշնային օրենքի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի նորմատիվ-իրավական ակտի միջև հակասության դեպքում գործում է Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի նորմատիվ-իրավական ակտը:

Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի նորմատիվ-իրավական ակտերը գործում են միայն Ռուսաստանի Դաշնության համապատասխան սուբյեկտի տարածքում:

Ռուսաստանի Դաշնության կազմում ընդգրկված *հանրապետություններում* ընդունվում են այնպիսի նորմատիվ-իրավական ակտեր, ինչպիսիք են՝

1) համապատասխան հանրապետությունների սահմանադրությունները,

2) օրենքները,

3) Պանրապետությունների գործադիր իշխանության ղեկավարների ակտերը,

4) հանրապետությունների կառավարությունների որոշումները,

5) հանրապետությունների նախարարությունների և գերատեսչությունների ակտերը:

*Ռուսաստանի Դաշնության այլ սուբյեկտներում* (երկրամասերում, մարզում, դաշնային նշանակություն ունեցող քաղաքներում, ինքնավար մարզերում, ինքնավար օկրուգներում) ընդունվում են հետևյալ նորմատիվ-իրավական ակտերը. Ռուսաստանի Դաշնության համապատասխան սուբյեկտի կանոնադրությունները, օրենքները, վարչակազմի ղեկավարի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներում գործադիր իշխանության այլ մարմինների ակտերը:

Նորմատիվ-իրավական ակտերի՝ որպես իրավունքի աղբյուրի, շրջանակի մեջ մտնում են նաև *տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ-իրավական ակտերը*, որոնք դրանց կողմից ընդունվում են գործող օրենսդրության համաձայն: Չնայած Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության համաձայն (12 հոդված)՝ տեղական ինքնակառավարման մարմինները չեն ընդգրկվում պետական իշխանության մարմինների համակարգում, սակայն դրանք օրենսդրորեն (պետության կողմից պատվիրակված նորմատիվության կարգով) օժտված են առանձին պետական լիազորություններով, ներառյալ՝ տեղական նշանակություն ունեցող հարցերով մի շարք նորմատիվ-իրավական ակտեր ընդունելու իրավունքով: Այսպես, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի կամ անմիջականորեն բնակչության կողմից ընդունվում է *համայնքային կազմավորման կանոնադրությունը*. Դրանում, մասնավորապես, սահմանվում են տեղական ինքնակառավարման այլ նորմատիվ-իրավական ակտերի տեսակները, դրանց ընդունման և ուժի մեջ մտնելու կարգը: Խոսքը *տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների և պաշտոնատար անձանց ակտերի մասին է*:

«Ռուսաստանի Դաշնության տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» 1995 թվականի օգոստոսի 12-ի Ռուսաստանի Դաշնության օրենքը (8 հոդված) նախատեսում է համայնքային կազմավորման կանոնադրության պարտադիր պետական գրանցում՝ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի օրենքով սահմանված կարգով: Համայնքային կազմավորման կանոնադրության պետական գրանցումը մերժելու համար ելիմք կարող է ծառայել միայն դրա

հակասությունը Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը և օրենքներին, Ռուսաստանի Դաշնության համապատասխան սուբյեկտի օրենքներին: Կանոնադրության պետական զբանգման մերժումը կարող է քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից բողոքարկվել դատական կարգով:

Ռուսաստանի Դաշնությունում իրավունքի ինքնուրույն աղբյուրներից մեկը *նորմատիվ պայմանագիրն է*, այսինքն՝ իրավունքի նորմեր պարունակող պայմանագիրը: Այդպիսի նորմատիվ պայմանագրերը կարող են ունենալ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական բնույթ: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (15 հոդվածի 4-րդ մաս) համաձայն՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և նորմերն ու Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերը նրա իրավական համակարգի բաղադրատարրն են: Ընդ որում, եթե Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով սահմանված են այլ կանոններ, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի կանոնները:

Որպես գործող իրավունքի աղբյուր՝ նշանակալի դեր են խաղում նաև ներպետական պայմանագրերը: Այսպես, համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (11 հոդվածի 3-րդ մաս)՝ Ռուսաստանի Դաշնության պետական իշխանության մարմինների և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների միջև սնօրինության հարցերի և լիազորությունների սահմանազատումն իրականացվել է ինչպես Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ, այնպես էլ սնօրինության հարցերի ու լիազորությունների սահմանազատման մասին դաշնային և այլ պայմանագրերով: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության համապատասխան դրույթներին սնօրինության հարցերի և լիազորությունների սահմանազատման մասին դաշնային և այլ պայմանագրերի անհամապատասխանության դեպքում, համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (բաժին II «Եզրափակիչ և անցումային դրույթներ»), գործում են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության դրույթները:

Նորմատիվ պայմանագրի՝ որպես իրավունքի աղբյուրի տարատեսակներ են նաև աշխատանքային իրավունքի բնագավառում գործատուների և աշխատողների միջև կնքվող տարբեր *կոլեկտիվ պայմանագրերը*, ինչպես նաև *քաղաքացիական իրավունքի բնագավառի նորմատիվ պայմանագրերը*:

Քաղաքացիական իրավունքի բնագավառի սովորական պայմանագիրը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 420 հոդ-

վածույմ սահմանվում է որպես «երկու կամ մի քանի անձանց համաձայնությամբ՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների սահմանման, դադարման մասին»: Այսպիսի սովորական պայմանագիրն իրավունքի գործող նորմերի իրականացման ակտ է, ունի անհատական բնույթ և նշանակալի է կոնկրետ որոշված անձանց համար և ոչ թե իրավունքի նոր նորմեր սահմանող ակտ է: Այսպիսի պայմանագրերն անհատական և ոչ թե նորմատիվ (նորմ սահմանող) բնույթի ակտեր են, ուստի՝ իրավունքի աղբյուրներ չեն:

Նորմատիվ-իրավական նշանակություն ունի (իրավունքի պայմանագրային աղբյուրի իմաստով) քաղաքացիական իրավունքի բնագավառի, այսպես կոչված, *հրապարակային պայմանագիրը*, որը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի (426 հոդվածի 1-ին կետ) սահմանվում է՝ որպես «պայմանագիր, որը կնքված է առևտրային կազմակերպության կողմից և սահմանում է ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու այն պարտականությունները, որոնք այդ կազմակերպությունն իր գործունեության բնույթով պետք է իրականացնի իրեն դիմող յուրաքանչյուրի նկատմամբ (մանրածախ առևտուր, ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրումներ, կապի ծառայություններ, էներգամատակարարում, բժշկական, հյուրանոցային սպասարկում և այլն)»: Այսպիսի հրապարակային պայմանագրի դրույթները (դրա պայմանները և այլն) տարածվում են անձանց անորոշ բազմության վրա ու պարտադիր են բոլոր կոնկրետ պայմանագրերի կողմերի համար, որոնք կարող են կնքվել համապատասխան հրապարակային պայմանագրի ընդհանուր դրույթների (նորմերի) հիման վրա:

Ըստ էության, հրապարակային պայմանագիր ասելով նկատի է առնվում *տիպային կամ օրինակելի պայմանագիրը*, որը պայմանագրի տվյալ տիպի շրջանակներում պարունակում է բոլոր կոնկրետ պայմանագրերի համար պարտադիր ընդհանուր դրույթներ (նորմեր): Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 426 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «օրենքով նախատեսված դեպքերում Ռուսաստանի Դաշնության կառավարությունը կարող է կողմերի համար պարտադիր կանոններ (օրինակելի պայմանագրեր և այլն) հրատարակել հրապարակային պայմանագիր կնքելու և կատարելու վերաբերյալ»: Նման նորմատիվ պայմանագրերի օրինակելի պայմանները «կարող են շարադրվել այդ պայմանները պարունակող օրինակելի պայմանագրի կամ այլ փաստաթղթի ձևով» և հրապարակվել մամուլում (տես Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 427 հոդվածը):

Մի շարք դեպքերում Ռուսաստանի Դաշնությունում՝ որպես իրավունքի աղբյուր, հանդես է գալիս սովորույթային իրավունքը, այսինքն՝ պետության կողմից թույլատրված սովորույթները: Այսպես, ուսական օրենքներով (Հյուպատոսական կանոնադրությամբ, Առևտրային ծովագնացության օրենսգրքով) ճանաչվում են որոշ միջազգային սովորույթների իրավական նշանակությունը, օրինակ՝ նավերի բեռնման և բեռնաթափման կարգի ու տևողության մասին նավահանգիստներում ձևավորված սովորույթները: Քաղաքացիական իրավունքի ոլորտում գործարար շրջանառության սովորույթների իրավական նշանակությունը ճանաչված է Ռուսաստանի Դաշնության գործող քաղաքացիական օրենսգրքով: Այսպես, համաձայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 421 հոդվածի 5-րդ կետի՝ «Եթե կողմերը չեն որոշել պայմանագրի պայմանները կամ դրանք որոշված չեն դիսպոզիտիվ նորմով, ապա համապատասխան պայմանները որոշվում են կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվելիք գործարար շրջանառության սովորույթներով»: Ընդ որում, համաձայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 5 հոդվածի՝ «Գործարար շրջանառության սովորույթ» է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող՝ օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը՝ անկախ դրա որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից: Համապատասխան հարաբերության մասնակիցների համար օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրին հակասող գործարար շրջանառության սովորույթները չունեն իրավական նշանակություն և ենթակա չեն կիրառման:

#### **Գլուխ 4. Իրավասահմանում (իրավաստեղծում)**

##### **1. Իրավասահմանման հասկացությունը և իրավասահման գործունեության տեսակները**

*Իրավասահմանումը պետական գործունեության ձև և ուղղություն է՝ կապված այն իրավունքի նորմերի պաշտոնական արտահայտման և ամրագրման հետ, որոնք կազմում են պոզիտիվ իրավունքի բոլոր գործող աղբյուրների նորմատիվ-իրավական բովանդակությունը:*

«Իրավասահմանում» հասկացությունն ավելի ճշգրիտ է արտահայտում այն առանձնահատուկ գործունեության իմաստը և բովանդակությունը, որը, սովորաբար, անվանվում է *«իրավաստեղծում»*: Իրավունքի և օրենքի (պոզիտիվ իրավունքի) լեգիտական պոզիտիվիստական մույ-

նացումն ուղեկցվում է «օրինաստեղծություն» («օրենսդրություն») և «իրավաճանստեղծում» հասկացությունների շփոթմամբ և նույնացմամբ:

Ազատական-իրավաբանական իրավահասկացողության դիրքերից ակնհայտ է, որ պետությունը (համապատասխան պետական մարմինները) իրականում իրականացնում են օրինաստեղծ (օրենսդրական) գործունեություն, ստեղծում (և այդ իմաստով ստեղծագործում են) օրենքներ, սակայն դա բոլորովին չի նշանակում, թե իբր պետությունը ստեղծագործում (ծնում) է իրավունքը որպես այդպիսին: Իրավունքը՝ որպես օբյեկտիվ սոցիալական երևույթ (հասարակական հարաբերությունների հասուկ կարգավորիչ և առանձնահատուկ ձև), որի սկզբունքը ձևական հավասարությունն է, ո՛չ պետության ստեղծագործություն է, ո՛չ էլ պետական-իշխանական կամքի արդյունք, այլ մարդկանց, հասարակական կյանքի բարդ և բազմագործոն սոցիալ-պատմական գործընթացի հանրագումար արդյունքների արտահայտման հատուկ հոգևոր ձև է, մարդկային հարաբերություններում հավասարության, ազատության ու արդարության ընդհանուր քաղաքակրթական առաջադիմությանը համապատասխան հասարակության (և ժողովրդի) ձեռք բերած զարգացման աստիճանի արդյունք: Տեղին է ասել, որ հենց ինքը՝ պետությունը, որպես հանրային իշխանության իրավական ձև, այդ սոցիալ-պատմական գործընթացի արդյունքն է:

Իրավասահմանման, այսինքն՝ «իրավաստեղծման» պոզիտիվ իրավունքի գործող աղբյուրների նորմերի սահմանման իմաստով կարևոր ձևերից մեկն *ուղղակի պետական նորմաստեղծումն է՝* համապատասխան պետական մարմինների կողմից նորմատիվ-իրավական ակտերի (օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի) ընդունումը:

Սակայն, նորմատիվ-իրավական ակտերը միայն պոզիտիվ իրավունքի աղբյուրներից մեկն են, իսկ *օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը (սահմանումը)* սուկ իրավասահման ձևերից մեկը, իրավասահման գործունեության տեսակներից (ուղղություններից) մեկը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ նորմատիվ-իրավական ակտերը (և, առաջին հերթին՝ օրենքը) իրավունքի հիմնական աղբյուր են միայն ռոմանո-գերմանական ընտանիքի իրավունքի իրավական համակարգերում: Ընդ որում, ռոմանո-գերմանական իրավունքի այդ բոլոր համակարգերում, բացի նորմատիվ-իրավական ակտերից, գործում են նաև իրավունքի այլ աղբյուրներ, որոնց իրավական նշանակությունը և բովանդակությունն արտահայտվում ու ամրագրվում է իրավասահման գործունեության այլ ձևերով:



«Իրավասահմանում» հասկացությունը ներառում է *իրավասահման գործունեության տարբեր տեսակներ*, որոնք արտացոլում են գործող իրավունքի տարբեր աղբյուրների՝

- 1) նորմատիվ-իրավական ակտերի.
- 2) դատական նախադեպի.
- 3) նորմատիվ-իրավական պայմանագրի.
- 4) սովորութային իրավունքի.

5) իրավաբանական վարդապետության և այլնի նորմատիվ-իրավական բնույթի և բովանդակության արտահայտման ու ամրագրման գործընթացի առանձնահատկությունները:

Իրավասահման գործունեության այդ տարբեր տեսակների (և իրավասահման ձևերի) առանձնահատկությունը պայմանավորված է պոզիտիվ իրավունքի համապատասխան աղբյուրների յուրօրինակությամբ, սովյալ աղբյուրի առանձնահատկություններով, դրա նորմատիվ-իրավական բնույթով և բովանդակությամբ:

Այսպես, մարդու բնական (ի ծնե և անօտարելի) իրավունքների ու ազատությունների՝ որպես պոզիտիվ իրավունքի հատուկ աղբյուրի, յուրօրինակությունը որոշում է նաև պետության համապատասխան իրավասահման գործունեության առանձնահատկությունները: Այդ ոլորտում իրավասահման գործունեության բնույթը և բովանդակությունը *ոչ թե մարդու հանրաճանաչ բնական իրավունքների ու ազատությունների ստեղծման* (քանի որ դրանք արդեն կան և սրամաղրվել են պետությանը), *այլ դրանց պաշտոնական սահմանադրական ճանաչման և երաշխավորման մեջ է՝* որպես սովյալ պետության մեջ գործող պոզիտիվ իրավունքի նորմեր (տե՛ս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 17 հոդվածի I-ին մասը):

*Նորմատիվ-իրավական ակտերը* (օրենքները և ենթաօրենսդրական ակտերը)՝ որպես իրավունքի աղբյուր, ընդունվում (սահմանվում) են հիմնականում համապատասխան ներկայացուցչական և գործադիր պետական մարմինների կողմից (դրանց ուղղակի նորմաստեղծ գործունեության գործընթացում), իսկ որոշ դեպքերում համաժողովրդական քվեարկությամբ (հանրաքվեի միջոցով):

*Դատական նախադեպը՝* որպես իրավունքի աղբյուր, ստեղծվում է պետության որոշակի բարձրագույն դատական մարմինների իրավասահման գործունեության ձևով:

*Նորմատիվ-իրավական պայմանագիրը՝* որպես իրավունքի աղբյուր, սահմանվում է տարբեր պետությունների միջև (միջազգային պայմանագրեր), տարբեր պետական մարմինների կամ պետական և ոչ պետա-

կան մարմինների միջև (հանրային-իրավական բնույթի ներպետական պաշտնանագրեր), մասնավոր իրավունքի տարբեր սուբյեկտների միջև (քաղաքացիական-իրավական բնույթի նորմատիվ պայմանագրեր) համաձայնագիր կնքելու միջոցով: Իրավունքի նորմերի սահմանման այս բոլոր պայմանագրային ձևերը և ուղղությունները (հանրային և մասնավոր իրավունքի ոլորտում) սահմանված ու կարգավորված են գործող օրենքով և, այդ իմաստով, պաշտոնապես թույլատրված են պետության կողմից՝ որպես պոզիտիվ իրավունքի հատուկ աղբյուր: Միջազգային պայմանագրերի նկատմամբ կիրառվում է դրանց՝ որպես գործող իրավունքի աղբյուրի, ճանաչման (պետական թույլատրման) այնպիսի հատուկ ընթացակարգ, ինչպիսին պայմանագրի վավերացումն է պետության բարձրագույն ներկայացուցչական (օրենսդիր) մարմնի կողմից:

Գործող իրավունքի համակարգում սովորույթի իրավական նշանակության, տեղի և դերի օրենսդրական ճանաչման ձևով իրականացվում է այս կամ այն սովորույթների՝ որպես իրավական սովորույթների պետական թույլատրումը, այսինքն՝ դրանց սահմանումը որպես իրավունքի աղբյուր:

*Իրավաբանական վարդապետությունը (այսպես կոչված՝ «իրավաբանների իրավունքը») որպես գործող իրավունքի պաշտոնական աղբյուր ճանաչելու գործում վճռորոշ դեր է խաղում իրավական (պետական-իրավական) պրակտիկան, այսինքն՝ իրավակիրառար (հատկապես՝ դատական) և երբեմն էլ՝ իրավաստեղծ գործունեության մեջ համապատասխան վարդապետական դրույթների, հայեցակարգերի, կառուցվածքների, գաղափարների ու սկզբունքների փաստացի օգտագործումը: Որոշ դեպքերում իրավաբանական վարդապետության դրույթների նշանակությունը՝ որպես գործող իրավունքի աղբյուր, ամրագրվել է օրենսդրական կարգով: Այսպես, Բյուզանդիայի Վալենտին III կայսեր (426 թվական) քաղվածքներ կատարելու մասին օրենքով հինգ առավել ազդեցիկ հռոմեական իրավաբանների (Գայոսի, Պանինիանոսի, Պողոսի, Ուլպիանոսի և Մոլեստինոսի) դրույթներին տրվեց օրենքի ուժ: Բացի դրանից, նշված օրենքը ճանաչեց նաև մի շարք այլ հռոմեական այն իրավաբանների (Սաբինայի, Սցելայի, Հուլիանոսի, Մարցելլայի և ուրիշների) դրույթների իրավական նշանակությունը, որոնց աշխատություններից քաղվածքներ էին կատարվել վերը նշված հինգ իրավաբանների աշխատություններում: Հուստինիանոսի (VI դար) կողիֆիկացիայում (օրինակարգավորումներում) ամրապնդվեց երեսուներ ի հռոմեական իրավաբանների դրույթների (Ք.ծ.ա. I դարից մինչև Ք.ծ.հ. IV դար) իրավական նշանակությունը:*

Իրավունքի կրոնական համակարգերի (մուսուլմանական իրավունքի, հինդուսական իրավունքի, հրեական իրավունքի, քրիստոնեական կանոնական իրավունքի) շրջանակներում, իրավաբանական վարդապետության՝ որպես իրավունքի պաշտոնական աղբյուրի ճանաչման ու օրինականացման գործընթացում, էական նշանակություն ունեն այն հանգամանքը, որ այդ վարդապետությունը ձևավորվել և զարգացել էր համապատասխան կրոնական դավանանքների (և դրանց Սուրբ գրքերի) հիման վրա՝ իրավունքի մասին որոշակի կրոնական-աստվածաբանական ուսմունքի բաղադրատարրերի տեսքով: Հավատացյալների համայնքի անդամների համար իրավունքի համապատասխան կրոնական վարդապետությունն անմիջականորեն օժտված էր տիրապետող կրոնի բարձրագույն սանկցիայով և որպես իրավական կարգավորիչ իր պրակտիկ գործողության համար պետական իշխանության կողմից լրացուցիչ հաստատման կարիք չուներ: Այնտեղ, որտեղ հավատացյալների որոշակի համայնքն իր կրոնական իրավունքով զանվում էր իրավունքի այլ համակարգի տիրապետման պայմաններում, պահանջվում էր համապատասխան պետական իշխանության կողմից տվյալ կրոնական իրավունքի (ներառյալ՝ մաս դրա վարդապետության), որպես այդ կրոնական համայնքի անդամների համար պաշտոնապես գործող իրավունքի աղբյուրի, հատուկ թույլտվություն:

Իրենց ներհատուկ բոլոր առանձնահատկություններով հանդերձ՝ պոզիտիվ իրավունքի ազգային համակարգի գործող աղբյուրների սահմանմանն ուղղված գործունեության տարբեր տեսակներն ունեն պաշտոնական-իշխանական (պետական) բնույթ: Դա, իհարկե, չի նշանակում, թե բնական իրավունքները և ազատությունները, սովորույթները, իրավաբանական վարդապետությունը (աշխարհիկ կամ կրոնական) և պայմանագիրն ստեղծվում են հենց պետության կողմից: Սակայն, դրանց ճանաչումը և ամրագրումը պոզիտիվ իրավունքի համապատասխան ազգային (ազգային-պետական) համակարգի շրջանակներում՝ որպես գործող (այսինքն՝ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող) աղբյուրներ, կրում են պաշտոնական-իշխանական (պետական) բնույթ և վերաբերում են պետության իրավասահման իրավասությունը:

## 2. Իրավասահման գործունեության սկզբունքները

Պետության իրավասահման գործունեությունը պայմանավորված է հասարակական ու պետական կյանքի հիմնական ոլորտներում, ուղղություններում և հարաբերություններում մարդկանց վարքագծի իրավա-

կան կարգավորման ու կարգավորվածության օրյեկտիվ անհրաժեշտությամբ: Իրավասահման գործունեության բովանդակությունը, բնույթը, նպատակները և արդյունքները որոշվում են օրյեկտիվ ու սուբյեկտիվ, նյութական և հոգևոր գործոնների մեծ ու բարդ համալիրով: Ընդ որում, առաջին հերթին, էական նշանակություն ունեն այնպիսի գործոնները, ինչպիսիք են՝ համապատասխան ժողովրդի, հասարակության ու պետության սոցիալ-պատմական, ընդհանուր քաղաքակրթական և ընդհանուր իրավական զարգացման ձեռք բերված աստիճանը, պետության ու իրավունքի կազմավորված տիպը և ձևը (կառավարման ձևը, պետական կառուցվածքի ձևը, քաղաքական-իրավական վարչակարգի ձևը և բնույթը), սովյալ ժողովրդի պետական-իրավական կենսավորման ու ավանդույթները, բնակչության քաղաքական ու իրավական մշակույթի մակարդակը, հասարակության սոցիալ-քաղաքական և հոգևոր վիճակը (սոցիալական-քաղաքական ուժերի հարաբերակցությունը, անկախ հասարակական կարծիքի տեղն ու դերը հասարակական և քաղաքական կյանքում, հասարակությունում սոցիալ-քաղաքական, գաղափարական-աշխարհայացքային և իրավական համաձայնության չափը՝ որպես օրենքում ընդհանուր կամքի ու ընդհանուր շահերի պատշաճ արտահայտման, սահմանվելիք նորմերի սոցիալական օրինականացման հիմք և այլն), իրավաբանական վարդապետության զարգացման աստիճանը (իրավասահման գործունեության իրավաբանական-գիտական հիմքերի վիճակը, այդ ոլորտում տեսության ու պրակտիկայի կապը, իրավասահման գործունեության սուբյեկտների իրավաբանական մշակույթի մակարդակը և այլն), հասարակության ու պետության իրավասահման և ամբողջությամբ իրավական քաղաքականության նպատակները, բովանդակությունն ու բնույթը և այլն:

Այս բոլոր գործոնների հաշվառումը, դրանց փոխադարձ կապի և փոխներգործության մեջ հաջող ու արդյունավետ իրավասահման գործունեության, սահմանված նորմերի և պոզիտիվ իրավունքի աղբյուրների ամբողջ համակարգի բարձր իրավական որակի ու արդյունավետ գործողության անհրաժեշտ պայմանը և նախադրյալն է:

Պոզիտիվ իրավունքի նորմերի սահմանման ուղղությամբ պետության զարգացած (իրավական և ընդհանուր սոցիալական իմաստով) գործունեությունը պետք է համապատասխանի մի շարք հիմնադիր պահանջների, որոնք կարելի է ձևակերպել *իրավասահման գործունեության հետևյալ հիմնական սկզբունքների տեսքով.*

1. *Իրավական առաջընթացը:* Այս սկզբունքը պահանջում է, որպեսզի պետության ամբողջ իրավասահման գործունեությունը հնարավոր

րինս առավելագույն չափով ուղղված լինի մարդու իրավունքների և ազատությունների բնագավառում ընդհանուր քաղաքակրթական նվաճումների, իրավունքի գերակայության հիմունքների հաստատմանը և ուժեղացմանը, իրավական օրենքի և իրավական պետության հունով դեպի գործող իրավունքի հետագա զարգացումն ու կատարելագործումը:

2. *Իրավական օրինականությունը*: Այս սկզբունքի էությունն այն է, որ ինքը՝ իրավասահման գործունեությունը, պետք է համապատասխանի իրավունքի հիմնական պահանջներին, ընթանա պատշաճ իրավական ձևերով և ընթացակարգերով, իրավասահման գործունեության սուբյեկտների՝ օրենսդրությամբ սահմանված իրավագործություններին (իրավասությանը) խիստ համապատասխան:

3. *Ընդհանուր սոցիալական օրինականությունը*: Այս սկզբունքը պահանջում է, որ պետության իրավասահման գործունեությունը հենվի իրավասահման վերափոխումների և լուծումների վերաբերյալ սոցիալական սպասումների, համաձայնության ու աջակցության հիմքի, նման որոշումների բննարկմանը, նախապատրաստմանը և ընդունմանը հասարակության անդամների ու տարբեր հասարակական միավորումների ակտիվ մասնակցության, իրավունքի հարցերով հասարակական կարծիքի հարցման, բացահայտման և հաշվառման, ազատական-ժողովրդավարական ձևերի ու ընթացակարգերի, ամբողջ իրավասահման գործընթացի բաց, հանրամատչելի, հանրային բնույթի վրա: Իրավասահման լուծումների սոցիալական օրինականացումը ժողովրդի ինքնիշխանության էական պահանջներից մեկն է ու դրա հետ միասին հասարակությունում սոցիալ-քաղաքական և իրավական համաձայնության ու միասնության անհրաժեշտ պայմանը, նոր իրավական նորմերի սահմանման և ամբողջ գործող իրավունքի արդյունավետության էական նախադրյալը ու կարևոր գործոնը:

4. *Գիտական հիմնավորվածությունը*: Իրավասահման գործունեությունը պետք է հենվի այդ ոլորտում հայրենական և արտասահմանյան գիտականորեն իմաստավորված փորձի, գործող իրավունքի արդի վիճակի և դրա զարգացման միտումների, գիտական ուսումնասիրության արդյունքների, իրավասահման գործընթացի և պոզիտիվ իրավունքի համակարգի կատարելագործման հարցերով արդի իրավաբանական գիտության, գաղափարների, հայեցակարգերի ու պրակտիկ հանձնարարականների վրա:

5. *Համակարգվածությունը*: Իրավասահման գործունեության համակարգվածության սկզբունքը պահանջում է ինչպես պոզիտիվ իրավունքի համակարգված բնույթի, այնպես էլ՝ գործող իրավունքի փոփոխման,

նորացման և կատարելագործման ուղղությամբ գործունեության համակարգված կազմակերպման հաշվառում: Իրավունքի համակարգվածության ուժով դրանում սահմանված նոր նորմերը պետք է պատշաճ ձևով համաձայնեցվեն նորմերի գործող ամբողջ համակարգի հետ, որպեսզի այդ համակարգում գրադեցնեն իրենց հատուկ տեղը և իրականացնեն համապատասխան կարգավորիչ-իրավական գործառույթ: Դրան հասնելու համար անհրաժեշտ է նաև, որ ամբողջ իրավասահման գործունեությունն ունենա համակարգված-կարգավորված և պլանային կազմակերպված բնույթ: Անհրաժեշտ են իրավասահման գործունեության բոլոր սուբյեկտների նպատակների, ծրագրերի և գործողությունների համաձայնեցվածությունն ու միասնություն, համապատասխան իրավաբանական մեխանիզմների և պետական-իրավական ինստիտուտների առկայություն, որոնք կապահովեն իրավասահման գործընթացի համակարգված կարգավորվածությունը, դրա ընթացքի ու արդյունքների համապատասխանությունը գործող իրավական նորմերին և ընթացակարգերին:

Այդ պահանջների խախտումը հանգեցնում է պոզիտիվ իրավունքի նորմերի համակարգի և դրա արդյունքների աստիճանակարգության խեղաբյուրումների ու վիուզման, էական հակասություններ է ստեղծում նորմատիվ-իրավական նյութում, զգալի վնաս է պատճառում ամբողջությամբ իրավական կարգավորմանը:

6. *Պրոֆեսիոնալիզմը*: Իրավասահմանումը (իրավաստեղծումը, օրինաստեղծումը, նորմաստեղծումը) ստեղծագործական աշխատանքի հատուկ սեսակ է, որը կապված է համապատասխան աղբյուրներում հասարակության բոլոր անդամների կյանքի և փոխհարաբերությունների կանոններն ու կարգը սահմանող համապարտադիր իրավական նորմերի որոնման, ձևակերպման և պաշտոնական ամրագրման հետ: Այդ գործունեության սոցիալական զգալի նշանակությունը և էական, առարկայական-բովանդակային յուրօրինակությունը պահանջում են, որ դա իրականացվի բարձր մասնագիտական մակարդակով: Դա ենթադրում է՝ նորմաստեղծության հարցերով, առաջին հերթին, իրավասահման գործունեության սուբյեկտների բարձր պրոֆեսիոնալիզմ, նրանց կողմից այդ գործունեության իմաստի ու նշանակության, դրա բովանդակային իրավական և իրավաբանական-տեխնիկական հայեցակետերի հասկացողություն: Այստեղ իմաստակությունը նույն չափ անթույլատրելի է, ինչպես մասնագիտական գործունեության այլ ոլորտներում և, բացի այդ, հղի է, անտարակույս, ավելի էական բացասական սոցիալական հետևանքով: Ինչ խոսք, իրավասահման գործունեության սուբյեկտների

մասնագիտական թերություններն ինչ-որ չափով կարող են հարթեցվել գիտնական-իրավաբանների հանձնարարականների հաշվառմամբ, իրավակիրառ լուծումների նախապատրաստմանը մասնակցող բարձրորակ մասնագետների օգնությամբ: Սակայն, այդ ամենը, իհարկե, չի վերացնում իրավասահման գործունեության բովանդակության բուն սուբյեկտների մասնագիտական մակարդակի հիմնահարցը, որն ուղղակի և անմիջականորեն անդրադառնում է նորմատեղծ գործընթացի ու ընդունվող նորմերի իրավական որակի և իրավաբանական-տեխնիկական բնութագրերի վրա:

### 3. Իրավասահման գործընթացի հիմնական փուլերը

Նոր իրավական նորմերի սահմանման (նորմ սահմանող ակտի ընդունման) գործընթացը կազմված է մի քանի հաջորդական փուլերից՝ սկսած համապատասխան նորմերի ընդունման պահանջարկի գիտակցումից, մինչև դրա ընդունումը և պաշտոնական հրապարակումը:

Իրավասահման գործունեության բնույթը և բովանդակությունը դրա իրականացման սարքեր փուլերում, ինչպես նաև իրավասահման գործընթացի շրջանակներում այսպիսի փուլերի նշանակությունը շատ բանով կախված է իրավունքի այն համապատասխան աղբյուրի առանձնահատկություններից, որին վերաբերում է սահմանվելիք նորմը: Ընդհանուր (նախադեպային) իրավունքի համակարգերում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը դատարանի վճիռն է, իրավասահման գործընթացի փուլերը, ըստ էության, համընկնում են նախադեպային իրավունքի նորմեր սահմանող համապատասխան դատական ատյաններում կոնկրետ գործերի քննության և լուծման հիմնական փուլերին:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի իրավունքի համակարգերում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ-իրավական ակտն է, և որտեղ իրավունքի մյուս աղբյուրները նույնպես այս կամ այն տեսքով իրենց պաշտոնական ճանաչումն ու ամրագրումն են ստանում համապատասխան նորմատիվ-իրավական ակտերում, իրավասահման գործընթացի փուլերը պայմանավորված են այս կամ այն նորմատիվ-իրավական ակտի (օրենքի կամ ենթօրենսդրական ակտի) նախապատրաստման և ընդունման տրամաբանությամբ ու ընթացակարգով:

*Ենթօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերը* նախապատրաստում և ընդունում են գործադիր իշխանության համապատասխան մարմինները Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության ու գործող

օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իրենց իրավասության շրջանակում:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության մախազահի նորմատիվ հրամանագրերի, Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշումների, ինչպես նաև նրանց մախաձեռնությամբ Պետական Դումա ներկայացվող օրենքների *մախազձեռքը մշակում են* համապատասխան պետական մարմինների աշխատակազմերը՝ այդ աշխատանքում շահագրգիռ մախարարությունները և գերատեսչություններն ընդգրկելով: Աշխատակազմի միջոցով նորմատիվ-իրավական ակտերի մախազձեռքի մախապատրաստման կարգն առկա է նաև տարբեր մախարարությունների, գերատեսչությունների և պետական կոմիտեների նորմաստեղծության մեջ:

*Ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերի ընդունման կարգը* կախված է գործադիր իշխանության համապատասխան մարմնի սիպից և բնույթից: Գործադիր իշխանության կոլեգիալ մարմինների նորմատիվ-իրավական ակտերը (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի կառավարության և այլն որոշումները) ընդունվում են համապատասխան կոլեգիայի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Միանձնյա ղեկավարման հիմունքներով գործող գործադիր իշխանության նորմատիվ-իրավական ակտերը (Ռուսաստանի Դաշնության մախազահի հրամանագրերը, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների գործադիր իշխանության ղեկավարների ակտերը, մախարարի հրամանները և այլն) ընդունվում են համապատասխան պաշտոնատար անձի միանձնյա որոշման կարգով:

Առավել բարդ և մանրակրկիտ է օրենսդրական ընթացակարգը: Անբողջ օրինաստեղծ գործընթացը բաղկացած է հետևյալ *հիմնական փուլերից*.

1) համապատասխան իրավասու մարմինների (իրավասահման մարմինների կամ իրավասահման մախաձեռնության սուբյեկտի) կողմից որոշակի նորմատիվ-իրավական ակտ ընդունելու մասին որոշում կայացնել:

2) այդ ակտի մախազիմ մշակելը և մախնական քննարկելը:

3) տվյալ մախազիձը քննարկելն իրավասահման մարմնում:

4) նորմատիվ-իրավական ակտ ընդունելը:

5) ընդունված նորմատիվ-իրավական ակտը պաշտոնական հրապարակելը:

Համապատասխան նորմատիվ-իրավական ակտի ընդունման մախաձեռնությունը կարող է բխել ինչպես իրավասահման մարմնից, այն-



պես էլ այդպիսի նախաձեռնության իրավունք ունեցող այլ սուբյեկտներից:

Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում օրինաստեղծ գործընթացում (դաշնային մակարդակով) Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 104 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *օրենսդրական նախաձեռնության իրավունքը* պատկանում է Ռուսաստանի Դաշնության նախագահին, Դաշնային Խորհրդին, Դաշնային Խորհրդի անդամներին, Պետական Դումայի պատգամավորներին, Ռուսաստանի Դաշնության կառավարությանը, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենսդիր (ներկայացուցչական) մարմիններին: Իրենց տնօրինությանը ենթակա հարցերի առումով օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանին, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանին և Ռուսաստանի Դաշնության բարձրագույն արբիտրաժային դատարանին:

Բոլոր օրենքների նախագծերը ներկայացվում են Պետական Դումա:

Օրենսդրական նախաձեռնության իրավունքը նշանակում է, որ մեան իրավունքի սուբյեկտի կողմից Պետական Դումա ներկայացված օրենքի նախագիծը ենթակա է պարտադիր քննարկման Պետական Դումայում: Պետական Դումա իրենց օրինագծերը կարող են ներկայացնել նաև առանձին քաղաքացիներ, նրանց հասարակական միավորումներ և օրենսդրական նախաձեռնության իրավունքով չօժտված այլ սուբյեկտներ: Պետական Դուման պարտավոր չէ քննարկել այդ օրինագծերը:

*Օրենքի նախագծի մշակումն* իրականացնում է օրենսդրական նախաձեռնության սուբյեկտը (սովյալ սուբյեկտին ենթակա համապատասխան կառույցը) կամ Պետական Դումայի խորհրդի հանձնարարությամբ՝ նրա կոմիտեներից որևէ մեկը:

Պետական Դումա ներկայացված օրինագծի կապակցությամբ Պետական Դումայի խորհուրդը նշանակում է օրենքի նախագծի համար պատասխանատու Պետական Դումայի համապատասխան կոմիտե (այսպես կոչված՝ պատասխանատու կոմիտե) և որոշում է ընդունում օրենքի նախագիծը հերթական նստաշրջանի օրենքի նախագծերի օրինակելի ծրագրում կամ հերթական ամսում Պետական Դումայի քննարկելիք հարցերի օրացույցում ներառելու մասին: Միաժամանակ, օրենքի նախագիծն ուղարկվում է Պետական Դումայի կոմիտեներ, հանձնաժողովներ և պատգամավորական միավորումներ, Ռուսաստանի Դաշնության նախագահին, Դաշնային Խորհրդին, Ռուսաստանի Դաշնության կառավարությանը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության սահմա-

նադրական դատարան, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարան և Ռուսաստանի Դաշնության բարձրագույն արբիտրաժային դատարան՝ ըստ դրանց տնօրինության հարցերի պատասխաններ, առաջարկություններ ու դիտողություններ նախապատրաստելու և ներկայացնելու համար (տես 1998 թվականի հունվարի 22-ի Պետական Դումայի կանոնակարգի 109 հոդվածը)<sup>1</sup>:

*Օրենքի նախագծի նախնական քննարկման տվյալ փուլում* դա կարող է պատասխանատու կոմիտեի կողմից ուղարկվել պետական մարմիններ, գիտական և հասարակական կազմակերպություններ՝ առաջարկություններ ներկայացնելու ու դիտողություններ նախապատրաստելու, ինչպես նաև գիտական փորձաքննություն անցկացնելու համար: Պետական Դումայի աշխատակազմի իրավաբանական վարչությունն իրականացնում է օրենքի նախագծի իրավական, իսկ մի շարք դեպքերում նաև՝ լեզվաբանական փորձաքննություն:

Պետական Դումայի կոմիտեներում օրենքի նախագծի քննարկումը դոմբաց է: Հրավիրվում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտը, և դա կարող է լուսաբանվել զանգվածային լրատվության միջոցներով:

Օրենքի նախագիծը կարող է քննարկվել նաև խորհրդարանական լսումների ժամանակ՝ շահագրգիռ անձանց լայն շրջանակի, հասարակայնության և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նման նախնական քննարկումների հիման վրա նախագծերում մտցվում են անհրաժեշտ փոփոխություններ և ճշգրտումներ: Զննարկման համար նախապատրաստված օրենքի նախագիծը պատասխանատու կոմիտեն ուղարկում է Պետական Դումայի խորհուրդ՝ Պետական Դումայի քննակմանը դնելու համար:

*Օրենքի նախագծի քննարկումը* Պետական Դումայում իրականացվում է երեք ընթերցմամբ: Առաջին ընթերցման ժամանակ քննարկվում է օրենքի նախագծի հայեցակարգը և նախագծում կատարվում են փոփոխություններ: Երկրորդ ընթերցման ժամանակ քննարկվում են օրենքի նախագծում կատարված ուղղումները և որոշում է կայացվում դրանց ընդունման կամ մերժման մասին: Երրորդ ընթերցման ժամանակ կատարվում է քվեարկություն՝ *օրենքի նախագիծը որպես օրենք ընդունելու նպատակով*:

---

<sup>1</sup> Регламент Государственной Думы Федерального собрания Российской Федерации. М.1998

Պետական Դումայի ընդունած օրենքները հինգ օրվա ընթացքում հանձնվում են Դաշնային Խորհրդի քննարկմանը: *Դաշնային Խորհրդի կողմից հավանության արժանացած օրենքը* հինգ օրվա ընթացքում ուղարկվում է Ռուսաստանի Դաշնության նախագահին: *Նախագահի ստորագրած օրենքը* ենթակա է հրապարակման:

Ընդունված նորմատիվ-իրավական ակտի *պաշտոնական հրապարակումն իրականացվում է* տպագիր հրատարակություններում և թերթերում: Այսպես, դաշնային սահմանադրական օրենքները և դաշնային օրենքները պաշտոնապես հրապարակվում են «Российская газета» թերթում ու «Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ժողովածու»-ում: Այդ նույն հրատարակություններում հրապարակվում են Ռուսաստանի Դաշնության նախագահի և Ռուսաստանի Դաշնության կառավարության ակտերը՝ դրանք ստորագրելուց տասն օր հետո:

Համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (15 հոդվածի 3-րդ մաս)՝ չհրապարակված օրենքները չեն կիրառվում: Մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները շոշափող ցանկացած նորմատիվ-իրավական ակտ չի կարող կիրառվել, եթե դա պաշտոնապես հրապարակված չէ ի զիտություն բոլորի:

Մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները շոշափող կամ ընդհանուր դաշնային նախարարությունների և գերատեսչությունների նորմատիվ-իրավական ակտերը, միջգերատեսչական բնույթի նորմատիվ-իրավական ակտերը ենթակա են պաշտոնական հրապարակման «Российские вести» թերթում (Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունում դրանց պետական գրանցումից տասն օրվա ընթացքում), ինչպես նաև գործադիր իշխանության դաշնային մարմինների նորմատիվ ակտերի տեղեկագրում:

Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների ակտերը պաշտոնապես հրապարակվում են տեղական տպագիր հրատարակություններում և թերթերում: Չանգվածային լրատվության տեղական միջոցներում հրապարակվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը:

#### **4. Իրավաբանական տեխնիկա**

Իրավաբանական վարդապետության կարևոր բաղադրատարրն իրավագիտության կողմից մշակված և պետական-իրավական պրակտիկայում կիրառվող տարբեր բնույթի իրավական ակտերի (իրավասահ-

ման, իրավակիրառ կամ իրավամեկնաբանող բնույթի) տեքստում որոշակի նորմատիվ-իրավական բովանդակության կոնկրետ իրավադրույթների արտաքին արտահայտման կանոններն են: Այդ կանոնների հանրագումարն ընդունված է անվանել *«իրավաբանական տեխնիկա»*, նման այն բանին, որ իրավաբանական դոգմատիկան ամբողջությամբ հաճախ մեկնաբանում են *«իրավաբանական արհեստ»* (իրավաբանական հմտության, վարպետության՝ արվեստի իմաստով):

Ընդ որում, իրավական ակտի *«տեքստ»* ասելով՝ նկատի է առնվում գրավոր տեքստը, քանի որ գրավոր մշակույթի պայմաններում խոսքը գրավոր իրավունքի մասին է: Սակայն, սկզբունքորեն կարելի է խոսել իրավաբանական տեխնիկայի մասին նաև իրավական ակտերի բանավոր տեքստերի (օրինակ՝ չգրված սովորութային իրավունքի բանավոր տեքստերի կամ գրավոր իրավունքի արդի դարաշրջանում իրավական ակտի բանավոր տեքստի մասին, երբ իրավական ակտի տեքստն արտահայտվում է բանավոր իրավասահմանման ձևով՝ բանավոր խոսքով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլն, իրավական ակտի բովանդակության բանավոր հրապարակման տեսքով) կիրառմամբ:

*Իրավաբանական տեխնիկան որոշակի նորմատիվ-իրավական բովանդակությունն իրավական ակտի տեքստի ձևով համարժեք արտահայտելու սկզբունքների, կանոնների, մեթոդների, հնարքների և եղանակների հանրագումար է:*

*Իրավական ակտերը պաշտոնական-իշխանական ակտեր են (նորմատիվ և անհատական բնույթի), որոնք համապարտադիր իրավաբանական ուժ ունեն: Այդպիսիք են՝ իրավասահման և իրավակիրառ, ինչպես նաև գործող իրավունքի պաշտոնական մեկնաբանման ու համակարգման ակտերը:*

Ի տարբերություն այն իրավական ակտերի, որոնք պարունակում են համապարտադիր իրավադրույթներ, իրավական թեմայով մյուս բոլոր տեսական կամ գործնական բնույթի տեքստերում պարունակվում են միայն իրավաբանական ուժ չունեցող այս կամ այն *իրավական դատողությունները* (իրավունքի մասին դատողությունները, արտահայտությունները): Այդ իրավադատողությունների տեսական կամ գործնական համարժեքությունը պետք է գնահատել գիտական ճշմարտության կամ պրագմատիկ օգտակարության համապատասխան չափանիշներով, այլ ոչ թե իրավաբանական տեխնիկայի կանոններով: Հնարավոր են, անշուշտ, դեպքեր, երբ իրավագիտության ներկայացուցիչների (օրինակ՝ հռոմեական և ավելի ուշ շրջանի իրավաբանների) այս կամ այն իրավադատողությունները մասն են կազմում այն իրավաբանական վարդապե-

տության, որը պաշտոնապես ճանաչվել է որպես գործող իրավունքի աղբյուր: *Այսպիսի վարդապետական իրավադատողությունները, միաժամանակ, համապարտադիր իրավադրույթներ են:*

Իրավաբանական տեխնիկայի սկզբունքները, կանոնները, հնարքները և մեթոդները վերաբերում են բոլոր իրավական ակտերին, սակայն իրավական ակտերի առանձին տեսակների (իրավասահման, իրավակիրառ, իրավամեկնաբանման կամ իրավահամակարգման) նկատմամբ կիրառվելով, դրանք ստանում են առանձնահատուկ շեղում, որը սլայմանավորված է ակտի համապատասխան տեսակի իրավական բովանդակության յուրօրինակությամբ, սլայլ իրավական բովանդակության արտահայտման տեստային ձևի իրավաբանական տեխնիկական առանձնահատկություններով և այլն:

Այսպիսով, *իրավաբանական տեխնիկան* բացի օրենսդրական տեխնիկայից (և ավելի լայն իրավասահման տեխնիկայից) ներառում է նաև իրավակիրառ, իրավամեկնաբանման և իրավունքի համակարգման ոլորտի ակտերի նորմատիվ-իրավական բովանդակության պատշաճ ձևակերպման իրավաբանական տեխնիկան:

*Իրավաբանական տեխնիկայի հիմնական պահանջները կարելի է ձևակերպել հետևյալ դրույթների տեսքով.*

1) իրավական տեխնիկայի կանոնները պահանջում են, որ բոլոր իրավական ակտերի տեստային ձևակերպումներն առավելագույնս ենթարկվեն դրանց նորմատիվ-իրավական հասկացությունների և իմաստների արտահայտմանն ու շարադրանքին, այսինքն՝ տարբեր ակտերի բովանդակության մեջ եղած այն գլխավորին, որը որոշում է դրանց իրավական առանձնահատկությունը, կարգավորիչ-իրավական իմաստը և իրավաբանական ուժը: Այդ պահանջը պետք է կոնկրետ արտացոլվի բոլոր իրավական ակտերի տեստերում՝ ակտերի տարբեր տեսակների (իրավունքի նոր նորմեր սահմանող ակտերի, իրավունքի նորմերի կիրառման ակտերի, իրավունքի նորմերի մեկնաբանման ակտերի, իրավունքի նորմերի համակարգման ակտերի) նորմատիվ յուրօրինակության և առանձնահատկությունների հաշվառմամբ: Ակտի տեստում *դրա նորմատիվության առանձնահատկության* (ակտի հստակ նորմատիվ կարգավիճակի, *դրա նորմատիվ մոդալություն* (եղանակավորվածություն)) պատշաճ արտահայտությունը, միաժամանակ, սլայլ ակտի իրավաբանական բովանդակային իրավաչափության հիմքն է և դրա իրավաբանական-տեխնիկական մշակույթի էական ցուցանիշը.

2) իրավաբանական տեխնիկայի պահանջների համաձայն՝ ակտի տեստային ձևը պետք է արտահայտի հասարակական հարաբերութ-

յունների *իրավական կարգավորման* (և դրա հետ միասին՝ իրավական մեկնմբանման, զնահատման, որակավորման և այլն) *առանձնահատկությունը*։ Համաձայն իրավունքի իրավաբանական-վարդապետական մեկնաբանման՝ որպես նորմերի համակարգ, այդ առանձնահատկությունն այն է, որ իրավական կարգավորումն իրականացվում է իրավունքի նորմի իրավաբանական-տրամաբանական մոդելով (զծապատկերով, նմուշով), որը երեք փոխկապակցված բաղադրատարրերի՝ դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի, համակարգային ամբողջություն է։ *Ակտի տեքստի կառուցումն իրավունքի նորմերի բաղադրատարրերի միջև իրավաբանական-տրամաբանական կապերի սկզբունքով և զծապատկերով* նշանակում է, որ ակտի տեքստի առանձին մասերը և հատվածները (ինչպես նաև ակտն ամբողջությամբ) իրավաբանական նշանակություն ունեն միայն որպես իրավունքի նորմի առանձին բաղադրատարրերի արտահայտման ձևեր՝ տեքստում արտահայտված այլ բաղադրատարրերի հետ վոխկապակցված։ Այն ամենը, ինչն ակտի տեքստում իրավունքի նորմի բաղադրատարրերի արտահայտություն չէ և կապված չէ դրանց հետ, աղտոտում է ակտի տեքստը, խախտում է դրա կառուցվածքի իրավաբանական տրամաբանությունը, դժվարացնում է դրա նորմատիվ-իրավական դրույթների հասկացողությունը և կիրառումն ու ենթակա է վերացման։

*Իրավական ակտի լավագույն (օպտիմալ) ձևը*՝ դրա տեքստի հնարավոր նվազագույնն է, դրա նորմատիվ բովանդակության հնարավոր առավելագույնի առկայությամբ։ Ակտի տեքստը *նվազագույնի հասցնելու սկզբունքն* ունի իր սահմանները, որոնք պայմանավորված են նրանով, որ ակտի տեքստում պետք է հստակ ձևակերպվեն կամ անվիճելի որոշակիությամբ ենթադրվեն իրավունքի սահմանվող, կիրառվող, մեկնաբանվող կամ համակարգող նորմերի բոլոր բաղադրատարրերը (դրանց համակարգային փոխկապակցությամբ)։ *Ակտի բովանդակությունն առավելագույնի հասցնելու սկզբունքի* սահմանները, իրենց հերթին, պայմանավորված են նրանով, որ ակտի տեքստում չպետք է ձևակերպվեն իրավական նորմի ակնհայտ բնույթ ունեցող բաղադրատարրերը։

3) իրավական ակտի տեքստային ձևակերպումը պետք է իրականացվի ամբողջությամբ *իրավունքի համակարգային բնույթին*, զործող ամբողջ իրավունքի համակարգի ակտում արտահայտված նորմատիվ-կարգավորիչ բովանդակության տեղին և նշանակությամբ *համապատասխան*։ Գործող իրավունքում նոր իրավական ակտերի կողմից մտցվող փոփոխությունները պետք է ուղղված լինեն իրավունքի կառուրելագործմանը, դրանում տեղ գտած անհամաձայնությունների և հա-

կասությունների հաղթահարմանը և ոչ թե ծնեն նոր հակասություններ (կոլիզիաներ): Նոր իրավական ակտերը չպետք է կրկնօրինակեն միևնույն հարցի վերաբերյալ արդեն իսկ եղած ակտերի բովանդակությամբ: Նորմատիվ-իրավական կարգավորման միևնույն առարկայի վերաբերյալ *իրավական ակտերի քանակը նվազագույնի հասցնելն* իրավաբանական տեխնիկայի հիմնական պահանջներից և գործող իրավունքի ամբողջ համակարգի կատարելագործման գլխավոր ուղղություններից մեկն է: Դրա հետ է կապված նաև գործող իրավական նորմերի համակարգման իրավաբանական տեխնիկական միջոցների և հնարքների՝ որպես ամբողջ իրավունքի որակի ու կարգավորիչ դերի բարձրացման արդյունավետ միջոցի, համաիրավական նշանակությունը:

4) իրավական ակտի տեքստը պետք է ունենա պատշաճ կառուցվածք: *Ակտի տեքստի՝ որպես միասնական ամբողջության, կառուցվածքի իրավաբանական-տեխնիկական կանոնները* պահանջում են համապատասխան ակտի նորմատիվ կարգավորիչ նպատակների և դրույթների հետևողական, համաձայնեցված, ոչ հակասական, խնայողական ու մատչելի (դիտարկելու, հասկանալու և կիրառելու համար) տեքստային արտահայտություն: Տեքստի կառուցվածքը (դրա բաժանումը բաժինների, մասերի, հոդվածների, դրվագների, կետերի, պարբերությունների և այլն) պետք է առավելագույնս նպաստի ակտի տեքստում տվյալ ակտի առարկային վերաբերող նորմատիվ կարգավորման իրավաբանական տրամաբանության համարժեք արտահայտելուն:

Մի շարք իրավաբանական-տեխնիկական պահանջներ վերաբերում են իրավական ակտի նյութի *շարադրանքի հաջորդականության* կարգին:

Այսպես, որոշ առանձնահատուկ նշանակություն ունեցող նորմատիվ-իրավական ակտեր (սահմանադրությունները, հիմնադիր օրենքները և այլն) սկսվում են ներածությունից (պրեամբուլայից), որում շարադրվում են տվյալ ակտի գլխավոր նպատակները: Իրավաբանական-տեխնիկական հաջորդականության կանոնների համաձայն նորմատիվ-իրավական ակտի սկզբում շարադրվում են ընդհանուր նորմերը (ակտի ընդհանուր մասի նորմերը), իսկ հետո՝ ավելի կոնկրետ նորմերը (ակտի հատուկ մասի նորմերը): Նյութական իրավունքի նորմերի շարադրանքը նախորդում է դատավարական (ընթացակարգային) բնույթի նորմերի շարադրանքին: Տեքստի կառուցվածքային մասերը (բաժինները, ենթաբաժինները, հոդվածները, կետերը և հոդվածի մասերը) համարակալվում են: Ակտի տեքստը կարգավորելու և դրանից օգտվելը հեշտացնելու համար ակտի որոշ մասեր (բաժիններ, ենթաբաժիններ, հոդվածներ) ունեն համապատասխան վերնագրեր (անվանումներ):

Այս տեսակետից, նշանակալից առանձնահատկություններ ունեն մեկ իրավակիրառ ակտերը: Այսպես, քաղաքացիական գործերով դատարանի վճռի տեքստը կառուցված է ներածական, նկարագրական, շարժառիթային (պատճառաբանական), բանաձևային (որոշիչ) մասերից: Քրեական գործերով դատավճիռը կազմված է ներածական, նկարագրական, բանաձևային (որոշիչ) մասերից:

Իրավական ակտը՝ որպես միասնական ամբողջություն, պետք է ունենա համապատասխան *վավերապայմաններ* (ակտի անվանումը, դա ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը, գրանցման համարը, համապատասխան պաշտոնատար անձանց ստորագրությունները և այլն, որոնք հավաստում են ակտի՝ որպես պաշտոնական իրավաբանական փաստաթղթի, իսկությունը):

5) Էական նշանակություն ունեն *իրավաբանական տեխնիկայի այն պահանջները, որոնք վերաբերում են իրավական ակտի լեզվին*: Իրավական ակտի լեզուն, միաժամանակ, թե՛ դրա տեքստի նյութն է, թե՛ ակտի նորմատիվ-կարգավորիչ իմաստի արտահայտման միջոցը: Իրավաբանական տեխնիկայի կանոնները պահանջում են իրավական ակտի լեզվի հստակություն, պարզություն և մասշտիվություն, դրանում օգտագործվող հասկացությունների, տերմինների, ձևակերպումների, բառային կառույցների ու բնորոշումների անհրաժեշտ ճշգրտում և միանշանակություն: Իրավական ակտի տեքստում իրավագիտության մասնագիտական լեզվի բաղադրատարրերը, հատուկ իրավաբանական հասկացությունները, տերմինները, կառուցվածքները և այլն (օրինակ՝ իրավա-հարաբերություններ, իրավունքի սուբյեկտ, հայցային վաղեմություն, օրենսդրական նախաձեռնություն, իրավասություն, հանցակազմ, անմեղություն և այլն) պետք է օրգանապես համատեղվեն արդի գրական լեզվի ընդհանուր օգտագործվող բառերի ու բառային արտահայտությունների, ինչպես մեկ ոչ իրավաբանական բնույթի մասնագիտական տերմինաբանության (կենսաբանական գործակալներ ու տոքսիններ, էպիգոտիա, մեքենայագիր տեղեկատվություն և այլն) հետ:

Իրավական ակտի տեքստում չպետք է օգտագործվեն բառային հնարանություններ, նորաբանություններ, տարբեր պատկերավոր արտահայտություններ, համանմանություններ, փոխաբերություններ, խոսքի երկիմաստ դարձվածքներ և այլն: Իրավաբանական տեխնիկայի կանոնները պահանջում են իրավական ակտի տեքստի նախապատրաստման և ձևակերպման գործընթացում բառային միջոցների տնտեսում (անհրաժեշտ և բավարար լինելու սկզբունքով):



Իրավական ակտն ամբողջությամբ պետք է շարադրված լինի *միասնական ոճով*, որը պետք է համապատասխանի իրավաբանական ուժ ունեցող պաշտոնական փաստաթղթի նպատակներին, բովանդակությանը և նշանակությանը:

*Իրավական ակտի պաշտոնական-իրավաբանական ոճը պահանջում է մասնագիտական հստակություն, գործնական զսպվածություն, իշխանական խստություն, իմաստային միանշանակություն և պատշաճ հակիրճություն:* Իրավական ակտում չպետք է օգտագործվեն ինչպես զրասենյակային և աշխատակազմային-բյուրոկրատական բառային շաբլոններ, այնպես էլ առօրյա խոսակցության սովորական արտահայտություններ: Իրավական ակտում չպետք է լինեն տարբեր տեսակի դատողություններ, մտադրություններ, կասկածներ, կոչեր և ցանկություններ:

## **Գլուխ 5. Իրավունքի համակարգը և օրենսդրության համակարգումը**

### **1. Իրավունքի համակարգի հասկացությունը և կառուցվածքը**

*Իրավունքի համակարգն* իրավաբանական-վարդապետական կատեգորիա և կառույց է, որն իր մեջ ներառում է իրավունքի նորմերն ու դրանք միավորող իրավական ինստիտուտները և իրավունքի ճյուղերը:

Իրավունքի՝ որպես նորմերի համակարգի, վարդապետական մեկնաբանությունը նշանակում է, որ իրավունքի միասնական համակարգային (և համակարգային-կառուցվածքային) բաղադրատարրն իրավունքի նորմն է: Իրավունքի համակարգն իր մեջ ներառում է հասարակական զանազան հարաբերություններ կարգավորող տարբեր նորմերի բազմազանություն: Ընդ որում, *որոշակի օրինաչափ փոխկապակցվածություն* գոյություն ունի կարգավորվող հարաբերությունների առանձնահատկությունների և դրանց նորմատիվ-իրավական կարգավորման յուրօրինակությունների միջև՝ *միասնու հարաբերությունները կարգավորվում են միակարգ նորմերով*: Դրա հիման վրա իրավունքի նորմերն իրավունքի համակարգի ներսում խմբավորվում են իրավական ինստիտուտների և իրավունքի ճյուղերի:

*Իրավական ինստիտուտը* հասարակական հարաբերությունների որոշակի տեսակ կարգավորող միակարգ նորմերի համբազումար է: Օրինակ՝ քաղաքացիական իրավունքում սեփականության իրավական ինստիտուտը սեփականության հարաբերությունները կարգավորող մեկ տե-

սակի փոխկապակցված նորմերի խումբ է: Նման չափանիշով են առանձնացվում նաև քաղաքացիական իրավունքի մյուս ինստիտուտները (անձինք, ներկայացուցչությունը, հայցային վաղեմությունը և այլն): Նմանօրինակ վիճակ է նաև իրավունքի այլ ճյուղերում: Այսպես, մասնավորապես, քրեական իրավունքում իրավական ինստիտուտներ են՝ հանցագործությունը, պատիժը, անչափահասների քրեական պատասխանատվությունը, անձի դեմ ուղղված հանցագործությունները և այլն: Ընտանեկան իրավունքում կան այնպիսի իրավական ինստիտուտներ, ինչպիսիք են՝ ամուսնության կնքումը և դադարումը, ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, ընտանիքի անդամների պիմենտային պարտավորությունները և այլն:

*Իրավունքի ճյուղը* հասարակական հարաբերությունների որոշակի սեռը կարգավորող միակարգ նորմերի հանրագումար է: Այսպիսով, իրավունքի մեկ ճյուղի իրավական ինստիտուտներն իրավունքի որոշակի ճյուղի միասեռ հանրագումարի շրջանակներում արտահայտում են նորմերի առանձին, համեմատաբար ինքնուրույն խմբերի տեսակային առանձնահատկությունները:

Տարբերվում են *նյութական իրավունքի ճյուղեր և դատավարական իրավունքի ճյուղեր*: Այսպես, նյութական իրավունքի ճյուղերին են պատկանում քաղաքացիական իրավունքը, աշխատանքային իրավունքը, քրեական իրավունքը և իրավունքի մի շարք այլ ճյուղեր: Դատավարական իրավունքի ճյուղերին են պատկանում քաղաքացիական դատավարական իրավունքն ու քրեական-դատավարական իրավունքը:

Նյութական իրավունքի նորմերը (և համապատասխան ճյուղերը) ամրապնդում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման որոշակի ուղրտում սուբյեկտների ելակետային իրավունքներն ու պարտականությունները, իսկ դատավարական իրավունքի նորմերը (և համապատասխան ճյուղերը) որոշում են նյութական իրավունքի նորմերի իրականացման կարգը և ընթացակարգը, դատական-իրավական հարաբերությունների սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները:

Իրավունքի դատավարական նորմերը (ինստիտուտները, ենթաճյուղերը և ճյուղերը) անհրաժեշտ իրավաբանական որոշակիություն են հաղորդում իրավունքի տարբեր սուբյեկտների փոխհարաբերություններին՝ իրավասահման, իրավապահպան և իրավակիրառ գործունեության բոլոր փուլերում: Դատավարական-իրավական ձևերն ու ընթացակարգերն անձի իրավունքների և ազատությունների իրական լինելու կարևոր իրավաբանական երաշխիքներն ու ամբողջ իրավունքի արդյունավետ գոր-

ծողութեան անհրաժեշտ պայմանն են: *Իրավունքի դատավարականացման չափն ամբողջութեամբ իրավունքի զարգացվածության աստիճանի էական որակական ցուցանիշն է:*

Իրավունքի մի շարք ճյուղերի շրջանակներում ձևավորվում են իրավունքի ենթաճյուղերը: Այսպես, նյութական իրավունքի որոշ ճյուղերում (օրինակ՝ սահմանադրական իրավունք, վարչական իրավունք և այլն) աստիճանաբար ձևավորվում են դատավարական իրավունքի համապատասխան ենթաճյուղերը (սահմանադրական-դատավարական իրավունքի, վարչական-դատավարական իրավունքի և այլն): Նյութական իրավունքի այս կամ այն ճյուղի շրջանակներում հնարավոր է նաև նյութական իրավունքի ենթաճյուղերի ձևավորում, օրինակ՝ աշխատանքային իրավունքի ճյուղի մեջ սոցիալական իրավունքի (սոցիալական ապահովման իրավունքի) ենթաճյուղի (իսկ իրավունքի մի շարք ազգային համակարգերում՝ նաև իրավունքի նոր ճյուղի) ձևավորումը:

*Իրավունքի ենթաճյուղը* միասեռ իրավական ինստիտուտների խումբ միավորող իրավունքի ճյուղի խոշոր բաղադրատարր է: Իրավունքի ենթաճյուղը, սկզբում ձևավորվելով մեկ կամ մի քանի իրավական ինստիտուտների հիման վրա, որոշակի պայմանների առկայությամբ (հասարակական հարաբերությունների համապատասխան նոր ոլորտների իրավական կարգավորման օբյեկտիվ պահանջը, բուն իրավական կարգավորման հիմքերի ու սկզբունքների էական նորացումը և այլն) աստիճանաբար զարգանում է իրավունքի որակապես նոր ինքնուրույն ճյուղ առանձնանալու ուղղությամբ:

Իրավունքը հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի բաժանելու կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ ընդունված է *հանրային իրավունքի ճյուղերը* (օրինակ՝ սահմանադրական իրավունքը, վարչական իրավունքը, քրեական իրավունքը, քաղաքացիական դատավարական իրավունքը, քրեական-դատավարական իրավունքը և այլն) տարբերակել *մասնավոր իրավունքի ճյուղերից* (առավել ստրածված օրինակը քաղաքացիական իրավունքն է):

Միջազգային իրավունքը նույնպես բաժանվում է միջազգային հանրային իրավունքի և միջազգային մասնավոր իրավունքի:

Իրավունքի բաժանումը հանրայինի և մասնավորի գալիս է դեռևս հռոմեական իրավաբաններից. «Իրավունքի ուսումնասիրումը, - գրել է Ուլպիանոսը (D.1.1.1.), - բաժանվում է երկու մասի՝ հանրայինի և մասնավորի (իրավունք): Հանրային իրավունքը, որը (վերաբերում է) հռոմեական պետության օգտին, մասնավորը, որը (վերաբերում է) առանձին անձանց օգտին, գոյություն ունի օգտակարը հասարակական հա-

բարերոյություններում և օգտակարը մասնավոր հարաբերություններում: Հանքային իրավունքն իր մեջ ներառում է սրբությունները, քրմերի ծառայությունը, մագիստրատների կարգավիճակը: Մասնավոր իրավունքը բաժանվում է երեք մասի, քանի որ կազմվում է կամ բնական պատվիրաններից, կամ ժողովրդի (պատվիրաններից), կամ ցիվիլ (պատվիրաններից)»<sup>1</sup>:

Իրավունքի ընդհանուր կառուցվածքում հանրային-իրավական բաղադրատարրի առանձնացումը համապատասխանում էր հռոմեական իրավագիտության հիմնադիր հայեցակարգին, որի առարկան, ընդհանրապես, իրավունքի իմացության հետ միասին, ներառում էր նաև հանրային իշխանության մասին համապատասխան իրավական ուսմունքը (պետության իրավական հասկացությունը և մեկնաբանությունը): Հանրային իրավունքի մասին պատկերացումը զարգացրել ու կոնկրետացրել է պետության նկատմամբ այդ իրավաբանական մոտեցումը և դրան հաղորդել է համապատասխան ինստիտուցիոնալ-իրավական հիմք ու որոշակիություն:

Հանրային իրավունքի ճանաչումը (մասնավոր իրավունքից դրա տարբերակման և փոխհարաբերակցության մեջ), ըստ էության, պետությանը (դրա կազմակերպումն ու գործունեությունը, պետական մարմինների լիազորությունները և այլն) դնում է իրավունքի գործողության ներքո, ու նշանակում է, որ ոչ պետությունն ամբողջությամբ և ոչ էլ առանձին պետական մարմինները չունեն իրենց համար որևէ հատուկ «իրավունք», և որ պետությունը, նրա մարմիններն ու պաշտոնատար անձինք, ինչպես նաև իրավունքի մյուս սուբյեկտները (մասնավոր անձինք) ենթարկվում են միասնական իրավունքի պահանջներին ու պետք է գործեն դրա ընդհանուր կանոններին համապատասխան:

Իրենք՝ հռոմեական իրավաբանները, վարդապետական առումով չէին մեկնաբանում գործող իրավունքը որպես իրավունքի հանրային-իրավական ու մասնավոր-իրավական ճյուղերի հանրագումար: Իրավունքի ճյուղերի այսպիսի բաժանումը հանրային իրավունքի ճյուղերի և մասնավոր իրավունքի ճյուղերի հետագայում ձևավորվեց եվրոպական իրավագիտության մեջ ու բուրժուական դարաշրջանում ամուր հաստատվեց իրավունքի վարդապետության մեջ մասնավոր կյանքի ոլորտի ապաքաղաքականացման և մասնավոր ու հանրային-քաղաքական հարաբերությունների ոլորտների կտրուկ սահմանազատման, պետությունից (քաղաքական հանրությանից) քաղաքացիական հասարակության, մասնավոր սուբյեկտների (քաղաքացիական հասարակության անդամ-

<sup>1</sup> Дипесты Юстиниана. М., 1984. т. 23

ների) իրավունքների և հանրային սուբյեկտների (քաղաքացու, հանրային-քաղաքական հանրույթի անդամի) իրավունքների առանձնացման պայմաններում:

Չուտ հանրային-իրավական և զուտ մասնավոր-իրավական ճյուղերի առկայության մասին այսպիսի պատկերացումները *վարդապետական չափազանցումներ են* և չեն համապատասխանում իրավունքի՝ որպես իրավական կարգավորման բոլոր (հանրային ու մասնավոր) ոլորտներում և ճյուղերում ձևական հավասարության միասնական սկզբունքով հասարակական հարաբերությունների համընդհանուր ձևի իրողություններին ու իրական իմաստին: Իրավունքի ցանկացած ճյուղում իրավունքի ցանկացած նորմ, եթե խոսքը ոչ թե կամայական պատվիրանի, այլ իրականում իրավունքի նորմի՝ որպես ձևական հավասարության սկզբունքի պահանջների կոնկրետացման մասին է, *իր մեջ միավորում է (և ձևական հավասարության համաիրավական սկզբունքի իմաստով պետք է իր մեջ միավորի) երկու հիմունք՝ հանրային-իրավականն ու մասնավոր-իրավականը*, կամ Ուլպիանոսի բառերով ասած՝ «հասարակականի առումով օգտակարը և մասնավորի առումով օգտակարը»:

*Իրավունքը հանրայինի և մասնավորի բաժանելու իմաստը* ոչ թե այն է, որ իրավունքի նորմերում և ճյուղերում (օրինակ՝ սահմանադրական կամ քրեական իրավունքում) արտահայտվի առանձին միայն «հասարակականի առումով օգտակարը» (հասարակական օգուտը, բարիքը, շահը և այլն), իսկ այլ իրավունքի նորմերում ու ճյուղերում (օրինակ՝ քաղաքացիական, ընտանեկան կամ ձեռնարկատիրական իրավունքում) արտահայտվի առանձին միայն «մասնավոր տեսակետից օգտակարը» (մասնավոր օգուտը, բարիքը և շահը), այլ, ընդհակառակը, այն է, որ իրավունքի բոլոր նորմերում (և ճյուղերում) պատշաճ ձևով հաշվի առնվի ու արտահայտվի *թե՛ հասարակական օգուտի, թե՛ մասնավոր օգուտի (հասարակական և մասնավոր բարիքների, շահերի) իրավական նշանակությունը դրանց փոխհամաձայնեցված միասնության մեջ*:

*Իրավունքի նորմում և ամբողջությամբ իրավունքում ներկայացված ընդհանուր կամքը (ընդհանուր բարօրությունը, ընդհանուր շահը)* հենց համապատասխան ոլորտում ու նորմատիվ-իրավական կարգավորման ճյուղում հանրային և մասնավոր շահերի հաշվառման, համաձայնեցման ու համատեղման իրավական եղանակ և իրավապան ձև է: Իրավաչափ շահը, այսինքն՝ իրավունքի կողմից ճանաչվող ու պաշտպանվող շահը՝ ձևական հավասարության հանընդհանուր իրավական սկզբունքի պահանջներին և դրանց համապատասխանության չափանիշի հիման վրա (և այդ սկզբունքի պահանջներն իրավունքի կոնկրետ նորմերում

արտահայտելով) տարբեր հակասական շահերի համաձայնեցման ու փոխզիջման արդյունք է: Այսպիսի իրավաչափ շահն իրավունքի տեսանկյունից հենց ընդհանուր շահն է (ընդհանուր բարօրությունը), այն իմաստով, որ բոլոր հակասող շահերից (մասնավոր, խմբային, հանրային և այլն) բոլոր համապատասխան սուբյեկտներից (անհատներից, միավորումներից, պետական մարմիններից, ամբողջությամբ պետությունից) իր մեջ ներառում է ամբողջ իրավաչափը (այսինքն՝ իրավունքի հետ համաձայնեցվածը): Այնպես որ, իրավաչափ մասնավոր ու հանրային շահերը պաշտպանվում են (և պետք է պաշտպանվեն) բոլոր նորմերով, իրավունքի բոլոր ճյուղերի նորմերով: Այդ իմաստով հասկանալի է, որ օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Մահմանադրության մեջ ամրագրված՝ մարդու իրավունքներն արտահայտում են իրավունքի կողմից պաշտպանված ընդհանուր շահը (այսինքն՝ թե՛ առանձին անհատի, թե՛ ամբողջությամբ պետության իրավաչափ շահերը) ու չեն հակասում պետության ինքնիշխանության սահմանադրական-իրավական հայեցակարգին և այլն:

Այսպիսով, իրավունքի հանրային-իրավական և մասնավոր-իրավական տեսակետների տարբերության դիրքերից իրավունքի համակարգը բնութագրելիս խոսքը, ըստ էության, ոչ թե առանձին, սկզբունքորեն միմյանցից տարբերվող հանրային իրավունքի ու մասնավոր իրավունքի (մաքուր) նորմերի և ճյուղերի մասին է, այլ *իրավունքի բոլոր նորմերում ու ճյուղերում հանրային-իրավական և մասնավոր-իրավական բաղադրատարրերի (բաղկացուցիչ պահերի) մասին է*: Առանձին նորմում և իրավունքի այս կամ այն ճյուղի նորմերում այդ բաղադրատարրերի համատեղման առանձնահատուկ բնույթն ու յուրօրինակությունները որոշվում են կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությամբ, իրավական կարգավորման նպատակներով և խնդիրներով, հասարակական կյանքի տարբեր ոլորտների իրավական կարգավորման առարկայի ու մեթոդի յուրահատկությամբ:

## **2. Իրավական կարգավորման օբյեկտը, առարկան և մեթոդը**

Իրավունքի յուրաքանչյուր ճյուղ իրավական կարգավորման ընդհանուր օբյեկտի, ընդհանուր առարկայի և ընդհանուր մեթոդի սահմաններում ունի իր իրավական կարգավորման հատուկ օբյեկտը, հատուկ առարկան ու հատուկ մեթոդը:

Իրավական կարգավորման հիմնահարցերի իմաստավորման ու հաջող լուծման (դրա օբյեկտի, առարկայի, մեթոդի և այլնի որոշման) *ընդ-*

*հանուր առևանգան- մեկնարանման հիմքն* ամբողջությամբ իրավագիտության առարկայի և մեթոդի հայեցակարգն է, որը որոշում է իրավունքի առանձնահատկությունը, սոցիալական իրականության իրավաբանական (հասկացական-իրավական) իմացության առանձնահատկությունները և դրա վրա կարգավորիչ-իրավական ներգործությունը:

Ցանկացած *ճյուղային իրավունք* (սահմանադրական, քաղաքացիական, քրեական, ընտանեկան իրավունք և այլն) իր էական հատկություններով ու առարկայական-մեթոդաբանական բնութագրերով իրավաբանական գիտության առարկայի և մեթոդի ընդհանուր հայեցակարգի հիմքում ընկած *ամբողջությամբ իրավունքի ընդհանուր հասկացության կոնկրետացման ձև է* (կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունների նկատմամբ կիրառելիս):

Ուստի, *իրավական կարգավորման հիմնադիր սկզբունքը* որպես սոցիալական կարգավորման հատուկ սիպ, ձևական հավասարության սկզբունքն է (և այն կոնկրետացնող նորմերը), որն արտահայտում է իրավունքի էական հատկությունները և որոշում է ամբողջ իրավական կարգավորման առանձնահատկությունը, դրա առարկայի ու մեթոդի որակական յուրօրինակությունը:

*Իրավական կարգավորման ընդհանուր օբյեկտը* հասարակական հարաբերություններն են, ավելի ճշգրիտ՝ հասարակական հարաբերությունների գիտակցական-կամային արտահայտությունն է, այսինքն՝ մարդկանց գիտակցությամբ ու կամքով որոշվող նրանց արտաքին վարքագիծը (գործողությունը և անգործությունը):

Հասարակական հարաբերությունների *իրավական կարգավորումը* (լատիներեն՝ regula - կանոն բառից) ձևական հավասարության սկզբունքի պահանջներին համապատասխանող այդ հարաբերությունների կարգավորման ձևն է՝ մարդկանց վարքագծի և նրանց փոխհարաբերությունների զանազան համապարտադիր կանոնների (նորմերի) պաշտոնական-իշխանական սահմանման միջոցով:

*Իրավական կարգավորման ընդհանուր առարկան* բոլոր կարգավորվող հասարակական հարաբերությունների ոլորտում պաշտոնապես սահմանված ընդհանուր իրավակարգն է, այսինքն՝ ձևական հավասարության սկզբունքի պահանջները նորմատիվ կոնկրետացնող իրավական նորմերի ամբողջ համակարգն է: Այսպիսով, իրավական կարգավորման առարկան ոչ թե իրավական կարգավորման ինքնին օբյեկտներն են (փաստացի հասարակական հարաբերությունները), այլ՝ իրավական կարգավորման օբյեկտի ոլորտում սահմանված որոշակի իրավակարգը:

*Իրավական կարգավորման ընդհանուր մեթոդն* իրավունքի նորմերի կարգավորիչ հատկությունների ու գործառույթների օգտագործման՝ ամբողջությամբ իրավունքին ներհատուկ եղանակների, հնարքների և ձևերի հանրագումարն է:

Իրավական կարգավորման առարկան ու մեթոդն օժտված են հասկացական-իրավական միասնությամբ և ընդհանուր նորմատիվ-իրավական բովանդակությամբ: Իրավունքի յուրաքանչյուր առանձին նորմ՝ որպես ձևական հավասարության ընդհանուր իրավական սկզբունքի կոնկրետացման նորմատիվ ձև, միաժամանակ, և՛ իրավական կարգավորման առարկայի (սահմանված իրավակարգի), և՛ այդ առարկային (իրավակարգին) համապատասխանող իրավական կարգավորման մեթոդի (մարդկանց վարքագծի կարգավորման ու հասարակական հարաբերությունների վրա ներգործության եղանակի) բաղադրատարրն է:

Ամբողջ իրավունքի (և իրավունքի ընդհանուր հասկացության) և իրավական կարգավորման ամբողջ համակարգի համար միասնական ձևական հավասարության սկզբունքը տարբեր կերպ է բեկվում հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, իրավական կարգավորման տարբեր ոլորտներում: Չևական հավասարության սկզբունքի ընդհանուր իրավական իմաստի կոնկրետ նշանակության (կոնկրետացման ձևերի) պարզումը զանազան հասարակական հարաբերությունների ու իրավական կարգավորման ոլորտների նկատմամբ կիրառելով, իսկ այնուհետ՝ նաև ձևական հավասարության սկզբունքի այդ կոնկրետ նշանակության արտահայտելն իրավունքի առանձին նորմերի, դրանց միասեռ հանրագումարի (համապատասխան ինստիտուտներով իրավունքի ճյուղի) և իրավունքի նորմերի ամբողջ համակարգի սեսքով, իրավագիտության առավել էական հիմնահարցերից մեկն է: Այդ հիմնահարցերն իրավաբանական տեսությունից ու պրակտիկայից ամեն անգամ պահանջում են ստեղծագործական մոտեցում հանդես բերել իրավունքի իրական կոնկրետ իմաստը և նշանակությունը (ձևական հավասարության սկզբունքը) պարզելու համար՝ դրանք կիրառելով կարգավորվող (և իրավական կարգավորմանը ոչ ենթակա) զանազան հասարակական հարաբերությունների նկատմամբ, միասեռ հասարակական հարաբերությունների առանձին խմբերի ու ոլորտների իրավական կարգավորման, ընդհանուր իրավական և ճյուղային առարկայի ու մեթոդի համարժեք որոշում, իրավունքի համապատասխան կոնկրետ նորմերում իրավական կարգավորման առարկայի և մեթոդի կարգավորիչ-իրավական բովանդակության պատշաճ արտահայտում ընդհանուր համակարգային *կապերի* ճյուղային պատկանելության և ինստիտուցիոնալ պրոֆիլի հաշվառմամբ:



Իրավական կարգավորման գործընթացում պետք է լուծվի երեք հիմնական հարց՝

1) ինչպիսի՞ հասարակական հարաբերություններ են ենթակա իրավական կարգավորման, այսինքն՝ ինչպիսի՞ն է իրավական կարգավորման օբյեկտը.

2) իրավական կարգավորման այդ ոլորտում ինչպիսի՞ իրավակարգ (իրավական վարչակարգ) պետք է սահմանվի, այսինքն՝ ինչպիսի՞ն է իրավական կարգավորման առարկան.

3) իրավունքի նորմերին բնորոշ ինչպիսի՞ հատուկ կարգավորվող իրավական ձևերի, եղանակների ու հնարքների օգնությամբ պետք է սահմանել համապատասխան իրավակարգը (իրավական վարչակարգ), այսինքն՝ ինչպիսի՞ն է իրավական կարգավորման մեթոդը:

Իրավունքի յուրաքանչյուր ճյուղին ներհասուկ են իր տարբերակիչ հատկություններն ու բնութագրերը, որոնք պայմանավորված են ճյուղային իրավական կարգավորման օբյեկտի առանձնահատկությամբ և տվյալ օբյեկտի կարգավորման առարկայի ու մեթոդի համապատասխան յուրահատկություններով:

Որպես կանոն՝ *ճյուղային իրավական կարգավորման օբյեկտը* հասարակական կյանքի առանձին համեմատաբար ինքնուրույն ոլորտ (բնագավառ) կազմող միասեռ հասարակական հարաբերությունների մեծ խումբն է: Միասեռ հասարակական հարաբերությունների այսպիսի խմբերից են օրինակ՝ իշխանական-կառավարական, գույքային, ընտանեկան, հողային, ֆինանսական, ձեռնարկատիրական, բնապահպանական, սոցիալական ապահովման, հանցագործության և պատժի, դատավարական, դատավճռի կատարման և այլ ոլորտների հարաբերությունները:

Այդ տարբեր օբյեկտների իրավական կարգավորումը պետք է իրականացվի համապատասխան հասարակական հարաբերությունների յուրահատկությունների, դրանց փաստացի սոցիալական բովանդակության առանձնահատկության, մարդկանց սոցիալական կյանքում և հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգում, դրանց հատուկ տեղի և նշանակության հաշվառմամբ:

*Ճյուղային իրավական կարգավորման առարկան* իրավական կարգավորման ոլորտում սահմանվող հատուկ իրավակարգն է (իրավական վարչակարգը), որը որոշվում է համապատասխան ճյուղի իրավունքը կազմող միակարգ (ըստ իրենց կարգավորիչ-իրավական հատկությունների և բնութագրերի) իրավունքի նորմերի հանրագումարով:

Ճյուղային իրավական կարգավորման առարկան, ճյուղային իրավակարգը, ճյուղային իրավունքը համապատասխանաբար իրավական

կարգավորման ընդհանուր առարկան ընդհանուր իրավակարգի և ամբողջությամբ իրավունքի համակարգի բաղադրատարրերն են:

Ծիշտ այդպես էլ, իրավական կարգավորման ճյուղային մեթոդը (իրավունքի ճյուղի մեթոդը) իրավական կարգավորման ընդհանուր մեթոդի բաղադրատարրն է:

*Գյուղային իրավական կարգավորման մեթոդը* (իրավունքի ճյուղի մեթոդը) իրավունքի տվյալ ճյուղի նորմերին բնորոշ առանձնահատուկ կարգավորիչ հասկանիչների և գործառույթների արտահայտման հնարքների, եղանակների և ձևերի հանրագումարն է:

Գյուղային մեթոդների առանձնահատկություններն զգալի չափով պայմանավորված են *նորմատիվ-իրավական կարգավորման ճյուղային մեխանիզմի առանձնահատկությամբ*:

Իրավունքի բոլոր ճյուղերի համար նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունների *իրավական կարգավորման մեխանիզմն* ընդհանուր տեսքով իրավունքի նորմի երեք կառուցվածքային բաղադրատարրի՝ դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի համակարգային կապն է: Վերացական ձևով դա նշանակում է, որ որոշակի պայմաններում (հիպոթեզ) կարգավորվող հարաբերությունների մասնակիցները պետք է գործեն որպես որոշակի, փոխկապակցված, մեկը մյուսին հարաբերակցվող իրավունքների և պարտականությունների սուբյեկտներ (դիսպոզիցիա), *հակառակ դեպքում՝ իրավունքի նորմի պահանջները խախտողի համար վրա կհասնեն անշահավետ հետևանքներ (սանկցիա)*:

Իրավական կարգավորման այս ընդհանուր մեխանիզմը զանազան բովանդակային-իրավական իմաստ ու կառուցվածքային-կառուցողական արտահայտություն է ստանում տարբեր ճյուղերի իրավունքի նորմերում և, ամբողջապես, իրավական կարգավորման տարբեր ճյուղային մեխանիզմներում: Ուստի, իրավունքի տարբեր ճյուղերում իրավունքի նորմի կառուցվածքային բաղադրատարրերն ունեն տարբեր կարգավորիչ-իրավական նշանակություն և իրավական կարգավորման մեխանիզմում կատարում են տարբեր դերեր:

Այսպես, իրավունքի ճյուղերից մի մասում (օրինակ՝ սահմանադրական, քաղաքացիական, ընտանեկան, ձեռնարկատիրական, ֆինանսական, հողային, քաղաքացիական դատավարական, քրեական-դատավարական իրավունքում և այլն) իրավական կարգավորման մեխանիզմում ու, համապատասխանաբար, ճյուղային նորմերի կառուցվածքում որոշիչ նշանակություն ունի, առաջին հերթին, նորմի դիսպոզիցիան, որն առավելագույն չափով սպառիչ և մանրակրկիտ կարգավորում ու ամ-

րագրում է կարգավորվող հարաբերությունների սուբյեկտների փոխադարձ իրավունքները և պարտականությունները: Իրավունքի ճյուղերի այս խմբում նորմերի դիսպոզիցիայի առանձնահատկությունը (որոշակի սուբյեկտների համար որոշակի փոխադարձ իրավունքների ու պարտականությունների հստակ ամրագրումը) արդեն իսկ զգալի չափով կանխորոշում է ինչպես դրանց հիպոթեզի (այսինքն՝ դիսպոզիցիայում արդեն իսկ շարադրված որոշակի սուբյեկտների իրավունքների և պարտականությունների վավերության պայմանների), այնպես էլ համապատասխան սանկցիաների բնույթը:

Իրավունքի այլ ճյուղերում (քրեական իրավունքում, ինչպես նաև վարչական իրավունքի այն մասում, որտեղ կարգավորվում են վարչական իրավախախտումների համար պատասխանատվության հարցերը) որոշիչ կարգավորիչ-իրավական նշանակություն ունի, առաջին հերթին, նորմի հիպոթեզը (հանցագործությունների ու վարչական իրավախախտումների կոնկրետ կազմերի սպառիչ շարադրանքը) և սովյալ հիպոթեզով պայմանավորված՝ համապատասխան սանկցիան:

Ընդ որում, վերը բերված ճյուղերի երկու խմբի ներսում իրավունքի յուրաքանչյուր ճյուղի մեթոդն ունի իր տարբերակիչ առանձնահատկությունները: Այդ առանձնահատկություններն արտահայտվում են սովյալ ճյուղին հատուկ սուբյեկտների մի մասի իրավունքները և պարտականություններն այլ սուբյեկտների պարտականություններին ու իրավունքներին հարաբերակցվելու յուրահատուկ եղանակներում, իրավունքի նորմի կարգավորիչ-իրավական բովանդակության, դրա կառուցվածքային բաղադրատարրերի մեջ բաշխման հնարքներում, տարբեր կառուցվածքային բաղադրատարրերի միջև համակարգային փոխկապակցությունների արտահայտման ձևերում և այլն:

Ճյուղային մեթոդների մի շարք առանձնահատկություններ կապված են այն բանի հետ, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղին ներհատուկ է իրավունքի սուբյեկտների ճյուղային կազմի որոշման իր հատուկ կարգը՝ դրանց իրավասուբյեկտության, իրավունակության և գործունակության հատուկ բովանդակությամբ, համապատասխան իրավունքների և պարտականությունների իրականացման իրեն հատուկ պայմանները (որոշակի իրավաբանական փաստերի առկայությունը) ու ձևերը, սովյալ ճյուղի իրավունքի նորմերում հանրային-իրավական և մասնավոր-իրավական բաղադրատարրերի միացման իր հատուկ եղանակները, իրավունքի նորմերի տարբեր տեսակների (իմպերատիվ և դիսպոզիտիվ, արգելող, պարտավորեցնող, իրավագործող և այլն) կարգավորիչ հատկությունների օգտագործման հատուկ կանոններն ու համատեղման հնարքները:

Ճյուղային մեթոդի կարևոր տարբերակիչ առանձնահատկություններից են նաև այն հատուկ ճյուղային իրավաբանական սկզբունքները, հասկացությունները, տերմինները, բանաձևերը, հայեցակարգերն ու կառույցները, որոնց օգնությամբ արտահայտվում է ճյուղային նորմերի առանձնահատուկ կարգավորիչ իմաստը և իրավունքի յուրաքանչյուր ճյուղի բովանդակային-առարկայական յուրօրինակությունը:

Ամբողջությամբ առարկան և մեթոդը՝ որպես իրավունքի ցանկացած ճյուղի երկու բաղադրատարր, միասեռ հասարակական հարաբերությունների խումբը կարգավորող, միակարգ ճյուղային նորմերի միևնույն հանրագումարի կարգավորիչ-իրավական հատկությունների ու բնութագրերի իմաստավորման և արտահայտման երկու փոխադարձաբար իրար լրացնող տեսակետներ են:

### 3. Ռուսական իրավունքի հիմնական ճյուղերը

Արդի ռուսական իրավունքի հիմնական ճյուղերն են՝ սահմանադրական իրավունքը, վարչական իրավունքը, քաղաքացիական իրավունքը, ձեռնարկատիրական իրավունքը, քրեական իրավունքը, աշխատանքային իրավունքը, ընտանեկան իրավունքը, ֆինանսական իրավունքը, հողային իրավունքը, բնապահպանական իրավունքը, քաղաքացիական դատավարական իրավունքը, քրեական-դատավարական իրավունքը, քրեական-կատարողական իրավունքը:

Իրավունքի ճյուղերի ամբողջ համալիրում առաջատար դեր ունի *սահմանադրական իրավունքը*: Իրավունքի այդ ճյուղը հասարակական ու պետական կարգի հիմքերը կարգավորող, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատություններն ամրագրող, պետության ձևը, պետական իշխանության բարձրագույն մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունը, տեղական ինքնակառավարման սահմանադրական-իրավական հիմունքները սահմանող նորմերի համակցություն է:

*Վարչական իրավունքը* պետական կառավարման ոլորտում հասարակական հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն է: Այդ ճյուղի նորմերով սահմանվում են գործադիր իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց համակարգը, կարգը և իրավասությունը, ամրագրվում են այդ մարմինների ու պաշտոնատար անձանց հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքները և պարտականությունները, սահմանվում են վարչական իրավախախտումների

հասկացությունն ու տեսակները, պատասխանատվության համապատասխան չափերը և այլն:

*Քաղաքացիական իրավունքը* մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության վրա հիմնված պայմանագրային և այլ պարտավորությունները, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն է: Քաղաքացիական իրավունքի նորմերը սահմանում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) իրավական վիճակը, սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականության) ծագման և իրականացման հիմքերը:

*Ճեռնարկատիրական իրավունքը* ձեռնարկատիրական գործունեության կարգավորման և իրականացման ընթացքում ծավալվող ձեռնարկատիրական (տնտեսական) հարաբերությունները, ինչպես նաև ներտնտեսական հարաբերությունների կարգավորումը և իրականացումը կարգավորող նորմերի համակցություն է<sup>1</sup>: Ընդ որում, ձեռնարկատիրական է համարվում ինքնուրույն, իր ռիսկով ու ձեռնարկատիրոջ գույքային պատասխանատվությամբ իրականացվող գործունեությունը, որն ուղղված է օրենքով սահմանված կարգով որպես այդպիսին գրանցված, գույքի օգտագործումից, ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից մշտական շահույթ ստանալուն:

*Քրեական իրավունքը* քրեական պատասխանատվության հիմքը և սկզբունքներն ամրագրող, հանցագործությունների հասկացությունն ու տեսակները բնորոշող, հանցագործությունների կատարման համար պատիժների և քրեական-իրավական բնույթի այլ միջոցների տեսակները սահմանող նորմերի համակցություն է: Նորմերի այս ճյուղի հիմնական խնդիրները մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների, սեփականության, հասարակական կարգի և հասարակական անվտանգության, սահմանադրական կարգի պահպանությունն է հանցագործ ռոնձգություններից, մարդկության խաղաղության ու անվտանգության ապահովումը, ինչպես նաև հանցագործությունների կանխարգելումն է:

<sup>1</sup> Стів Лаушев В.В. Предпринимательское право: понятие и субъекты. М., 1997. էջ 17-25

*Աշխատանքային իրավունքը* գործատուների և աշխատողների միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն է: Իրավունքի այս ճյուղի նորմերով որոշվում են աշխատողների հիմնական աշխատանքային իրավունքներն ու պարտականությունները, սահմանվում է աշխատանքային պայմանագրի կնքման և լուծման կարգը, կարգավորվում են աշխատաժամի ու հանգստի ժամի, աշխատավարձի, աշխատանքային կարգապահության, աշխատանքի պաշտպանության և այլ հարցեր:

*Ընտանեկան իրավունքն* ամուսնության և ընտանիքի ոլորտում հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն է: Իրավունքի այս ճյուղի նորմերը սահմանում են ամուսնանալու, ամուսնությունը դադարելու և դա անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում են ընտանիքի անդամների (ամուսինների, ծնողների և երեխաների, ինչպես նաև այլ ազգականների) միջև անձնական ոչ գույքային ու գույքային հարաբերությունները, որոշում են խնամակալության և հոգաբարձության կարգն ու ձևերը և այլն:

*Ֆինանսական իրավունքը* ֆինանսական հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն է: Ֆինանսական իրավունքի նորմերը սահմանում են բյուջետային միջոցները ձևավորելու և բաշխելու կարգը, կարգավորում են բյուջեն կազմելու ու հաստատելու, դրամական շրջանառության, հարկերի և այլ պարտադիր վճարների գանձման հարցերը, սահմանում են բանկերի ֆինանսական գործունեության հիմքերը, ձևերն ու ընթացակարգերը և այլն:

*Հողային իրավունքը* հողային հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն է: Հողային իրավունքի նորմերը կարգավորում են հողի նկատմամբ սեփականության հարցերը, որոշում են հողօգտագործման պայմաններն ու կարգը, տարբեր կատեգորիաների հողերի իրավական ռեժիմը և այլն:

*Բնապահպանական իրավունքը* շրջակա բնական միջավայրը, դրա վրա վնասակար ներգործության բոլոր տեսակներից պահպանելու միջոցները, ձևերը և պահպանելու կարգը սահմանող նորմերի համակցություն է: Իրավունքի այս ճյուղի նորմերն ամրապնդում են առողջ շրջակա միջավայրի ժամանակակից չափանիշները, պաշտպանում են բնակչության բնապահպանական բարեկեցությունը, ապահովում են յուրաքանչյուրի իրավունքը բարենպաստ շրջակա միջավայրի նկատմամբ:

*Քաղաքացիական դատավարական իրավունքը* քաղաքացիական դատավարության կարգը սահմանող նորմերի համակցություն է: Իրավունքի այս ճյուղի նորմերը սահմանում են քաղաքացիական, ընտանե-

կան, աշխատանքային, հողային, բնապահպանական և վարչական իրավահարաբերություններից բխող վեճերով գործերի քննության կարգը (ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ բողոքներով, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները խախտող գործողությունների վերաբերյալ բողոքներով, վարչական տույժերի վերաբերյալ բողոքներով և այլ գործերով): Քաղաքացիական դատավարության կարգով քննվում են նաև հատուկ վարույթի գործերը (իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր որոշելու, քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու և մահացած հայտարարելու մասին, քաղաքացուն սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելու, գույքը սիրագուրկ ճանաչելու, քաղաքացիական կացության ակտերի գրքերում գրառումների անճշտությունը պարզելու, նոտարական գործողությունների կամ դրանք կատարելուց հրաժարվելու նկատմամբ բողոքներով, ըստ ներկայացնողի՝ կորած փաստաթղթերով իրավունքների վերականգնման մասին գործերը):

*Քրեական-դատավարական իրավունքը* քրեական գործերով հետաքննության, նախաքննության և դատաքննության ժամանակ վարույթի կարգը սահմանող նորմերի համակցություն է: Քրեական դատավարության հիմնական խնդիրներն են՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանությունը, իրավակարգի պաշտպանությունը, հանցագործությունների արագ և լիակատար բացահայտումը, օրենքի հիման վրա քրեական գործերի օբյեկտիվ քննությունն ու լուծումն այն հաշվով, որ հանցագործություն կատարած յուրաքանչյուր անձ ենթարկվի արդարացի պատժի, և որևէ անմեղ մարդ չենթարկվի քրեական պատասխանատվության ու չդատապարսովի:

*Քրեական-կատարողական իրավունքը* պատիժների կատարման և կրման կարգն ու պայմանները կարգավորող, դատապարտվածների ուղղման միջոցները որոշող, նրանց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պահպանող, սոցիալական հարմարվածության մեջ նրանց օգնություն ցուցաբերող նորմերի համակցություն է:

#### **4. Իրավունքի համակարգը և օրենսդրությունը**

*Իրավունքի համակարգն* իրավասահման գործունեության տարրեր ձևերի (օրենսդրության, նախադեպային իրավունքի նորմերի սահմանման և այլնի), ինչպես նաև նման գործունեության արդյունքների համակարգման (նորմատիվ-իրավական և այլ իրավասահման ակտերի) *զիտական հիմք է:*

Ի սարբերություն օրենսդրության (իրավասահման գործունեության այլ ձևերի ու ակտերի)՝ *իրավունքի համակարգը գիտական-վարդապետական, իրավաբանական-տրամաբանական որոշակի կառուցվածք է, որն արտահայտում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատուկ օրինաչափությունների գիտական իմացության արդյունքները:*

Իրավունքի համակարգի կառուցման ճյուղային սկզբունքը, իրավական կարգավորման առարկայի և մեքոդի չափանիշներով իրավունքի սարբեր ճյուղերի առանձնացման հայեցակարգը, իրավունքի համակարգի ու դրա բաղադրատարրերի (իրավական նորմերի, ինստիտուտների և ճյուղերի) ներքին կազմակերպական կառուցվածքը և այլն, իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորչի, իրավական կարգավորման ներհամաձայնեցված համակարգի (դրա ձևերի, մեխանիզմի, միջոցների ու եղանակների), տարասեռ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների մասին իրավաբանական-վարդապետական ուսմունքի դրույթներն են: Որպես վարդապետական կառուցվածք՝ իրավունքի համակարգն արտահայտում է հասարակական հարաբերությունների պատշաճ նորմատիվ-իրավական կարգավորման ու դրա արդյունքների համակարգման համապատասխան ձևերի (իրավասահման ակտերի) իմաստի, կարգի, միջոցների և կանոնների գիտական հասկացողությունը:

*Այսպիսով, իրավունքի համակարգն իրավաբանական-տրամաբանական վարդապետական մոդել է իրավասահման գործունեության իրական պրակտիկայի, համապատասխան օրենսդրական և այլ իրավասահման ակտերի ընդունման, դրանց արդյունավետ կազմակերպված հաշվառման ու համակարգման համար:*

Համաձայն իրավունքի համակարգի և օրենսդրության հիմնահարցերի ազատական-իրավաբանական մեկնաբանման՝ *համակարգվածությունը՝* որպես իրավունքի համակարգի վարդապետական կառույց, ինչպես նաև դրան համապատասխանող օրենսդրությունը, վերջին հաշվով, որոշվում են նրանով, որ դրանց հիմքում ընկած է *իրավունքի նորմի՝ որպես ձևական հավասարության սկզբունքի համաիրավական իմաստի և համաիրավական պահանջի նորմատիվ կարգավորիչ կոնկրետացման և արտահայտման իրավաբանական-տրամաբանական ձևի միասնական հասկացողությունը:*

Պետական տարբեր մարմինների կարգավորիչ-իրավասահման գործունեության համապատասխանությունն իրավունքի համակարգի դրույթներին, օրինաստեղծության իրականացումն իրավաբանական-



ճյուղային սկզբունքով (իրավունքի համապատասխան ճյուղի առարկայի և մեթոդի առանձնահատկության, իրավունքի համակարգում դրա տեղի և դերի հաշվառմամբ և այլն) իրավական կարգավորմանն ու իրավասահման ակտերի համակցությանը հաղորդում է արդյունավետ իրավաբանական-սրամաբանական կարգավորվածություն և համակարգված-կազմակերպված բնույթ: Առանձին իրավասահման ակտերն ու գործող օրենսդրության համակցությունն ամբողջությամբ կրում են համակարգված բնույթ այն չափով, որ չափով դրանք հաշվի են առնում և արտահայտում են իրավունքի համակարգի պահանջները:

Իրավունքի, պետության և իրավական մշակույթի բավականաչափ զարգացած ձևերի պայմաններում նորմաստեղծությունն իրականացվում է իրավաբանական վարդապետական հիմնական դրույթի ոգով, և գործող օրենսդրության ճյուղային կառուցվածքն ամբողջությամբ համապատասխանում է իրավունքի համակարգի ճյուղային կառուցվածքին: Ընդ որում, դրանց միջև միշտ էլ մնում են որոշակի սարբերություններ և հակասություններ: Այդպիսի հակասություններն արդեն իսկ պայմանավորված են նրանով, որ իրավունքի համակարգն իրավաբանական-վարդապետական կառուցվածք է, մինչդեռ օրենսդրությունը (և ամբողջ գործող պոզիտիվ իրավունքը), եթե անգամ դա հետևողականորեն պաշտպանում է իրավաբանական գիտության հանձնարարականները, պաշտոնական-իշխանական սահմանում է (էմպիրիկ երևույթ, պրակտիկ կազմավորում):

Իրավունքի համակարգը՝ որպես վերացական-իրավաբանական կառույց, հասարակության էվոլյուցիոն զարգացման սովորական պայմաններում աչքի է ընկնում կառուցվածքային մեծ կայունությամբ և հայեցակարգային պահպանողականությամբ: Մակայն հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման նպատակներում ու խնդիրներում կատարվող էական փոփոխություններն ուղեկցվում են իրավունքի ձևավորված համակարգի հայեցակարգի համապատասխան ճշգրտումներով և կառուցվածքի վերակազմավորումներով (*նոր իրավական ճյուղերի ու ինստիտուտների* ի հայտ գալը, նախկինների անհետանալը կամ վերակազմավորվելը և այլն):

Այսպես, ռուսական իրավունքի ժամանակակից համակարգում արդեն չկա այնպիսի ճյուղ, ինչպիսին կոլտնտեսային իրավունքն էր, ի հայտ են եկել մի քանի նոր իրավական ճյուղեր (օրինակ՝ ձեռնարկատիրական իրավունքը) և ենթաճյուղեր (օրինակ՝ բանկային իրավունքը, սահմանադրական-դատավարական իրավունքը և այլն): Չգալի փոփոխություններ են նկատվում նաև իրավունքի մի շարք ավանդական ճյու-

ղերի ինստիտուցիոնալ կառուցվածքում (բազմաթիվ նոր իրավական ինստիտուտների ի հայտ գալը, նախկինների էական նորացումը և այլն):

Էականորեն փոփոխվել է նաև իրավական կարգավորման և իրավունքի համակարգի *ընդհանուր հայեցակարգը*: Այս առումով կարևոր նշանակություն ունի, առաջին հերթին, մարդու բնական (ի ծնե և անօտարելի) իրավունքների և ազատությունների՝ որպես գործող իրավունքի գերապատիվ աղբյուրի, պոզիտիվ-իրավական նշանակության, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի ու Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի՝ որպես ռուսական իրավունքի համակարգի բաղադրատարրի, սահմանադրական ճանաչումը և ամրագրումը, իրավական կարգավորման մեջ դիսպոզիտիվ նորմերի ու ամբողջությամբ մասնավոր-իրավական հիմունքների դերի զգալի ուժեղացումը և այլն:

Օրենսդրությունը սոցիալական պրակտիկայի հետ ունեցած իր անմիջական կապի ուժով (թե՛ բովանդակային իմաստով, թե՛ կառուցվածքի տեսակետից) անհամեմատ ավելի զգայուն և օպերատիվ է արձագանքում հասարակական կարգի փոփոխությանը, իրավական կարգավորման մեջ մշտապես ծագող պահանջներին, քան իրավունքի համակարգը: Ընդ որում, նորմաստեղծ գործընթացը և համապատասխան նորմատիվ-իրավական ակտերն իրենց ճյուղային ուղղվածությամբ հաճախ դուրս են գալիս իրավունքի համակարգի ճյուղերի շրջանակից: Ուստի, իրավունքում կազմավորվող *օրենսդրության կառուցվածքն ամբողջությամբ*, բացի իրավունքի համակարգի ճյուղերին համապատասխանող օրենսդրության ճյուղերից, իր մեջ ներառում է նաև օրենսդրության որոշ այլ ճյուղեր և օրենսդրության այլ կառուցվածքային մասեր (առանձին օրենսդրական համալիրներ և զանգվածներ):

Օրինակ՝ արդի ռուսական օրենսդրության մեջ կազմավորվել են *օրենսդրության այնպիսի համալիր ճյուղեր*, ինչպիսիք են՝ առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, գյուղատնտեսության և այլնի մասին օրենսդրությունը: Օրենսդրության այս համալիր ճյուղերը, արտացոլելով իրավական կարգավորման մեջ ընթացող դիֆերենցման և ինտեգրման գործընթացները, իրենց մեջ բովանդակում են իրավունքի տարբեր ճյուղերի նորմեր (վարչական, ֆինանսական, քաղաքացիական, ձեռնարկատիրական և այլն):

Օրենսդրության մեջ ինտեգրատիվ գործընթացներն արտահայտվում են նաև առանձին խոշոր *օրենսդրական զանգվածների ձևավորման մեջ*, օրինակ՝ հանցագործությունների դեմ մղվող պայքարի հարցերին,

տրանսպորտի, ինֆորմատիկայի հիմնախնդիրների կարգավորմանը նվիրված նորմատիվ-իրավական ակտերի համակցության տեսքով:

Սակայն իրավունքի համակարգն օրենսդրության կառուցվածքների հետ չհամընկնելու ու տարբերության բոլոր դեպքերով հանդերձ ամբողջ իրավասահման գործընթացի նորմատիվ-իրավական նյութի ամբողջ համակցության, կարգավորման և մեկնաբանման գլխավոր ու էական կողմնորոշիչը և իրավաբանական-տրամաբանական հիմքն է:

## 5. Իրավասահման ակտերի համակարգումը

Գործող իրավունքը կազմված է տարբեր իրավասահման ակտերի (նորմատիվ-իրավական ակտերի, նախադեպային նշանակության դատական վճիռների և այլն) բազմությունից, որոնցում արտահայտված ու ներկայացված է պոզիտիվ իրավունքի տարբեր աղբյուրների նորմատիվ-իրավական բովանդակությունը: Այդ ամբողջ նորմատիվ-իրավական նյութի (թե՛ առանձին իրավասահման ակտերի, թե՛ նման ակտերի ամբողջ հանրագումարի շրջանակներում) պատշաճ կազմակերպման և գործնական օգտագործման հարմարավետության համար կիրառվում են իրավասահման ակտերի համակարգման տարբեր եղանակներ (տեսակներ):

Նորմատիվ-իրավական և այլ իրավասահման ակտերի համակարգման առավել պարզ եղանակն իրավական տեղեկատվությունից համապատասխան օգտվողների համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի որոշակի շրջանակով *դրանց տարբեր ձևերի հաշվառման* կազմակերպումն է: Նման հաշվառման պատշաճ կազմակերպումն իր մեջ ներառում է հետաքրքրող հարցերի վերաբերյալ համապատասխան իրավական տեղեկատվության *դրոնման* որոշակի *համակարգ* (ձեռքով կամ ավտոմատացված):

Իրավասահման ակտերի համակարգման առավել զարգացած եղանակները դրանց միավորումը (ինկորպորացիան), համախմբումը (կոնսոլիդացիան) և օրինակարգումը (կոդիֆիկացիան) է:

*Միավորումը (ինկորպորացիան)*՝ համակարգման եղանակ է, որը որոշակի հիմքերով (թեմատիկ, ժամանակագրական և այլն) ու հարցերի շրջանակով իրավասահման ակտերը հավաքելն (ժողովելն) է՝ առանց համապատասխան ակտերի նորմատիվ-իրավական բովանդակության մեջ փոփոխություն կատարելու: Միավորման (ինկորպորացիայի) տեսքով հրապարակվում են (պաշտոնական կամ ոչ պաշտոնական կարգով) իրավական կարգավորման որոշակի առարկայով կամ հարցերի

շրջանակով գործող իրավասահման ակտերի տարբեր ժողովածուներ և հավաքածուներ: Նման հրատարակություններ պատրաստելիս անհրաժեշտության դեպքում իրականացվում է հրապարակվող ակտերի տեքստերի արտաքին մշակում (տեքստից հանվում են ուժը կորցրած դրույթները, տեքստի մեջ մտցվում են արդեն իսկ նախկինում ընդունված նոր իրավական դրույթները և այլն): Մակայն միավորման (ինկորպորացիայի) ժամանակ ակտերի տեքստի նման մշակումը չի ուղեկցվում միավորման (ինկորպորացիայի) ենթարկված ակտերում պարունակվող իրավունքի գործող նորմերի փոփոխմամբ կամ խմբագրմամբ:

*Համախմբումը (կոնսոլիդացիան)* համակարգման ձև է, որը մի քանի տարրեր միակարգ իրավասահման ակտերը միավորում է մեկ ակտում: Այդ նոր համախմբված (կոնսոլիդացված) ակտը պատշաճ կարգով ընդունվում է պետության համապատասխան իրավասու իրավասահման մարմնի կողմից: Ընդ որում, նոր ակտի ընդունմամբ նախկին համախմբված (կոնսոլիդացված) ակտերը կորցնում են իրենց իրավաբանական ուժը և դադարում են գործել: Համախմբումը (կոնսոլիդացիան). ի տարբերություն միավորման (ինկորպորացիայի), պաշտոնական իրավասահման գործունեության ձև է, քանի որ իր մեջ ներառում է հնացած նորմերի փոփոխություն և դադարեցում, մի շարք նոր նորմերի սահմանում ու ամբողջությամբ նոր իրավասահման ակտի ընդունում:

*Օրինակարգումը (կողիֆիկացիան)* համակարգման եղանակ է, որն իրավունքի որոշակի ճյուղի կամ ենթաճյուղի իրավական նորմերի էական վերամշակման, փոփոխման և նորացման ու նոր օրինակարգված (կողիֆիկացված) ակտի ընդունում է: Այսպիսի *օրինակարգված (կողիֆիկացված) ակտեր են* օրենքների հավաքածուները, օրենսգրքերը, օրենսդրության հիմունքները, կանոնադրությունները, կանոնակարգերը, դրույթները և այլն:

Օրինակարգված (կողիֆիկացված) ակտն աչքի է ընկնում դրանում պարունակվող նորմատիվ-իրավական դրույթների որակական նորությամբ: Դա թե՛ իր ձևով և թե՛ իր նորմատիվ-իրավական բովանդակությամբ ու բնույթով նոր ակտ է: Որոշ օրինակարգված (կողիֆիկացված) ակտեր, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրքը, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրքը, Ռուսաստանի Դաշնության ընտանեկան օրենսգիրքը և այլն, կրում են համաճյուղային բնույթ ու իրենց մեջ ներառում են իրավունքի համապատասխան ճյուղի բոլոր հիմնական նորմերը: Մյուս օրինակարգված (կողիֆիկացված) ակտերը միավորում են իրավունքի որոշակի ենթաճյուղերի (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության բյուջետային օրենսգիրքը, Ռուսաստ-

տանի Դաշնության մաքսային օրենսգիրքը և այլն) կամ ինստիտուտների (օրինակ՝ երկաթուղու կանոնադրությունը, պարեկապահակային ծառայության կանոնադրությունը և այլն) նորմերը:

Օրենքների հավաքածուն համաիրավական բնույթ ունեցող ու իրավունքի համապատասխան ազգային համակարգի բոլոր իրավական ճյուղերի, բոլոր հիմնական նորմերը ներառող օրինակարգված (կոդիֆիկացված) ակտի հատուկ տեսակ է: Օրենքների հավաքածուի պատմությանը հայտնի օրինակներ են, մասնավորապես, Հուստինուսի օրենքների ժողովածուն (VI դար), ինչպես նաև Մ.Մ. Սպերանսկու ղեկավարությամբ մշակված և 1832 թվականին 15 հատորով հրատարակված «Ռուսական կայսրության օրենքների ժողովածուն»: Ներկայումս պատրաստվում է Ռուսաստանի Դաշնության օրենքների ժողովածուն:

Իրավունքի ազգային տարբեր համակարգերում ու «իրավական ընտանիքներում» կան գործող իրավունքի աղբյուրների համակարգման իրենց առանձնահատուկ հայեցակարգերը, իրավասահման ակտերի համակարգման այս կամ այն եղանակների և տեսակների հասկացողության ու օգտագործման իրենց առանձնահատկությունները:

## **Գլուխ 6. Իրավունքի համակարգերի տիպաբանությունը. մեր ժամանակի հիմնական «իրավական ընտանիքները»**

### **1. Իրավունքի համակարգերի դասակարգումը**

Յուրաքանչյուր երկրում գործում է իր իրավունքը՝ պոզիտիվ իրավունքի իր ազգային (ազգային-պետական) համակարգը, որն ունի իր առանձնահատկությունները և անհատական յուրահատկությունները: Դրա հետ մեկտեղ իրավունքի այդ տարբեր ազգային համակարգերը կարելի է միավորել մի շարք խմբերում (իրավական հանրույթներում, տիպերում), որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է մի քանի «ազգակից» (իրենց ծագումով և իրավական բնութագրերով մոտ) իրավունքի ազգային համակարգեր:

Համեմատական իրավունքի (իրավունքի համեմատական հետազոտման, համեմատական իրավագիտության) ֆրանսիացի իրավաբան-կոմպարատիվիստ Ռ.Դավիթը պոզիտիվ իրավունքի ազգային համակարգի այսպիսի միասեռ խմբերն անվանել է «իրավական ընտանիքներ», «իրավունքի համակարգի ընտանիքներ»<sup>1</sup>: Այդ անվանումը լայնորեն օգտագործվում է նաև մեր գրականության մեջ:

<sup>1</sup> Տե՛ս *Давид Р.* Основные правовые системы современности. М., 1967. էջ 25, 34

Ռ.Դավիթը պոզիտիվ իրավունքի տարբեր ազգային համակարգերի իր դասակարգման մեջ (համապատասխան «իրավական ընտանիքներում», «իրավունքի համակարգերի ընտանիքներում» դրանց համախմբման մեջ) ելնում է, դրանց հանրագումարում դիտարկվող և հաշվի առնվող, *երկու չափանիշից*.

1) իրավաբանական-սոցիալիկական չափանիշ (իրավունքի աղբյուրները, գործող իրավունքի կառուցվածքը, իրավաբանական սերմինաբանությունը, իրավական սկզբունքները, հայեցակարգերը, կառույցները, իրավաբանների աշխատանքի մեթոդներն ու պրակտիկան և այլն).

2) գաղափարական չափանիշ (փիլիսոփայական, քաղաքական և տնտեսական սկզբունքներ, աշխարհայացքներ ու հասարակական իդեալներ, որոնց վրա հիմնված է համապատասխան ազգային իրավունքը):

Այս չափանիշների հաշվառմամբ, 60-ական թվականների սկզբին, մա առաջարկել է. «ժամանակակից աշխարհի իրավական ընտանիքների» հետևյալ դասակարգումը.

- 1) ոռմանո-գերմանական իրավական ընտանիք.
- 2) ընդհանուր իրավունքի ընտանիք.
- 3) իրավունքի սոցիալիստական համակարգի ընտանիք.
- 4) փիլիսոփայական կամ կրոնական համակարգեր:

Իրավունքի տարբեր ազգային համակարգերի դասակարգման նկատմամբ գոյություն ունեն մաև այլ մոտեցումներ: Այսպես, Կ.Յվայգերտը և Գ.Կոտցն իրենց դասակարգման մեջ ելնում են այնպիսի չափանիշից, ինչպիսին է *ազգային իրավունքի «իրավական ոճը»*, որը որոշվում է հինգ գործոնով՝ իրավունքի համապատասխան համակարգի ծագմամբ և զարգացմամբ, իրավաբանական մտածողության յուրօրինակությամբ, առանձնահատուկ իրավական ինստիտուտներով. իրավունքի աղբյուրների բնույթով ու դրանց մեկնաբանման եղանակներով, գաղափարախոսական առանձնահատկություններով: Ելնելով դրանից՝ նրանք «իրավական ոճի» միասնությամբ օժտված իրավունքի տարբեր համակարգերը միավորում են հետևյալ *«իրավական շրջանակների»* (խմբերի) մեջ՝ ոռմանական, գերմանական, սկանդինավյան, անգլո-ամերիկյան, սոցիալիստական, իսլամական, հինդուսական:

Գոյություն ունեցող դասակարգումներն առավելապես հիմնվում են իրավաբանական-տեխնիկական և գաղափարախոսական բնույթի չափանիշների վրա: Նման չափանիշներն անտարակույս կարևոր նշանակություն ունեն իրավունքի հետազոտվող ձևերը դասակարգելիս: Մակայն այսպիսի չափանիշները հնարավորություն չեն ընձեռում դասա-

կարգել և գնահատել գործող իրավունքի տարբեր ազգային համակարգերը՝ ըստ դրանց իրավական զարգացվածության մակարդակի ու բնույթի:

Մինչդեռ հայտնի է, որ *իրավունքն աճի իր աստիճաններով*, իրավունքի պարզունակ ձևերից մինչև ժամանակակից իրավունքի առավել կամ պակաս զարգացած ձևերը, *պատմականորեն զարգացող երևույթ է*: Ուստի, պոզիտիվ իրավունքի ազգային համակարգի *իրավական զարգացվածության մակարդակի (և չափի) չափանիշն* էական նշանակություն ունի քննարկելիս իրավունքի առանձին ազգային համակարգերի բնութագրման, և քննարկելիս զարգացվածության տարբեր աստիճանի իրավական խմբերում («ընտանիքներում») դասակարգելու, ինչպես նաև առանձին երկրներում, սարածքներում ու ամբողջ աշխարհում իրավունքի արդի վիճակի և զարգացման միտումների ընդհանուր որակների բացահայտման համար:

Պատմականորեն ստացվել է այնպես, որ իրավունքը (որպես առանձնահատուկ երևույթ ու հասկացություն, կարգավորման հատուկ տիպ, անհատների ազատության անհրաժեշտ ձև և այլն) սկզբում առավել զարգացել է աշխարհի եվրոպական մասում (սկզբում Հին Հունաստանում, Հին Հռոմում, իսկ ապա՝ Արևմտյան Եվրոպայի երկրներում): Հետագայում *եվրոպական իրավունքն* այս կամ այն ձևով ու չափով էական ազդեցություն է բողել ամբողջ աշխարհում (Ամերիկայի, Ասիայի, Ավստրալիայի և Աֆրիկայի երկրներում) իրավական զարգացման գործընթացի վրա:

*Տարբեր երկրներում և աշխարհի տարածաշրջաններում իրավունքի տարածամկետ ծագման ու զարգացման*, ինչպես նաև մի շարք այլ գործոնների ուժով արդի աշխարհում իրավունքի տարբեր ազգային համակարգեր աչքի են ընկնում իրավական զարգացվածության տարբեր մակարդակներով, այսինքն՝ դրանցում միասնական, համաիրավական (ըստ էության՝ եվրոպական-իրավական) հիմունքների և դրույթների առկայության ու արտահայտման տարբեր աստիճանով ու չափով (ազգային առանձնահատկության, ավանդույթների, մշակույթի յուրօրինակության, հասարակության վիճակով, տնտեսության և այլնի հաշվառմամբ):

Այսօր էլ Արևմտյան Եվրոպայի երկրների գործող իրավունքի ազգային համակարգերը (և դրանց մոդիֆիկացիաները մի շարք եվրոպալեզու երկրներում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում և այլուր) աչքի են ընկնում *իրավական զարգացվածության առավել բարձր մակարդակով*: Դրանք դեռևս մնում են կողմնորոշիչներ իրավունքի մնացած ազգային համակարգերի համար և շարունակում են կանխորոշել ամբողջ աշխարհում իրավունքի հետագա զարգացման ուղղությունը:

XX դարում ամբողջ աշխարհում կատարվող զլոբալ պատմական վերափոխումների էական արդյունքներից մեկը դարձավ աշխարհի իրավական քարտեզի վրա մեծ թվով պետությունների երևան գալը, որոնց իրավունքի ազգային համակարգերը, ըստ դրանց զարգացման մակարդակի, կարող են բնութագրվել որպես *միջին զարգացած* (Լատինական Ամերիկայի, Արևելյան Եվրոպայի երկրներ, մի շարք ասիական երկրներ՝ Հնդկաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա, Սինգապուր):

Կարգավորման հնամենի և ավանդական ձևերից (տեղական սովորույթները և այլն) իրավունքի համազգային (համապետական) համակարգերին անցնելու հետ կապված զգալի առաջադիմական իրավական վերափոխումները XX դարում իրականացվեցին *իրավական տեսակետից թույլ զարգացած երկրների* խմբում (Մև Աֆրիկայի և Ասիայի մեծ թվով երիտասարդ պետություններում):

Հնարավոր է, ինչ խոսք, մակարդակի չափանիշների և իրավական զարգացվածության հիման վրա իրավունքի տարբեր համակարգերի ու ձևերի առավել մանրակրկիտ դասակարգում ըստ խմբերի:

Գասակարգման տարբեր չափանիշների հաշվառումը (ներառյալ՝ նաև այնպիսի չափանիշը, ինչպիսին իրավական զարգացվածության մակարդակն է) ընդլայնում ու հարստացնում է իրավունքի ուսումնասիրվող ազգային ձևերի ու համակարգերի սպեկտորը, համեմատական-իրավական բնութագրերի բովանդակությունը և ամբողջությամբ խորացնում է իրավական ճանաչողության գործընթացը:

## **2. Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքը**

Ռոմանո-գերմանական (մայրցամաքային) իրավական ընտանիքն իր մեջ ներառում է մայրցամաքային Եվրոպայի երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի, սկանդինավյան և այլ երկրների, իրավունքի ազգային համակարգերը: Այդ իրավական ընտանիքին են հարում ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի հիմնական գաղափարների ու կառույցների հունով ձևավորված նաև մի շարք ոչ եվրոպական երկրների գործող իրավունքի համակարգերը:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքը ծագել է հռոմեական իրավունքի և հռոմեական իրավագիտության հիման վրա: Այդ իրավական ընտանիքի զարգացման մեջ էական դեր է խաղացել Հուստինիանոսի օրինակարգումը (կոդիֆիկացիան) (VI դար), հռոմեական իրավունքի յուրացման (ոեցեպցիայի) գործընթացը (միջնադարում և Նոր դարաշրջանում), XII - XVI դարերում եվրոպական տարբեր համալսա-



րաններում (բոլոնյան, պադուանյան, փարիզյան և այլն) մշակված իրավաբանական հայեցակարգերն ու վարդապետությունները, XVII-XVIII դարերի բնական իրավունքի մասին ռացիոնալիստական ուսմունքները: Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի գաղափարի և հայեցակարգի վրա զգալի ազդեցություն թողեցին 1789 թվականի ֆրանսիական «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը» ու հետեղափոխական Ֆրանսիայի այլ իրավական ակտերը, հատկապես՝ նոր օրենսգրքերը:

1789 թվականի Հռչակագրում առաջին անգամ պաշտոնապես ամրագրվեց օրենքի՝ որպես ընդհանուր կամքի արտահայտության նոր հայեցակարգը, սահմանվեց նրա գերակայությունը և առաջատար դերը հասարակական և պետական կյանքի բոլոր ոլորտներում: Օրենքի և օրինականության տիրապետման այդ գաղափարները 1789 թվականի Հռչակագրում հիմնվում են սահմանադրականության և մարդու իրավունքների անօտարելիության սկզբունքների վրա: Այս առումով բնութագրական է Հռչակագրի 16 հոդվածը, որում ասված է. «Հասարակությունը, որտեղ ապահովված չէ իրավունքներից օգտվելը, և չի իրականացվել իշխանությունների բաժանում, չունի սահմանադրություն»<sup>1</sup>:

Այդ նոր իրավական գաղափարները (օրենքի, սահմանադրության և այլնի մասին) ուղղված էին ֆեոդալական կամայականության և արտոնությունների ու ամբողջությամբ իրավունքի ֆեոդալական համակարգի դեմ, որը հիմնականում բաղկացած էր հին սովորութային իրավունքից և բացարձակ միապետության ժամանակաշրջանի գործադիր իշխանության ակտերից: Սկզբում Ֆրանսիայում, իսկ հետագայում, աստիճանաբար, նաև եվրոպական մայրցամաքի այլ երկրներում, նոր իրավական գաղափարների վրա հիմնված ակտիվ օրինաստեղծ և օրինակարգող (կոդիֆիկացնող) գործունեությունն ուղեկցվում էր իրավունքի նախկին ազգային համակարգերի արմատական վերափոխմամբ և սահմանադրականության, օրենքի գերակայության, բոլոր մարդկանց իրավական հավասարության, մարդու բնական և անօտարելի իրավունքների սկզբունքների հիման վրա ավելի զարգացած իրավունքի ազգային համակարգերի ձևավորմամբ:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի մեջ մտնող ազգային իրավունքի ձևերին ներհատուկ *միասնական պատմական արմատները և հիմնադիր ընդհանուր իրավական սկզբունքները* կանխորոշեցին նաև

<sup>1</sup> Стн Хрестоматия по истории государства и права зарубежных стран. М., 1984. т. 209

դրանց *նույնության ու ընդհանրության մի ամբողջ շարք այլ կարևոր հանցակետեր:*

Այսպես, ընդհանուր ռոմանո-գերմանական իրավաբանական վարդապետության համաձայն՝ այդ իրավական ընտանիքի մեջ մտնող իրավունքի ազգային համակարգերն ունեն *նմանօրինակ կառուցվածք*։ Իրավունքը բաժանվում է մասնավորի և հանրայինի։ Իրավունքի տարբեր ազգային համակարգերն իրենց մեջ ներառում են իրավունքի նմանվող ճյուղեր, որոնք իրենց բովանդակությամբ բաժանվում են իրավունքի իրենց բովանդակությամբ միասեռ նորմերի խմբեր միավորող իրավական ինստիտուտների։ Օրենսդրության համակարգն ամբողջությամբ համապատասխանում է իրավունքի համակարգի մասին վարդապետական դրույթներին։

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի տարբեր ազգային համակարգերի միասնականության էական պահերից է միասեռ հասարակական հարաբերությունների հանրագումարը կարգավորող *իրավունքի վարքագծի վերացական-համընդհանուր կանոնի* բնույթի, իմաստի և նշանակության միատեսակ հասկացողությունը։ Ռոմանո-գերմանական իրավունքի նորմն իր այդ վերացական համընդհանրությամբ տարբերվում է նախադեպային իրավունքի համակարգում (ընդհանուր իրավունքի իրավական ընտանիքում) կոնկրետ գործով դատական վճռով սահմանվող կազուիստական կանոնից (տվյալ կազուսի, առանձին դեպքերի համար կանոնից)։

Իրավունքի նորմի էության և բնույթի այսպիսի հասկացողությունն ընկած է նաև *նորմատիվ-իրավական ակտի ռոմանո-գերմանական հանցակարգի, պետության նորմատիվ-իրավական գործունեության և գործող իրավունքի համապատասխան օրինակարգման (կողիֆիկացիայի)* հիմքում։ Ռոմանո-գերմանական օրենսգրքերը, այլ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը՝ որոշակի ձևով համակարգված (այս կամ այն աստիճանի) վերացական-ընդհանուր իրավական նորմերի համալիրներ են, ոչ թե ընդհանուր իրավունքի կազուիստական կանոնների, դատական կամ վարչական նախադեպերի ժողովածուներ։

Ռոմանո-գերմանական ընտանիքի երկրների գործող իրավունքն իր վերացական-նորմատիվ բովանդակության շնորհիվ աչքի է ընկնում առավել հստակությամբ, որոշակիությամբ, պարզությամբ, տեսանելիությամբ և մատչելիությամբ։ Այն հեշտությամբ կարելի է բարեփոխել և փոփոխել անհրաժեշտ ուղղությամբ։ Մակայն դա ունի նաև թերություններ, որոնք պայմանավորված են համապատասխան նորմի գործողության տակ ընկնող առանձին դեպքերի կիրառմամբ, իրավունքի նորմի իմաս-

տի վերացական-ընդհանուր պատշաճ կոնկրետացման դժվարություններով: Դրանով է պայմանավորված այն մեծ ուշադրությունը, որ իրավունքի ռոմանո-գերմանական համակարգի տեսությունում և պրակտիկայում դարձվում է գործող իրավունքի *մեկնաբանման հիմնահարցին*:

Ռոմանո-գերմանական իրավունքի վերացական-նորմատիվ բնույթը հստակորեն դրսևորվում է նաև *դրա աղբյուրների համակարգում*: Ռոմանո-գերմանական իրավունքը գրավոր իրավունք է՝ հիմնականում կազմված գրավոր ձևակերպված նորմատիվ-իրավական ակտերից (օրենքներից և ենթօրենսդրական ակտերից):

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի բոլոր ազգային համակարգերում իրավունքի հիմնական աղբյուրն *օրենքն է*: Օրենքներն ընդունվում են բարձրագույն ներկայացուցչական մարմնի կողմից կամ հանրաքվեի միջոցով:

Նորմատիվ-իրավական ակտերի համակարգում բարձրագույն իրավաբանական ուժով օժտված է գրավոր *սահմանադրությունը* (պետության հիմնական օրենքը), որն իրավական հիմք է մնացած բոլոր (սահմանադրական և սովորական) օրենքների և ենթօրենսդրական ակտերի համար: Սովորական օրենքների և ենթօրենսդրական ակտերի սահմանադրականության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հատուկ սահմանադրական դատարանները (դաշնային սահմանադրական դատարանը՝ ԳԴՀ-ում, սահմանադրական դատարանը՝ Իտալիայում) կամ բարձրագույն ընդհանուր դատական և այլ պետական ինստիտուտները:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի աղբյուրների համակարգում ավանդաբար կարևոր դեր են խաղում *օրենսգրքերը*՝ ճյուղային բնույթի օրինակարգված (կողիֆիկացված) նորմատիվ-իրավական ակտերը: Չնայած որ դրանք օժտված են սովորական օրենքի իրավաբանական ուժով, սակայն, ըստ էության, կենտրոնական տեղ են զբաղեցնում և առաջատար դեր են խաղում օրենսդրության համապատասխան ճյուղում:

Ռոմանո-գերմանական իրավունքի երկրներում հետագա ամբողջ օրինակարգային (կողիֆիկացիոն) գործունեության վրա մեծ ազդեցություն բողեցին նապոլեոնյան օրենսգրքերը (1804 թվականի Բադաբացիական օրենսգիրքը, 1807 թվականի Առևտրային օրենսգիրքը, 1808 թվականի Զբեական դատավարական օրենսգիրքը, 1810 թվականի Զբեական օրենսգիրքը): Ավելի ուշ ընդունված՝ Բելգիայի և Լյուքսեմբուրգի քաղաքացիական օրենսգրքերը շատ կողմերով համապատասխանում են ֆրանսիական նմուշին: Նշանակալի յուրօրինակությամբ

աչքի են ընկնում Գերմանական քաղաքացիական օրենսգիրքը (1896 թվական) և Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգիրքը (1881-1907 թվականներ):

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքում՝ որպես իրավունքի աղբյուր, նշանակալից դեր են խաղում գործադիր իշխանության տարբեր մարմինների ընդունած *նորմատիվ-իրավական ակտերը* (դեկրետները, որոշումները, շրջաբերականները, հրահանգները, կանոնակարգերը և այլն): Այդ նորմատիվ ակտերը, որպես կանոն, ընդունվում են «ի կատարումն օրենքի» և ունեն ենթաօրենսդրական բնույթ: Ընդ որում, օրենքին այսպիսի ենթաօրենսդրական ակտերի համապատասխանությունն ապահովելու համար իրականացվում է դատական վերահսկողություն (ԳԴՀ-ում բոլոր ընդհանուր դատարանների, Ֆրանսիայում հատուկ վարչական դատարանների կողմից):

Գործադիր իշխանության նորմաստեղծության հատուկ սեսակ է *պատվիրակված օրենսդրությունը*, երբ գործադիր իշխանության այս կամ այն մարմինն օժտվում է հարաբերությունների որոշակի ոլորտի ինքնուրույն նորմատիվ-իրավական կարգավորման լիազորություններով: Այսպես, 1958 թվականի Ֆրանսիական Սահմանադրության համաձայն՝ խորհրդարանի օրինաստեղծ լիազորությունները սահմանափակված են՝ ընդհանուր սկզբունքներ և իրավական կարգավորման նորմեր սահմանող օրենքներ ընդունելու իրավունքով: Դրա հետ միասին ճանաչվում է գործադիր իշխանության մարմինների՝ ինքնավար և խորհրդարանի օրենսդրական իշխանությանը չենթարկվող, նորմաստեղծ լիազորությունների ոլորտը (այսպես կոչված՝ կանոնակարգող իշխանությունը): Նման ակտերի սահմանադրական սկզբունքներին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ֆրանսիայի պետական խորհուրդը:

ԳԴՀ-ում և բազմաթիվ այլ երկրներում գործադիր իշխանության մարմիններն օժտված չեն նման ինքնավար (օրենսդրությանը չենթարկվող) նորմաստեղծության իրավունքով:

Ռոմանո-գերմանական իրավունքի աղբյուրների համակարգում *սովորույթը* հիմնականում ունի օժանդակ դեր՝ անհրաժեշտ դեպքերում լրացնելով գործող օրենսդրությունը:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի երկրներում *դատարանը* գործում է օրենքի հիման վրա և օրենքի շրջանակներում: Այստեղ չկա ընդհանուր իրավունքին ներհատուկ նախադեպի կանոն, ուստի, այստեղ դատարանն օժտված չէ իրավաստեղծ լիազորություններով և իրավունք չունի ստեղծել իրավունքի նոր նորմեր: Սակայն դատարանն

օժտված է կիրառվելիք նորմատիվ-իրավական ակտերի մեկնաբանման մեծ ազատությամբ, որի շնորհիվ դատական պրակտիկան զգալի ազդեցություն է թողնում իրավակիրառար գործընթացի և գործող իրավունքի զարգացման վրա: Ընդ որում, մեծ ուշադրություն է դարձվում դատական պրակտիկայի միատեսակությանը: Այդ առումով զգալի դեր ունեն բարձրագույն դատական մարմինների որոշումները և պարզաբանումները: Առանձին երկրներում (օրինակ՝ Պորտուգալիայում) գերագույն դատարանի պլենումի սահմանած դրույթներն ունեն նորմատիվ-իրավական բնույթ:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքում էական նշանակություն ունի *իրավաբանական վարդապետությունը* (իրավունքի տեսությունը, իրավաստեղծության ու իրավակիրառման ընդհանուր և կոնկրետ հարցերով գիտական աշխատությունները): Դա ունի հին պատմական արմատներ, քանի որ հենց XIII - XIX դարերի համալսարանական իրավաբանական գիտությունն է մշակել ռոմանո-գերմանական իրավունքի հիմնական գաղափարները, սկզբունքները և կառույցները, ու իրավունքի գիտական վարդապետությունը (այսպես կոչված՝ «իրավաբանների իրավունքը»), որը հարյուրամյակների ընթացքում մայրցամաքային իրավունքի համակարգերում խաղացել է իրավունքի հիմնական աղբյուրի դերը, մինչև որ այդ դերը (սկսած XIX դարից) անցել է օրենքին:

Արդի պայմաններում վարդապետությունն զգալի ազդեցություն է թողնում գործող իրավունքի իրավահասկացողության և պարզաբանման ամբողջ գործընթացի, իրավունքի սկզբունքների և նպատակների մեկնաբանման, իրավունքի նորմի իմաստի բացահայտման հնարքների ու մեթոդների, դրանց կիրառման և այլնի վրա: Դա ունի գործնական մեծ նշանակություն, քանի որ ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի մի շարք երկրներում *իրավունքի ընդհանուր սկզբունքները* (վերպոզիտիվ իրավունքի գաղափարները և արժեքները) ունեն գործող իրավունքի նորմերի ուժ և վերջիններիս հետ հակասության դեպքում օժտված են գերապատվությամբ: Համաիրավական սկզբունքների այսպիսի դերը հիմնված է ոչ միայն ռոմանո-գերմանական իրավունքի ավանդույթների, այլ նաև մի շարք մայրցամաքային երկրների ժամանակակից սահմանադրություններում ամրագրված՝ մարդու ի ծնե և անօտարելի իրավունքների մասին բնական-իրավական սկզբունքների ու նորմերի, իրավական արժեքների և այլնի վրա:

Ըստ էության, խոսքն այն մասին է, որ *սահմանադրականորեն ճանաչված և ամրագրված բնական իրավունքը* (բնական իրավունքի

սկզբունքների, մարդու բնական իրավունքների և ազատությունների և այլնի տեսքով) գործում է որպես պոզիտիվ իրավունքի գերապատիվ աղբյուր:

Այսպես, ԳԴՀ-ի սահմանադրական դատարանը պաշտպանում է այն դիրքորոշումը, որի համաձայն՝ ԳԴՀ-ի Սահմանադրությունը ներառում է ոչ միայն իր տեսքտում շարադրված պոզիտիվ իրավունքի նորմերը, այլ նաև մի շարք «ընդհանուր սկզբունքներ», որոնք Սահմանադրության հեղինակը չի կոնկրետացրել պոզիտիվ նորմերի տեսքով: Բացի դրանից, ԳԴՀ-ի սահմանադրական դատարանը ճանաչում է այն «վերպոզիտիվ իրավունքի» առկայությունը և գործողությունը, որը սահմանափակում է երկրի սահմանադրությունն ընդունող բուն օրենսդրի, սահմանադրի իշխանությունը: Այսպիսով, օրենսդիրը (Սահմանադրության հեղինակը) չպետք է և իրավունք չունի ամեն ինչ կարգավորել իր հայեցողությամբ՝ խախտելով վերպոզիտիվ իրավունքի («իրավունքի գաղափարի») պահանջները: Պոզիտիվ սահմանադրական իրավունքի (սահմանադրության պոզիտիվ նորմերի) «վերպոզիտիվ իրավունքի» պահանջներին չհամապատասխանելու դեպքում գերապատվությունը տրվում է «վերպոզիտիվ իրավունքին» («իրավունքի գաղափարին»), և սահմանադրական դատարանը պարտավոր է այդ դիրքերից գնահատել Սահմանադրության համապատասխան պոզիտիվ նորմի ոչ իրավական բնույթը:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի իրավունքի յուրաքանչյուր ազգային համակարգին ներհատուկ են իր առանձնահատուկ գծերը: Տեսանելի յուրօրինակությամբ աչքի են ընկնում սկանդինավյան երկրների իրավունքի համակարգերը, որտեղ հռոմեական իրավունքը չի ունեցել այնպիսի մեծ ազդեցություն, ինչպես Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և Ավստրիայում:

Դեռևս XVII - XVIII դարերում յուրաքանչյուր սկանդինավյան երկրում (Դանիայում՝ 1683 թվականին, Նորվեգիայում՝ 1687 թվականին, Շվեդիայում և Ֆինլանդիայում՝ 1734 թվականին) ընդունվել է մեկական օրենսգիրք, որն իր մեջ ներառում է ամբողջ գործող իրավունքը: Հետագայում այդ օրենսգրքերի հնացած մասերը վերացվեցին, սակայն դրանց փոխարեն ընդունված նոր խոշոր օրենսդրական ակտերը գործեցին ինքնուրույն և չներառվեցին հին օրենսգրքերում:

Սկանդինավյան երկրները սերտ համագործակցում են միմյանց հետ իրավունքի՝ իրենց ազգային համակարգերի մերձեցման և միասնականացման ուղղությամբ, հատկապես՝ քաղաքացիական, առևտրային ու ծովային իրավունքի բնագավառներում:

Այդ երկրների իրավունքի համակարգերի համար բնութագրական է նաև այն, որ դրանցում դատական պրակտիկային տրվում է ավելի մեծ նշանակություն, քան ոռմանո-գերմանական իրավական ընտանիքի իրավունքի այլ ազգային համակարգերում:

Ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի համակարգի համար բնորոշ առանձին գծեր ներհատուկ են նաև մի շարք այլ երկրների իրավունքի ազգային համակարգերին:

Այսպես, լատինաամերիկյան երկրների իրավունքի համակարգերն ամբողջությամբ կառուցված են ոռմանո-գերմանական նմուշով: Դեռևս Հարավային Ամերիկայի եվրոպական գաղութացման ժամանակաշրջանում այս տարածաշրջանի երկրներում սկսեց տարածվել եվրոպական (առաջին հերթին՝ իսպանական, պորտուգալական) իրավունքը: Այդ երկրների գործող իրավունքը ներկայումս օրինակարգված (կողիֆիկացված) է հիմնականում ըստ ֆրանսիական մոդելի: Իրավունքի նորմ ասելով, ինչպես ոռմանո-գերմանական իրավական ընտանիքում, նկատի է առնվում վերացական ընդհանուր կանոնը: Իրավունքի հիմնական աղբյուրն օրենքը և ենթաօրենսդրական ակտերն են: Նկատելի դեր են կատարում պատվիրակված օրենսդրության ակտերը, բացակայում է նախադեպային իրավունքը, դատական պրակտիկան իրավունքի աղբյուր չէ:

Լատինական Ամերիկայի իրավունքի ազգային համակարգերի համար բնութագրական է որոշակի երկակիությունը՝ մասնավոր իրավունքի ոլորտում դրանք նման են ոռմանո-գերմանական իրավունքի համակարգերին, իսկ հանրային իրավունքի ոլորտում ընկալվել են ԱՄՆ-ի սահմանադրական իրավունքի մի շարք հիմնական դրույթներ: Դա պայմանավորված է նրանով, որ լատինաամերիկյան երկրները, ըստ կառավարման ձևի, ամերիկյան նմուշի նախագահական հանրապետություններ են:

XIX դարում ճապոնիայի ավանդական իրավունքի նորացումն իրականացվեց ոռմանո-գերմանական իրավունքի ազդեցությամբ: Օրինակարգումը (կողիֆիկացիան) կատարվեց մայրցամաքային-եվրոպական նմուշներով: Այսպես, ճապոնիայի քրեական և քրեական-դատավարական օրենսգրքերը (1880 թվական) կառուցված են ֆրանսիական մոդելով, իսկ քաղաքացիական օրենսգիրքը (1898 թվական)՝ գերմանական մոդելով: Այստեղ, ինչպես ոռմանո-գերմանական իրավական ընտանիքում, բացակայում է նախադեպային իրավունքը, իրավունքի հիմնական աղբյուրներն օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերն են, դատական պրակտիկան իրավունքի աղբյուր չէ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնական իրավունքը կրեց ամերիկյան իրավունքի նկատելի ազդեցությունը, որն արտահայտվել է 1946 թվականի Ճապոնիայի Մահմանադրությունում, քրեական-դատավարական օրենսդրությունում (1948 թվական), հակատրեստային օրենսդրությունում և այլն:

### 3. Օրենսդրության սոցիալիստական համակարգերը

Այս համակարգերի ծագումը կապված է XX դարում սոցիալիստական երկրների և համապատասխան օրենսդրության ի հայտ գալու հետ՝ սկզբում Ռուսաստանում (1917 թվականի), իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Արևելյան Եվրոպայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում:

Գրականության մեջ (հայրենական և արտասահմանյան) սոցիալիստական երկրների (ԽՍՀՄ և մյուս արտասահմանյան սոցիալիստական երկրների) օրենսդրության տարբեր ազգային համակարգերը բնութագրելիս սովորաբար խոսվում է «սոցիալիստական իրավունքի», «սոցիալիստական իրավունքի ընտանիքի» և այլնի մասին: Այդ տերմինները և հասկացությունները չի կարելի ճանաչել համարժեք, քանի որ խոսքն *օրենսդրության* (սոցիալիզմի ժամանակ, այսպես կոչված, «պոզիտիվ իրավունքի») մասին է, որն իր էությամբ կրում էր ոչ *իրավական բնույթ* և արտահայտում էր առանց վերահսկողության կառավարող կոմունիստական կուսակցության հակաիրավական գաղափարախոսության, քաղաքականության ու պրակտիկայի նպատակները և ձգտումները:

Ինչ խոսք, *սոցիալիստական օրենսդրության ոչ իրավական բնույթը* տարբեր սոցիալիստական երկրներում, դրանց գոյության առանձին փուլերում դրսևորվել է տարբեր ձևով: Տարբերությունների սպեկտորն այստեղ միանգամայն մեծ է և բազմազան՝ սկսած որևէ օրենքով չկապված ուղղակի հեղափոխական բռնությունից մինչև «սոցիալիստական օրինականության պետությունը» և «մարդկային դեմքով սոցիալիզմի» գրոմումները:

Տարբեր սոցիալիստական երկրներում օրենսդրության ազգային համակարգերի բովանդակության և բնույթի վրա ազդել են նաև դրանց իրավական անցյալը, իրավական զարգացվածության աստիճանը, ձևավորված իրավական ավանդույթները և այլն: Այս տեսանկյունից *Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների* (իրենց զգալի իրավական անցյալով) հետպատերազմյան օրենսդրությունը տեսանելիորեն տարբերվում է ասիական սոցիալիստական երկրների օրենսդրությունից, որ-



տեղ իրավունքը մինչև սոցիալիզմին անցնելը գտնվում էր չգարգացած վիճակում և էական դեր չէր խաղում հասարակության կյանքում:

Նախահեղափոխական Ռուսաստանի իրավունքը, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների նախասոցիալիստական իրավունքն ամբողջությամբ զարգացել է ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի հունով և շրջանակներում: Այդ անցյալի ազդեցությամբ են պայմանավորված օրենսդրության եվրոպական սոցիալիստական համակարգերի ռոմանո-գերմանական իրավունքի ձևերի հեռարտաբին նմանության այնպիսի հայեցակետերը, ինչպիսիք են՝ ընդհանուր տերմինաբանությունը և իրավաբանական տեխնիկայի հնարքները, գործող «պոզիտիվ իրավունքի» աղբյուրների համակարգի և դրա կառուցվածքի բնագավառում շատ կողմերով միանման կառուցվածքները (բաժանումը ճյուղերի, ինստիտուտների և նորմերի), նորմի և նորմատիվ ակտի մասին նմանօրինակ պատկերացումները, նախադեպային իրավունքի բացակայությունը, դատական պրակտիկայի՝ որպես իրավունքի աղբյուրի, նշանակության ժխտումը, սովորույթի աննշան դերը և այլն: Ե՛իչա է, նմանօրինակ տերմինաբանությամբ նշվում էին որակապես տարբեր երևույթներ, քանի որ սոցիալիստական օրենսդրության դրույթները, ըստ էության, մերժում էին իրավունքի հիմունքները և ունեին հռչակագրային, «ձևական» բնույթ:

90-ական թվականների սկզբից այդ պետությունները մուտք գործեցին *իրենց զարգացման նոր (պոսասոցիալիստական) ժամանակաշրջանը*, որը նշանավորվեց տնտեսական, քաղաքական և իրավական արմատական վերափոխումներով, որոնց նպատակն էր իրավունքի տիրապետության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հաստատումը, շուկայական տնտեսության, քաղաքացիական հասարակության, ժողովրդավարական իրավական պետության ձևավորումը: ԽՍՀՄ-ի և Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրների տարածքում առաջացան նոր ինքնիշխան պետություններ, որոնցում ձևավորվում են իրավունքի նոր ազգային համակարգեր: Այդ գործընթացը տարբեր երկրներում ընթանում է տարբեր ուժգնությամբ, սակայն դրանք բոլորն էլ ամբողջությամբ իրենց զարգացման նոր փուլում հասել են որոշակի հաջողությունների (նոր սահմանադրությունների ընդունում, օրենսդրության որակական փոփոխություն, մի շարք նոր օրենսգրքերի ընդունում, իրավունքի ազգային համակարգում մարդու իրավունքների բնագավառում միջազգային սկզբունքների և չափանիշների ճանաչում ու ամրագրում, մասնակցություն եվրոպական ինտեգրման գործընթացում և այլն):

Համաշխարհային սոցիալիստական համակարգի (այսպես կոչված՝ «սոցիալիստական ճամբարի») փլուզումից հետո սոցիալիզմի դիրքերի վրա մեծցին *Չինաստանը, Վիետնամը, Հյուսիսային Կորեան և Կուբան*:

Մինչև սոցիալիզմին անցնելն այդ երկրներում իրավական զարգացումն ընթանում էր տոմանո-գերմանական իրավունքին բնութագրական ձևերով և ուղղություններով: Ժամանակակից պայմաններում այդ երկրներում (բացառությամբ, թերևս, միայն Հյուսիսային Կորեայի) շուկայական հարաբերությունների որոշ ձևերի թույլտվությամբ կատարվում են որոշակի տնտեսական վերափոխումներ: Գործող օրենսդրության մեջ միաժամանակ իրականացվում են (ոտմանո-գերմանական իրավունքի մոտիշով) նաև համապատասխան փոփոխություններ:

Տնտեսական բարեփոխումները և օրենսդրության նորացումն առավել ուժգնությամբ և հաջողությամբ են ընթանում Չինաստանում: Տնտեսության ու օրենսդրության մեջ չափավոր վերափոխումներ են իրականացվում Վիետնամում և Կուբայում:

#### 4. «Ընդհանուր իրավունքի» իրավական ընտանիքը

Այս իրավական ընտանիքն իր մեջ ներառում է Անգլիայի, ԱՄՆ-ի, Հյուսիսային Իռլանդիայի, Կանադայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի իրավունքի համակարգերը: Դրա մեջ մտնում են նաև մի շարք այլ՝ նախկինում անգլիական գաղութներ եղած, ասիական և աֆրիկյան երկրների իրավական համակարգերը:

Իր ծագմամբ այս իրավական ընտանիքը սերում է Անգլիայի նորմանդական նվաճումներից հետո ընկած ժամանակաշրջանի (1066 թվական) անգլիական իրավունքից: Անգլիական իրավունքի պատմության մեջ ընդունված է առանձնացնել չորս ժամանակաշրջան<sup>1</sup>.

1) անգլիական իրավունքի ժամանակաշրջանը՝ մինչև Անգլիայի նորմանդական նվաճումները: Այդ ժամանակ երկրի յուրաքանչյուր մասում գործում էր իր տեղական իրավունքը և բացակայում էր «ընդհանուր իրավունքը» (ամբողջ Անգլիայի համար ընդհանուր իրավունքը, համաանգլիական իրավունքը)<sup>2</sup>.

2) «ընդհանուր իրավունքի» առաջացման շրջանը (1066 թվականից մինչև Թյուրոքների դիմաստիայի հիմնադրումը 1485 թվական), որն ուղեկցվեց տեղական սովորության իրավունքի հաղթահարմամբ.

<sup>1</sup> Տե՛ս *Давыд П. Указ. соч.* էջ 253

<sup>2</sup> Ոստի չի կարելի «ընդհանուր իրավունքը» անվանել «անգլոսաքսոնական»:

3) «ընդհանուր իրավունքի» հաստատման և ծաղկման ժամանակաշրջանը (1485-1832 թվականներ), այդ ժամանակ ծագեց նաև, այսպես կոչված, «արդարության իրավունքը».

4) «ընդհանուր իրավունքի» պետական օրենսդրության հետ համատեղվելու ժամանակաշրջանը (1832 թվականից մինչև մեր օրերը):

Ընդհանուր իրավունքն ստեղծվել է նորմանդական նվաճումներից հետո Անգլիայի քաղաքական դատարանների կողմից (այդ դատարաններն անվանվում են վեստմինստերյան՝ ըստ դրանց, XIII դարից սկսած, միստերի վայրի, որը եղել է վեստմինստերը): Այդ նոր համանգլիական իրավունքը ձևավորվեց աստիճանաբար՝ վճռից վճիռ, քաղաքական դատարանների դատական պրակտիկայով: Նման կոնկրետ վճիռների հանրագումարը, որոնք որպես նախադեպ պարտադիր էին նմանօրինակ գործերով հետագա դատական վճիռների համար, կազմեց անգլիական բոլոր դատարանների համար ընդհանուր իրավունքը:

Այսպիսով, *ընդհանուր իրավունքը* ձևավորվել է *դատական վճիռ-նախադեպերի հանրագումարի* տեսքով: Այդ իմաստով, կարելի է ասել, որ ընդհանուր իրավունքը կոնկրետ դատական վճիռների հիմքում ընկած կազուսային կանոնների համակցություն է, որոնք նմանօրինակ գործեր լուծելիս՝ այլ դատարանների համար ունեն պարտադիր նախադեպի նշանակություն:

Թագավորական դատարաններն ընդհանուր իրավունքի ձևավորման գործընթացում օգտագործել են տեղական իրավական սովորույթների ուրուշ դրույթներ՝ դրանք վերափոխելով և համապատասխանեցնելով նոր դատական ընթացակարգի և դատավարության ձևի խիստ պահանջներին: Հռոմեական իրավունքը և դրա վրա հիմնված (սկզբնական շրջանում նաև Անգլիայում) համալսարանական իրավաբանական կրթությունը որևէ նկատելի ազդեցություն չեն բողել ընդհանուր իրավունքի ստեղծման գործընթացի վրա:

XV - XVI դարերում ընդհանուր իրավունքին զուգահեռ (երբեմն էլ դրա հետ մրցակցելով) ձևավորվեց, այսպես կոչված, «*արդարության իրավունքը*», որը «արդարության» վարդապետության հիման վրա կոնկրետ գործերով լող-կանցլերի վճիռների համակցություն էր ու լրացնում կամ ճշգրտում էր ընդհանուր իրավունքի իրավական սկզբունքները և կանոնները: 1873-1875 թվականների դատական բարեփոխումներից հետո ընդհանուր իրավունքը և «արդարության իրավունքը» միավորվեցին *նախադեպային իրավունքի միասնական համակարգում*, իսկ բոլոր անգլիական դատարաններն սկսեցին կիրառել ինչպես ընդհանուր իրավունքի, այնպես էլ «արդարության իրավունքի» նորմերը:

Նախադեպային իրավունքի նորմերը (կանոնները) օժտված են այնպիսի արժանիքներով, ինչպիսիք են կոնկրետությունը և ճկունությունը, սակայն դրանք կազուխստական են, զուրկ ռոմանո-գերմանական իրավունքի վերացական-ընդհանուր նորմերի պարզությունից և հստակությունից: Դա խոչընդոտում է ռոմանո-գերմանական օրենսգրքերին նմանօրինակ նախադեպային իրավունքի օրինակարգմանը (կողիֆիկացիային):

Անգլիայում ձևավորված դատական ատյանների աստիճանակարգության հաշվառմամբ գործում է «*նախադեպի կանոն*», որի համաձայն՝

1) լորդերի պալատի (բարձրագույն դատական ատյանի) վճիռները պարտադիր նախադեպեր են անգլիական բոլոր դատարանների (սակայն ոչ իր) համար.

2) վերաքննիչ դատարանի վճիռները պարտադիր նախադեպեր են թե՛ իր, թե՛ ստորադաս բոլոր դատարանների համար.

3) վերին դատարանի վճիռները պարտադիր նախադեպեր են բոլոր ստորադաս դատարանների համար. թեկուզև այդ որոշումները խիստ պարտադիր չեն հենց վերին դատարանի տարբեր բաժանմունքների համար, սակայն դրանք այդ բաժանմունքների համար ունեն կարևոր նշանակություն և, որպես կանոն, հաշվի են առնվում դրանց կողմից.

4) օկրուգային և մագիստրատային դատարանները պարտավոր են հետևել բոլոր վերադաս դատարանների նախադեպերին, սակայն դրանց սեփական վճիռները նախադեպեր չեն ստեղծում:

Դատավորը, լուծելով գործը, պարտավոր է հետևել առկա նախադեպերին: Ընդ որում, քննվող գործի և արդեն իսկ լուծված գործերի հետ նմանության հարցը մեկնաբանելիս դատավորն օգտվում է հայեցողական մեծ ազատությամբ: Պատշաճ նախադեպի և ստատուտային իրավունքի (օրենսդրության) համապատասխան նորմի բացակայության դեպքում դատավորը քննվող գործի համար ինքն է սահմանում իրավակիրառ նորմը (կազուսային կանոնը):

Դատական պրակտիկայից (դատարանների նախադեպային իրավունքից)՝ որպես անգլիական իրավունքի առաջին և հիմնական աղբյուրից, հետո որպես անգլիական իրավունքի երկրորդ աղբյուր, ճանաչվում է *ստատուտային իրավունքը*՝ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը:

Անգլիայում չկա գրավոր սահմանադրություն, և «անգլիական սահմանադրություն» ասելով՝ նկատի է առնվում պետական իշխանության մարմինների համակարգը և իրավագործությունները, հպատակների իրավունքներն ու ազատությունները սահմանող օրենքի և նախադեպային իրավունքի նորմերի համակցությունը:

Համաձայն անգլիական ավանդույթի և ձևավորված իրավաբանական վարդապետության՝ օրենքը (խորհրդարանի ակտը) համարվում է իրավունքի երկրորդական աղբյուր, որը միայն մի շարք փոփոխություններ և լրացումներ է մտցնում դատական պրակտիկայի ստեղծած իրավունքում (այսինքն՝ նախադեպային իրավունքում): Չևականորեն օրենքը կարող է փոփոխել կամ վերացնել նախադեպային իրավունքի նորմը և նախադեպի հետ հակասության դեպքում գերապատվությունը պատկանում է օրենքին: Սակայն փաստացի օրենքի գործողությունն իրականացվում է դրա դատական-նախադեպային մեկնաբանման ու կիրառման հունով և համատեքստում:

Ենթաօրենսդրական ակտերը («ի կատարումն օրենքի») արձակում են գործադիր իշխանության մարմինները՝ միայն խորհրդարանի կողմից նրանց պատվիրակված իրավագործությունների իրացման կարգով: Ընդ որում, դասարաններն օժտված են համապատասխան դեպքերում գործադիր իշխանության ակտերը վերացնելու իրավունքով:

Որպես անգլիական իրավունքի աղբյուր որոշակի նշանակություն ունի նաև *սովորույթը*: Իրավաբանորեն պարտադիր են համարվում, այսպես կոչված, հնագույն (մինչև 1189 թվականը գործած) սեղական սովորույթները և առևտրային սովորույթները: Սակայն պետական-իրավական պրակտիկան հետևում է նաև սահմանադրական իրավունքի, քրեական իրավունքի, աշխատանքային իրավունքի և այլ ոլորտներում եղած բազմաթիվ այլ սովորույթներին (ձևավորված ավանդույթներին):

Անգլիական ընդհանուր իրավունքը (ընդհանուր իրավունքը լայն առումով, այսինքն՝ իր մեջ թե՛ ընդհանուր իրավունքի, թե՛ «արդարության իրավունքի») նախադեպերը ներառող նախադեպային իրավունքը) լայն տարածում է գտել աշխարհում: Ընդ որում, անգլիական ընդհանուր իրավունքի մի շարք դրույթներ այլ երկրներում դրանց տարածման և ոեցեպցիայի (որդեգրման) գործընթացում, սեղական պայմանների և ավանդույթների ազդեցության ներքո ենթարկվել են որոշակի փոփոխությունների:

*Հյուսիսային Ամերիկայի* տարածքում անգլիական ընդհանուր իրավունքն սկսել է գործել 1607 թվականից (այնտեղ առաջին անգլիական գաղութի կազմավորման թվականը): Ընդ որում, սահմանվել էր (Կալվինի գործով 1608 թվականի դատարանի վճռով), որ անգլիական իրավունքը գաղութներում կիրառվում է միայն այնքանով, որքանով դրա նորմերը համապատասխանում են գաղութների պայմաններին:

*ԱՄՆ-ում* անկախության նվաճումից հետո որոշ նահանգներ հրաժարվեցին անգլիական իրավունքից և ընդունեցին ռոմանո-գերմանա-

կան նմուշի օրենսգրքեր: Մակայն հետագայում հաղթանակեց ավանդույթը, և ԱՄՆ-ը մնաց ընդհանուր իրավունքի համակարգում, բացառությամբ՝ Լուիզիանա նահանգի, որի իրավունքը հարուստ է ռոմանո-գերմանական իրավական ընտանիքին:

ԱՄՆ-ի իրավունքը, ինչպես նաև անգլիական իրավունքը, առաջին հերթին, դատական պրակտիկայի իրավունք է, այսինքն՝ նախադեպային իրավունք: Օրենքները և ենթօրենսդրական ակտերը՝ որպես նախադեպային իրավունքի լրացում, օժանդակ դեր են խաղում:

Ամերիկյան իրավունքի էական տարբերությունն անգլիական իրավունքից այն է, որ ԱՄՆ-ի Սահմանադրությունը (1787 թվական)՝ որպես երկրի հիմնական օրենք, վեր է կանգնած ընդհանուր իրավունքից ու սահմանում է ամերիկյան հասարակության և պետության ու ամբողջ գործող իրավունքի հիմքերը: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ԱՄՆ-ի գերագույն դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանումը: Նրա կողմից իրականացվող Սահմանադրության տեքստի ճկուն մեկնաբանման գիծն ամերիկյան հասարակության կյանքի փոփոխվող պայմանների հաշվառմամբ կայուն Սահմանադրության, ամերիկյան իրավունքի միասնականության ապահովման հիման վրա դրա նորացման և զարգացման գործուն միջոց է:

Ամերիկյան իրավունքի զգալի տարբերություններն անգլիականից պայմանավորված են նաև ԱՄՆ-ի դաշնային կառուցվածքով և՛ դաշնային օրենսդրության, և՛ առանձին նահանգների օրենսդրության առկայությամբ: Բացի դրանից, յուրաքանչյուր նահանգ ունի իր նախադեպային իրավունքը: Այս ամենը բազմաթիվ հակասություններ է առաջացնում առանձին նահանգների իրավունքների համակարգերի և դրանց ու իրավունքի դաշնային համակարգի միջև:

ԱՄՆ-ում, այլ կերպ, քան Անգլիայում, գործում է նաև նախադեպի կանոնը: Այսպես, ԱՄՆ-ի գերագույն դատարանը և նահանգների գերագույն դատարանները պարտավոր չեն հետևել սեփական վճիռներին և կարող են փոփոխել իրենց պրակտիկան: Բացի այդ, նախադեպի կանոնը վերաբերում է նահանգների իրավասությանը և գործում է համապատասխան նահանգի դատական համակարգի սահմաններում:

ԱՄՆ-ում մեծ ուշադրություն է դարձվում գործող օրենսդրության օրինակարգմանը (կողիֆիկացմանը), սակայն ամերիկյան օրենսգրքերն էականորեն սարքերվում են ռոմանո-գերմանական օրենսգրքերից:

Եվրոպական նմուշի օրենսգրքեր կան միայն Լուիզիանա նահանգում, որտեղ պահպանվում է ռոմանո-գերմանական ավանդույթը:

Մնացած նահանգներում գործում են այլ տիպի օրենսգրքեր, որոնք նախկին (արդեն իսկ դատական պրակտիկայի կողմից ստեղծված կամ

օրենսդրության մեջ եղած) նորմերի համախմբում (կոնսոլիդացիա) են, ոչ թե նոր նորմերի սահմանում: Այդպիսիք են մի շարք նահանգներում (Կալիֆորնիա, Հյուսիսային և Հարավային Դակոտա, Ջորջիա, Մոնտանա) ընդունված քաղաքացիական օրենսգրքերը, 25 նահանգներում գործող քաղաքացիական դատավարական օրենսգրքերը և այլն:

ԱՄՆ-ում օրենսգրքեր են անվանվում նաև գործող դաշնային օրենսդրության կամ առանձին նահանգների օրենսդրության տարբեր համակարգված ժողովածուները: Նման օրենսգրքերն իրենց մեջ չեն ներառում նախադեպային իրավունքի նորմեր:

## 5. Հինդուսական իրավունքը

Հինդուսական իրավունքը հիմնված է հնդուիզմի (քրահմայականության) կրոնի վրա և կարգավորում է հինդուսական համայնքի անդամների վարքագիծը<sup>1</sup>: Դա չպետք է խառնել Հնդկաստանի իրավունքի համակարգի հետ: Հինդուսական համայնքներ, որտեղ գործում է հինդուսական իրավունքը, գոյություն ունեն ոչ միայն Հնդկաստանում, այլ նաև Հարավարևելյան Ասիայի (Պակիստան, Մալազիա, Սինգապուր, Նեպալ, Երի-Լանկա) և Արևելյան Աֆրիկայի (Քենիա, Տանզանիա, Ուգանդա) բազմաթիվ այլ երկրներում:

Հնդուիզմի (քրահմայականության) գաղափարներն իրենց արտահայտությունն են գտել դեռևս Ք.ծ.ա. II հազարամյակի «Վեդաներ» անունը կրող հին հնդկական հուշարձաններում: «Վեդաներ»-ում հիմնավորվում է հասարակության բաժանումը չորս վարճայի (կաստայի, խավի)՝ քրահմաններ (քրմեր), քշատրիներ (ուզմիկներ), վաշիներ (հողագործներ, արհեստավորներ, առևտրականներ) և շտրիաներ (համայնքի ստորին խավի ներկայացուցիչներ): Այդ աստիճանական կաստայական համակարգում տիրապետող տեղը զբաղեցնում են առաջին երկու վարճայի անդամները և, առաջին հերթին, քրահմանները:

Տարբեր վարճաների անդամները, «Վեդաներ»-ի և քրահմայականության այլ աղբյուրների համաձայն, պետք է հետևեն իրենց վարճաների համար Աստծու կողմից նախասահմանված *դհարմային*<sup>2</sup> օրենքին, պարտքին, սովորույթներին, վարքագծի կանոնին: Դհարմաների իմաստը մեկնաբանելով, դրանք համակարգելով և համապատասխան ժողովածուների (դհարմաշաստրների) կազմելով զբաղվում էին զանազան

<sup>1</sup> Տե՛ս *Крашевникова Н.А.* Индуистское право: история и современность. М., 1982

բրահմայանական դպրոցներ: Բ.ծ.ա. II դարից մինչև Բ.ծ.հ. III դարը կազմված առավել կարևոր *դրահմաշաստրներից են* «Մանուի օրենքները», «Յայնավայկայի օրենքները», «Նարադի օրենքները»: «Մանուի օրենքներում» ընդգծվում էր, որ բոլորը, ներառյալ՝ թագավորը, դհարմայի հարցերով պետք է հետևեն բրահմանների խորհուրդներին և խրատներին ու իրենց համար սահմանված դհարմային: Դհարմայի խախտման համար նախատեսվում էին ոչ միայն դաժան երկրային, այլ նաև՝ անդրաշխարհային պատիժներ:

Բոլոր դհարմաշաստրները դիավում են որպես միասնական հինդուսական իրավունքի հավասարաբժեք մասեր:

Հինդուսական իրավունքի կարևոր աղբյուրը (դհարմաշաստրներից հետո) *միբանդիագիներն* էին՝ XII - XVII դարերում կազմված, դհարմաշաստրների մեկնաբանությունների ժողովածուները:

Դհարմաշաստրները և դրանց մեկնաբանությունները մեծ նշանակություն էին սալիս դհարմային (դրա աստվածային ճշմարտությանը և հավերժ կարգին) համապատասխանող «*յավ սովորույթին*»: Այդ իմաստով՝ սովորույթները հինդուսական պոզիտիվ իրավունքի աղբյուր են: Ընդ որում, յուրաքանչյուր հինդուսական համայնք, յուրաքանչյուր կաստա (և բազմաթիվ ենթակաստաներ) և նույնիսկ յուրաքանչյուր ընտանիք ուներ իր սովորույթները: Ծագող վեճերը լուծվում են կաստայի (կամ ենթակաստայի) անդամների ժողովի կողմից՝ նրա սովորույթների հիման վրա:

Նախապես սահմանված կանոնների քացակայության դեպքում հինդուսական իրավունքն անհատներին և դատավորներին խորհուրդ է տալիս դեկավարվել *բանականության, խղճի ու արդարության պահանջներով*:

Հինդուսական իրավունքը չի ճանաչում իրավունքի այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են պետական օրենսդրությունը և դատական պրակտիկան:

Հնդկաստանի մուսուլմանական նվաճման ժամանակաշրջանում (XVI դար) դատական և վարչական մարմիններում հինդուսական իրավունքի կիրառումն արգելվեց: Անգլիական գաղութային կառավարման պայմաններում (սկսած՝ XVII դարից) այդ արգելքը վերացվեց և նախատեսվեց «Ղուրանի իրավունքի կիրառումը մուսուլմանների նկատմամբ և շաստրների իրավունքի կիրառումը հինդուսների նկատմամբ»:

Հինդուսական իրավունքի հետագա զարգացման վրա զգալի ազդեցություն թողեցին անգլիական վարչակազմի (ադմինիստրացիայի) օրենսդրությունը և ընդհանուր իրավունքի նորմերը: Այսպես, վերացվեցին կաստայական խտրականության հետ կապված հինդուսական իրա-



վունքի նորմերը, կամանց անգործունակության մասին նորմերը, արգելվեց այրիների ինքնահրկիզումը:

Անկախության նվաճումից հետո (1947 թվական) Հնդկաստանում սկսվեց ինչպես հինդուսական իրավունքի, այնպես էլ՝ ազգային ամբողջ իրավունքի համակարգի նորացումը: Հնդկաստանի 1950 թվականի Սահմանադրությունն արգելեց կաստայական պատկանելության շարժառիթներով խտրականությունը: 1955 թվականի «Ամուսնության մասին» օրենքով էականորեն բարեփոխվեցին ամուսնության և ամուսնալուծության մասին հինդուսական իրավունքի նորմերը: 1956 թվականի «Ժառանգության մասին» օրենքն ամրապնդեց կամանց իրավունքները ժառանգական հարաբերությունների ոլորտում և նրանց ներառեց ժառանգների շրջանակի մեջ: Փոփոխվեց ընտանեկան գույքի նախկին ռեժիմը և գույքի շատ տեսակներ օրենսդրորեն ճանաչվեցին որպես անձնական գույքի օբյեկտներ: 1984 թվականի օրենքով ստեղծվեցին, այսպես կոչված, «ընտանեկան դատարաններ», որոնք պետք է լուծեին կողմերի ընտանեկան-ամուսնական վեճերը՝ անկախ նրանց կրոնական պատկանելությունից:

Սակայն հին իրավունքի նորացումը դժվարին և տևական գործընթաց է: Այսպես, մինչև օրս դեռ չի ընդունվել 1950 թվականի Սահմանադրությամբ նախատեսված Հնդկաստանի քաղաքացիական օրենսգիրքը, որը երկրի բոլոր բնակիչների համար պետք է սահմանի միասնական քաղաքացիական-իրավական կարգավիճակ:

Ժամանակակից Հնդկաստանում գործող նորացված հինդուսական իրավունքի շատ դրույթներ չեն տարածվում Հնդկաստանից դուրս գտնվող հինդուսական համայնքների վրա, որտեղ շարունակում են գործել ավանդական հինդուսական իրավունքի նորմերը:

Հնդկաստանի իրավունքի ազգային համակարգն զգալի չափով ձևավորվել ու զարգացել է անգլիական իրավունքի մեծ ազդեցության ներքո և ներկայումս մտնում է ընդհանուր իրավունքի իրավական ընտանիքի մեջ:

## 6. Մուսուլմանական իրավունքը

«Մուսուլմանական իրավունք» (շարիաթ) ասելով՝ նկատի ունեն իսլամական կրոնի իրավական հարադրությունը, որի ծագումը կապված է Մուհամադ մարգարեի անվան հետ (VII դար):

Շարիաթը («ճշմարիտ ուղին») իր էությամբ հավատացյալներին թելադրվող կրոնական (աստվածային) օրենք է, այսինքն՝ պատվիրանների համակցություն այն մասին, թե նրանք ինչ պետք է անեն և ինչ պետք

է չանեն: Շարիաթի, ինչպես նաև այլ կրոնական-նորմատիվ համակարգերի (հինդուսական իրավունքի, հուդայական իրավունքի, Հեռավոր Արևելքի մի շարք երկրների իրավունքի) հիմքում ընկած է մարդու կրոնական պարտականությունների և ոչ թե նրա իրավունքների գաղափարը<sup>1</sup>:

Արաբական խալիֆայությունում մուսուլմանական իրավունքի կայացման գործընթացը տևեց մի քանի դար (VII – X դարեր) և ընթացավ վաղ ֆեոդալական կարգի ձևավորման պայմաններում:

*Մուսուլմանական իրավունքի աղբյուրներ են՝*

1) *Ղուրանը*՝ իսլամի սուրբ գիրքը և մուսուլմանական իրավունքի հիմքը.  
2) *սուննան*՝ Մուհամադ մարգարեի իրավական նշանակություն ունեցող արտահայտությունների և գործերի մասին պատումների հանրագումարը.

3) *իջման*՝ իսլամի հեղինակավոր իրավագետների ընդհանուր (միասնական) կարծիքը.

4) *քիյասը*՝ իրավունքի հարցերով համանմանությամբ արված դատողությունները<sup>2</sup>:

Ղուրանը և սուննան մուսուլմանական իրավունքի հիմնական պատմական աղբյուրներն են ու անմիջականորեն կապված են Մուհամադի անվան հետ: Մուհամադի մահից հետո (632 թվական) VII դարում մուսուլմանական իրավունքի բովանդակությունը նրա հետևորդների կողմից, Ղուրանի և սուննայի մեկնաբանման հիման վրա, լրացվեցին մի շարք նոր դրույթներով: Մակայն հասարակական կյանքը պահանջում էր շարիաթի հետագա զարգացում, դրա սկզբունքների ու նորմերի դասակարգում և համակարգում: VII - X դարերում այդ խնդիրների լուծմանն էր նվիրված իրավագետների՝ իսլամի գիտակների ու նրանց հիմնադրած զանազան իրավական դպրոցների գործունեությունը:

Տարբեր դպրոցների մուսուլմանական իրավագետները Ղուրանի և սուննայի իրենց մեկնաբանություններում հենվում էին մարգարեի կողմից խրախուսված «*իչտիհհադի*» սկզբունքի վրա, որն իրենից ներկայացնում էր դատավորի ազատ հայեցողությունը քննվող գործի կապակցությամբ այլ աղբյուրների լռելու դեպքում: Այդ սկզբունքի հիման վրա մուսուլմանական իրավագետների կողմից Ղուրանի և սուննայի մեկնաբանումը փաստորեն ուղեկցվում էր նրանց կողմից շարիաթի նոր նորմերի սահմանմամբ: Այդ իրավագետների ջանքերով ձևակերպվեցին մուսուլ-

<sup>1</sup> Տե՛ս *Давид Р.* Указ. соч. էջ 386

<sup>2</sup> Նույն տեղի՝ էջեր 388-396: *Сюкиянянен А. Р.* Мусульманское право. Вопросы теории и практики. М., 1986: История политических и правовых учений. М., 1997. էջ 126-132 (բաժնի հեղինակ՝ Լ.Ռ. Սյուկիյանեն)

մանական իրավունքի հիմնական սկզբունքներն ու կոնկրետ նորմերը (զլխավորապես՝ կազուիստիկ բնույթի):

Որպես շարիաթի մեկնաբանման և կիրառման ընդհանուր (և ընդհանուրի կողմից ընդունված) հնարք՝ մուսուլմանական իրավագետները ճանաչեցին քիյասը՝ իրավունքի մասին համանմանությամբ դատելու եղանակը: Քիյասի (որպես մեթոդի և, միաժամանակ, շարիաթի աղբյուրի) կարևոր նշանակությունն այն է, որ դա հնարավորություն է ընձեռում կազուիստական մուսուլմանական իրավունքի բացերը լրացնելու և շարիաթում անհրաժեշտ նորմ «գտնելու» ցանկացած գործ համանմանությամբ լուծելու համար (ներառյալ՝ նաև ապագայում)՝ չստեղծելով նոր նորմ և դրանով իսկ չխախտելով շարիաթի՝ բացեր չունենալու մասին մուսուլմանական իրավական վարդապետության ֆիկցիան:

XI դարում վերջնականապես կազմավորվում է իջման (մուսուլմանական իրավագետների ընդհանուր համաձայնեցված կարծիքը, շարիաթի դոգման) և դադարում է, այսպես կոչված, «բացարձակ իջալիհադը»՝ Դուրանի և սուննայի ուղղակի մեկնաբանման և մուսուլմանական իրավունքի հիմնական մեկնությունների ստեղծման դարաշրջանը: XI դարից սկսվում է, այսպես կոչված, «թարլիդի», արդեն իսկ ձևավորված ավանդույթների ու իջմայի դոգմաների հիման վրա շարիաթի գործողության ժամանակաշրջանը: Այդ ժամանակահատվածից սկսած՝ իրավունք է ճանաչվում միայն այն, ինչն ընդունվել և հավանության է արժանացել իջմայի կողմից:

Մակայն մուսուլմանական իրավական վարդապետության և, դրա հետ միասին, շարիաթի նորմերի զարգացումը շարունակվեց նաև հետագա դարերում: Այդ զարգացմանը նպաստեց շարիաթի դրույթների մեկնաբանումն ու կիրառումը «պայմանների, տեղի և ժամանակի» հաշվառմամբ: Նման մոտեցման շնորհիվ՝ վարդապետությամբ թույլատրվեց իսլամին չհակասող սովորույթների, կողմերի համաձայնությունների, վարչական կանոնակարգերի կիրառումը: Չնայած այդ իրավական ձևերը մնում են մուսուլմանական իրավունքի բուն համակարգից դուրս, սակայն դրան հաղորդում են մեծ ճկունություն և տարբեր պայմաններին հարմարվողականություն ու հնարավորություն են ընձեռում բացերը լրացնելու համար:

Համաձայն իսլամի պետական իշխանությունը ոչ թե իրավունքի (շարիաթի) տերն է, այլ ծառան, ուստի և չի կարող իր օրենսդրության միջոցով փոխել շարիաթն ու ստեղծել նոր իրավունք: Մակայն նա պարտավոր է հետևել շարիաթի պահանջների պահպանմանը և հասարակական կարգի պաշտպանության նպատակներով կարող է ընդունել համապա-

տասխան որոշումներ ու ակտեր: Նման պետական ակտերի բովանդակություները, հատկապես ժամանակակից մուսուլմանական երկրներում, հաճախ էականորեն տարբերվում է շարիաթի ավանդական դրույթներից: Այսպիսի դեպքերում շարիաթի պահանջների պահպանումը ցուցադրելու նպատակով օգտագործվում են տարբեր տեսակի *իրավական ֆիկցիաներ*: Այսպես, շարիաթի կողմից արգելված հողի վարձակալությունը մեկնաբանվում է որպես ընկերակցության մասին համաձայնություն և այլն:

*Մուսուլմանական իրավունքը՝ որպես հավատացյալ իսլամականների համայնքի հատուկ կրոնական իրավունք, չպետք է շփոթել* այս կամ այն մուսուլմանական երկրի *իրավունքի ազգային համակարգի հետ*: Այդ երկրների պոզիտիվ իրավունքի ազգային համակարգերը, ծագելով շարիաթի ելակետային հիմքի վրա, զգալիորեն տարբերվում են մեկը մյուսից: Ավանդական շարիաթից իրավունքի այդ ազգային համակարգերի հեռանալու մեջ XIX - XX դարերում էական դեր խաղացին այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի ժամանակակից ձևերի զարգացումը, եվրոպական իրավունքի որոշ դրույթների որդեգրումը (ռեցեսպիան), պետական օրենսդրության ծավալի ու նշանակության ուժեղացումը, մի շարք երկրներում շարիաթը կիրառող հատուկ դատարանների վերացումը և այլն:

Համապատասխան օրենսդրական բարեփոխումներ իրականացվեցին սկզբում (XIX դարում և XX դարի 1-ին կեսում) առևտրային, ծովային, քրեական և հարկային իրավունքի բնագավառներում, իսկ այնուհետ (XX դարի 2-րդ կեսում)՝ իրավական կյանքի մյուս ոլորտներում, ներառյալ՝ ընտանեկան իրավունքի, ժառանգության, անձնական կարգավիճակի և այլ հարցերը: Իրավունքի ազգային համակարգերի նորացման գործընթացը շատ մուսուլմանական երկրներում (Եգիպտոս, Թուրքիա, Սիրիա, Թունիս, Մարոկկո, Հորդանան և այլն) ուղեկցվեց ռոմանոզերմանական մուշի քաղաքացիական, քրեական և մի քանի այլ օրենսգրքերի ընդունմամբ:

Մուսուլմանական երկրների իրավունքի ազգային համակարգերի վրա արևմտյան (եվրոպական և ամերիկյան) իրավունքի ազդեցությունը հատկապես ուժեղացավ տարբեր պետությունների արդի միջազգային համագործակցության ու տնտեսության, բնության պահպանության, միջազգային հանցագործությունների դեմ մղվող պայքարի, համաշխարհային իրավակարգի պաշտպանության և այլ ոլորտներում ինտեգրման գործընթացների զարգացման պայմաններում: Մակայն արևմտյան իրավունքի ոգով իրավունքի ազգային համակարգերի նորացման այդ ընդհանուր դրական միտումը մի շարք դեպքերում ընդհատվում է հե-

տընթաց շարժումներով, այս կամ այն մուսուլմանական երկրներում խլամական արմատականության գործոնի՝ ավանդական շարիաթի դերի ուժեղացմամբ, շարիաթական դատարանի, կառավարման շարիաթական ձևերի և այլնի վերակենդանացմամբ: Այսպես, համաձայն Իրանի Իսլամական Հանրապետության 1979 թվականի Մահմանադրության՝ ամբողջ օրենսդրությունը պետք է համապատասխանի ավանդական շարիաթի պահանջներին, իսկ 1981 թվականի քրեական իրավունքի հարցերը կարգավորող օրենքը վերարտադրում է շարիաթի հնամենի պահանջները: Իսլամական արմատականությունը (և դրա հետ միասին ավանդական շարիաթը) էական դեր է խաղում նաև բազմաթիվ այլ երկրներում (Աֆղանստան, Պակիստան, Սուդան և այլն):

Իսլամական գործոնի և ավանդական շարիաթի դերի ակնհայտ աշխուժություն ու ուժեղացում է նկատվում նաև մուսուլմանական բնակչություն ունեցող մի շարք պոստսոցիալիստական երկրներում և տարածաշրջաններում (մուսուլմանական բնակչություն ունեցող մի քանի նախկին խորհրդային հանրապետություններում ու ինքնավարություններում, Ալբանիայում, Կոսովոյի շրջանում և այլուր):

## 7. Աֆրիկայի սովորության իրավունքը

Աֆրիկայի, Մադագասկարի և մի շարք այլ տարածաշրջանների «սովորության իրավունք» ասելով՝ նկատի են առնվում տեղական սովորությունները՝ սկսած դրանց նախագաղութային ժամանակաշրջանի հնամենի (ըստ էության, նախահրավական) ձևերից մինչև գաղութային ու հետգաղութային ժամանակաշրջանների առավել զարգացած ձևերը:

Սև (հասարակածային) Աֆրիկայի երկրներում (Եթովպիա, Սոմալի, Տոգո, Բենին, Չադ, Բենիա, Տանզանիա, Կոնգո, Մալի, Ուգանդա և այլն) ու Մադագասկարում *նախագաղութային ժամանակաշրջանում* գործում էին կոլեկտիվիստական, տոհմացեղային պատկերացումներին համապատասխանող՝ մարդկանց համայնքային կյանքի կանոնների և կարգի մասին տարբեր տեղական սովորություններ: Այդ հնամենի սովորությունները զոյություն ունեին բանավոր ձևով ու առանց էական փոփոխությունների փոխանցվում էին սերնդեսերունդ: Բազմաթիվ համայնքներից յուրաքանչյուրն ուներ իր սովորությունները, որոնք արտահայտում և հաստատում էին նրա միասնությունը, ինքնատիպությունը ու ինքնուրույնությունը: Սովորությունները մանրակրկիտ կարգավորում էին համայնքի կյանքի ամբողջ կարգը, նրա անդամների վարքագիծը և համապատասխան պատիժներ էին նախատեսում դրանց խախտման համար:

Սովորույթների խախտումների հետ կապված վեճերը հիմնականում քննվում էին համայնքների ավագների, ցեղերի առաջնորդների, իսկ այնտեղ, որտեղ ձևավորվել էր կենտրոնացված իշխանական համակարգ՝ համապատասխան պաշտոնական դատական ատյանների կողմից: Վեճերի քննությունը նպատակ էր հետապնդում տվյալ սոցիալական խմբում վերականգնել խախտված միասնությունը, համայնքի անդամների միջև հասնել համաձայնության և փոխըմբռնման:

*Գաղութային ժամանակաշրջանում* եվրոպական իրավունքի և գաղութային վարչակազմի կողմից իրականացվող օրենսդրական բարեփոխումների ազդեցության ներքո ավանդական սովորույթները ենթարկվեցին էական փոփոխությունների: Ըստ ընդհանուր կանոնի, գաղութային վարչակազմի և դատարանների կողմից տեղական սովորույթների նշանակությունը ճանաչվում էր այն չափով, ինչ չափով դրանք չէին հակասում եվրոպական իրավունքի ու դատավարության նորմերին, իսկ եվրոպական իրավունքը և դատավարության (անգլիական, ֆրանսիական, բելգիական, պորտուգալական և այլն) նորմերը տարածվում էին գաղութային բնակչության վրա այն չափով, ինչ չափով դա համապատասխանում էր տեղական պայմաններին ու հնարավորություններին: Ավանդական սովորույթների և գաղութների համար սահմանված եվրոպական իրավունքի նորմերի միջև հակասությունները հիմնականում լուծվում էին իրավունքի նորմերի միջև հակասությունները հիմնականում լուծվում էին իրավունքի:

Եվրոպական իրավունքի որդեգրումը (ռեցեպցիան) և տեղական սովորույթների, ավանդույթների վերափոխումը, դրանք նոր պայմաններին հարմարեցնելու գործընթացում, վերջին հաշվով հանգեցրեց նրան, որ գաղութներում հաստատվեց դրանց մայր երկրների (մետրոպոլիաների) իրավունքի համակարգերը: Այսպես, նախկին անգլիական գաղութները (Ոսկե Ափ, Գամբիա, Քենիա, Նիգերիա, Ուգանդա, Տանզանիա, Ռոդեզիա, Սիեռա-Լեոնե և այլն) դարձան ընդհանուր իրավունքի երկրներ, իսկ նախկին ֆրանսիական, բելգիական, պորտուգալական գաղութները (Մադագասկար, Մալի, Կոնգո, Տոգո, Բենին, Չադի և այլն)՝ ոռմանոգերմանական իրավունքի երկրներ:

*Անկախություն նվաճելուց հետո* Աֆրիկայի երիտասարդ պետությունների ազգային իրավունքի զարգացումը շարունակվեց այդ երկրներում արդեն իսկ ձևավորված իրավունքի համապատասխան եվրոպական համակարգերի հիման վրա: Դրա հետ միասին ավանդական սովորույթների դուրս մղման և դրանք ժամանակակից իրավունքի նորմերով փոխարինելու քաղաքականությունը նոր պայմաններում ենթարկվեց զգալի փոփոխությունների, որոնք կապված էին Աֆրիկայի ազատա-

գրված ժողովուրդների ազգային ինքնագիտակցության աճով: Դա հստակ դրսևորվեց իրենց հասարակական և պետական-իրավական ձևերի նորացման գործընթացն իրենց ավանդական արժեքների վերակենդանացման հետ կապելու նրանց ձգտման մեջ:

Իրավունքի ոլորտում նման մոտեցումն իր արտահայտությունը գտավ անկախ աֆրիկյան պետություններում սովորութային իրավունքն ազգային իրավունքի ինքնուրույն աղբյուր ճանաչելու, ինչպես նաև ավանդական սովորութային իրավունքի մի շարք նորմերը և ինստիտուտներն այդ երկրներում գործող եվրոպական իրավունքի դրույթների հետ ինտեգրելու (օրենսդրության և դատական պրակտիկայի միջոցով) մեջ:

## Գլուխ 7. Իրավունքի գործողությունը

### 1. Իրավունքի գործողության հասկացությունը, մեխանիզմը և արդյունավետությունը

*Իրավունքի գործողությունը դրա իրավաբանական ուժի դրսևորման բոլոր ձևերի համակցությունն է:* Իրավունքի իրավաբանական ուժ ասելով հասկանում են թե՛ բուն իրավական նորմերի և թե՛ դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի, առանձին իրավական նորմերի ու ամբողջությամբ իրավունքի՝ որպես նորմերի համակարգի, պաշտոնական, պետական-իշխանական համապարտադրականությունը:

Իրավունքի գործողության, դա կազմող նորմերի գործողության հասկացությունն արտահայտում է *իրավունքի դինամիկան*՝ արդեն իսկ կարգավորված հասարակական հարաբերությունների վրա իրավունքի իրական կարգավորիչ ազդեցության գործընթացը: Իրավունքի այդ դինամիկ վիճակը, *իրավունքը գործողության մեջ*, ըստ էության, այն նպատակն է, հանուն որի իրավասահման գործունեության արդյունքում պաշտոնապես ձևակերպվում, տեքստի ձևով արտահայտվում և որպես փաստաթուղթ (համապատասխան ակտերում) ամրագրվում է *իրավունքն ստատիկ վիճակում, իրավունքը «գրքերի» տեսքով:*

Իրավունքի ստատիկական և դինամիկական իրավական կարգավորման միասնական գործընթացի երկու փոխկապակցված, միմյանց լրացնող և ենթադրող փուլեր (դրսևորման ձևեր) են, որպեսզի իրավունքը գործի որպես կարգավորիչ, այն նախապես պետք է սահմանված լինի որպես կարգավորիչ: Իրավասահմանումը (իրավունքի սահմանումն իր ստատիկայում) իրավական կարգավորման ելակետային փուլ է՝ *իրավական կարգավորումը դրա վերացական-ընդհանուր ձևով*, որը չի կոնկրետաց-

նում նորմերի կարգավորիչ-իրավական նշանակությունը կոնկրետ պայմաններում կոնկրետ անձի կոնկրետ վարքագծի նկատմամբ կիրառելիս: Իրավունքի գործողությունը (իրավունքն իր դիմամիկայում) իրավական կարգավորման ավարտական փուլն է, *իրավական կարգավորումն իր սահմանային կոնկրետացված ձևով*<sup>1</sup> վերացական նորմերի ընդհանուր կարգավորիչ-իրավական նշանակությունը կոնկրետ պայմաններում, կոնկրետ անձի կոնկրետ վարքագծի նկատմամբ կիրառելու տեսքով:

*Իրավունքի գործողության մեխանիզմն* իրավական կարգավորման վերացական-համընդհանուր մեխանիզմն է, որը կոնկրետացված և անհատականացված է գործող իրավունքի իրավաբանական ուժի դրսևորման կոնկրետ որոշակի դեպքի (և ձևի) նկատմամբ կիրառելիս:

Իրավունքի գործողության մեխանիզմի հիմնական կարգավորիչ գործառույթը և *իրավունքի գործողության* իրավաբանական-տրամաբանական *խմաստն* ամբողջությամբ այն է, որ *սասաիկ իրավունքի առկա վերացական-ընդհանուր նորմը, այսինքն՝ ընդհանուր դեպքի համար ընդհանուր կանոնը, պատշաճ ձևով վերափոխվի արդիական «կազուսային» նորմի, այսինքն՝ կոնկրետ դեպքի համար կոնկրետ կանոնի*:

Եթե իրավական կարգավորման ելակետային փուլը կարգավորման կոնկրետ էմպիրիկ օբյեկտներից դրանց տիպականացման միջոցով շարժում է դեպի իրավունքի որոնելի վերացական նորմերի սահմանումը, ապա իրավունքի գործողությունն իրականացվում է նույն իրավաբանական-տրամաբանական գծապատկերով (մոդելով), սակայն հակառակ կարգով՝ իրավունքի վերացական նորմերից դրանց անհատականացման միջոցով դեպի կոնկրետ էմպիրիկ օբյեկտները: Այսպիսին է իրավական կարգավորման ելակետային-վերացական ձևի և վերջնական կոնկրետ ձևի ու, դրա հետ միասին՝ *իրավունքն ստատիկայում և իրավունքը դիմամիկայում, միասնականության, տարբերականն ու փոխգործակցության դիալեկտիկան*:

Գործող իրավունքի էական ընդհանրացնող բնութագիրն իրավունքի գործողության արդյունավետությունն է:

*Իրավունքի գործողության արդյունավետությունն իրավական կարգավորման տարբեր ոլորտներում գործող օրենսդրության իրավական նպատակներին հասնելու չափը (աստիճանն) է:*

Գործող իրավունքի *արդյունավետության ցուցանիշն* օրենսդրության նորմերի իրականացման հետևանքների (այսինքն՝ դրանց գործողության արդյունքների) և այդ նորմերի իրավական նպատակների հարաբերակցությունն է<sup>1</sup>:

<sup>1</sup> Стн Лапаева В.В. Эффективность закона и методы её изучения // Эффективность закона. М., 1997. т. 28-44



Գործող իրավունքի արդյունավետությունը կախված է բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ, սոցիալական, ամնտեսական, գաղափարախոսական, իրավաբանական և այլ գործոններից: *Իրավունքի գործողության արդյունավետության կարևոր իրավաբանական գործոններից են՝* գործող օրենսդրության իրավական որակը (իրավական բնույթը), դրա սոցիալական պայմանավորվածության ու օրինականության աստիճանը (տարբեր սոցիալական խավերի շահերի հաշվառումը, իրավական համաձայնեցումը և փոխզիջումը, հասարակական կարծիքի հաշվառումը), քաղաքացիների ու պաշտոնատար անձանց իրավագիտակցության և իրավաբանական մշակույթի մակարդակը, հասարակության մեջ հատկապես իրավակիրառ գործունեության ոլորտում օրինականության ու իրավակարգի ընդհանուր վիճակը:

## **2. Իրավունքի գործողությունը ժամանակի, տարածության մեջ՝ ըստ կարգավորման ոլորտի և ըստ անձանց շրջանակի**

Իրավունքի գործողությունն իրավունքը կազմող այն բազմազան նորմերի գործողությունն է, որոնք պաշտոնական ձևով արտահայտված են տարբեր նորմատիվ-իրավական և այլ իրավասահման ակտերում: Այդ ակտերի ու դրանցով սահմանված իրավական նորմերի գործողությունն ունի իր *սահմանները*, որոնք որոշվում են այդպիսի գործողության ժամանակային ու տարածքային սահմաններով, ինչպես նաև նորմատիվ-իրավական կարգավորման օբյեկտների ու իրավունքի համապատասխան նորմերի հասցեատերերի շրջանակներով:

*Ժամանակի մեջ գործողությունը* որոշվում է նորմատիվ-իրավական ակտը (դրանում պարունակվող նորմերը) ուժի մեջ մտնելու պահից մինչև դրա ուժը կորցնելու պահը ժամանակահատվածով:

Տարբեր նորմատիվ-իրավական ակտերի *օրինական ուժի մեջ մտնելու ժամանակը* որոշվում է զանազան եղանակներով՝

- 1) ակտի ընդունման ժամանակով.
- 2) ակտում կամ տվյալ ակտը գործողության մեջ դնելու մասին հատուկ ակտում նշված ժամանակով.
- 3) ակտի պաշտոնական հրապարակման ժամանակով.
- 4) ակտի պաշտոնական հրապարակումից հետո որոշակի ժամկետի ավարտով:

Ընդհանուր կանոնի համաձայն, եթե այլ բան սահմանված չէ նորմատիվ ակտերում, Ռուսաստանի Դաշնությունում *օրենքներն* ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվանից տասն օր հե-

տո, *Ռուսաստանի Դաշնության նախագահի և կառավարության նորմատիվ ակտերը*՝ դրանց պաշտոնական հրապարակումից յոթ օր հետո, *նախարարությունների ու գերատեսչությունների* ներգերատեսչական բնույթի *նորմատիվ ակտերը*՝ Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունում դրանք պետական գրանցման պահից, իսկ պաշտոնական հրապարակման ենթակա ընդհանուր նշանակության ակտերը՝ դրանց պաշտոնական հրապարակման պահից տասն օր հետո:

Ռուսաստանի Դաշնության նախագահի և կառավարության բազմաթիվ նորմատիվ ակտեր նախատեսում են դրանց ուժի մեջ մտնելն ակտի ընդունման կամ պաշտոնական հրապարակման պահից: Պաշտոնական հրապարակման պահից ուժի մեջ մտավ նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը:

*Նորմատիվ ակտի ուժը կորցրած ճանաչելու պահը* որոշվում է՝

1) ժամանակավոր ակտի գործողության ժամկետի ավարտի տարով, ամսով և ամսաթվով, եթե այդ ժամկետը չի երկարաձգվում.

2) ակտի վերացման տարով, ամսով ու ամսաթվով.

3) իր մեջ նախորդ ակտի կարգավորման առարկան ներառող նոր ակտի ուժի մեջ մտնելու տարով, ամսով, ամսաթվով:

Ընդհանուր կանոնի համաձայն, նորմատիվ ակտերը (և դրանցում պարունակվող նորմերը) չունեն ո՛չ հետադարձ ուժ, այսինքն՝ դրանք չեն տարածվում մինչև իրենց ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, ո՛չ էլ հաջորդող ուժ, այսինքն՝ դրանց վերացման պահից լիովին կորցնում են իրենց ուժը: Սակայն այս ընդհանուր կանոնից թույլ են տրվում որոշ բացառություններ, և մի շարք դեպքերում օրենսդրական կարգով կարող է ճանաչվել այս կամ այն ակտի (և դրա համապատասխան նորմերի) հետադարձ կամ հաջորդող ուժը:

Այսպես, որպես կանոն, *հետադարձ ուժով* օժտված են քրեական և վարչական պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող նորմատիվ-իրավական ակտերը:

*Ակտի* (և նրա առանձին նորմերի) *հաջորդող գործողությունն* ակտի, այսպես կոչված, *վերապրելն է*, այսինքն՝ վերացված ակտի գործողության («կյանքի») երկարաձգելը դրա վերացման պահից հետո ծագող հարաբերությունների նկատմամբ:

Մովորաբար քաղաքացիական օրենսդրության մեջ թույլատրվող մման բացառությունները թելադրված են համապատասխան հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ կայունություն և դրանց մասնակիցների մոտ իրենց օրինական գործողությունների պլա-

նավորված նպատակներին հասնելու վստահություն ապահովելու անհրաժեշտությամբ:

*Նորմատիվ ակտերի գործողությունը տարածության մեջ* որոշվում է այն տարածքով, որի վրա տարածվում է տվյալ պետության նորմատիվ-իրավական ակտերի գործողությունը:

Այդ տարածքի կազմի մեջ են մտնում ցամաքը, ներառյալ՝ ընդերքը, մայրցամաքային շելֆը (մայրցամաքի՝ ջրով ծածկված մասը), պետության ներքին և տարածքային շրերը (12 ծովային մղոնի սահմաններում), ցամաքի ու տարածքի ջրային մասի վրայի օդային տարածությունը, դեսպանությունների, ուղևորատարների, ինչպես նաև այդ պետությունների տարածքից դուրս գտնվող բոլոր ծովային և օդային նավերի, տիեզերանավերի ու կայանների, ինչպես նաև տիեզերքում և բաց ծովում գտնվող տվյալ պետությանը պատկանող այլ օբյեկտների տարածքը:

Այլ պետություններում գտնվող պետության դեսպանությունների տարածքի վրա պետության նորմատիվ ակտերի օտարերկրյա գործողության կարգն ու կանոնները սահմանվում են միջազգային իրավունքով:

Միացյալ (ունիտար) և դաշնային (ֆեդերալ) պետություններում բարձրագույն ու կենտրոնական պետական մարմինների նորմատիվ-իրավական ակտերը գործում են պետության ամբողջ տարածքում, տարածքային պետական մարմինների ակտերը՝ համապատասխան տարածքներում, դաշնային սուբյեկտների ակտերը՝ համապատասխան սուբյեկտների տարածքներում, տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը՝ համապատասխան համայնքային կազմավորումների տարածքներում: Այդ ընդհանուր կանոնից կատարվող հնարավոր բացառությունները սահմանվում են օրենսդրական կարգով:

*Նորմատիվ ակտի գործողությունն ըստ կարգավորման ոլորտի* որոշվում է իրավական կարգավորման օբյեկտով, այսինքն՝ այն հասարակական հարաբերություններով, որոնց վրա տարածվում է տվյալ ակտի նորմերի իրավաբանական ուժը:

Տարբեր ակտերի նորմերը՝ դրանց կարգավորման օբյեկտների առանձնահատկության և գործողության ոլորտների հաշվառմամբ, պատկանում են իրավունքի որոշակի ճյուղի՝ դրան ներհատուկ իրավական կարգավորման առարկայի ու մեթոդի առանձնահատկություններով: Դա նշանակում է, որ իրավական կարգավորման յուրաքանչյուր ոլորտում գործում է այն հատուկ իրավակարգը (այն նորմերն ու համապատասխան ակտերը), որը սահմանված է երակետային իրավական կարգավոր-

ման գործընթացում՝ սովյալ ոլորտի հասարակական հարաբերությունների առանձնահատկության հաշվառմամբ:

*Նորմատիվ ակտերի գործողությունն ըստ անձանց շրջանակի որոշվում է իրավունքի այն բոլոր սուբյեկտների կազմով, որոնց հասցեագրված են սովյալ ակտի (դրա նորմերի) պահանջները:*

Ընդհանուր կանոնի համաձայն՝ նորմատիվ-իրավական ակտերի գործողությունը սարաժվում է համապատասխան ակտի գործողության տարածքում գտնվող բոլոր անձանց (ֆիզիկական և իրավաբանական անձանց, պաշտոնատար անձանց, քաղաքացիների, օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց) վրա:

Սակայն այդ ընդհանուր կանոնից կան մի շարք բացառություններ:

Այսպես, քաղաքական բնույթի համապատասխան իրավունքների և պարտականությունների (օրինակ՝ պետական իշխանության մարմիններ ընտրելու և այդ մարմիններում ընտրվելու իրավունքի, պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքի, քաղաքական կուսակցություններում անդամակցության իրավունքի, զինվորական ծառայության պարտականության և այլն) սուբյեկտներ կարող են լինել միայն սովյալ պետության քաղաքացիները: Օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք չեն մտնում նման նորմերի հասցեատերերի շրջանակի մեջ: Սակայն նրանք իրավական կարգավորման մյուս բոլոր ոլորտներում իրավունքների և պարտականությունների սուբյեկտներ են, ու նրանց վրա տարածվում է համապատասխան նորմերի (քաղաքացիական, քրեական, ձեռնարկատիրական և այլ իրավունքների նորմերի) գործողությունը:

Հասուկ խումբ են կազմում այն օտարերկրացիները (օտարերկրյա պետությունների և կառավարությունների ղեկավարները, օտարերկրյա դեսպանատների ու հյուպատոսարանների ղեկավար աշխատակիցները, օտարերկրյա քաղաքացիների որոշ այլ կատեգորիաներ), որոնք, միջազգային իրավունքի դրույթներին համապատասխան, օժտված են դիվանագիտական անձեռնմխելիությամբ ու դրա ուժով այլ պետությունների տարածքում ու օրենքներով ենթակա չեն քրեական և վարչական պատասխանատվության:

Որոշ նորմերի (և ակտերի) հասցեատերեր են *հատուկ սուբյեկտները*, այսինքն՝ ոչ թե բոլոր անձինք, այլ հատուկ հատկանիշներով բնութագրվող միայն որոշակի կատեգորիայի անձինք (օրինակ՝ քիմիական արդյունաբերության մեջ աշխատողները, աշխատանքի վետերանները, Հեռավոր Հյուսիսի բնակիչները, հարկման սուբյեկտները, պաշտոնատար անձինք, զինծառայության համար պիտանի գորակոչի տարիքի հասած անձինք և այլն):

### 3. Իրավունքի նորմերի իրագործումը

*Իրավունքի նորմերի իրագործումն իրավունքի սուբյեկտների վարքագծի համապատասխան ձևերի միջոցով դրանց պահանջների իրականացումն է:*

Իրավունքի սուբյեկտների վարքագծի այդ ձևերը պայմանավորված են իրավական պահանջների բնույթով:

*Իրավունքի պահանջներն իրենց բնույթով լինում են երկու տեսակ՝*

1) իրավունքի սուբյեկտների կողմից անհրավաչափ (հակաիրավական) գործողություններ կատարելու *արգելքներ*.

2) իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքներն ու պարտականություններն իրականացնելիս որոշակի իրավաչափ գործողություններ կատարելու *կարգադրություններ*: Դրան համապատասխան *իրավունքի իրագործման երկու հիմնական ձևերն են՝*

1) *արգելքների պահպանումը*.

2) *կարգադրությունների կատարումը*:

Վարքագծային տեսանկյունից *իրավական արգելքների* պահպանումը նշանակում է միայն ոչ իրավաչափ գործողությունների (իրավախախտ անգործության) կատարումից պասսիվ, ձեռնպահ մնալ և կապված չէ որևէ ակտիվ, ներառյալ՝ իրավաչափ, գործողություններ կատարելու հետ:

Եվ հակառակը՝ *իրավական կարգադրությունների կատարումն* իրավունքի բոլոր սուբյեկտներից պահանջում է իրենց իրավունքների ու պարտականությունների իրագործման համար կատարել համապատասխան ակտիվ իրավաչափ գործողություններ:

*Այդ կարգադրությունների՝ որպես իրավաիրագործման ընդհանուր կանոնների, հիմնական խնաստն այն է, որ իրավունքի երկկողմ (տրամադրող-պարտավորեցնող) բնույթի ուժով իրավաիրագործման սուբյեկտի կողմից իր իրավունքի օգտագործումն ամբողջությամբ և մշտապես պետք է համատեղվի նրա կողմից որոշակի պարտականությունների կատարմամբ՝ իրավաիրագործման սուբյեկտի իրավունքին միշտ էլ համապատասխանում (թղթակցում) է նրա պատշաճ պարտականությունը, իսկ իրավաիրագործման մի շարք սուբյեկտների իրավունքներին ու պարտականություններին՝ իրավաիրագործման այլ սուբյեկտների պարտականությունները և իրավունքները:*

Իրավաիրագործման ոլորտում, ինչպես նաև ամբողջությամբ իրավունքում, չկան միակողմանի իրավունքներ ու միակողմանի պարտականություններ, չկան սոսկ իրավունքներ ունեցող սուբյեկտներ և սոսկ

պարտականություններ ունեցող սուբյեկտներ: Դա նշանակում է, որ իրավունքի նորմերի իրագործման բուն գործընթացը պետք է կրի իրավական բնույթ, իսկ իրավաիրագործման սուբյեկտների գործողություններն ու վճիխհարաբերությունները պետք է իրականացվեն նրանց նորմատիվորեն կապող (նրանց իրավունքները և պարտականությունները համաձայնեցնող) *իրավական հարաբերությունների ձևով:*

*Իրավունքի բոլոր սուբյեկտների իրավաիրագործող գործողությունների բոլոր ատեսակների ու ակտերի իրավաչափության ընդհանուր հիմքը, հատկանիշն ու չափանիշն իրավական նորմի դիսպոզիցիայում ամրագրված նրանց համապատասխան իրավունքների ու պարտականությունների իրագործման պայմանավորվածությունը և հիմնավորվածությունն է՝ սվյալ նորմի հիպոթեզում նախատեսված բոլոր կոնկրետ պայմանների (պատշաճ իրավաբանական փաստերի) իրական առկայությամբ: Իրավաիրագործումն առանց համապատասխան իրավաիրագործող հիմնավորվածության և պայմանի՝ իրավախախտում է:*

Իրավաիրագործող գործողությունների թվին են պատկանում պետական մարմինների և պաշտոնատար անձանց՝ իրենց իրավունքների ու պարտականությունների իրականացմանն ուղղված *իրավակիրառ գործողությունները: Իրավակիրառ գործողություններն* իրենց բոլոր առանձնահատկություններով հանդերձ (գործողության սուբյեկտի կարգավիճակի, նրա իրավասության բովանդակության, նրա կողմից ընդունվող իրավակիրառ ակտերի պաշտոնական-իշխանական բնույթ և այլն), *ինչպես նաև իրավունքի մյուս սուբյեկտների մնացած բոլոր իրավաիրագործող գործողությունները պետք է իրականացվեն որպես բոլոր իրավաիրագործող սուբյեկտների համար ընդհանուր կանոններով ու միասնական նորմատիվ-կարգավորիչ մոդելով իրավունքի համապատասխան կարգադրությունների կատարում:*

Իրավակիրառ գործողությունների և ամբողջությամբ իրավակիրառ գործունեության ենթարկվելն այդ ընդհանուր իրավական պահանջներին ու իրավունքի նորմերի իրագործման միասնական կանոններին *պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության մեջ իրավական օրինականության ապահովման անհրաժեշտ պայման է ու էական իրավաբանական երաշխիք՝ ընդդեմ նրանց կամայականության:*

Իրավակիրառ գործողությունների իրականացումն իրավունքի կարգադրություններին համապատասխան և պատշաճ իրավական ձևով, միաժամանակ, մյուս բոլոր սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների իրական և հաջող գործնական իրագործման, ամբողջ իրավունքի պատշաճ գործողության էական պայմանն է:

#### 4. Իրավունքի նորմերի կիրառումը

*Իրավունքի նորմերի կիրառումը դրանց իրագործումն է իրավունքով նախատեսված դեպքերում և դրա կողմից սահմանված պետական մարմնի (կամ պաշտոնատար անձի) իրավաիրագործող գործողության ձևով, որն իրականացվում է նրա իրավասության շրջանակներում՝ կոնկրետ իրավական գործեր լուծելիս ու համապատասխան իրավական ակտեր ընդունելիս:*

Բոլոր պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրենց իրավասության շրջանակներում զբաղվում են իրավակիրառ գործունեությամբ: Եվ բոլոր պետական գործառույթներն ամբողջությամբ (սկսած՝ իրավասահմանումից մինչև իրավակիրառումը) իրականացվում են (և պետք է իրականացվեն) պետական մարմինների ու պաշտոնատար անձանց իրավակիրառ գործունեության տեսքով՝ նրանց իրավասության իրագործման ձևով: Նման իրավակիրառ (իրավաիրագործող) գործողությունների համակցության մեջ է իրականում դրսևորվում պետության իրավական բնույթը: Միաժամանակ, իրականության մեջ իրավակիրառ գործողությունների համակցությունն է ակնհայտորեն ցուցադրում պետության գործունեության իրական ձևն ու իրավական բնույթը:

Իրավակիրառ գործունեության մեջ գործող իրավունքի իրական վիճակը և գոյություն ունեցող պետության իրական վիճակն արտահայտված են իրենց անխզելի միասնության մեջ: Ուստի, իրավակիրառ գործունեության որակը ձևավորված իրավական և պետական իրականության գնահատման ամենից հուսալի ու արժանահավատ չափանիշն է:

Իրավակիրառ գործունեության մեջ պետական մարմնի (կամ պաշտոնատար անձի) իր իրավասության իրագործմանն ուղղված գործողությունները պայմանավորված ու թելադրված են կոնկրետ իրավական գործը լուծելու նրա պարտականություններով և իրավունքներով: Այսպիսի իրավական գործի բովանդակություն կարող է լինել ցանկացած իրավաբանորեն նշանակալի հարց, որի լուծումը, գործող իրավունքի համաձայն, պահանջում է իրավասու պետական մարմնի մասնակցությունը, նրա գործողություններն ու որոշումները:

Դեպքերի մի մասում, երբ խոսքը *իրավախախտումների* մասին է, իրավակիրառ գործունեությունն ուղղված է հակաիրավական գործողությունների կանխմանը, կատարված իրավախախտումների պատշաճ բնութայանը, իրավախախտողին պատասխանատվության ենթարկելուն և իրավասու պետական մարմնի կողմից համապատասխան որոշում ընդունելուն (օրինակ՝ նկատողության մասին տնօրենի հրամանի, վնասի

հատուցման մասին դատարանի վճռի, քրեական գործով դատավճռի տեսքով և այլն):

Մյուս դեպքերում, երբ խոսքն *իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իրագործմանն ուղղված իրավաչափ գործողությունների մասին է*, իրավակիրառ գործունեության խնդիրը և նպատակն իրավունքի սուբյեկտների այդ իրավաիրագործող գործողությունների պատշաճ պետական-իրավական ապահովումը և երաշխավորումն է իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի համապատասխան սեփական իրավաիրագործող (իրավակիրառ) գործողությունների միջոցով, օրինակ՝ պահանջվող պաշտոնական թույլտվություն, անհրաժեշտ տեղեկանք կամ վկայական տալու, զրանցում կատարելու, իրավաչափ հայցը դատարանում բավարարելու տեսքով և այլն:

Այսպիսով, պետական մարմինների ու պաշտոնատար անձանց իրավակիրառ գործունեությունը, իրենից ներկայացնելով նրանց իրավասությունների իրագործում, մի կողմից՝ իրավունքի այլ սուբյեկտների իրավաիրականացնող գործողությունների և իրավախախտումների նկատմամբ *պետական-իրավական վերահսկողության ու իրավաբանական զնահատման ձև է*, իսկ մյուս կողմից՝ հենց ինքն էլ համապատասխան իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց կողմից *նման վերահսկողության ու զնահատման օբյեկտ է*:

Իրավակիրառ գործունեությունը, միաժամանակ, նաև կոնկրետ իրավական գործի (հարցի) լուծման համար պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից իրավունքի որոշակի նորմի կիրառում է և, դրա հետ միասին, այդ մարմնի (կամ անձի) կողմից իրավունքի կիրառվող նորմի դիսպոզիցիայով նախատեսված իր համապատասխան պարտականության (և իրավունքի) իրագործում: Ընդ որում, անհրաժեշտ է, որ տվյալ կոնկրետ գործը (հարցը) ներառված լինի այդ նորմի հիպոթեզով նախատեսված դեպքերի շրջանակում: Նորմատիվ կարգավորման տեսանկյունից դա նշանակում է, որ պետական մարմինը (կամ պաշտոնատար անձը) իրավունք ունի ու պարտավոր է իրագործել նրան լիազորող նորմի դիսպոզիցիան (այսինքն՝ իրականում օգտագործել տվյալ մարմնի կամ անձի իրավասության ընդհանուր համալիրի այս կամ այն իշխանական իրավագործությունը) միայն այն դեպքում և այնքանով, որ դեպքում ու որքանով այդ նորմը կիրառվում է տվյալ նորմի հիպոթեզով նախատեսված իրավական գործի (հարցի) նկատմամբ:

Նորմերի կիրառման գործընթացում առանձնացվում է *երեք փուլ՝*

- 1) գործի փաստացի հանգամանքների պարզումը.
- 2) այդ փաստացի հանգամանքների իրավաբանական որակումը.



### 3) գործով որոշում ընդունելը:

Իրավակիրառ մարմնի կամ անձի բոլոր գործողություններն իրավակիրառման բոլոր փուլերում կիրառվելիք իրավունքի նորմերով սահմանված իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ են՝ գործի համապատասխան փաստացի հանգամանքների իրավաբանական նշանակությունը պարզելու և այդ գործով իրավաբանական որոշում ընդունելու համար: Ուստի, իրավունքի նորմի կիրառման բոլոր փուլերում իրավական կիրառման և լուծվող իրավական գործի փաստացի ու իրավաբանական հարադրությունները սերտ միահյուսված և համատեղված են: *Այստեղ ամենուր իրավաբանականը պետք է հիմնավորվի փաստացիով, իսկ փաստացին պետք է սահմանվի իր իրավաբանական նշանակությամբ:*

Իրավակիրառման գործընթացի *առաջին փուլի* հիմնական խնդիրը գործի փաստացի հանգամանքների բացահայտումը, հետազոտումն ու պարզումն է՝ համապատասխան հանգամանքներում կիրառման ենթակա որոշակի նորմի հիպոթեզով նախատեսված իրավակիրառ դեպքերին (պայմաններին, հիմքերին) դրանց համապատասխանության տեսանկյունից:

Գործի փաստացի հանգամանքների համակողմանի, լիակատար ու օբյեկտիվ իրավաբանական բացահայտումը, հետազոտումը և սահմանումը պետք է իրականացվի այդ հանգամանքների մասին օբյեկտիվ ճշմարտության հասնելու ընդհանուր պահանջներին ու, միաժամանակ, դրանց իրավաբանական հետազոտության հատուկ նպատակներին, խնդիրներին, ձևերին և միջոցներին խիստ համապատասխան, որպեսզի, վերջին հաշվով, ձեռք բերվի հետազոտվող փաստի իրավական հատկությունների, բնութագրերի ու նշանակության մասին ոչ թե վերացական, այլ հենց կոնկրետ *իրավաբանական նշանակություն ունեցող օբյեկտիվ ճշմարտությունը*: Գործի փաստացի հանգամանքների այդ առանձնահատուկ իրավաբանական հետազոտումը պետք է կատարվի սահմանված իրավակարգի հիման վրա և շրջանակներում, նախատեսված դատավարական ձևերով, պասշաճ իրավաբանական ապացուցողական միջոցների օգնությամբ (վկաների ցուցմունքներ, իրեղեն ապացույցներ, փաստաթղթեր, փորձագիտության տվյալներ, գործի մասնակիցների անձնական խոստովանություններ և այլն):

Հավաքված ու վերլուծված ապացույցները պետք է ունենան արժանահավատ բնույթ և իրենց համակցության մեջ՝ գործի փաստացի կազմի տեսքով, իրենց իրավաբանական նշանակություն ունեցող բնութագրերով պետք է լիովին համապատասխանեն կիրառվող իրավական նորմի հիպոթեզով նախատեսված պայմաններին:

Գործի փաստացի հանգամանքների (գործի փաստացի կազմի, ներառյալ՝ դրա բոլոր մասնակիցների կոնկրետ գործողությունների) իրավաբանական որակավորումն իրավակիրառ գործընթացի *երկրորդ փուլում*<sup>1</sup> իրավակիրառման առաջին փուլում սկսված դրանց իրավաբանական (իրավաբանական որակմամբ հիմնավորված, կոնկրետացված և կողմնորոշված) հետազոտությունների շարունակությունն ու ավարտն է:

Չէ՛ որ առաջին փուլում նույնպես նախապես հավաքվում և ուսումնասիրվում էին ոչ միայն փաստեր՝ որպես այդպիսիք, այլ հենց որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող, այսինքն՝ իրավաբանորեն բնութագրվող, գնահատվող ու որակվող փաստերը:

Ցանկացած փաստի *իրավաբանական որակումը* սվյալ փաստի (անձի գործողության, հարաբերության, իրադարձության և այլն) կոնկրետ իրավաբանական նշանակությունը սահմանող իրավունքի որոշակի նորմի տեսանկյունից դրա գնահատումն է: Ուստի, իրավակիրառումն ամբողջությամբ կրում է իրավաբանական-որակող բնույթ, իսկ գործի փաստացի հանգամանքների իրավաբանական որակավորման տարբեր պահերն ու հայեցակետերը ներհատուկ են իրավակիրառ գործունեության բոլոր ձևերին և փուլերին:

Քննվող իրավական գործի (հարցի) պարզված փաստացի կազմի վերջնական իրավաբանական որակումը հնարավորություն է ընձեռում անցնել *իրավակիրառ գործընթացի երրորդ փուլին*<sup>2</sup>՝ սվյալ գործով որոշման ընդունմանը:

Իրավունքի բացերի առկայության մի շարք դեպքերում համապատասխան հարաբերությունների (գործի փաստացի հանգամանքների) իրավաբանական որակումն ու գործի լուծումն ամբողջությամբ իրականացվում է օրենքի համանմանության կամ իրավունքի համանմանության պատշաճ օգտագործմամբ:

Գործով կայացված որոշումը քննվող հարաբերության սուբյեկտների կոնկրետ իրավունքները և պարտականությունները սահմանող *իրավունքի կիրառման ակտ* է:

Իրավակիրառար ակտն ունի անհատական (որոշակի անձնական) բնույթ և ենթակա է պարտադիր կատարման, անհրաժեշտության դեպքում՝ պետական հարկադրանքի միջոցների օգնությամբ:

Իրավակիրառար ակտը կարող է արտահայտվել գրավոր (ինքնուրույն գրավոր փաստաթղթի կամ այլ փաստաթղթի վրա արված գրավոր մակագրության տեսքով), բանավոր (տեղում տուգանելը) ձևերով, պաշտոնական նշանների միջոցով (փողոցային երթևեկությունը կարգավորողի շարժումները և այլն):

Իրավակիրառար ակտերի դասակարգումը տարբեր խմբերի կարող է իրականացվել տարբեր հիմքերով՝ ըստ համապատասխան ակտերն ընդունող սուբյեկտների, ըստ այդ ակտերի կարգավորիչ-իրավական բնույթի և այլն:

Տարբեր պետական մարմինների ու պաշտոնատար անձանց իրավակիրառար ակտերն ունեն պաշտոնական (օրենսդրորեն որոշված) տիպային անվանումներ, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության նախագահի կամ Ռուսաստանի Դաշնության կառավարության կարգադրությունը, նախարարի կամ ձեռնարկության, հիմնարկի ղեկավարի հրամանը, նախաքննության հարցերով քննիչի կամ դատախազի կայացրած որոշումը, դատախազի գրավոր ցուցումը՝ հետաքննության և նախաքննության մարմիններին՝ նրանց հարուցած ու քննող գործերի կապակցությամբ, դատարանի որոշումը՝ դատաքննության հարցերով, դատարանի վճիռը՝ քաղաքացիական գործերով, դատավճիռը՝ քրեական գործերով և այլն:

## 5. Բացերն իրավունքում:

### Օրենքի համանմանությունը և իրավունքի համանմանությունը

Իրավակիրառար գործընթացում կարող է պարզվել, որ *գործող պողոտայի իրավունքում բացակայում է* քննվող գործի հանգամանքներն ուղղակիորեն կարգավորող *կոնկրետ իրավական նորմը*: Նման իրավիճակը կարող է նշանակել՝

1) կամ *օրենսդրի* (և ամբողջությամբ իրավակիրառ գործունեության բոլոր սուբյեկտների) այդ հանգամանքները կարգավորելու *ցանկության գիտակցված բացակայություն*.

2) կամ էլ *գործող պողոտայի իրավունքում բացերի առկայություն*:

Առաջին դեպքում (եթե օրենսդիրը հրաժարվում է սովյալ հանգամանքների իրավական կարգավորումից) համապատասխան փաստացի հանգամանքները չունեն իրավաբանական նշանակություն: Նման հանգամանքներով չպետք է հարուցել իրավաբանական (իրավակիրառար) գործ, իսկ արդեն հարուցված գործով անհրաժեշտ է համապատասխան որոշում ընդունել դրա իրավաբանական նշանակությունից զուրկ լինելու («իրավաբանական առոչնչության») մասին:

*Իրավունքում բացեր* ասելով՝ նկատի է առնվում իրավունքի այնպիսի նորմի բացակայությունը, որը, կախված գործող իրավունքի իմաստից և

դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթից, անհրաժեշտ է իրավական կարգավորման կազմավորված ոլորտում գտնվող տվյալ կոնկրետ փաստացի հանգամանքների (փաստացի հարաբերությունների) կարգավորման համար:

Իրավունքում բացերը կարող են լինել կամ զարգացող հասարակական հարաբերություններից օրենսդրության անխուսափելի հետ մնալու հետևանք, կամ էլ՝ հենց օրենսդրի սխալների ու բացթողումների, նրա օրինաստեղծ մշակույթի ցածր մակարդակի և այլնի արդյունք:

Իրավունքում հայտնաբերված բացերը կարող են լրացվել միայն օրենսդրի կամ համապատասխան իրավասու իրավասահման մարմնի կողմից:

Սակայն իրավակիրառար մարմինը կամ պաշտոնատար անձն իրավունք չունի իրավունքում եղած բացերի կապակցությամբ հրաժարվել համապատասխան իրավական գործը (հարցը) քննելուց և լուծելուց: Նման հրաժարումը կնշանակեր «հրաժարվել արդարադատությունից», ինչը հակասում է իրավունքի՝ որպես իրականում գործող կարգավորչի, իմաստին:

Իրավակիրառար գործընթացում գործող իրավունքի բացերի հաղթահարման համար օգտագործվում են այնպիսի հատուկ *իրավակիրառ հնարքներ*, ինչպիսիք են՝ օրենքի համանմանությունը և իրավունքի համանմանությունը:

*Օրենքի համանմանությունը* չկարգավորված հարաբերությունների նկատմամբ նմանօրինակ հարաբերությունները կարգավորող օրենքի (գործող պոզիտիվ իրավունքի) նորմի կիրառումն է:

Քաղաքացիական և ձեռնարկատիրական հարաբերությունների, մարդու անօտարելի իրավունքների ու ազատությունների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանության ոլորտում օրենքի համանմանության կիրառումը մախատեսված է գործող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքով (6 հոդվածի 1-ին կետ) և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (10 հոդված): Համաձայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի (6 հոդվածի 1-ին կետ), եթե նման հարաբերությունները «ուղղակի կարգավորված չեն օրենսդրությամբ կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում է նման հարաբերություններ

կարգավորող քաղաքացիական օրենսդրությունը (օրենքի համանմանություն)»:

Իրավակիրառար գործունեության մեջ օրենքի համանմանությունն օգտագործելիս համապատասխան հարաբերությունների իրավաբանական որակման և ամբողջությամբ գործի լուծման համար նմանօրինակ հարաբերություններ կարգավորող պիտանի նորմը, առաջին հերթին, պետք է որոնել օրենսդրության այն ճյուղում, որի կարգավորման ոլորտին է վերաբերում դիտարկվող հարաբերությունը (գործի հանգամանքները), իսկ տվյալ ճյուղում նման նորմի բացակայության դեպքում դա անհրաժեշտ է որոնել օրենսդրությանը մերձ ճյուղերում և ամբողջությամբ օրենսդրության (գործող ամբողջ պոզիտիվ իրավունքի) մեջ:

Նմանօրինակ հարաբերությունները կարգավորող օրենսդրության ուղղման նորմի բացակայության, այսինքն՝ օրենքի համանմանության օգտագործման անհնարինության դեպքում, կիրառվում է իրավունքի համանմանությունը:

*Իրավունքի համանմանությունն* օրենսդրությամբ (գործող պոզիտիվ իրավունքով) չկարգավորված հարաբերության նկատմամբ իրավունքի ընդհանուր հիմունքների և իմաստի կիրառումն է:

Ընդ որում, իրավունքի ընդհանուր հիմունքներ ու իմաստ ասելով՝ նկատի են առնում *իրավունքի և իրավական կարգավորման* ընդհանուր իրավական ու ճյուղային *սկզբունքները*: Իրավունքի այդ սկզբունքները (իրավունքի ընդհանուր հիմունքները և իմաստը) մշակվում ու հիմնավորվում են իրավաբանական սեսության, պոզիտիվ իրավունքի վարդապետության մեջ: Իրավունքի ընդհանուր հիմունքների, իմաստի և սկզբունքների մասին մի շարք վարդապետական դրույթներ ամրագրվել են բուն օրենսդրության մեջ (նորմատիվ-իրավական ակտերի համապատասխան ընդհանուր մասերում և բաժիններում): Իրավունքի համանմանության թույլատրումը, ըստ էության, նշանակում է իրավաբանական վարդապետության՝ որպես գործող իրավունքի աղբյուրի, ճանաչում (իրավունքի համանմանության օգտագործման ոլորտում):

Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տեսության և պոզիտիվ իրավունքի վարդապետության համաձայն՝ իրավունքի ու իրավական կարգավորման նման հիմնադիր և համընդհանուր սկզբունք է *ձևական հավասարության սկզբունքը*, որի կոնկրետացումն են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մնացած բոլոր նորմատիվ-իրավական ձևերն ու միջոցները:

Քաղաքացիական օրենսդրության գործողության ոլորտում իրավունքի համանմանության օգտագործումն իր ամրագրումն է գտել Ռուսաստանի Դաշնության գործող քաղաքացիական օրենսգրքում (6 հոդվածի 2-րդ կետ), որը նախատեսում է «օրենքի համանմանության օգտագործման անհնարինության դեպքում կողմերի իրավունքներն ու պարտականությունները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության ընդհանուր հիմունքներից և խմաստից (իրավունքի համանմանության) ու բարեխղճության, խելամտության և արդարության պահանջներից»:

Իրավակիրառար գործընթացում օրենքի համանմանության ու իրավունքի համանմանության օգտագործումն ունի մեկ սկզբունքային կարևոր բացառություն՝ *օրենքի համանմանությունը և իրավունքի համանմանությունը չի կարելի օգտագործել քրեաիրավական պատժի ու վարչական սուղանքի հարաբերությունների ոլորտում*:

Օրենսդրության մեջ քննվող հանգամանքները՝ որպես քրեական հանցագործություն կամ վարչական զանցանք բնութագրող օրենսդրության նորմի բացակայությունը, համաձայն իրավունքի հիմնադիր պահանջներից մեկի և, միաժամանակ, մարդասիրական կանխավարկածի («Չկա հանցագործություն, չկա պատիժ, եթե դա սահմանված չէ օրենքում») իրավակիրառողի համար նշանակում է ոչ թե պոզիտիվ իրավունքում տեղ գտած բաց, այլ՝ օրենսդրի հրաժարումն այդ հանգամանքների իրավական կարգավորումից, դրանց «իրավաբանական առոչնչությունը»:

Ինքը՝ օրենսդիրը, հայտնաբերելով նորմի այսպիսի բացակայությունը, կարող է դա դիտարկել կամ որպես համապատասխան հարաբերությունների կարգավորումից իրավաչափ հրաժարում և ամեն ինչ թողնել նախկինի նման, կամ այդպիսի նորմի բացակայությունը զնահատել որպես բաց ու դա լրացնել համապատասխան նորմի ընդունմամբ: Սակայն, իրավակիրառողն այս դեպքում պարտավոր է ղեկավարվել արդեն իսկ ընդունված նորմերով և իրավունք չունի օգտագործել օրենքի համանմանությունը կամ իրավունքի համանմանությունը:

## **Գլուխ 8. Իրավունքի նորմերի մեկնաբանումը**

### **1. Իրավունքի նորմերի մեկնաբանման հասկացությունը: Մեկնաբանման օբյեկտը, մեթոդը և առարկան**

*Իրավունքի նորմի մեկնաբանումը դրա գործողության կոնկրետ տվյալ պայմաններում իրագործման ենթակա իրական բովանդակության պարզաբանումը և բացատրումն է:*

Իրագործում ասելով՝ նկատի ունեն դրա բոլոր տեսակները, ներառյալ՝ նաև իրավական նորմերի կիրառումը:

Իրավունքի մեկնաբանումը՝ որպես հասուկ իրավաբանական կատեգորիա, ունի իր հատուկ իմաստն ու հատուկ դեր է խաղում իրավունքի գործողության գործընթացի առանձնահատկություններն արտահայտող և բնութագրող կատեգորիաների համակարգում:

Իրավունքի նորմի կարգավորիչ-իրավական բովանդակությունը, վերացական-ընդհանուր տեսքով դրա ստատիկ վիճակում արտահայտված է պոզիտիվ իրավունքի համապատասխան աղբյուրի բուն տեսքատում: Իրավունքի դինամիկան, դրա իրագործման գործընթացը, ներառյալ՝ նաև իրավակիրառումը, անհրաժեշտաբար կրում է կոնկրետացնող բնույթ՝ իրավունքի ստատիկ նորմի *վերացական-ընդհանուր* բովանդակությունը դրա իրագործման (և կիրառման) գործընթացում *կոնկրետացվում է կոնկրետ ժամանակում, կոնկրետ տեղում*, անհատապես կոնկրետ անձանց կոնկրետ հանգամանքներով ու վոխհարաբերությունների կոնկրետ հիմքով, համապատասխան *կոնկրետ իրավիճակի նկատմամբ կիրառելիս*:

*Իրավունքի մեկնաբանումն* իրավունքի ստատիկ նորմի վերացական-ընդհանուր բովանդակությունը դրա իրագործման դինամիկ գործընթացում կոնկրետացվելու կարգավորիչ-իրավական իմաստի՝ իր համար պատշաճ պարզաբանման և բացատրման մեջ է:

Ընդ որում, *պարզաբանում* ասելով՝ նկատի են առնում մեկնաբանվող նորմի որոնվող բովանդակության բացահայտման, իմաստավորման և հիմնավորման բուն իրավաբանական-ճանաչողական ընթացակարգը: Ցանկացած մեկնաբանում իր մեջ ներառում է մեկնաբանողի կողմից (առաջին հերթին, հենց իր համար) նորմի իսկական բովանդակության բացահայտման այդպիսի ընթացակարգ:

*Բացատրում* ասելով՝ նկատի են առնում մեկնաբանվող իրավական նորմի բովանդակության համապատասխան (պաշտոնական կամ ոչ պաշտոնական) պարզաբանման արդյունքներն ընդհանուր օգտագործման համար արտաքնապես հրապարակայնորեն արտահայտելու գանազան հատուկ ձևերը:

Պարզաբանման և բացատրման միջև այդպիսի տարբերության պատճառով *մեկնաբանում-պարզաբանումը* չպետք է շփոթել *մեկնաբանում-բացատրման* հետ:

Իրավունքի նորմի պատշաճ մեկնաբանման (մեկնաբանման-պարզաբանման) համար անհրաժեշտ է որոշել մեկնաբանման օբյեկտը, մեթոդն ու առարկան:

Իրավունքի նորմի *մեկնաբանման օբյեկտը* տվյալ կարգավորման դեպքին (սովյալ կոնկրետ իրավիճակին) համապատասխան նորմատիվ-իրավական (իրավասահման) ակտի տեքստն է, որում արտահայտված է մեկնաբանվող նորմը:

Իրավունքի նորմի *մեկնաբանման մեթոդը* նորմի աղբյուրի տեքստի և տվյալ կոնկրետ իրավիճակի (դեպքի) համաձայնեցված իրավաբանական-տրամաբանական մեկնաբանումն է, դրանց փոխադարձ համատեղման, համակողմնորոշման ու միասնության մեջ, որն ուղղված է սկզբնաղբյուրի տեքստում որոնելի նորմի համապատասխան կառուցվածքային բաղադրատարրերի և ընդհանուր կառուցվածքի բացահայտմանն ու որոնմանը՝ տվյալ կոնկրետ իրավիճակի (դեպքի) համար դրանց արդիական կարգավորիչ-իրավական նշանակությամբ:

Իրավունքի նորմի որոնելի *մեկնաբանման առարկան*՝ իրավունքի նորմի որոնելի արդիական կարգավորիչ-իրավական նշանակությունն է, որը ենթակա է իրականացման տվյալ կոնկրետ իրավիճակում (դեպքում):

Իրավաբանական-ճանաչողական տեսանկյունից *մեկնաբանման օբյեկտի, մեթոդի և առարկայի փոխհարաբերություններն ու միմյանց հետ կապը*՝ տվյալ կոնկրետ իրավիճակին (սովյալ կարգավորման դեպքին) համապատասխանող նորմատիվ աղբյուրի (*օբյեկտի*) իրավաբանական-տրամաբանական բացատրությունը (*մեթոդը*) բացահայտում, ձևակերպում, հիմնավորում և որոշում է տվյալ կոնկրետ իրավիճակում իրագործման ենթակա իրավական նորմի որոնելի արդիական կարգավորիչ-իրավական նշանակությունը (*առարկան*):

Մեկնաբանման օբյեկտի իմաստավորումը մեկնաբանման մեթոդի օգնությամբ սալիս է մեկնաբանման առարկան. *առարկան՝ մեթոդապես իմաստավորված օբյեկտն է:*

Այսպիսի իմաստավորման մեջ է մեկնաբանվող նորմի իրական բովանդակության, այսինքն՝ տվյալ կարգավորիչ դեպքի (կոնկրետ իրավիճակի) համար դրա արդիական կարգավորիչ-իրավական նշանակության բացասման ճանաչողական բովանդակությունը (իմաստը): Իրագործվող նորմի այդ կարգավիճակային կոնկրետացված *արդիական կարգավորիչ-իրավական նշանակության* բացահայտումը և հիմնավորումն իր մեկնաբանման-պարզաբանման ընթացքում, հենց իրավունքի նորմի իրական բովանդակության մեկնաբանման այն որոնելին է, որը պետք է իրագործվի սովյալ կոնկրետ իրավիճակում (դեպքում):



## 2. Իրավունքի նորմերի մեկնաբանման եղանակները (հնարքները)

Իրավունքի նորմի բովանդակության պարզաբանման գործընթացում օգտագործվում են *իրավունքի մեկնաբանման մի շարք եղանակներ (հնարքներ)*: Դրանցից են՝ իրավաբանական-աղբյուրագիտական, քերականական, տրամաբանական, համակարգային, պատմական (պատմական-քաղաքական), իրավաբանական-տերմինաբանական (հատուկ-իրավաբանական), գործառնական, նպատակային մեկնաբանումները:

*Իրավաբանական-աղբյուրագիտական մեկնաբանումն* այն պաշտոնապես հրապարակված նորմատիվ աղբյուրի տեքստի բնօրինակի որոշման, բացահայտման և ուսումնասիրման հնարքներն են, որի կարգավորիչ ներգործության ոլորտում գտնվում է տվյալ կարգավորվող իրավիճակը (դեպքը): Նման մեկնաբանման արդյունքում պետք է պարզվի մեկնաբանվող նորմատիվ ակտի տեքստի նույնությունը դրա վերջին պաշտոնական խմբագրության (հրապարակման) բնագրի տեքստի հետ:

*Քերականական մեկնաբանումը* նորմատիվ աղբյուրի տեքստը կազմելու քերականական (ձևաբանական) ձևերի և միջոցների առանձնահատկությունների, դրա լեզվական, ոճական, կառուցվածքային բնութագրերի հաշվառման ու օգտագործման եղանակ է, դրա դրույթների նորմատիվ-իրավական բացատրության, տեքստի այն մասերի (դրվագների) բացահայտման և որոշման գործընթացում, որոնցում արտահայտված է նորմի առանձին բաղադրատարրերի ու ամբողջությամբ նորմի իրավական բովանդակությունը: Տեքստի առանձնահատկությունների այսպիսի իրավաբանական-քերականական իմաստավորումը կարևոր է նաև այն առումով, որ իրավական տեքստի լեզուն, միաժամանակ, այն պաշտոնական-իրավական լեզուն է, որով իրականացվում է նաև կարգավորվող իրավիճակի համապատասխան նորմատիվ-իրավական իմաստավորումը՝ մեկնաբանվող նորմի հետ դրա հարաբերակցությամբ:

*Տրամաբանական մեկնաբանումն* ակտի տեքստի (տեքստի մասերի)՝ որպես միասնական ներքնապես համաձայնեցված ու անհակասական կարգավորիչ համակարգի, մեկնաբանվող իրավունքի նորմի տրամաբանորեն փոխկապակցված կառուցվածքային բաղադրատարրերի իրավաբանական-տրամաբանական բացատրության գործընթացում ձևական արամաբանության օրենքների և կանոնների օգտագործման եղա-

նակներն ու ձևերն են: Չևական տրամաբանության պահանջները պահպանվում են նաև կարգավորման ենթակա իրավիճակի իրավաբանական-տրամաբանական իմաստավորման, վերացական նորմի և տվյալ կոնկրետ դեպքի միջև որոնելի համապատասխանության բացահայտման ու որոշման գործընթացում:

Իրավաբանական տրամաբանությունն իր մեջ ամբողջությամբ ներառում է ձևական տրամաբանության բոլոր պահանջները՝ դրանց իրավաբանորեն կոնկրետացված նշանակությամբ և արտահայտությամբ:

*Համակարգային մեկնաբանումն* իրավունքի մեկնաբանվող նորմի՝ որպես բաղադրատարրերի համակարգի, իրավաբանական-տրամաբանական իմաստավորմամբ, իրավունքում՝ որպես նորմերի համակարգ, դրա տեղի ու դերի որոշմամբ, ինչպես տվյալ նորմի կառուցվածքային բաղադրատարրերի, այնպես էլ միասեռ հարաբերություններ կարգավորող այլ նորմերի, որին վերաբերում է կարգավորիչ դեպքը, դրանց միջև համակարգային կապերի կարգավորիչ իմաստի բացահայտման հնարքներն են:

*Պատմական (պատմական-քաղաքական) մեկնաբանումը* մեկնաբանվող նորմի կոնկրետ պատմական պայմանավորվածության բացահայտման, դրա բովանդակության վրա ազդող սոցիալական, քաղաքական և այլ գործոնների դերի պարզաբանման, տվյալ նորմի ընդունման ժամանակի օրենսդրի կամքի (այսպես կոչված՝ «օրենսդրի պատմական կամքի») և տվյալ կոնկրետ կարգավորիչ իրավիճակում նորմի իրականացման ժամանակի օրենսդրի կամքի համեմատական իրավական վերլուծության իրականացման հնարքներն են:

*Իրավաբանական-տերմինաբանական (հատուկ-իրավաբանական) մեկնաբանումը* մեկնաբանվող նորմատիվ ակտի տեքստում օգտագործված հատուկ իրավաբանական հասկացությունների, տերմինների, կատեգորիաների, բնորոշումների, կառույցների և այլ իրավաբանական-տեխնիկական միջոցների ու դրանց կարգավորիչ իրավական նշանակության իմաստավորման և հաշվառման հնարքներն են:

Գրականության մեջ *գործառնական մեկնաբանում* ասելով՝ նկատի են ունենում նորմը պարզաբանելու գործընթացում այն կոնկրետ պայմանների, ժամանակի և տեղի առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտությունը, որոնցում իրականացվում է իրավունքի տվյալ նորմը:

Գրականության մեջ *նպատակային մեկնաբանում* ասելով՝ նկատի են ունենում նորմի ընդունման նպատակների բացահայտումը: Մի շարք

դեպքերում օրենսդիրն ակտի տեքստում (դրա ներածությունում կամ ընդհանուր մասում) նշում է ակտի ընդունման նպատակները (կամ խնդիրները): Այլ դեպքերում ակտի ընդունման նպատակն ի հայտ է գալիս դրա ընդհանուր դրույթների համապատասխան իմաստավորման, ակտի նախապատրաստման ու ընդունման մասին նյութերի հետազոտման, սովյալ ակտի պատմական մեկնաբանման եզրահանգումների օգտագործման միջոցով և այլն:

Նորմատիվ ակտի ընդունման նպատակի հաշվառումը մի շարք դեպքերում մեկնաբանվող նորմի իրական բովանդակության պարզաբանման միանգամայն կարևոր հարադրությունն է:

Սակայն ճիշտ չէր լինի իրավունքի նպատակային մեկնաբանումը հանգեցնել սոսկ նորմատիվ ակտի ընդունման նպատակի պարզաբանմանը, քանի որ բուն իրավունքի նորմի (և ամբողջությամբ իրավունքի) նպատակը և նորմ պարունակող ակտի ընդունման նպատակն սկզբունքորեն տարբեր կատեգորիաներ ու երևույթներ են, թեկուզև մի շարք պահերով դրանք կարող են համընկնել կամ խաչաձևվել:

*Ակտի ընդունման նպատակը վերաբերում է օրենսդրական քաղաքականության ոլորտին*, դրա խնդիրների, հարցադրումների, ծրագրերի և պլանների իրականացմանը, որոնք պայմանավորված ու թելադրված են կոնկրետ սոցիալ-պատմական իրավիճակով, տարբեր սոցիալ-քաղաքական ուժերի հարաբերակցությամբ, ակտի ընդունման պահին հասարակության և քաղաքական կյանքի հրատապ խնդիրներով:

Իրավական նորմը, թեկուզև, ի հայտ է գալիս այդ իրավականից դուրս գտնվող մի շարք այլ գործոնների ազդեցության հետևանքով, սակայն *իրավունքի նորմի նպատակը զուտ իրավական է և վերաբերում է իրավական արժեքների ոլորտին*:

Համաձայն բնական-իրավական մոտեցման, որը ներհատուկ է նաև Ռուսաստանի Դաշնության գործող Սահմանադրությանը, իրավունքի նպատակը մարդու ի ծնե և անօտարելի իրավունքներն ու ազատություններն են՝ որպես բարձրագույն արժեք:

Համաձայն ազատական-իրավաբանական տեսության՝ *իրավունքի (և իրավունքի նորմի) նպատակը մարդկանց կյանքում ազատության, հավասարության և արդարության առաջընթացն է, այսինքն՝ ձևական հավասարության իրավական սկզբունքում արտահայտված բուն իրավունքի արժեքային հասկությունների ու հիմունքների հաստատումը և առաջընթաց գարգացումը*:

Իրավունքի մեկնաբանվող նորմի այդ բուն իրավական նպատակի (և իրավական արժեքի) հաշվառումը՝ ակտի ընդունման նպատակի և իրավունքի նորմի իրագործման ժամանակի գործող օրենսդրության իրավաբանական-արժեքային հատկությունների հետ դրա փոխհարաբերություններում, որոշում է նպատակային մեկնաբանման առանձնահատկությունը:

*Նպատակային մեկնաբանումն իր էությանը արժեքային նպատակային մեկնաբանում է, որը նպատականղված է իրավունքի նորմի՝ որպես իր մեջ կարգավորիչ ուժ և իրավական արժեքներ պարունակող իրավաբանական-արժեքային կարգավորչի, իրագործմանը:* Դրան համապատասխան, այսպիսի մեկնաբանումը կողմնորոշված է դեպի իրավունքի առաջընթացի և գործող իրավունքի արժեքային-իրավական հատկությունների ու բնութագրերի զարգացման ընդհանուր ենթատեսքստում մեկնաբանվող նորմի արժեքային իրավական բովանդակության պարզաբանմանը:

*Իրավունքի նորմի այդ արժեքային իրավական բովանդակության՝ որպես դրա որոնելի իսկական բովանդակության, իմաստավորումը և որոշումը մեկնաբանման ամբողջ գործընթացի էական հարադրությունն է:*

Ընդհանրացված ձևով այդ *նպատակային չափանիշի* իմաստն ու նշանակությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. նորմի տեսքտային բովանդակության կողմից թույլատրվող և իրավական զարգացմամբ ձեռք բերված մակարդակին համապատասխանող իրավունքի նորմի մեկնաբանման բոլոր տարբերակներից առավել համարժեքը, հիմնավորվածը, ճիշտն ու հեռանկարայինն *իրավունքի նորմի իրավաբանական-նպատակային իմաստով առավել առաջադիմական մեկնաբանումն է, այսինքն՝ մեկնաբանման այն տարբերակը, որում իրավունքի նորմի բովանդակությունը պարզաբանվել և արտահայտվել է դրա իրագործման ժամանակի համար առավելագույն չափով բարձր արժեքային-իրավական դիրքերից:*

Պատմական-իրավական պրակտիկան հռոմեական իրավունքի ժամանակներից մինչև մեր օրերը հաստատում է այսպիսի մոտեցումը և վկայում է այն մասին, որ իրավունքի դրույթների առաջադիմական մեկնաբանությունները, հենց արժեքային-իրավական (այսինքն՝ զուտ իրավական) իմաստով, հատկապես հեղինակավոր իրավաբանների ու համապատասխան բարձրագույն դատարանների կողմից, համարժեք ար-

տացուել են ինչպես գործող իրավունքի էությունը, այնպես էլ՝ դրա զարգացման և նորացման պահանջմունքները: Իրավունքի այդպիսի *մեկնաբանությունները*՝

1) սահմանված իրավունքի պատշաճ կայունության, հասարակական զարգացման նոր պահանջների, հիմնահարցերի ու պահանջմունքների հետ դրա ճկուն և օպերատիվ հարմարվողականության համատեղման արդյունավետ միջոց են.

2) հասարակության ու պետության մեջ հասունացած կոնֆլիկտների և հակասությունների ժամանակին լուծման խնայողական ու համարժեք իրավաբանական ձև են, իրավունքում և կյանքում նոր իրավաբանական գաղափարների, սկզբունքների ու արժեքների, ազատության, հավասարության և արդարության նոր՝ ավելի զարգացած, ձևերի ու նորմերի ձևավորման և հաստատման հուսալի ու գործնականում փորձակված արդյուր են:

### **3. Իրավունքի նորմերի մեկնաբանման-պարզաբանման տեսակները**

Ակտի տեքստի նորմատիվ բացատրության գործընթացում հայտնաբերված *այդ տեքստում պարունակվող իրավադրույթների բացահայտվող նորմատիվ իմաստն* իր ծավալով կարող է համընկնել կամ չհամընկնել տեքստի այդ իրավադրույթների տառացի (բառային) արտահայտությանը: Մեկնաբանվող նորմի որոնվող իսկական նորմատիվ բովանդակության այդ հարադրության պարզաբանումն ընդունված է անվանել՝ ըստ ծավալի մեկնաբանում: *Ըստ ծավալի մեկնաբանման՝ տարբերվում են ակտի տեքստի մեկնաբանման երեք տեսակ՝* տառացի, ընդարձակող և սահմանափակող: Գրականության մեջ սովորաբար տառացի մեկնաբանումն անվանվում է նաև համարժեք մեկնաբանում: Տառացի և համարժեքի այսպիսի նույնականացումը ճիշտ չէ, քանի որ *«համարժեքության»* որակական չափանիշի պահանջին պետք է համապատասխանեն իրավունքի մեկնաբանման բոլոր տեսակներն ու եղանակները:

*Տառացի մեկնաբանումն* առկա է այն առավել տարածված դեպքերում, երբ տեքստի իրավադրույթի նորմատիվ իմաստը լիովին համընկնում է դրա բառային-տեքստային արտահայտությանը: Այդպիսի դեպքերից է, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության ընտանեկան օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ կետի դրույթը, համաձայն որի՝ «Ամուսնական պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով և ենթակա է նոտարական փակերացման»:

Մակայն հաճախ տեքստի իրավադրույթի նորմատիվ իմաստը դրա տեքստային-բառային արտահայտությունից լայն է կամ նեղ: Այդ դեպքում պահանջվում է ընդարձակող (տարածող) կամ սահմանափակող մեկնաբանում՝ նպատակ ունենալով համարժեք (ճիշտ և ճշգրիտ) արտահայտելու ակտի տեքստի համապատասխան իրավական դրույթների նորմատիվ իմաստը:

*Ընդարձակող մեկնաբանումն* անհրաժեշտ է այնտեղ, որտեղ տեքստի իրավադրույթի բուն նորմատիվ իմաստը լայն է դրա բառային արտահայտությունից: Այսպես, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 55 հոդվածի 2-րդ մասը պարունակում է հետևյալ իրավադրույթը՝ «Ռուսաստանի Դաշնությունում չպետք է ընդունվեն մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները վերացնող կամ նվազեցնող օրենքներ»: Այդ իրավադրույթի իսկական նորմատիվ իմաստը լայն է դրա բառային արտահայտությունից, քանի որ իրավադրույթում պարունակվող արգելքը տարածվում է ոչ միայն օրենքների, այլ նաև ենթաօրենսդրական ակտերի վրա:

*Սահմանափակող մեկնաբանումը* պահանջվում է այնտեղ, որտեղ տեքստի իրավադրույթի բուն նորմատիվ իմաստն ավելի նեղ է դրա բառային արտահայտությունից: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 30 հոդվածի 1-ին մասով ամրագրված է հետևյալ իրավադրույթը՝ «Յուրաքանչյուր ոք ունի միավորման իրավունք, ներառյալ՝ իրենց շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու իրավունքը»: Այստեղ ակնհայտ է, որ այս իրավադրույթի իսկական նորմատիվ իմաստն ավելի նեղ է դրա բառային արտահայտությունից, քանի որ դրանում ամրագրված միավորման իրավունքը չի տարածվում, մասնավորապես, երեխաների վրա:

#### **4. Իրավունքի նորմերի մեկնաբանման-բացատրման տեսակները**

*Մեկնաբանման-բացատրման* իրավաբանական նշանակությունը կախված է մեկնաբանման սուբյեկտի կարգավիճակից: Դրա հիմնավորմամբ առանձնացվում է մեկնաբանման-բացատրման երկու տեսակ՝ պաշտոնական և ոչ պաշտոնական:

*Պաշտոնական մեկնաբանումը* նման իրավագործություն ունեցող պետական մարմնի իրականացրած մեկնաբանումն է: Պաշտոնական մեկնաբանման ակտերը պարտադիր են համապատասխան իրավակիրառ սուբյեկտների համար:

*Նման պարտադրականության դրոշմում* պաշտոնական մեկնաբանման դրույթները բաժանվում են նորմատիվի և կաուզալի (պատճառականի):

*Նորմատիվ մեկնաբանման* դրույթները տարածվում են մեկնաբանվող նորմում ընդգրկված անձանց և հարաբերությունների անորոշ շրջանակի վրա: Սակայն իրավակիրառման համապատասխան սուբյեկտների համար պաշտոնապես-պարտադիր *մեկնաբանման դրույթը (կանոնը, «նորմը»)* չի կարելի շփոթել ոչ իրավունքի մեկնաբանվող նորմի, ոչ էլ ընդհանրապես, իրավական նորմի հետ: Իրավամեկնաբանման դրույթը միշտ էլ միայն իրավունքի՝ արդեն իսկ առկա մեկնաբանվող նորմի, պատշաճ հասկացողության կանոն է և ոչ թե իրավունքի նոր նորմ:

*Կաուզալ (պատճառական) մեկնաբանման* դրույթները տարածվում են միայն տվյալ կոնկրետ դեպքի (կագուսի) վրա:

*Ըստ նման պարտադրականության աղբյուրի (իրավական հիմքի)* սովորաբար առանձնացվում է պաշտոնական մեկնաբանման երկու տեսակ՝ օրինական և աուտենտիկ: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, այսպես կոչված, աուտենտիկ մեկնաբանումը դրա դրույթների պարտադրականության անհրաժեշտ աղբյուրի (իրավական հիմքի) բացակայության շնորհիվ *ընդհանրապես իրավաչափ չէ, և սխալ է պաշտոնական մեկնաբանում համարելը:*

*Օրինական մեկնաբանումը* դրա համար օրենքով հատուկ լիազորված պետական մարմնի կողմից իրականացվող մեկնաբանումն է: Այսպես, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 125 հոդվածի 5-րդ մասի համաձայն Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը Ռուսաստանի Դաշնության նախագահի, Դաշնության խորհրդի, Պետական Դումայի, Ռուսաստանի Դաշնության կառավարության, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենսդիր մարմինների հարցումներով *մեկնաբանում է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը:* Այսպիսի մեկնաբանումն օժտված է համապարտադիր իրավաբանական ուժով:

Գրականության մեջ օրինական մեկնաբանմանն են դասվում (որպես դրա տարատեսակ) *դատական պրակտիկայի հարցերով պարզաբանումները*, որոնք Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (126, 127 հոդվածներ) համաձայն՝ տալիս են Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանը և Ռուսաստանի Դաշնության բարձրագույն արբիտրաժային դատարանը: Նման մեկնաբանությունն անհիմն է, քանի

որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունն այդ դատական մարմիններին, ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի, չի լիազորել մեկնաբանելու որևէ նորմատիվ-ի-ճավական ակտ, այլ միայն նախատեսել է, որ դրանք պարզաբանումներ են տալիս դատական պրակտիկայի հարցերով:

Նշված բարձրագույն դատական մարմինների այդ պարզաբանումները, ըստ էության, *ոչ պաշտոնական (ոչ պարտադիր) մեկնաբանման տարատեսակներ են և կրում են հանձնարարական բնույթ*: Դրանք պաշտոնական-պարտադիր իրավաբանական ուժով օժտելը փաստորեն կնշանակեր ինչպես համապատասխան դատական մարմինների նկատմամբ օրենսդրական իրավագործությունների ճանաչում, որը հակասում է իշխանությունների բաժանման սկզբունքին, այնպես էլ դատավորների անկախության ու նրանց՝ միայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը և դաշնային օրենքին ենթարկվելու սահմանադրական սկզբունքի բացասում:

Գրականության մեջ առուտենտիկ մեկնաբանում ասելով՝ նկատի է առնվում բոլոր իրավասահման (իրավաստեղծ) պետական մարմինների (ներկայացուցչական ու գործադիր) կողմից իրենց ընդունած նորմատիվ-իրավական ակտերի պաշտոնական, պարտադիր ուժով օժտված մեկնաբանումը, որն իրականացնում են համապատասխան մարմինները՝ իրենց իրավասությունների շրջանակում և իրենց հայեցողությամբ:

Այս դիրքորոշումը, ներառյալ՝ համապատասխան պրակտիկային հավանություն տալը, ափրապետող է մեր գրականության մեջ:

Մինչդեռ ակնհայտ է, որ նման դիրքորոշումը (և դա ծնող պրակտիկան) հակասում է ոչ միայն իրավունքի և իրավական պետականության հիմնական հիմունքներին, այլ նաև՝ գործող օրենսդրությանը, որն իրավաստեղծ մարմիններին չի օժտում որևէ նորմատիվ ակտի (իր կամ ուրիշի) պաշտոնական-համապարտադիր մեկնաբանում իրականացնելու իրավունքով: Առուտենտիկ մեկնաբանումը՝ որպես պետական մարմինների ոչ իրավական պրակտիկայի արդյունք ու արտահայտություն, կրում է կամայական, ինքնիրավական բնույթ և, ի տարբերություն օրինական մեկնաբանման՝ ոչ օրինական ու ոչ իրավական մեկնաբանում է: Դա հենց այն կարևոր դեպքերից մեկն է, երբ *այն, ինչն օրենքով ուղղակի թույլատրված չէ պետական մարմնին կամ պաշտոնատար անձին, դա նրան արգելված է, ինչն օրինական չէ, անօրինական և հակաօրինական է*: Սակայն, թերևս մեր պայմաններում սա բավական չէ, ու անհրաժեշտ



է պետական մարմինների նմանօրինակ գործունեության համար սահմանել օրենսդրական արգելք:

Համապարտադիր նորմատիվ ակտի ընդունումն ու (իր ակտի կամ ցանկացած այլ ակտի) պաշտոնական պարտադիր մեկնաբանումը երկու միանգամայն տարբեր գործառույթներ են, և իշխանության բաժանման պայմաններում սեկ մարմինը չպետք է միաժամանակ օժտված լինի այդ երկու գործառույթներով ու երկու համապատասխան իրավագործություններով:

Իրավունքի պարտադիր մեկնաբանումը, ըստ էության, դատական գործառույթ է և պետք է իրականացվի հատուկ դատական առյանի (որպես կանոն, սահմանադրական կամ գերագույն դատարանի) կողմից: Ուստի, *միայն օրինական դատական մեկնաբանումն է իրավաչափ պաշտոնական-պարտադիր մեկնաբանում. պաշտոնական-պարտադիր մեկնաբանման այլ տեսակների, ներառյալ նաև՝ աուտենտիկի, թույլատրումը հակասում է իրավունքի և իրավական պետականության տարրական պահանջներին:*

*Ոչ պաշտոնական մեկնաբանումներն* օրենքով պարտադիր իրավաբանական ուժով չօժտված մեկնաբանումներն են:

Ոչ պաշտոնական մեկնաբանումը բաժանվում է առօրեականի, մասնագիտականի և վարդապետականի:

*Առօրեական մեկնաբանումն* իրավունքի համապատասխան նորմի մեկնաբանումն է ցանկացած սուբյեկտի կողմից՝ իր իրավահասկացողության և իրավագիտակցության հիման վրա:

*Մասնագիտական մեկնաբանումը* նորմի մեկնաբանումն է համապատասխան իրավաբանական հարցերով մասնագիտորեն (ըստ ծառայության) զբաղվող իրավունքի սուբյեկտների կողմից: Այդ սուբյեկտներն են՝ առանձին իրավաբան-պրակտիկները (դատավորները, դատախազները, քննիչները, փաստաբանները, իրավախորհրդատուները և այլոք), ինչպես նաև պետական մարմինները (իրենց մասնագիտական իրավաբանական գործունեության ոլորտում): Ըստ իրենց իրավական իմաստի և նշանակության՝ նման մասնագիտական մեկնաբանման տարատեսակներից են ինչպես բարձրագույն դատական մարմինների պարզաբանումները, այնպես էլ մնացած բոլոր պետական մարմինների համապատասխան պարզաբանում-մեկնաբանումները (բոլոր, այսպես կոչված, աուտենտիկ մեկնաբանումները):

*Վարդապետական մեկնաբանումն* իրավաբան-գիտնականների կատարած իրավունքի նորմերի գիտական-իրավաբանական մեկնաբան-

նումն է: Այսպիսի մեկնաբանման արդյունքները (գործող օրենսդրության նորմերի գիտական բնութագրումը, գիտական-գործնական մեկնաբանությունները, փորձագիտական եզրակացությունները և այլն) հրապարակվում են համապատասխան մեկնագրություններում, գրքույկներում, հոդվածներում և հատուկ ժողովածուներում:

Իրավաբանական վարդապետությունը մեկնաբանման գործընթացի համար անշուշտ ունի առավել արմատական նշանակություն, քանի որ հենց մեկնաբանման իմաստի կանոնների և դերի մասին իրավաբանական-վարդապետական ուսմունքն է ընկած իրավունքի մեկնաբանման բոլոր ձևերի ու աեսակների հիմքում:

Մեկնաբանման ոչ պաշտոնական ձևերի (մասնագիտական և վարդապետական) գործնական նշանակությունը որոշվում է այսպիսի մեկնաբանման սուբյեկտների հեղինակությամբ, համապատասխան մեկնաբանումների գիտակցության ու կանխատեսող արժանահավատության բարձր մակարդակով:

## **Գլուխ 9. Իրավական հարաբերությունները**

### **1. Իրավահարաբերության հասկացությունը: Իրավահարաբերության օբյեկտը և առարկան**

*Իրավահարաբերությունն իրավունքի սուբյեկտների փոխհարաբերությունների՝ իրավունքի իրականացվող նորմի պահանջված ձևն է նրանց կողմից կոնկրետ-որոշակի սուբյեկտիվ իրավունքներ ձեռք բերելու և օգտագործելու կամ կոնկրետ-որոշակի իրավաբանական պարտականություն կատարելու գործընթացում:*

Իրավահարաբերության օբյեկտը գործող օբյեկտիվ իրավունքի իրականացվող նորմի վերացական բովանդակությունն է, այսինքն՝ դրա հիպոթեզի, դիսպոզիցիայի և սանկցիայի համապատասխան վերացական դրույթները:

Իրավահարաբերության առարկան այն կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներն ու կոնկրետ իրավաբանական պարտականություններն են, որոնց ձեռքբերման, իրականացման և կատարման համար իրավունքի կոնկրետ սուբյեկտները, անհրաժեշտ իրավական պայմանների առկայությամբ, մտնում են կոնկրետ իրավահարաբերությունների մեջ ու, իրավունքի իրականացվող նորմի պահանջներին համապատասխան, կատարում են պատշաճ իրավաչափ գործողություններ:

*Օբյեկտիվ իրավունքը (իրավունքն օբյեկտիվ իմաստով) պոզիտիվ իրավունքի վերացական-համընդհանուր նորմերն են, որոնք իրավունքի, փաստորեն տարբեր, սուբյեկտների համար նախատեսում են ձևականորեն հավասար իրավաբանական պայմաններ և հնարավորություններ կոնկրետ իրավահարաբերություններում իրենց իրավաչափ նպատակների ու շահերի իրականացման՝ իրենց կոնկրետ անհատական-որոշակի իրավունքների ձեռքբերման և իրականացման, իրենց կոնկրետ անհատապես-որոշակի իրավաբանական պարտականությունների ստեղծման ու կատարման համար:*

Կոնկրետ իրավահարաբերությունների արդյունքում կոնկրետ սուբյեկտների կողմից տարբեր անհատական, միայն նրանց պատկանող այդ կոնկրետ որոշակի սուբյեկտիվ իրավունքները և սուբյեկտիվ իրավաբանական պարտականությունները չպետք է շփոթել վերացական սուբյեկտի, վերացական իրավունքների ու պարտականությունների հետ, այսինքն՝ օբյեկտիվ իրավունքի վերացական սուբյեկտի և վերացական իրավահարաբերության վերացական սուբյեկտի վերացական-ընդհանուր իրավական հատկությունների ու բնութագրերի (վերացական իրավասուբյեկտության, իրավունակության, գործունակության, դելիկտատունակության) հետ:

Տերմինաբանական խառնաշփոթից և վերացական սուբյեկտի վերացական- իրավական հնարավորությունները կոնկրետ սուբյեկտի արդեն իսկ ձեռք բերված կոնկրետ իրավունքների հետ շփոթելուց խուսափելու համար անհրաժեշտ է համապատասխան վերացական իրավունքներն ու պարտականություններն անվանել *վերացական սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ՝ ի տարբերություն* կոնկրետ սուբյեկտների կողմից արդեն իսկ իրականում ձեռք բերված ու նրանց պատկանող տարբեր *կոնկրետ սուբյեկտիվ իրավունքների և կոնկրետ իրավաբանական պարտականությունների:*

## **2. Իրավաբանական փաստերը**

Կոնկրետ իրավահարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարեցման համար անհրաժեշտ են իրավունքի իրականացվող նորմի հիպոթեզում վերացական-ընդհանուր տեսքով սահմանված առկա կոնկրետ իրավական հիմքեր: Իրավունքի վերացական նորմի իրագործման պայմանները սահմանող մման իրավական հիմքերը կոչվում են իրավաբանական փաստեր:

*Իրավաբանական փաստերը*, օրենքի համաձայն, իրավունքի նորմի իրագործման համար անհրաժեշտ իրավական հիմքի (պայմանի) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը (փաստացի հանգամանքները) են:

Իրավաբանական փաստերը բաժանվում են իրադարձությունների և գործողությունների:

*Իրադարձություն* են համարվում իրավունքի սուբյեկտների կամքից անկախ իրավաբանական նշանակություն ունեցող երևույթներն ու հանգամանքները (օրինակ՝ ծնունդը, մահը, տարերային աղետը և այլն):

*Արարքները* (գործողության և անգործությունը) մարդկանց վարքագծի գիտակցված-կամային ակտերն են:

Արարքն իրենց իրավական բնույթով բաժանվում են *իրավաչափերի և ոչ իրավաչափերի* (իրավախախտերի): Համաձայն օրենքի՝ ոչ իրավաչափ (իրավախախտ) բնույթ ունեն մահ իրավունքի համապատասխան սուբյեկտների անգործության որոշ տեսակները, այն պայմաններում, երբ նրանք պետք է կատարեն որոշակի ակտիվ իրավաչափ գործողություններ (օրինակ՝ բժշկի կողմից հիվանդին օգնություն ցույց չտալը, հանցագործության կատարման իրավիճակում ոստիկանության աշխատակցի պասսիվ վարքագիծը և այլն):

Արարքներն իրենց իրականացման և արտահայտման ձևով բաժանվում են իրավաբանական ակտերի ու իրավաբանական վարմունքների:

*Իրավաբանական ակտեր* ասելով՝ նկատի են առնվում իրավունքի սուբյեկտների գործողությունների տարբեր իրավաբանորեն որոշակի ձևերը (օրինակ՝ պայմանագիր կնքելը, ամուսնանալը, դատարան հայց ներկայացնելը, դատարանի կողմից գործով վճիռ կայացնելը և այլն), որոնք ուղղված են որոշակի իրավական հետևանքների ու արդյունքների ձեռքբերմանը:

*Իրավաբանական վարմունքներն* իրավունքի սուբյեկտների տարբեր փաստացի գործողությունները (անգործությունն) են (օրինակ՝ ոչ սրբափիճակում աշխատանքի գալը, խեղդվողին չփրկելը և այլն), որոնք անկախ դրանք կատարող սուբյեկտների կամքից՝ իրենց իրավաբանական նշանակության ուժով հանգեցնում են իրավական հետևանքների:

Իրավահարաբերության մեջ իրագործվող նորմի հիպոթեզի համաձայն, որպես կանոն, պահանջվում է ոչ թե մեկ, այլ մի քանի իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի առկայություն, որոնք իրենց համակցության մեջ կազմում են տվյալ կոնկրետ իրավաիրագործման ի-

րավիճակի (իրավական դեպքի, գործի) *փաստացի կազմը, ավելի ճշգրիտ՝ իրավաբանական-փաստացի կազմը*:

Համապատասխան իրավաբանական փաստերի (ամբողջ իրավաբանական-փաստացի կազմի) առկայության կամ բացակայության պատշաճ, դատավարական իրավունքով պահանջվող ապացույցը կազավորում է ցանկացած կոնկրետ իրավահարաբերության *իրավաբանական-դատավարական կողմը* (և բաղկացուցիչ մասը): Ընդ որում, որոշ իրավաբանական փաստերի առկայությունը *ենթադրվում է* (օրինակ՝ գործող օրենքի իմացության կանխավարկածը, անմեղության կանխավարկածը, չափահաս ֆիզիկական անձի քաղաքացիական-իրավական գործունակության կանխավարկածը, իրավակիրառող սուբյեկտի օբյեկտիվության կանխավարկածը և այլն) քանի դեռ սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը:

### 3. Իրավահարաբերության բովանդակությունը

*Իրավահարաբերության բովանդակությունն օբյեկտիվ իրավունքի իրագործվող նորմի վերացական իրավաբանական բովանդակության արտահայտման կոնկրետացված ձևն է*: Կոնկրետ իրավահարաբերության բովանդակությունն արդյունք է՝

1) համապատասխան իրավաբանական նշանակություն ունեցող կոնկրետ փաստացի հանգամանքների (իրավաբանական փաստերի) առկայության տեսքով նորմի հիպոթեզի վերացական դրույթների կոնկրետացման.

2) իրավահարաբերության անհատական-որոշակի գործունակ սուբյեկտների համապատասխան փոխհամաձայնեցված կոնկրետ ակտիվ իրավաչափ գործողությունների տեսքով նորմի դիսպոզիցիայի վերացական հասցեատերերի փոխադարձ վերացական իրավունքների և վերացական պարտականությունների կոնկրետացման.

3) իրավահարաբերության անհատական-որոշակի իրավասու սուբյեկտի՝ տվյալ կոնկրետ իրավահրագործող դեպքի լուծմանն ուղղված համապատասխան կոնկրետ իրավակիրառ գործողության (որոշման, ակտի) տեսքով (պատշաճ դեպքում կոնկրետ անձանց կոնկրետ իրավախախտումների համար իրավաբանական պատասխանատվության համապատասխան կոնկրետ միջոցի սահմանմամբ) նորմի սանկցիայի վերացական դրույթների կոնկրետացման:

Այսպիսով, իրավահարաբերության բովանդակությունը զուտ իրավական է, կրում է ձևական-իրավաբանական բնույթ:

«Իրավական հարաբերություն» հասկացությունը նշանակում է իրավունքը՝ որպես հարաբերություն, այնպես որ «հարաբերություն» տերմինում որևէ ոչ իրավական բան չկա:

Իրավունքը՝ որպես հարաբերություն (իրավական հարաբերություն, իրավահարաբերություն), ունի իրավական բովանդակության նույն ծավալը և կարգավորիչ իրավական նույն մեխանիզմը, ինչ իրավական նորմը (իրավունքը՝ որպես նորմ): Այդ բովանդակությունը և այդ մեխանիզմը կազմված են նորմի կառուցվածքային բաղադրատարրերից (հիպոթեզից, դիսպոզիցիայից, սանկցիայից) ու դրանց կարգավորիչ նշանակություններից (գործառույթներից):

Իրավական հարաբերության տարբերությունն իրավական նորմերից մինևնույն իրավական բովանդակության և կարգավորիչ մեխանիզմի արտահայտման երկու ձևերի տարբերությունն է: Այդ տարբերությունն այն է, որ իրավական հարաբերությունն իրավական կարգավորման դինամիկ, կոնկրետ- իրավաիրագործող ձևն է, իսկ իրավունքի նորմը՝ իրավական կարգավորման սուստիկ, վերացական-ընդհանուր ձևը:

*Իրավական հարաբերությունը* հանդես է գալիս որպես իրավունքի նորմի վերացական բովանդակության կոնկրետացման և իրագործման *ընդհանուր- կարգավորիչ ընթացակարգային ձև*: Այդ ձևի շրջանակներում և դրա պահանջներին համապատասխան պետք է ընթանան իրավունքի սուբյեկտների բոլոր գործողություններն ու փոխհարաբերությունները՝ նրանց իրավունքների և պարտականությունների իրագործման գործընթացում: Բոլոր սուբյեկտների բոլոր կոնկրետ իրավաիրագործող (ներառյալ՝ նաև իրավակիրառող) հարաբերությունները պետք է իրականացվեն իրավական հարաբերության ձևով:

*Գործող իրավունքի տեսանկյունից՝* իրավունքի նորմի իրագործումը *պաշտոնական-իշխանական կարգավորիչ-իրավական վերահսկողությունն է* իրավունքի սուբյեկտների վարքագծի իրականացվող նորմի պահանջներին նրանց փոխհարաբերությունների ճշգրիտ համապատասխանության, այսինքն՝ իրավունքի նորմի իրավաբանական ուժի իրականացման (իրագործման) նկատմամբ:

*Իրավունքի սուբյեկտների տեսանկյունից՝* իրավունքի նորմի իրագործումը *նրանց կողմից իրենց իրավական հնարավորությունների (իրենց իրավունակության) օգտագործումն է* իրագործվող նորմի պահանջներին

համապատասխանող ակտիվ իրավաչափ գործողությունների միջոցով՝ իրենց իրավաչափ նպատակին հասնելու և իրենց օրինական շահերը բավարարելու, իրենց անհատական-կոնկրետ սուբյեկտիվ իրավունքները ձեռք բերելու և իրագործելու ու իրենց անհատական-կոնկրետ սուբյեկտիվ իրավաբանական պարտականությունները կատարելու համար:

#### **4. Իրավահարաբերության սուբյեկտները (մասնակիցները): Ֆիզիկական և իրավաբանական անձինք**

Իրավահարաբերության սուբյեկտները (մասնակիցները) իրավունքի իրագործվող նորմով նախատեսված իրավունակությամբ, գործունակությամբ և ղեկիկատունակությամբ օժտված իրավունքի սուբյեկտներ են:

Իրավունքի սուբյեկտներ են իրավունքի բոլոր հասցեատերերը, բոլոր նրանք, ովքեր գտնվում են իրավունքի գործողության ներքո, իրավունքի կողմից ճանաչվում են որպես վերացական-իրավական անձինք, իրավունքի և պարտականությունների հնարավոր կրողներ՝ ազատ անհատները, տնտեսական կազմավորումները, հասարակական ու կրոնական կազմակերպությունները, առանձին պետական մարմինները և պետությունն ամբողջությամբ: Անազատ անհատները (ստրուկները) իրավունքի սուբյեկտներ չէին, նրանք համարվում էին իրավունքի օբյեկտներ (գույքի, աշխատանքի գործիքների և այլնի նման):

«Իրավունքի սուբյեկտ» հասկացությունը նշանակում է իրավունքի հասցեատիրոջ՝ որպես իրավունքների ու պարտականությունների սուբյեկտ լինելու վերացական հնարավորությամբ օժտված իրավաբանական նշանակություն ունեցող անձի, *իրավասուբյեկտության* ճանաչում:

Իրավունքի սուբյեկտները (անձինք, անհատները) իրավունքում բաժանվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց:

*Ֆիզիկական անձինք* բոլոր մարդիկ են՝ որպես իրավունքի սուբյեկտներ (քաղաքացիները, օտարերկրացիները, քաղաքացիություն չունեցող անձինք):

*Իրավաբանական անձինք* բացի ֆիզիկական անձանցից իրավունքի մյուս բոլոր սուբյեկտներն են՝ բոլոր տնտեսական, հասարակական, պետական և այլ հաստատություններն ու կազմակերպությունները, որոնց իրավասուբյեկտությունը, ինչպես նաև ձևավորման և գործունեության համապատասխան կարգը նախատեսված են գործող իրավունքով: Բոլոր իրավաբանական անձինք, ֆիզիկական անձանց նման, իրենց բոլոր

առանձնահատկություններով հանդերձ, ենթարկվում են իրավունքի բու-  
լոր սուբյեկտների համար ընդհանուր գործող իրավունքի ու կոնկրետ ի-  
րավահարաբերություններում դրա նորմերի իրագործման պահանջնե-  
րին:

Բոլոր մարդիկ (ֆիզիկական անձինք) իրենց ծագման պահից իրա-  
վունքի սուբյեկտներ են ինչպես գործող իրավունքի նկատմամբ իրենց  
վերացական-ընդհանուր իրավասուբյեկտության իմաստով, այնպես էլ  
իրենց կոնկրետ իրավասուբյեկտության իմաստով՝ որպես պաշտոնա-  
պես ճանաչված մարդու հիմնական, բնական (ի ծնե և անօտարելի) ի-  
րավունքների և ազատությունների համակցության իրական կրողներ:

Իրավաբանական անձինք իրավունքի սուբյեկտներ են իրենց պաշ-  
տոնական-իրավական հիմնադրման պահից:

Անձի իրավասուբյեկտությունն արտահայտվում և կոնկրետացվում է  
նրա իրավունակության, գործունակության ու դելիկատունակության  
մեջ:

*Իրավունակությունն* իրավունքի սուբյեկտի վերացական ունակու-  
թյունը (հնարավորությունը) է՝ ունենալու գործող իրավունքով նախատես-  
ված համապատասխան իրավունքներ և պարտականություններ: «Իրա-  
վունակություն» հասկացությունն իր իրավական իմաստով ու ծավալով  
նույնական է «իրավասուբյեկտություն» հասկացությանը. իրավունքի  
սուբյեկտն իրավասուբյեկտ է այն ծավալով և նշանակությամբ, որով նա  
իրավատունակ է: Բոլոր ֆիզիկական անձինք օժտված են *բոլորի համար  
հավասար* իրավասուբյեկտությամբ ու իրավունակությամբ, ինչը նրանց  
իրավական հավասարության, ներառյալ՝ օրենքի առջև հավասարու-  
թյան արտահայտման ձևն է: Իրավաբանական անձինք օժտված են  
տարբեր իրավասուբյեկտությամբ, որը պայմանավորված է այն հատուկ  
նպատակներով և խնդիրներով, որոնց իրականացման համար դրանք  
հիմնադրվել են: Այդ իմաստով, դրանց իրավասուբյեկտությունը *հատուկ է*:

*Գործունակությունն* իրավունքի սուբյեկտի իրական ունակությունը  
(հնարավորությունը) է համապատասխան իրավահարաբերություննե-  
րում իր ակտիվ իրավաչափ գործողություններով իրագործել իր իրավու-  
նակությունը, ձեռք բերել և իրականացնել իր սուբյեկտիվ իրավունքները,  
իր համար ստեղծել և կատարել իր սուբյեկտիվ իրավաբանական պար-  
տականությունները:

Ֆիզիկական անձինք, օրենքի համաձայն, գործունակություն են  
ձեռք բերում միայն որոշակի տարիքից հետո, որն անհրաժեշտ է իրա-



վական կարգավորման համապատասխան ոլորտում գիտակցված իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ կատարելու համար: Ռուսաստանի Դաշնությունում լիակատար գործունակությունը վրա է հասնում տասնութ տարեկանից: Իրավունքի տարբեր ճյուղերում սահմանափակ գործունակությունը հանդես է գալիս տարբեր տարիքներից: Այսպես, համաձայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 26 հոդվածի, քաղաքացիական իրավունքում ճանաչվում է տասնչորսից տասնութ տարեկան հասակի անչափահասների սահմանափակ գործունակությունը: Վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակները, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 28 հոդվածի համաձայն, իրավունք ունեն ինքնուրույն կատարելու միայն մանր կենցաղային գործարքներ:

Հոգեկան խանգարման հետևանքով իր գործողությունների նշանակությունը չհասկացող և դրանք դեկավարել չկարողացող ֆիզիկական անձը դատարանի կողմից պատշաճ կարգով կարող է ճանաչվել անգործունակ: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Քաղաքացիական իրավունքը նախատեսում է նաև ֆիզիկական անձի գործունակության դատական կարգով սահմանափակվման և նրա նկատմամբ հոգաբարձության սահմանման հնարավորություն: Խնամակալությունն ու հոգաբարձությունը սահմանվում են անգործունակ կամ ոչ լրիվ գործունակ ֆիզիկական անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար:

Իրավաբանական անձանց գործունակությունը վրա է հասնում նրանց իրավունակության հետ միասին, այնպես որ նրանք օժտված են միասնական իրավագործունակությամբ:

*Դեղիկտաունակությունն* իրավունքի սուբյեկտի իր կատարած իրավախախտման համար պատասխանատվություն կրելու ունակությունն է: Իրավունքի տարբեր ճյուղերում ֆիզիկական անձանց դեղիկտաունակությունը վրա է հասնում տասնութ տարեկանից, այսպես, քաղաքացիական իրավունքում լրիվ դեղիկտաունակությունը վրա է հասնում տասնութ տարեկանից: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ինքնուրույն գույքային պատասխանատվություն են կրում օրենքով իրենց թույլատրված գործարքների կատարման համար: Փոքրահասակների գործարքներով գույքային պատասխանատվություն կրում են նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Զրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, որը հանցագործության կա-

տարման պահին դարձել է տասնվեց տարեկան: Առավել ծանր քրեական հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում տասնչորս տարեկան հասակից:

«Իրավաբանական անձ» հասկացությունն ունի *համաիրավական նշանակություն* և ներառում է իրավունքի բոլոր ճյուղերում ֆիզիկական անձ չհամարվող իրավունքի բոլոր սուբյեկտներին: Ամբողջ իրավունքի համար այս սկզբունքային դրույթը նշանակում է, որ շփման իրավական տիպի ու հարաբերությունների իրավական ձևի բոլոր մասնակիցները, այսինքն՝ իրավունքի բոլոր սուբյեկտները՝ թեկուզև տարբեր, սակայն իրավունքին միատեսակ ենթարկվող ու իրավունքի հիման վրա գործող *իրավական անձինք*, այսինքն՝ առանձնահատուկ ձևով իրավաբանականացված անհատները, իրենց *իրավական կարգավիճակին* (իրավական դրույթանը, մասնավոր և հանրային իշխանական հարաբերությունների ոլորտում նրանց օրենսդրորեն ամրագրված իրավունակությանն ու գործունակությամբ) համապատասխան իրավաբանական դերեր և գործառույթներ իրականացնող որոշակի անհատականացումներ, անձնավորումներ են:

Իրավական անձը (անձն իրավունքում կամ պարզապես անձը) վերացական-իրավական (այսինքն՝ էմպիրիկ տարբերություններից իրավունքի հանընդհանուր ոգով վերացարկված) երևույթ է, շփման իրավական տիպի բոլոր մասնակիցների վերացական-իրավական կերպար: Դրանք բոլորն էլ իրենց տարբերություններով հանդերձ՝ իրավունքի հայելու մեջ ունեն անձի վերացական-իրավական արտահայտություն: Թե՛ ֆիզիկական անձինք, թե՛ իրավաբանական անձինք իրավական անձինք են. *ֆիզիկական անձը՝ որպես իրավունքի սուբյեկտ, ֆիզիկական իրավական (այսինքն՝ իրավաբանականացված, իրավաբանական) անձն է, իսկ իրավաբանական անձը ոչ ֆիզիկական (սակայն իրավունքի համար երակետային ֆիզիկական անձին դրա իրավաբանական-իրավական երևույթին նմանեցված) իրավաբանական անձն է:*

«Իրավաբանական անձ» կատեգորիայի համաիրավական նշանակությունն իրավունքի տարբեր ճյուղերում ի հայտ է գալիս տարբեր ձևերով:

Տվյալ կատեգորիան առավել զարգացած է *քաղաքացիական իրավունքի ոլորտում*: Այստեղ իրավաբանական անձ ասելով՝ նկատի է առնվում կազմակերպությունը, որն իր սեփականության, տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման ներքո ունի առանձնացված գույք

ու իր պարտավորությունների նկատմամբ պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 48 հոդվածը): Քաղաքացիական իրավահարաբերություններում Ռուսաստանի Դաշնության սուբյեկտները, տեղական ինքնակառավարման կազմավորումներն այդ հարաբերությունների մյուս մասնակիցների հետ հանդես են գալիս հավասար հիմունքներով, և նրանց նկատմամբ՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ, կիրառվում են քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններում իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ սովյալ սուբյեկտների առանձնահատկություններից (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 124 հոդվածը):

Քաղաքացիական իրավունքում իրավաբանական անձը գործում է կանոնադրության կամ հիմնադիր պայմանագրի ու կանոնադրության կամ միայն հիմնադիր պայմանագրի հիման վրա: Իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը կնքվում, իսկ կանոնադրությունը սահմանադրվում է նրա հիմնադիրների (մասնակիցների) կողմից:

Քաղաքացիական իրավունքում իրավաբանական անձն ստեղծված է համարվում արդարադատության մարմիններում դրա պետական գրանցման պահից:

Քաղաքացիական իրավունքում և ամբողջությամբ մասնավոր-իրավական մասնագիտացված ճյուղերում առանձնացված ու ճանաչված ֆիզիկական և իրավաբանական անձինք ունեն *մասնագիտացված-ճյուղային բնույթ ու համապատասխանաբար քաղաքացիական-իրավական (մասնավոր-իրավական) ֆիզիկական և իրավաբանական անձինք են:*

Սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձի համաիրավական հասկացությունը չի հանգում այդ կատեգորիայի միայն քաղաքացիական-իրավական (հատուկ-ճյուղային) նշանակությանը և չի սահմանափակվում միայն մասնավոր (գույքային և անձնական ոչ գույքային) հարաբերությունների, մասնավոր իրավունքի ոլորտով:

*Հանրային-իշխանական հարաբերությունների ոլորտում (հանրային-իրավական մասնագիտացված ճյուղերում) իրավունքի բոլոր սուբյեկտ-*

ներն ունեն համապատասխանաբար իրենց հանրային-իրավական մասնագիտացումը և կարգավիճակը: Այստեղ՝ որպես իրավունքի սուբյեկտներ, ֆիզիկական անձինք ասելով՝ նկատի են առնվում *հանրային-իրավական ֆիզիկական անձինք* (ֆիզիկական անձինք իրենց հանրային-իրավական ճանաչվածությամբ, նշանակությամբ, բնորոշումներով ու փոփոխություններով), այսինքն՝ օրենքով սահմանված հանրային-իրավական կարգավիճակով (հանրային-իրավական մասնագիտացման, բնույթի ու նշանակության վերացական իրավունքներով և պարտականություններով) օժտված ֆիզիկական անձինք: Այստեղ՝ որպես իրավաբանական անձինք իրավասահման և իրավակիրառ բնույթի վերացական իրավունքների ու պարտականությունների համակցությունից կազմված հատուկ հանրային-իրավական կարգավիճակ (իրավասություն) ունեցող սուբյեկտների տեսքով համդես են գալիս *հանրային-իրավական իրավաբանական անձը* (տարբեր պաշտոնատար անձինք, պետական մարմիններն ու պետությունն ամբողջությամբ):

Հատուկ ուշադրության է արժանի տեսության մեջ և հատկապես պրակտիկայում հաճախ անտեսվող այն սկզբունքային հանգամանքը, որ *օրյեկտիվ իրավունքում (գործող օրենսդրության մեջ) իրավունքի բոլոր սուբյեկտների* (ֆիզիկական ու իրավաբանական անձանց) իրավունքի բոլոր ճյուղերում ու ոլորտներում (և՛ մասնավոր, և՛ հանրային իրավունքում) սահմանված *իրավունքները և պարտականությունները* կրում են վերացական-ընդհանուր բնույթ, արտահայտում են վերացական սուբյեկտների վերացական ունակությունն ու հնարավորությունը ձեռք բերելու և իրականացնելու համապատասխան իրավունքներ ու պարտականություններ, այսինքն՝ դրանք *սոսկ իրավունակություն (ֆիզիկական անձանց) կամ իրավագործունակություն (իրավաբանական անձանց) են*, որոնք դեռ պետք է իրագործվեն կոնկրետ իրավահարաբերություններում և երբևէ այս կամ այն անհատականորեն-որոշակի իրավունքի սուբյեկտի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, իր կոնկրետ-որոշակի սուբյեկտիվ իրավունքը կամ սուբյեկտիվ իրավաբանական պարտականությունը չեն: Դա, մասնավորապես, նշանակում է, որ *պաշտոնատար անձանց, պետական մարմինների և ամբողջությամբ պետության իրավասությունը* (համապատասխան վերացական իրավագործություններով օժտված հանրային-իրավական իրավաբանական անձանց հատուկ իրավական կարգավիճակը) *կոնկրետ որոշակի իրավահարաբերությունների միջոցով ու շրջանակներում գործող իրավունքի*

*նորմերի իրագործման, իրավունքի բոլոր սուբյեկտների համար ընդհանուր պահանջներին համապատասխան իրագործման ենթակա (այսինքն՝ իրավասահման կամ իրավակիրառ բնույթ ունեցող կոնկրետ անհատական-որոշակի սուբյեկտիվ իրավունքի և կոնկրետ սուբյեկտիվ իրավական պարտականության վերածվելու ունակ) նրանց հատուկ իրավագործունակությունն է:*

## **5. Իրավահարաբերության տեսակները**

*Իրավահարաբերությունների դասակարգումը հիմնականում համընկնում է իրավունքի նորմերի տարբեր տեսակների բաժանման հետ (ըստ իրավունքի ճյուղերի, ըստ կարգավորիչ գործառույթների առանձնահատկությունների և այլն):*

Սակայն առկա են նաև որոշ առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են իրավահարաբերությունների սուբյեկտների միջև փոխհարաբերությունների բնույթով:

Իրավահարաբերությունը փոխհարաբերությունն է իրավահարաբերության նվազագույն այն երկու տարբեր սուբյեկտների (կողմերի) միջև, որոնք մարմնավորում են իրագործվող նորմով նախատեսված փոխադարձ կապը (համաձայնեցված փոխհամաձայնությունը), օրինակ՝ վաճառողի ու գնորդի, պատվիրատուի և կատարողի, փոխատուի ու փոխառուի, գործատուի և աշխատողի, հաբկատուի և հարկային մարմնի, քաղաքացու ու պետական մարմնի (պաշտոնատար անձի), երկու տարբեր պետական մարմինների (պաշտոնատար անձանց) և այլնի իրավունքների ու պարտականությունների միջև:

Այդ իմաստով, ցանկացած իրավահարաբերություն ունի *երկկողմ բնույթ՝* իրավունքի իրագործվող նորմի և ամբողջությամբ իրավունքի երկկողմ (տրամադրող-պարտավորեցնող) բնույթին համապատասխան:

Սակայն նույն իրավահարաբերությունում կարող են լինել նաև իրավահարաբերության երկուսից ավելի սուբյեկտ (կողմ): Օրինակ՝ հօգուտ երրորդ անձի՝ պայմանագրով (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 430 հոդվածը) իրավահարաբերության սուբյեկտներ (կողմեր) են ոչ միայն պարտատերն ու պարտապանը, այլ նաև երրորդ անձը՝ իր ինքնուրույն իրավական շահով, իրավունքներով և պարտականություններով: Երկուսից ավելի սուբյեկտ (կողմ) են մասնակցում բնակարանի փոխանակության տարբեր իրավահարաբերու-

յուններում, հասկապես, երբ առկա է բարդ (բազմակողմ) փոխանակություն և այլն:

Ասվածի հաշվառմամբ անհիմն պետք է համարել, այսպես կոչված, *միակողմ իրավահարաբերությունների* առանձնացումը: Ընդ որում, որպես օրինակ, վկայակոչվում է նվիրատվության պայմանագիրը՝ որպես երկու սուբյեկտի տարրական իրավահարաբերություն, որում իբր կա միայն մեկ պարտականություն (նվիրատուինը) և մեկ իրավունք (նվիրառուինը): Սակայն գործն այլ բնույթ ունի, քանի որ իրավունքի բոլոր սուբյեկտներն ընդհանրապես և իրավահարաբերությունների սուբյեկտներինը մասնավորապես, ներառյալ՝ նվիրատուն և նվիրառուն, միաժամանակ, օժտված են և իրավունքներով, և պարտականություններով. մի կողմի իրավունքներին ու պարտականություններին համապատասխանում են մյուս կողմի իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, համաձայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի (տե՛ս 572-582 հոդվածները) նվիրատվությունը ոչ թե նվիրատուի պարտականությունը, այլ նրա իրավունքն է ստանձնել (կամ չստանձնել) նվիրատվության համապատասխան կոնկրետ պարտավորությունը: Համապատասխան դեպքերում նվիրատուն պարտավոր է գրավոր ձևով պայմանագիր կնքել, իսկ որոշ դեպքերում նա իրավունք ունի վերացնել նվիրատվությունը: Նվիրառուն, իր հերթին, իրավունք ունի ինչպես ընդունել նվերը, այնպես էլ հրաժարվել դրանից. վերջին դեպքում, եթե նվիրատվության պայմանագիրը կնքված է գրավոր ձևով, ապա նա պարտավոր է նվերն ընդունելուց հրաժարվելիս՝ նվիրատուին հատուցել վերջինիս պատճառած իրական վնասը:

Գրականության մեջ ընդունված է նաև իրավահարաբերությունների բաժանումը *հարաբերականի և բացարձակի*: Ընդ որում, հարաբերական ասելով՝ նկատի են ունենում այն իրավահարաբերությունները, որոնցում որոշված են երկու կողմը, իսկ բացարձակ ասելով՝ այն իրավահարաբերությունները, որոնցում որոշված է միայն մեկ՝ իրավագոր կողմը: Որպես հատուկ բացարձակ իրավահարաբերությունների առկայության հիմնավորում (համապատասխան օրինակներով) վկայակոչվում են սեփականության իրավունքը և հեղինակային իրավունքը քաղաքացիական իրավունքում, պետական մարմնի (պաշտոնատար անձի) հասարակական կարգի խախտումը կանխելու իրավունքը վարչական իրավունքում: Ընդ որում, բացարձակ իրավահարաբերությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք պարտականություններ են դնում բո-

լորի և յուրաքանչյուրի վրա, ու իրավունքի մյուս բոլոր սուբյեկտները (դրանց անորոշ բազմությունը) պետք է կատարեն այդ պարտականությունները, խոչընդոտներ չհարուցեն բացարձակ իրավահարաբերությունների միակ իրավագոր սուբյեկտների համար:

Նման մոտեցման (և համապատասխանաբար իրավահարաբերությունները հարաբերականի ու բացարձակի բաժանելու) կողմնակիցներն ակնհայտորեն իրար հետ են շփոթում նախ՝ վերացական իրավունքները և պարտականությունները կոնկրետ սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների հետ, երկրորդը՝ կոնկրետ սուբյեկտիվ իրավունքները (սեփականության կոնկրետ իրավունքը, հեղինակային կոնկրետ իրավունքը) կոնկրետ պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կոնկրետ իրավախախտումը կանխելու կոնկրետ իրավաբանական պարտականությունը (իրավունք-պարտականություններ) համապատասխան իրավահարաբերությունների հետ, որոնց շրջանակներում այդ կոնկրետ սուբյեկտիվ իրավունքները և իրավաբանական պարտականությունները կան արդեն իսկ ձեռք են բերվել ու ստեղծվել են, կամ էլ պետք է իրականացվեն և կատարվեն: Այնպես որ, այստեղ իրար հետ շփոթվում են նաև միանգամայն տարբեր կոնկրետ իրավահարաբերություններ, որոնցից մեկում կոնկրետ սուբյեկտիվ իրավունքները և կոնկրետ իրավաբանական պարտականությունները ձեռք են բերվում ու ստեղծվում են, իսկ մյուսներում՝ իրականացվում և կատարվում են:

*Կոնկրետ իրավահարաբերություններից դուրս* (օբյեկտիվ իրավունքի վերացական-ընդհանուր դրույթների կոնկրետացման գործընթացից դուրս) ոչ իրավունքի սուբյեկտների վերացական-իրավական հնարավորությունները (նրանց վերացական իրավունակությունը, ներառյալ նաև՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց վերացական իրավասությունը) կարող են վերածվել համապատասխան կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի ու կոնկրետ իրավաբանական պարտականությունների, ոչ էլ այդ կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներն ու կոնկրետ իրավաբանական պարտականությունները կարող են իրականացվել և կատարվել (ներառյալ նաև՝ կոնկրետ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կոնկրետ իրավակիրառ իրավագորությունների օգտագործումը): Բոլոր իրավահարաբերություններում և իրավունքում ամբողջությամբ մեկ սուբյեկտի իրավունքներին ու պարտականություններին համապատասխանում են մյուս սուբյեկտի պարտականությունները և իրավունքները, այնպես որ, այսպես կոչված, բացարձակ իրավահարաբե-

րություններ (այսինքն՝ մեկ եզակի իրավագոր սուբյեկտով իրավահարաբերություններ) չկան և ըստ սահմանման չեն կարող լինել:

## **Գլուխ 10. Իրավախախտումը և իրավաբանական պատասխանատվությունը**

### **1. Իրավախախտման հասկացությունը և իրավաբանական կազմը**

Իրավունքը կարգավորում է մարդկանց վարքագիծը (գործողությունը և անգործությունը): Այն, ինչ կարգավորված չէ իրավունքով (ներառյալ՝ մարդկային վարքագծի տարրեր ձևերն ու տեսակները), չունի իրավաբանական նշանակություն (իրավաբանորեն անտարբեր է) և չի հանգեցնում իրավաբանական հետևանքների:

Մարդկանց վարքագծի (գործողության և անգործության) իրավունքի կողմից կարգավորված, այսինքն՝ իրավաբանորեն նշանակալի ձևերն ու տեսակները՝ կախված իրավունքի պահանջներին դրանց համապատասխանությունից կամ անհամապատասխանությունից, բաժանվում են *երկու հիմնական տեսակի՝ իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագծի*: Իրավունքի սուբյեկտների իրավաչափ վարքագծի տարրեր ձևերն ու տեսակներն իրավունքի նորմերի գործողության և իրագործման գործընթացում քննարկվել են նախորդ շարադրանքում: Հատուկ ուշադրության արժանի է նաև իրավունքի սուբյեկտների ոչ իրավաչափ վարքագծի հասկացության, տեսակների ու հետևանքների իրավաբանական վերլուծությունը:

Ոչ իրավաչափ վարքագիծը՝ որպես իրավունքի պահանջների խախտում, արտահայտվում է *«իրավախախտում» իրավաբանական-վարդապետական հասկացության միջոցով*:

*Իրավախախտումը դեյիկտատունակ սուբյեկտի ոչ իրավաչափ (հակաիրավական), հանրորեն վտանգավոր, մեղավոր արարքն է (գործողությունը կամ անգործությունը), որի համար գործող իրավունքում նախատեսված է իրավաբանական պատասխանատվություն*:

Իրավախախտման հիմնական իրավաբանական բնութագրերը (բնորոշումներն) են՝ հակաիրավական լինելը, հանրորեն վնասակարությունը, գործողության մեղավորությունը:

Ընդ որում, արարքի *հակաիրավականություն* ասելով՝ նկատի է առնվում սուբյեկտի համապատասխան արարքով գործող իրավական



օրենքի (այսինքն՝ ձևական հավասարության իրավական սկզբունքին համապատասխանող գործող պոզիտիվ իրավունքի նորմերի) պահանջների խախտումը:

Հակաիրավական (ոչ իրավաչափ) արարքի *հանրորեն վնասակարությունը* մարդկանց փաստացի վարքագծի համապատասխան տեսակների իրավաբանական զնահատականը (որակումը) է, իրավունքի՝ որպես հասարակության անդամների վարքագծի եամբնդհանուր (համանշանակալի, ուստի և համապարտադիր) կարգավորչի տեսանկյունից՝ բոլորի համար միատեսակ արդարացի ձևական հավասարության սկզբունքով, որը նախատեսվում է իրավունքի բոլոր սուբյեկտների համար միասնական թույլատրությունների ու արգելքների, նրանց շահերի համաձայնեցման, հաշվառման, իրականացման և պաշտպանության ընդհանուր նորմատիվներ (կանոններ, նորմեր, ձևեր):

Հետևաբար, սուբյեկտների վարքագծում *հանրորեն վնասակար է* այն ամենը, ինչը վնաս է հասցնում իրավաբանորեն որոշակի (զնահատված ու որակված) և գործող իրավունքում (իրավական օրենքում) սահմանված իրավունքի բոլոր սուբյեկտների ընդհանուր բարօրության (այսինքն՝ իրավաբանորեն հանրօգուտ հասարակական բարօրության), որի շրջանակներում իրավունքի առանձին սուբյեկտի անհատական (մասնավոր) շահերն ու հնարավորություններն ընդհանուր իրավական ձևով (ընդհանուր հիմքով, սկզբունքով և նորմերով) բոլոր սուբյեկտների համար համապարտադիր իրավակարգի պայմաններում և համատեքստում համաձայնեցված են իրավունքի մյուս սուբյեկտների համապատասխան շահերի ու հնարավորությունների հետ:

Այսպիսով, հանրային վնասակարությունն իրավունքի սուբյեկտի հակաիրավական վարքագծի հատուկ իրավաբանական զնահատականը (որակումն) է, ոչ թե այս կամ այն փաստացի վարքագծի էմպիրիկ բնութագիրը:

*Մեղավորությունը՝* որպես հակաիրավական գործողության իրավաբանական բնորոշում, արտահայտում է դրա զիտակցված-կամային բնույթը:

*Իրավախախտման իրավաբանական կազմը հակաիրավական վարքագծի հատկանիշների համակարգ է, որն անհրաժեշտ է դա որպես իրավախախտում իրավաբանորեն որակելու համար:*

Իրավախախտման իրավաբանական կազմի բաղադրատարրերը (մասերն) են՝ իրավախախտման օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը:

*Իրավախախտման օրյեկար* հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման համապատասխան ոլորտում սահմանված իրավակարգն է: Այսպիսով, իրավախախտման օրյեկտը գործող իրավունքի կողմից կարգավորվող ու պաշտպանվող անհատական և ընդհանուր արժեքներն ու բարիքներն են, որոնց վնաս է հասցվել համապատասխան հակաիրավական գործողություններով:

*Իրավախախտման օրյեկտիվ կողմը* հակաիրավական արարքը (գործողությունը կամ անգործությունն) է, դրա իրավաբանորեն վտանգավոր արդյունքներն ու դրանց միջև եղած իրավաբանական նշանակություն ունեցող պատճառական կապը: Իրավախախտման օրյեկտիվ բնույթի որոշումը ոչ թե այս կամ այն փաստացի գործողության (կամ անգործության) և համապատասխան փաստացի հետևանքների միջև եղած բոլոր պատճառական-հետևանքային կապերի վերացական հետազոտումն է, այլ որոշակի հակաիրավական գործողության հասուկ-իրավաբանական որակավորումը, որն իր մեջ ներառում է (որպես հենց այդ գործողության բաղադրատարր) համապատասխան իրավաբանական վնասակար հետևանքը՝ որպես գործող իրավունքով նախատեսված որոշակի իրավախախտում:

*Իրավախախտման սուբյեկտը* ղեկիտառման ֆիզիկական անձը կամ կազմակերպությունն է: Ֆիզիկական անձանց ղեկիկուսուսակությունն արտահայտում է նրանց ունակությունը (նրանց տարիքին և առողջական վիճակին համապատասխան) կատարելու գիտակցված-կամային գործողություններ, գիտակցելու իրենց գործողությունների իմաստն ու ղեկավարելու դրանք, այսինքն՝ լինելու այնպիսի գործողությունների (անգործության) իսկական հեղինակ, որոնք *նրան՝ որպես իրավախախտման սուբյեկտի*, կարող են *մեղսագրվել պատասխանատվության ձևով*:

Իրավախախտման սուբյեկտի մեղսունակությունը նշանակում է, որ նրա հակաիրավական գործողությունները սուբյեկտիվ առումով կրում են մեղավոր բնույթ:

*Իրավախախտման սուբյեկտիվ կողմը* համապատասխան հակաիրավական արարքի մեղավորության (մեղավոր բնույթի) իրավաբանական ձևն է: Մեղքը, իրավաբանական իմաստով, ոչ թե այս կամ այն անձի ներքին սուբյեկտիվ մտահղացումն է, այլ որոշակի իրավախախտողի որոշակի արտաբնապես օրյեկտիվացված և արդեն իսկ կատարված հակաիրավական գործողության (կամ անգործության) գիտակցական-կամային բաղադրատարրն է:

Տարբերվում են մեղքի երկու ձև՝ դիտավորությունը (մեղքի դիտավորյալ ձևը) և անգոռուշությունը (մեղքի անգոռուշ ձևը):

*Դիտավորությունը* կարող է լինել ուղղակի և անուղղակի:

*Ուղղակի դիտավորությունն* առկա է, երբ անձը գիտակցել է իր գործողությունների (անգործության) հակաիրավական լինելը, կանխատեսել է համապատասխան հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելու հնարավորությունը կամ անխուսափելիությունն ու ցանկացել է դրանք:

*Անուղղակի դիտավորության* դեպքում անձը գիտակցել է իր գործողությունների (անգործության) հակաիրավական լինելը, կանխատեսել է համապատասխան հանրորեն վտանգավոր արդյունքների վրա հասնելու հնարավորությունը, չի ցանկացել, սակայն գիտակացաբար թույլ է տվել այդ արդյունքները կամ դրանց վերաբերվել է անտարբերությամբ:

*Անգոռուշությունն* արտահայտվում է թեթևամտության կամ անփութության ձևով:

*Թեթևամտության* դեպքում անձը կանխատեսել է իր գործողությունների (անգործության) հակաիրավական (հանրորեն վտանգավոր) հետևանքների վրա հասնելու հնարավորությունը, սակայն ինքնավստահ՝ առանց դրա համար բավարար հիմքերի, հույս է ունեցել կանխելու նման արդյունքները:

*Անփութության* դեպքում անձը չի կանխատեսել իր գործողությունների (անգործության) հակաիրավական (հանրորեն վտանգավոր) հետևանքների վրա հասնելու հնարավորությունը, չնայած անհրաժեշտ ուշադրության ու շրջահայացության դեպքում նա պետք է և կարող էր կանխատեսել այդ հետևանքները:

Միայն այս կամ այն գործողության մեջ իրավախախտման իրավաբանական կազմի նշված չորս բաղադրատարրի առկայությամբ տվյալ գործողությունը կարող է որակվել որպես որոշակի իրավախախտում:

## 2. Իրավախախտումների առեսակները

Իրավախախտումներն ըստ իրենց հակաիրավական հատկությունների և հասարակական վտանգավորության բնույթի բաժանվում են՝ հանցագործությունների ու զանցանքների:

*Հանցագործությունը* գործող քրեական օրենքով պատժի սպառնալիքով արգելված՝ հանրորեն վտանգավոր մեղավոր արարք է:

Ընդ որում, Ռուսաստանի Դաշնության գործող քրեական օրենսգիրքը (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 14 հոդվածի 2-րդ մասը) *հանրորեն վտանգավորություն* ասելով՝ նկատի ունի անձին, հասարակությանը կամ պետությանը վնաս պատճառելը կամ վնաս պատճառելու սպառնալիք ստեղծելը: Դրա հաշվառմամբ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 14 հոդվածի 2-րդ մասում սահմանված է հետևյալ կարևոր իրավադրույթը. «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը (անգործությունը), որը թեկուզև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործողության հատկանիշները, սակայն իր նվազ կարևորության ուժով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ անձին, հասարակությանը կամ պետությանը վնաս չի պատճառել և վնասի պատճառման սպառնալիք չի ստեղծել»:

Կախված հասարակական վտանգավորության բնույթից և աստիճանից՝ հանցագործությունները բաժանվում են *տարբեր կատեգորիաների*, ոչ մեծ ծանրության հանցագործություններ, միջին ծանրության հանցագործություններ, ծանր հանցագործություններ ու առանձնապես ծանր հանցագործություններ (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 15 հոդվածը):

*Չանցանք* են համարվում, բացի հանցագործություններից, մյուս բոլոր իրավախախտումները: Չանցանքները, կախված սահմանված իրավակարգի ոլորտից և խախտման բնույթից, բաժանվում են՝ վարչականների, կարգապահականների ու քաղաքացիական-իրավականների:

*Վարչական զանցանքը* պետական կամ հասարակական կարգի, սեփականության ձևերի, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների նկատմամբ ոտնձգող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզույշ) գործողությունը կամ անգործությունն է, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը վարչական զանցանքների շարքին է դասում այնպիսի իրավախախտումներ, ինչպիսիք են՝ վարչական հսկողության կանոնների խախտումը, տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը, ջրօգտագործման կանոնների խախտումը, անտառներում երդեհային անվտանգության կանոնների խախտումը, քաղաքներում և

այլ բնակավայրերում շներ ու կատուներ պահելու կանոնների խախտումը և այլն:

*Կարգապահական զանցանքն* անձի կողմից կարգապահական կանոնակարգի, կանոնների հակաիրավական մեղավոր խախտումն է աշխատանքային, ծառայողական, ուսումնական, զինվորական կամ այլ գործունեության ոլորտում, որի համար նախատեսված է համապատասխան կարգապահական տույժ:

Այսպես, համաձայն գործող աշխատանքային օրենսդրության (տե՛ս Ռուսաստանի Դաշնության աշխատանքային օրենսգրքի 130 հոդվածը) ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում աշխատանքային կարգուկանոնը սահմանվում է վարչակազմի ներկայացմամբ՝ աշխատանքային կոլեկտիվի հաստատած ներքին աշխատանքային կարգի պահպանության կանոններով: Ժողովրդական սնտեսության առանձին ճյուղերում (օրինակ՝ երկաթուղային տրանսպորտում) աշխատողների առանձին կատեգորիաների համար գործում են կարգապահության մասին կանոնադրություններ: Ներքին կարգապահության համապատասխան կանոններ են սահմանվում ուսումնական հաստատություններում, գիտական հիմնարկներում և այլն:

Կարգապահական զանցանքների թվին են դասվում, օրինակ՝ այնպիսի իրավախախտումներ, ինչպիսիք են՝ աշխատանքից ուշանալը, անհարգելի բացակայությունը, աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումը, ծառայողական պարտականությունները չկատարելը և այլն:

*Քաղաքացիական-իրավական զանցանքը (ղեղիկառը)* իրավունքի սուբյեկտի հակաիրավական արարքն է, որը խախտում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավակարգը:

Քաղաքացիական ղեղիկտները քաղաքացիական իրավունքով կարգավորվող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների ոլորտում տարբեր սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի խախտումն են:

Քաղաքացիական ղեղիկտները բաժանվում են՝ պայմանագրայինների և ոչ պայմանագրայինների: Պայմանագրային ղեղիկտներ են՝ պայմանագրային պարտավորությունները խախտելու, դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ կապված ղեղիկտները (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 393 հոդվածը): Ոչ պայմանագրային ղեղիկտները կապված են ֆիզիկական անձին կամ

նրա գույքին կամ իրավաբանական անձի գույքին պատճառով ավանդված վնասի հետ (տես Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1064 հոդվածը):

### 3. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը

*Իրավաբանական պատասխանատվությունը խախտված նորմի՝ սանկցիայով նախատեսված և իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատշաճ դատավարական-իրավական կարգով իրավախախտողի նկատմամբ կիրառվող իրավական հարկադրանքի միջոցն է:*

Իրավաբանական պատասխանատվությունն իրավախախտողի համար նրա հակաիրավական արարքի (գործողության կամ անգործության) անշահավետ հետևանքն է: Դա կրում է հարկադիր-իրավական բնույթ, սահմանվում է իրավակիրառ համապատասխան իրավասու սուբյեկտների կողմից և անհրաժեշտության դեպքում իրականացվում է պետական հարկադրանքի միջոցով: Անձին իրավաբանական պատասխանատվության ենթարկելն ու իրավաբանական պատասխանատվության չափերի սահմանումը խախտված նորմի սանկցիայի իրագործմանն ուղղված ակտիվ իրավական գործողություններն են: Այդ գործընթացում սանկցիայի վերացական-համընդհանուր դրույթները կոնկրետացվում և անհատականացվում են կոնկրետ իրավախախտման համար, կոնկրետ անձի իրավաբանական պատասխանատվության որոշակի չափի տեսքով:

Խախտված նորմի սանկցիայի իրագործմանն ու իրավաբանական կոնկրետ միջոցների որոշման այդ ամբողջ գործընթացն ընթանում է (և պետք է ընթանա) *համապատասխան իրավահարաբերության ձևով, որը կրում է իրավավերականգնող բնույթ*: Բացի տուժող կողմից և իրավախախտողից այսպիսի իրավավերականգնող (և դրա հետ միասին իրավակիրառար) իրավահարաբերության անհրաժեշտ մասնակիցն իրավակիրառար գործունեության իրավագոր սուբյեկտն է՝ համապատասխան իրավասու պետական մարմինը (կամ պաշտոնատար անձը):

Ընդ որում, այս կամ այն անձին իրավաբանական պատասխանատվության ենթարկելու և այսպիսի պատասխանատվության կոնկրետ չափը որոշելու իրավապահպան իրավահարաբերության բոլոր սուբյեկտների միջև (ինչպես տուժողի ու իրավախախտողի, այնպես էլ

նրանց և իրավակիրառ սուբյեկտների միջև) բոլոր փոխհարաբերությունները կրում են իրավական բնույթ ու ենթարկվում են կոնկրետ իրավահարաբերություններում իրավունքի իրագործման համաիրավական պահանջներին:

*Իրավաբանական պատասխանատվության ընդհանուր իրավական նպատակը* խախտված նորմի սանկցիայով նախատեսված իրավունքի պաշտպանության միջոցների իրագործման ճանապարհով խախտված իրավակարգի վերականգնումն է: Իրավավերականգնող իրավաբանական պատասխանատվության իրավական բովանդակությունը *կոնկրետ, սուբյեկտիվ իրավաբանական պատասխանատվությունն է*, որն իշխանական-իրավական ձևով դրվում է իրավախախտողի վրա, և որը նա պետք է կատարի կամավոր կամ, անհրաժեշտության դեպքում՝ հարկադիր կարգով:

Իրավախախտման համար իրավաբանական պատասխանատվությունը՝ որպես խախտված նորմի սանկցիայի կոնկրետացում, չպետք է շփոթել օրենսդրությամբ նախատեսված այն հարկադիր-իրավական միջոցների հետ (օրինակ՝ գույքագրում, ձերբակալում, խուզարկում, հարկադիր բերման ենթարկել, կալանավորում և այլն), որոնք իրավունքի իրագործման գործընթացում (կոնկրետ իրավահարաբերությունների և իրավակիրառ գործողությունների շրջանակներում) համապատասխան իրավական հիմքերի առկայությամբ անձի նկատմամբ կիրառում են իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) սովյալ իրավական գործի պատշաճ քննության ու լուծման համար: Օրենսդրությամբ նախատեսված հարկադրանքի այսպիսի միջոցներն օժանդակ (ապահովող) իրավական միջոցներ են, որոնք անհրաժեշտության դեպքում թույլատրվում են օրենքով իրավակիրառ գործընթացի պատշաճ իրականացման իրավաբանական պատասխանատվության չափի սահմանման ու դրա գործնական իրագործման համար:

#### **4. Իրավաբանական պատասխանատվության տեսակները**

Իրավախախտման տարբեր տեսակներին համապատասխան՝ իրավաբանական պատասխանատվությունը բաժանվում է հետևյալ հիմնական տեսակների՝ քրեական-իրավական, վարչական-իրավական, կարգապահական-իրավական և քաղաքացիական-իրավական պատասխանատվության: Աշխատանքային իրավունքում պատճառված վնասի հա-

մար՝ որպէս իրավական պատասխանատւոյթյան հատուկ տարատեսակ, առանձնացվում է նյութական պատասխանատւոյթյունը:

*Քրեական-իրավական պատասխանատւոյթյունը* գործող քրեական օրենքով նախատեսված հանցակագմի համար պատիժն է: Քրեական պատիժը նշանակվում է միայն դատավճռով, կրում է անձնական բնույթ և կիրառվում է միայն պատշաճ քրեական-դատավարական կարգով՝ կոնկրետ հանցագործութիւն կատարելու մէջ մեղավոր ճանաչված դէպիկտաունակ ֆիզիակական անձի նկատմամբ: Ռուսաստանի Դաշնության գործող քրեական օրենսգիրքը (տե՛ս 44 հոդվածը) նախատեսում է պատիժների հետևյալ սեսակները՝ տուգանք, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունէությամբ զբաղվելու իրավունքից զրկում, հատուկ զինվորական կամ պատվավոր կոչումից, դասային աստիճանից կամ պետական պարգևներից զրկում, պարտադիր աշխատանքներ, ուղղիչ աշխատանքներ, սահմանափակումներ զինվորական ծառայութիւնում, գույքի բռնագրավում, ազատության սահմանափակում, կալանք, կարգապահական զորամասում պահել, որոշակի ժամկետով ազատագրկում, ցմահ ազատագրկում, մահապատիժ:

Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության և մեղավոր անձի հասարակական վտանգավորության բնույթն ու աստիճանը, ներառյալ՝ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ինչպէս նաև նշանակված պատժի ազդեցութիւնը դատապարտվածի ուղղման, ինչպէս նաև նրա ընտանիքի կյանքի պայմանների վրա:

Քրեական օրենսգիրքը նախատեսում է հանցագործութիւն կատարած անձին քրեական պատասխանատւութիւնից ազատելը՝ նրա գործուն գոչալու դեպքերում, տուժողի հետ հաշտվելու, իրադրության փոփոխության, վաղեմության ժամկետի ավարտի կապակցությամբ (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 75-78 հոդվածները):

*Վարչական պատասխանատւոյթյունը* վարչական օրենսդրությամբ նախատեսված վարչական տույժ է վարչական իրավախախտման (զանցանքի) համար:

Համաձայն Ռուսաստանի Դաշնութիւնում գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ վարչական պատասխանատւութիւնի ենթակա չէ այն անձը, որը համապատասխան հակաիրավական գործողութիւնները կատարել է անմեղսունակութիւն, ծայրահեղ անհրաժեշտութիւն և անհրաժեշտ պաշտպանութիւն վիճակում: Նա-



խատեսվում են նաև խախտողին վարչական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն՝ վարչական խախտման նվազ նշանակալիության դեպքում:

Վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող են կիրառվել վարչական տույժերի հետևյալ տեսակները. նախազգուշացում, տուգանք, վարչական իրավախախտման կասուարման գործիք կամ անմիջական օբյեկտ համարվող գույքի փոխհատուցելի առգրավում կամ բռնագանձում (անհատույց առգրավում), տվյալ քաղաքացուն արամադրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, որսի իրավունքից և այլն) զրկելը, ուղղիչ աշխատանքներ, վարչական կալանք, օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին Ռուսաստանի Դաշնության սահմաններից վարչական արտաքսում:

Վարչական իրավախախտումների համար իրավաբանական պատասխանատվությունը սահմանվում է համապատասխան իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց (դատարանների, վարչական հանձնաժողովների, ներքին գործերի, մաքսային ծառայության, սանիտարական հսկողության և այլ մարմինների) կողմից:

*Կարգապահական պատասխանատվությունը* կարգապահական տույժն է կարգապահական իրավախախտման (զանցանքի) համար: Կարգապահական տույժերի տեսակներն են՝ դիտողությունը, նկատողությունը, խիստ նկատողությունը, աշխատանքից ազատելը և այլն:

Մինչև կարգապահական տույժի կիրառումն աշխատողից պետք է պահանջվի գրավոր բացատրություն: Կարգապահական տույժը կիրառվում է զանցանքը հայտնաբերելուց հետո անմիջապես, սակայն դա եայտնաբերելու օրվանից մեկ ամսից ոչ ուշ և կատարելու օրվանից վեց ամսից ոչ ուշ:

Կարգապահական պատասխանատվությունը կիրառում է այն ձեռնարկության կամ հիմնարկի վարչակազմը կամ համապատասխան պետական մարմնի ղեկավարը, որտեղ աշխատում է կարգապահական իրավախախտում կատարած անձը:

*Քաղաքացիական-իրավական պատասխանատվությունն* իրավաբանական պատասխանատվությունն է քաղաքացիական իրավախախտման (ղեղիկտի) համար:

Քաղաքացիական-իրավական պատասխանատվության տեսակներն են՝ մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակի վերա-

կանգնումը և իրավունքի խախտող կամ դրա խախտման համար սպառնալիք ստեղծող գործողությունների կանխարգելումը, վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելը ու դրա անվավերության հետևանքների կիրառումը, ֆիզիկական կամ իրավաբանական անձի քաղաքացիական իրավունքները և օրինական շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելը, պարտականությունները բեռեղենով կատարելուն հարկադրելը, վնասների (իրական վնասի և բաց թողնված օգուտի) հատուցումը, տուժանքի բռնագանձումը, բարոյական վնասի փոխհատուցումը, իրավահարաբերության դադարեցումը կամ փոփոխումը, անհիմն հարստացումը վերադարձնելու պարտականության սահմանումը և այլն:

Քաղաքացիական իրավախախտումների համար իրավաբանական պատասխանատվության այս տեսակների կիրառումն իրականացվում է քաղաքացիական դատավարական օրենսդրությամբ սահմանված գործերի ընդդատությանը համապատասխան՝ ընդհանուր իրավասության դատարանի, արբիտրաժային դատարանի կամ միջնորդ դատարանի կողմից: Գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է նաև համապատասխան վարչական միջոցներով: Ընդ որում, վարչական կարգով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել դատարան:

Վնաս պատճառած անձը (ոչ պայմանագրային դեյլիկտի դեպքում) ազատվում է վնասի հատուցումից, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով նախատեսվում են *վնասի հատուցման մի շարք դեպքեր նաև վնաս հատուցողի մեղքի բացակայությամբ*: Այսպես, իրավաբանական ու ֆիզիկական անձինք, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգավորության հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների օգտագործում և այլն) պարտավոր են մեղքի բացակայության դեպքում էլ հատուցել առավել վտանգավորության աղբյուրով պատճառած վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհարթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1079 հոդվածը): Մի շարք դեպքերում (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1100 հոդվածը) իրականացվում է բարոյական վնասի փոխհատուցում՝ անկախ վնասը պատճառողի մեղքից:

Բացի դրանից, մի շարք դեպքերում քաղաքացիական օրենքը *վնասի հատուցման պարտականությունը դնում է վնասը չպատճառած անձի վրա*: Այսպես, անձին ապօրինի դատապարտելու, ապօրինի քրեական պատասխանատվության ենթարկելու, կալանքի կամ ուղղիչ աշխատանքների տեսքով ապօրինի վարչական տույժի ենթարկելու արդյունքում պատճառված վնասը հատուցվում է կամ Ռուսաստանի Դաշնության զանձարանի, կամ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի զանձարանի, կամ համայնքային կազմավորման զանձարանի հաշվին (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1070 հոդվածը): Տասնչորս տարեկան հասակի չհասած անձի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվությունը դրվում է նրա ծնողների (որդեգրողների) կամ խնամակալների վրա, եթե նրանք չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի առաջացել (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1073 հոդվածը):

Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը, եթե չեն գերազանցվել դրա սահմանները, ենթակա չէ հատուցման (տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1066 հոդվածը):

Աշխատանքային օրենսդրությունը նախատեսում է *աշխատողի նյութական պատասխանատվությունը* նրա մեղքով ձեռնարկությանը, հիմնարկին, կազմակերպությանը պատճառված վնասի համար: Նման նյութական պատասխանատվությունը կարող է լինել սահմանափակ (աշխատողի աշխատավարձի որոշակի մասի չափով) կամ մի շարք դեպքերում՝ լրիվ (վնասի լրիվ չափով):

Աշխատողի նյութական պատասխանատվությունը, իր իրավական թնույթով, *պատճառված վնասի համար քաղաքացիական-իրավական պատասխանատվության հատուկ տարատեսակ է*: Նյութական պատասխանատվության առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ իրավախախտման սուբյեկտի (աշխատողի) և տուժող կողմի (ձեռնարկության, կազմակերպության, հիմնարկի) միջև գոյություն ունեն հատուկ հարաբերություններ՝ աշխատանքային իրավահարաբերություններ:

Վնասի հատուցումն աշխատողի կողմից միջին ամսական աշխատավարձը չգերազանցող չափով իրականացվում է ձեռնարկության, կազմակերպության, հիմնարկի վարչակազմի կարգադրությամբ: Վարչակազմի որոշմանն աշխատողի անհամաձայնության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ վնասի չափը գերազանցում է միջին ամսական

աշխատավարձը, նյութական պատասխանատվության հարցը լուծվում է դատական կարգով:

Վնասի հատուցումը կախված չէ վնասը պատճառելու գործողության (անգործության) համար աշխատողին կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելուց:

### **5. Իրավաբանական պատասխանատվության սկզբունքները**

Իրավաբանական պատասխանատվության սկզբունքներն արտահայտում են դրա իրավական հիմքերը, պահանջները, իմաստը և նշանակությունը:

*Իրավաբանական պատասխանատվության հիմնական սկզբունքներն են՝* իրավաչափությունը, օրինաչափությունը, հիմնավորվածությունը, իրավական նպատակահարմարությունը, անխուսափելիությունը, անհապաղությունը, միևնույն իրավախախտման համար կրկնակի պատասխանատվության անբույլատրելիությունը, արդարությունը:

*Իրավաչափության սկզբունքը:* Իրավաբանական պատասխանատվությունը՝ որպես հատուկ իրավական երևույթ և հասկացություն, իր դրսևորման ու իրականացման ոլորտում պետք է համապատասխանի ձևական հավասարության սկզբունքում արտահայտված իրավունքի բոլոր էական հատկություններին և պահանջներին: Իրավաբանական պատասխանատվության մյուս բոլոր բնութագրերը (սկսած դրա սահմանումից մինչև իրականացումը) պայմանավորված են դրա իրավական բնույթով: Իրավաբանական պատասխանատվությունը, հենց որպես իրավական միջոց, իրավախախտման նկատմամբ իրավական պատասխանի համարժեք ձև և խախտված իրավունքի վերականգնման պատշաճ իրավական միջոց է:

Իրավաբանական պատասխանատվության իրավական բնույթի հետ են կապված նաև դրա կողմից իրականացվող բոլոր կարգավորիչ-իրավական գործառույթները՝ իրավախախտման համար իրավական պատժի, ինչպես հենց իրավախախտողի, այնպես էլ իրավունքի մյուս սուբյեկտների գործող իրավունքի իրավաբանական ուժի ու նոր իրավախախտումներ կատարելու անբույլատրելիության մասին նախազգուշացնելու (կանխելու) իրավական միջոցի, իրավախախտողի կողմից իրավունքի մյուս սուբյեկտների իրավունքներին և օրինական շահերին ու ամբողջությամբ իրավակարգին հասցված վնասի փոխհատուցման (հա-

տուցման) իրավական միջոցի, իրավախախտողի ու հասարակության մյուս անդամների գիտակցության և վարքագծի վրա օրենքի նկատմամբ հարգանքի ու դրա պահանջների պահպանման ոգով իրավաբանական-դաստիարակչական ներգործության առանձնահատուկ ձևի գործառույթները:

Իրավաբանական պատասխանատվության *իրավական օրինակա-նության սկզբունքը* նշանակում է, որ դա սահմանվում, կիրառվում և իրականացվում է իրավական օրենքի նորմերին խիստ համապատասխան: Իրավական օրինականության սկզբունքը պահանջում է, որ իրավաբանական պատասխանատվություն սահմանվի ու կիրառվի միայն ղեկիտառունակ սուբյեկտի մեղավոր, հակաիրավական գործողության համար: Բաղաբացիական իրավունքում առանց մեղքի պատասխանատվության թույլտվության դեպքերը պայմանավորված են սուժողների իրավունքների պատշաճ պաշտպանության իրավական նպատակներով:

Իրավաբանական պատասխանատվության *հիմնավորվածության սկզբունքը* պահանջում է գործի բոլոր հանգամանքների համակցության մեջ համակողմանի լիակատար և օբյեկտիվ քննություն կոնկրետ իրավախախտողի, կոնկրետ իրավախախտման համար պատասխանատվության պատշաճ, կոնկրետ չափի որոշման համար պատշաճ իրավական հիմքի բացահայտման ու սահմանման նպատակով: Գործի լուծման և իրավախախտման կազմի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար իրավաբանական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները պետք է ապացուցվեն օրենսդրորեն սահմանված դատավարական-իրավական կարգով: Միայն այսպիսի իրավաբանորեն ապացուցված փաստացի տվյալների ու դրանց օբյեկտիվ գնահատականի հիման վրա համապատասխան իրավասու մարմինն իրավունք ունի տալ դրանց իրավաբանական որակումը և որոշել իրավաբանական պատասխանատվության չափը:

Իրավաբանական պատասխանատվության *իրավական նպատակա-հարմարության սկզբունքը* նշանակում է դրա համապատասխանությունն իրավունքի նպատակներին, որևէ այլ ոչ իրավական նպատակով (օրինակ՝ քաղաքական, զաղափարախոսական, կրոնական, տնտեսական և այլ նպատակահարմարությամբ) իրավաբանական պատասխանատվության սահմանումն ու կիրառումը հակասում է դրա իրավական բնույթին, իրավունքի և իրավական օրինականության իմաստին ու պահանջներին:

Իրավական նպատակահարմարության սկզբունքի հետ են կապված իրավաբանական պատասխանատվության բովանդակությանը և բնույթին առաջադրվող մի շարք ավելի կոնկրետ պահանջները, ինչպիսիք են՝

1) *իրավաբանական պատասխանատվության նվազագույնի հասցնելը*: Իրավաբանական պատասխանատվության հարկադիր միջոցների ծավալն ու բնույթն սկզբունքորեն չպետք է գերազանցեն այն նվազագույնը, որն անհրաժեշտ ու բավարար է իրավաբանական պատասխանատվության իրավավերականգնող նպատակին հասնելու համար.

2) *իրավաբանական պատասխանատվության անհատականացումը և կոնկրետացումն* իրավախախտ անձի, նրա մեղքի աստիճանի, կատարվածի ծանրության, մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների և այլնի հաշվառմամբ.

3) *իրավաբանական պատասխանատվության առավելագույնս հնարավոր մարդասիրացումը* դրա իրավավերականգնող նպատակի շրջանակներում և հիման վրա:

*Անխտասպիեխության սկզբունքը* պահանջում է, որպեսզի ոչ մի իրավախախտում (և հատկապես հանցագործություն) չմնա առանց իրավախախտի համապատասխան իրավաբանական պատասխանատվության: Այս սկզբունքի իրագործումն իրավախախտումների դեմ արդյունավետ պայքարի էական գործոն ու համապատասխան պետական մարմինների և պաշտոնատար անձանց ամբողջ իրավապահպան ու իրավակիրառ գործունեության հիմնական ցուցանիշ է:

*Անհապաղության սկզբունքը* պահանջում է ժամանակի մեջ պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի սահմաններում, հնարավորինս արագ իրավաբանական պատասխանատվության կիրառումը համապատասխան իրավախախտողի նկատմամբ:

Միևնույն իրավախախտման համար *կրկնակի իրավաբանական պատասխանատվության անբույխտրելիության սկզբունքն* արտահայտում է իրավունքի կարևոր պահանջներից մեկը՝ *non bis in idem* - միևնույն բանի համար չի կարող կրկնակի լինել: Սակայն այս սկզբունքին չի հակասում, օրինակ՝ այն հանգամանքը, որ քրեական-իրավական կարգով պատժված անձին համապատասխան դեպքերում կարելի է ենթարկել նրա հանցագործ գործողությամբ պատճառված գույքային վնասի հատուցման քաղաքացիական-իրավական պատասխանատվության: Բացի դրանից, միևնույն հանցագործության համար քրեական պատասխանատվությունը կարող է իր մեջ ներառել պատժի մի քանի տե-

սակ (ազատագրվում, զույքի բռնագրավում և այլն), որոնք նախատեսված են խախտված քրեական-իրավական նորմի սանկցիայով:

*Արդարության սկզբունքը* կոնկրետ իրավախախտման համար կոնկրետ անձի իրավաբանական պատասխանատվության կոնկրետ բովանդակության սահմանման հիմքերի ու եղանակների ընդհանրացված իրավական գնահատականն է: Տվյալ սկզբունքը պահանջում է իրավաբանական պատասխանատվություն հենց իրավական արդարության (արդարություն ձևական հավասարության սկզբունքի իմաստով), ոչ թե որևէ այլ՝ ոչ իրավական (քաղաքական, բարոյական, գաղափարախոսական, կրոնական և այլ) արդարության իմաստով:

Յուրաքանչյուր ոչ իրավական (և արտաիրավական) արդարություն, ըստ բնորոշման, զուրկ է իրավական արդարության համընդհանրությունից ու բոլորի համար հավասար չափից, կրում է սահմանափակ (մասնավոր, խմբակային, կուսակցական, դասային, դասակարգային և այլ) բնույթ ու, ըստ էության, մի մասի (մի խմբի) արտոնությունն ու կամայականությունն է բոլոր մնացածների նկատմամբ:

## **Գլուխ 11. Իրավական կարգը և իրավական օրինականությունը**

### **1. Իրավական կարգի և իրավական օրինականության հասկացությունը**

*Իրավական կարգը (իրավակարգը) իրավական կարգավորման ոլորտում իրավունքի սուբյեկտների փոխհարաբերության կարգն է:*

Վերացական ընդհանուր ձևով իրավական կարգը՝ որպես *պատշաճ կարգ*, սահմանվում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմամբ:

Նման վերացական նշանակությամբ իրավակարգն իրավական կարգավորման առարկան է, այսինքն՝ իրավունքի ստատիկ վիճակը, օբյեկտիվ իրավունքի վերացական ընդհանուր նորմերը, որոնք մարդկանց հարաբերությունների իրավաբանորեն պարտադիր կարգ են նախատեսում իրավական կարգավորման այս կամ այն բնագավառում: Այդ իմաստով է խոսվում այս կամ այն իրավական գործի լուծման՝ օրենսդրությամբ նախատեսված և ամրագրված իրավական կարգի, ճյուղային իրավակարգի կամ ամբողջությամբ իրավակարգի մասին ընդհանրապես:

Նման վերացական-պարտադիր իրավակարգից պետք է տարբերել *իրական իրավակարգը*՝ որպես կյանքում պատշաճ իրավակարգի պահանջների իրական պահպանման արդյունք, որպես գործնականում օբյեկտիվ իրավունքի նորմերի իրական գործողության, պատշաճ իրավական ձևերով դրանց իրագործման, սուբյեկտիվ իրավունքների տեսքով դրանց կոնկրետացման և իրականացման, սուբյեկտիվ իրավաբանական պարտականությունների տեսքով դրանց կատարման առկա հետևանք:

Այսպիսով, *իրական իրավակարգ ասելով*՝ նկատի է առնվում վաստացի պահպանվող և իրականում գործող վերացական-պարտադիր իրավակարգը, այսինքն՝ օբյեկտիվ իրավունքի նորմերի պատշաճ պրակտիկ գործողությունը (իրագործումը):

*Իրավական օրինականությունն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավական օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ պահպանումն ու կատարումն է:*

Ուղղ որում, իրավական օրենք ասելով՝ նկատի է առնվում ձևական հավասարության սկզբունքին համապատասխանող օբյեկտիվ իրավունքը (և, հետևաբար, դրանով նախատեսած վերացական-պատշաճ իրավակարգը): Ակնհայտ է, որ իրական իրավակարգը կարող է լինել սոսկ իրավական օրենքի և համապատասխան իրավական օրինականության պահանջների պահպանման արդյունք: Իրավախախտ օրենքի պահպանումը, որքան էլ համընդհանուր և ճշգրիտ լինի, ինքնին չի կարող ոչ իրավական օրենքը վերածել իրավականի և ոչ էլ իրավունքը վերափոխել իրական իրավական կարգի:

Երբ խոսքն *իրավական պետության մեջ օրենքի գերակայության և օրինականության սկզբունքի տիրապետման մասին է*, նկատի է առնվում, իհարկե, ոչ թե ամեն մի օրենք, ոչ էլ ամեն մի օրինականություն, այլ հենց իրավական օրենքը և իրավական օրինականությունը հակաիրավական (իրավախախտ, կամայական) օրենքի ու համապատասխան օրինականության հետ իրենց հակասության և հակադրության մեջ:

Համաձայն ազատական-իրավաբանական տեսության՝ իրավական կարգը կարող է լինել միայն իրավական օրինականության արդյունք, որն ազատ մարդկանց հանրային իշխանության համապատասխան պայմաններում (այսինքն՝ իրականում գոյություն ունեցող պետության իրավական զարգացվածության պատմականորեն ձեռք բերված աստիճանի պայմաններում) իրավական օրենքի պահանջների համընդհանուր, ճշգրիտ և անշեղ պահպանումն ու կիրառումն է:



## 2. Իրավական օրինականության և իրավակարգի հատկությունները, սկզբունքներն ու երաշխիքները

Իրավական օրինականությունը՝ որպես իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավական օրենքի պահանջների անշեղ, փաստացի պահպանման հատուկ իրավական վարչակարգ, հասարակական կյանքում իրական իրավական կարգի գործնական անհրաժեշտ իրավական ձևը, պայմանը և միջոցն է:

Իրավական օրինականության վարչակարգը ցանկացած իրական իրավակարգի անհրաժեշտ իրավական հատկությունը (հատկանիշը, որակը) և բաղադրատարրն է, քանի որ իրական իրավակարգն իրավունքի սուբյեկտների փոխհարաբերության կարգն է (և ամբողջությամբ օբյեկտիվ իրավունքի նորմերի գործողության և իրագործման կարգը) իրավական օրինականության վարչակարգով: Իրավական օրինականությունը, իր հերթին, օբյեկտիվ իրավունքի նորմերում ամրագրված վերացական պատշաճ իրավակարգի պահպանման և իրագործման *իրավական վարչակարգ է*:

Հատուկ պետք է ընդգծել այն սկզբունքային հանգամանքը, որ իրավունքի բոլոր սուբյեկտները (ոչ միայն պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, այլ նաև՝ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք), անկախ իրենց իրավական կարգավիճակի տարբերություններից և իրավունքի իրագործման գործընթացում նրանց դերից հասարակական կյանքում *իրավական օրինականության, իրավական կարգի սահմանման ու գործունեության գործընթացի ձևականորեն-հավասար սուբյեկտներ են*: Ինչպես արդարացիորեն նշել է Ցիցերոնը. «քաղաքացիների ազատությունը պաշտպանելիս չկան մասնավոր անձինք» (Պետության մասին II, XXV, 46):

Իրավական օրենքի գերակայության սկզբունքը ենթադրում և իր մեջ ներառում է իրականում հաստատված իրավական օրինականության վարչակարգի ու իրականում գործող իրավակարգի մի ամբողջ շարք կոնկրետ պահանջներ, բնութագրեր, բնագծեր ու հատկություններ: Իրավական օրինականության և իրական իրավակարգի այդպիսի պահանջներից ու բնութագրերից են՝ իրավական օրինականության և իրավական կարգի միասնությունն իրավական օրենքի գերակայության ամբողջ տարածքում (պետության ամբողջ տարածքում), իրավունքի բոլոր սուբյեկտների համար իրավական օրենքի, իրավական օրինականության ու

իրավակարգի սկզբունքների դրույթների և պահանջների համապարտադիրությունը, իրավունքի բոլոր սուբյեկտների իրավական ակտիվությունն օրինականության ու իրավակարգի սկզբունքն իրականացնելիս, իրավախախտումների և կամայականության դեմ պայքար մղելիս ոչ իրավական նպատակահարմարության բոլոր գործոնների, շարժառիթների ու նկատառումների անվերապահ ենթարկվելն իրավական օրինականության և իրավակարգի սկզբունքին ու պահանջներին, որոնք համարժեք իրավական ձևով արտահայտում են իրավական նպատակահարմարության իսկական իմաստը և գերակայությունը:

Իրավական օրենքի գերակայության սկզբունքի հաստատման և դրա պահանջների հետևողական պահպանման համար *անհրաժեշտ են որոշակի օբյեկտիվ պայմաններ, նպատակատղղված կազմակերպական միջոցառումներ, պատշաճ նորմատիվ-իրավական ու ինստիտուցիոնալ ձևեր, միջոցներ և այլն, որոնք իրենց համակցության մեջ իրավական օրինականության ու իրական իրավակարգի ապահովման երաշխիքներ են:*

Այդ երաշխիքները բաժանվում են իրավաբանականների և ոչ իրավաբանականների:

*Ոչ իրավաբանական երաշխիքների* թվին են դասվում հասարակության մեջ օբյեկտիվորեն ձևավորված այն սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական պայմանները, հարաբերություններն ու գործոնները, որոնք էական, թեկուզ և անանցված ազդեցություն են թողնում իրավունքի ձևավորման, սահմանման ու իրագործման ամբողջ գործընթացի վրա:

*Իրավաբանական երաշխիքների* թվին են դասվում իրավական օրինականության վարչակարգի և իրավակարգի սահմանման, ամրապնդման ու իրական գործունեության գործընթացի վրա անմիջականորեն ներգործող իրավաբանական բնույթի պայմանները և գործոնները:

*Իրավական օրինականության և իրական իրավակարգի ապահովման իրավաբանական երաշխիքների համակարգում ընդգրկվում են՝* գործող իրավական օրենսդրության բավարար չափով զարգացած ու մշտապես կատարելագործվող համակարգը, իրավաբանական մտքի և իրավաբանական իրավահասկացողության գաղափարների ու նվաճումների վրա հիմնված իրավաբանական գիտության զարգացած վիճակը, իրավաբան կադրերի պատրաստման և վերապատրաստման զարգացած համակարգը, հասարակական ու մասնագիտական իրավաբանա-

կան իրավագիտակցության բարձր մակարդակը, քաղաքացիների, իրավաբանական անձանց, հասարակական կազմակերպությունների և ամբողջությամբ քաղաքացիական հասարակության իրավական ակտիվությունը, իրավական նորմերի իրագործման զարգացած դատավարական-իրավական ձևերը, գործող իրավունքի պաշտպանության լիարժեք փարքազծի աշակցման, իրավախախտումների կանխարգելման ու իրավաբանական պատասխանատվության պատշաճ միջոցների կիրառման արդյունավետ գործող համակարգը, իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավական օրինականության և իրական իրավակարգի սկզբունքի ու պահանջների անշեղ պահպանման նկատմամբ հատուկ պետական և հասարակական վերահսկողության զարգացած կազմակերպական-ինստիտուցիոնալ ձևերը (համապետական և հասարակական վերահսկողության, դատախազական հսկողության, ընդհանուր ու սահմանադրական-իրավական իրավասության դատարանների վերահսկողության տարբեր ձևերը):

Միայն այս բոլոր գործոնների համակցված գործողությունը կարող է ապահովել իրավական օրինականության վարչակարգի և իրական իրավակարգի կայուն գործունեությունը:

*Իրավական օրենքի գերակայության գաղափարներն ու իրավական օրինականության պահանջներն ամրագրված են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ:*

Այս առումով, սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ պաշտոնապես ճանաչված մարդու ի ծնե և անօտարելի իրավունքներն ու ազատությունները՝ իրավունքն է (եկեղեցային, ըստ էության, Սահմանադրության մեջ պաշտոնապես ճանաչված, պոզիտիվացված ու բարձրագույն իրավաբանական ուժով օժտված բնական իրավունքը), օրենքից (գործող իրավունքի բոլոր աղբյուրներից, ներառյալ՝ հենց Սահմանադրությունից) դրա տարբերակման հարադրությամբ: Դա Սահմանադրությունը ներհատուկ իրավաբանական տիպի իրավահասկացողության բնական-իրավական հայեցակարգի արամաբանությամբ նշանակում է, որ օրենքը (Ռուսաստանի Դաշնությունում գործող ամբողջ պոզիտիվ իրավունքը, ներառյալ նաև՝ բուն Սահմանադրությունը) պետք է համապատասխանի իրավունքին (այսինքն՝ մարդու բնական ի ծնե և անօտարելի իրավունքներին ու ազատություններին): Հետևաբար, այդպիսին է իրավունքի, իրավական օրենքի, իրավական օրինականության և իրավակարգի սահմանադրական հայեցակարգը:

Սահմանադրության մեջ պարունակվող իրավական օրենքի և իրավական օրինականության հայեցակարգը Սահմանադրության անվիճելի առավելություններից է: Դրա հետ միասին Սահմանադրության բազմաթիվ առաջադեմ դրույթներ ունեն հուշակագրային բնույթ: Մեծ ճեղքված գոյություն ունի համապատասխան սահմանադրական դրույթների և երկրում օրինականության ու իրավակարգի իրական վիճակի միջև:

Այս ուղղությամբ դրական տեղաշարժերը պահանջում են կատարել սոցիալ-տնտեսական և պետական-իրավական վերափոխումների (կուտակված փորձի, սխալների ու որոշակի նվաճումների հաշվառմամբ) ընթացքի անհրաժեշտ ճշգրտումներ, հասարակական հարաբերությունների բարեփոխման ընթացքում ապահովել պետության և իրավունքի դերի պառաշան բարձրացումը, գործող Սահմանադրության հիման վրա դրա հետագա անհրաժեշտ կատարելագործման հունով իրավական օրինականության և իրավակարգի սկզբունքների ամրագրումը:

Վ. Ս. ՆԵՐՍԵՍՅԱՆՑ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բուհական դասագիրք

Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան  
Համակարգչային ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Չափը՝ 60x84 1/16: Պատվեր՝ 33:  
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ  
Երևան - 9, Տերյան 91